ՀՀ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԶԳԱՅԻՆ ԱԿԱԴԵՄԻԱ
ՀՆԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԵՎ ԱԶԳԱԳՐՈՒԹՅԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ

Գ. ՍԱՐԳՍՅԱՆ, Ա. ԳՆՈՒՆԻ, Լ. ՄԿՐՏՉՅԱՆ

ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔԱՇԱԹԱՂԻ ՇՐՋԱՆԻ ԱՄՐՈՑՆԵՐԸ



947.925

ՀՀ ԳԱԱ Հնագիտության և ազգագրության ինստիտուտ

Գ. Սարգսյան, Ա. Գնունի, Լ. Մկրտչյան

III
9423

ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔԱՇԱԹԱՂԻ ՇՐՋԱՆԻ ԱՄՐՈՑՆԵՐԸ

КРЕПОСТИ КАШАТАГСКОГО РАЙОНА РЕСПУБЛИКИ АРЦАХ

THE FORTRESSES OF QASHATAGH REGION OF THE ARTSAKH REPUBLIC

ԵՐԵՎԱՆ
«ՆՈՒԱՆԵ» ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ
2022

ՀՏԴ 94(479.5):902
ԳՄԴ 63.3(5Հ)+63.4
Ս 259

Գիրքը երաշխավորել է տպագրության ՀՀ ԳԱԱ
Հնագիտության և ազգագրության ինստիտուտի գիտական խորհուրդը

Գիտական խմբագիր՝ պ.գ.դ., պրոֆեսոր Հայկ Ավետիսյան
Լեզվական խմբագիր՝ Գոռ Հարությունյան
Գրախոսներ՝ պ.գ.դ., պրոֆեսոր Աշոտ Փիլիպոսյան, պ.գ.թ., դոցենտ Արսեն Բոբոխյան

Գիրքը տպագրվել է Միացյալ Նահանգների և Կանադայի Թեքեյան մշակութային միության հովանավորությամբ

Հետազոտական աշխատանքները կատարվել են «Հայագիտական ուսումնասիրությունները ֆինանսավորող համահայկական հիմնադրամի» տրամադրած դրամաշնորհով

Սարգսյան Գ., Գնունի Ա., Մկրտչյան Լ.
Ս 259 ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔԱՇԱԹԱՂԻ ՇՐՋԱՆԻ ԱՄՐՈՑՆԵՐԸ /Գ. Սարգսյան, Ա. Գնունի, Լ. Մկրտչյան.- Եր.: «Նռանէ», 2022. - 236 էջ:

Ամրոցները և ամրաշինությունը Հայոց մշակույթի կարևոր բաղադրատարրերն են: Սփռված լինելով Հայաստանի բոլոր գավառներում՝ դրանք ոչ միայն պաշտպանական կարևոր հանգույցներ, այլև քաղաքական, հոգևոր և տնտեսական կենտրոններ էին: Այդ իսկ պատճառով՝ պատահական չէ, որ Հայաստանի և Արցախի Հանրապետության պատմության և մշակույթի անշարժ հուշարձանների պետական ցուցակներում առկա են տեղեկություններ տարբեր ժամանակաշրջանների շուրջ հազար ամրոցների մասին:

Գիրքը ներկայացնում է ԱՀ Քաշաթաղի շրջանի 37 ամրոց՝ ներառելով դրանց հատակագծային առանձնահատկությունները, բնապատմական և հնագիտական համատեքստը:

Սույն գիրք-ալբոմը նախատեսված է հնագետների, ազգագրագետների, մշակութաբանների, արվեստաբանների, ինչպես նաև ընթերցողների լայն շրջանների համար:

Նախաբանի, վերջաբանի և 1-13 ամրոցների նկարագրության հեղինակ՝ Գ. Սարգսյան:
Առաջին, երկրորդ գլուխների և 14-25 ամրոցների նկարագրության հեղինակ՝ Ա. Գնունի:
Երրորդ գլխի և 26-37 ամրոցների նկարագրության հեղինակ՝ Լ. Մկրտչյան:

ՀՏԴ 94(479.5):902
ԳՄԴ 63.3(5Հ)+ 63.4

ISBN 978-9939-9272-4-4

© Գ. Սարգսյան, Ա. Գնունի, Լ. Մկրտչյան, 2022
© «Նռանէ» հրատարակչություն, 2022

ԳԻՐՔԸ ՆՎԻՐՎՈՒՄ Է ԱՐՑԱԽՅԱՆ ԲՈԼՈՐ

ՊԱՏԵՐԱԶՄՆԵՐԻ ՀԵՐՈՍՆԵՐԻՆ

ԵՐԿՈՒ ԽՈՍՔ

Սույն աշխատանքը հիմնականում կատարվել է 2016–2020 թթ. ընթացքում՝ ՀՀ ԳԱԱ «Հայագիտական ուսումնասիրությունները ֆինանսավորող համահայկական հիմնադրամ»-ի դրամաշնորհով ՀՀ ԳԱԱ Հնագիտության և ազգագրության ինստիտուտում ստեղծված գիտահետազոտական խումբը (ղեկավար՝ Գագիկ Մ. Սարգսյան): Ծրագիրը՝ գիտական թեման, կոչվում էր «Արցախի ազատագրված տարածքների ամրոցների ուսումնասիրություն» և ընդգրկում էր Արցախի Հանրապետության Քաշաթաղի, Շահումյանի (Քարվաճառի) շրջաններն ամբողջությամբ, Մարտակերտի, Հադրութի ու Ասկերանի շրջանների ազատագրված (նախկին ԼՂԻՄ-ից դուրս գտնվող) տարածքների ամրոցները: Ժամանակացույցի համաձայն՝ թեման ավարտվելու էր 2020 թ. սեպտեմբերի 30-ին, բայց ավարտից երեք օր առաջ սկսված Արցախյան երրորդ պատերազմը՝ իր դառը հետևանքներով, ստիպեց իրատեսորեն նայել փաստերին՝ խմբագրելով ծրագրի և աշխատանքի անվանումը այսօրվա իրողություններին համապատասխան:

Ճակատագրի հեգնանքով՝ Հիմնադրամի դրամաշնորհով ուսումնասիրված ավելի քան 50 ամրոցներն այսօր հայտնվել են մեր վերահսկողությունից դուրս, և այդ տարիներին մեր կորզած գիտական տեղեկույթը ինքնաբերաբար սկզբնաղբյուրի կարգավիճակ է ստանում: Այսօր մենք պատեհություն ունենք փաստելու, որ մեր աշխատանքի շնորհիվ բացահայտված, մոռացությունից վեր հանված հուշարձանները գալիս են հարստացնելու և լրացնելու պատմական Սյունիքի և Արցախի հնագույն մշակույթը: Իսկ այն, որ ուսումնասիրված ամրոցները հայկական պատմամշակութային ժառանգության արգասիք են՝ փաստում են դրանց ամրաշինական, քաղաքաշինական, կառուցապատման, շինտեխնիկայի առանձնահատկությունները և վերգետնյա խեցեղենի ուսումնասիրությունը:

Թող սերունդները մեզ շատ չկշտամբեն, որ ավելի քան 20 տարի մեր վերահսկողության տակ գտնվող տարածքներում մենք անտարբերության ենք մատնել և մասնագիտորեն չենք ուսումնասիրել մեր պատմական հուշարձանները:

Հեղինակներն իրենց խորին երախտիքն են հայտնում «Հայագիտական ուսումնասիրությունները ֆինանսավորող համահայկական հիմնադրամ»-ի հոգաբարձուների խորհրդին և մասնավորապես՝ նրա նախագահ ՀՀ ԳԱԱ հայագիտության և հասարակական գիտությունների բաժանմունքի ակադեմիկոս-քարտուղար, ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս, գիտության վաստակավոր գործիչ Յուրի Սուվարյանին, ում հեռատեսության, նվիրվածության ու համակողմանի աջակցության արդյունքն է այս աշատանքը:

Հեղինակները առանձնակի շնորհակալություն են հայտնում 1989–2021 թթ. Հայ Առաքելական Եկեղեցու Արցախի թեմի առաջնորդ Տեր Պարգև արքեպիսկոպոս Մարտիրոսյանին՝ գիտահետազոտական խմբին անօդաչու թռչող սարք (դրոն) ձեռք բերելու խնդրում իրական օգնություն ցուցաբերելու համար:

Հեղինակներն իրենց խորին երախտագիտությունն են հայտնում նաև ԱՀ Բերձոր քաղաքի «Մերան» թերթի գլխավոր խմբագիր, Քաշաթաղի շրջանի փայլուն գիտակ Զոհրաբ Ըռքոյանին, Քաշաթաղի շրջանի կազմակերպիչ և առաջին ղեկավար, ականավոր արևելագետ, Հայոց արևելից կողմանց ուսումնասիրող պ.գ.դ. Ալեքսան Հակոբյանին, ԱրՊՀ ավագ դասախոս, ազգագրագետ Լեռնիկ Հովհաննիսյանին, Արցախի պատմամշակութային հուշարձանների նվիրյալ հետազոտող Սլավա Սարգսյանին՝ արշավախմբերի աշխատանքներում գործուն մասնակցության և արժեքավոր տեղեկույթ տրամադրելու համար:

Հեղինակները մեծապես շնորհակալություն են հայտնում նաև գրքի տպագրությունը հովանավորող Միացյալ Նահանգների և Կանադայի Թեքեյան մշակութային միությանը:

ՆԱԽԱԲԱՆ

Ամրոցները և ամրաշինությունը Հայոց մշակույթի կարևոր բաղադրատարրերն են: Սփռված լինելով Հայաստանի բոլոր գավառներում՝ դրանք ոչ միայն պաշտպանական կարևոր հանգույցներ, այլև քաղաքական, հոգևոր և տնտեսական կենտրոններ էին: Այդ իսկ պատճառով՝ պատահական չէ, որ Հայաստանի և Արցախի Հանրապետության պատմության և մշակույթի անշարժ հուշարձանների պետական ցուցակներում առկա են տեղեկություններ տարբեր ժամանակաշրջանների շուրջ հազար ամրոցների մասին:

Ամրաշինական ավանդույթների և առանձին ամրոցների հետազոտությունը հանգուցային դեր ունի ինչպես առանձին տարածաշրջանների, այնպես էլ մշակույթների զարգացման ընդհանուր օրինաչափությունների ուսումնասիրության ժամանակ: Այսօր հրապարակի վրա են բազմաթիվ հետազոտություններ՝ հիմնված ինչպես պատմական (Հովհաննիսյան, 1972), այնպես էլ հնագիտական (Есаян, 1976, Хачатрян, 1975, Բարխուդարյան, 1933, Միքայելյան, 1968, Biscione et. al, 2002) աղբյուրների վրա: Մշակվել են նաև ամրոցների նկարագրության հիմնական սկզբունքները (Բայբուրթյան, Լիսիցյան, 1928, 22-27, Բարխուդարյան, 1935, 58-63), ամրոցների տիպաբանությունը (Արեշյան, Հովհաննիսյան, Ղաֆադարյան (խմբ.), 1996, 70-91):

Բնակավայրերի ուսումնասիրությունն ընդհանրապես, իսկ ամրոցների ուսումնասիրությունը մասնավորապես՝ հանդիսանում են հնագիտության կարևորագույն խնդիրներից մեկը: Այն իր մեջ ներառում է մի քանի մակարդակ (Холюшкин, 1994, 102): Առաջին մակարդակը ներառում է գուտ հուշարձանին վերաբերող տեղեկությունները, մասնավորապես՝ ներքին կառուցվածքի մասին տվյալները. պարսպով պարփակված տարածքում շինությունների ուսումնասիրությունը, վերգետնյա նյութի հավաքագրումը և ամրոցի տարածքում դրա բաշխման հավաստումը: Այնուհետև, ուսումնասիրության օբյեկտ են հանդիսանում ամրաշինական կառույցները, դրանց հատակագծերը և շինարարական տեխնիկան:

Ամրոցների ուսումնասիրության երկրորդ մակարդակի հիմնական նպատակը պաշտպանական շրջանի ուրվագծերի և կառուցվածքի բացահայտումն է: Այդ առումով անհրաժեշտ է դիտարկել հարևան ամրաշինական կենտրոնները՝ բացահայտելով դրանց բնույթը (ամրոց, ուղեկալ, աշտարակ-դիտակետ, բնակավայրի միջնաբերդ, ամրացված բնակավայր): Հետազոտության այս մակարդակում անհրաժեշտ է դիտարկել բնական տեղանքին վերաբերող տվյալները (օրոգրաֆիան, հիդրոգրաֆիան) (Ավետիսյան և այլք, 2019b, 98-99), ինչպես նաև հնագույն ճանապարհների ուղղությունները:

Ուսումնասիրության երրորդ մակարդակը պաշտպանական, տնտեսական և սակրալ շրջանների փոխհարաբերությունների խնդիրն է (տնտեսական համալիրների, սրբատեղիների հետ հարաբերակցությունը) (Ավետիսյան և այլք, 2019b, 99-100) և որպես արդյունք՝ բազմաֆունկցիոնալ համալիրների ձևավորումը (Ավետիսյան և այլք, 2019b, 102-104):

Ընթերցողի դատին հանձնվող աշխատությունը ծրագրված շարքի առաջին գիրքն է, որը նվիրված է Արցախի Հանրապետության Քաշաթաղի շրջանի ամրոցներին: Քաշաթաղի շրջանը՝ որպես հետազոտության թիրախ ընտրելը պայմանավորված է մի շարք հանգամանքներով:

Պատմաաշխարհագրական առումով՝ ուսումնասիրվող տարածքը գտնվում է Հայաստանի պատմական Սյունիք և Արցախ աշխարհների սահմանում: Թիրախային տարածաշրջանի ընտրության համար հիմք են հանդիսացել դրա ակտիվ ներգրավվածությունը Հայաստանի ռազմաքաղաքական անցուդարձում, ինչպես նաև պատմական աղբյուրներում և հնագիտորեն վկայված ամրոցների առատությունը:

Ժամանակագրական տեսանկյունից հետազոտությունն ընգրկում է ինչպես բրոնզի և երկաթի դարաշրջանների (Ք.ա. մոտ III-I հազ.), այնպես էլ հայաստանյան պետական միավորումների ժամանակաշրջանում կառուցված ամրոցների ուսումնասիրությունը՝ սկսած Վանի թագավորությունից (Ք.ա. VIII-VII դդ.) մինչև մելիքական իշխանություններ (Ք.ի. XVII-XVIII դդ.):

Ներկայացվող աշխատության շրջանակներում ամրոցների, դրանց տեղադրման օրինաչափությունների, շինարարական տեխնիկայի հետազոտության միջոցով քննության են առնվում ինչպես ներտարածաշրջանային, այնպես էլ միջտարածաշրջանային մշակութային և քաղաքական փոխառնչութ-

յունները և զարգացման օրինաչափությունները: Ըստ այդմ՝ տիպաբանվել և դասակարգվել են ամրոցները, ճշտվել դրանց սահմանները և զբաղեցրած տարածքները, ժամանակագրությունը, միմյանց միջև տեսողական և այլ կապերը:

Ներկայացված աշխատությունում տեղ են գտել հեղինակների ավելի քան քսանամյա հետազոտությունների արդյունքները, որոնք իրականացել են մի շարք արշավախմբերի կազմում: Հետազոտությունների շրջանակում իրականացվել են ինչպես պեղումներ (1996 թ. Եզնագոմերի դամբարանադաշտում՝ Ա. Գնունի, Վ. Գայսերյան, Գ. Խաչատրյան, 1997 թ. Եզնագոմերի Ավազահանք բնակատեղիում՝ Ա. Գնունի, Գ. Խաչատրյան, Գ. Վարդանյան, 1999 և 2001 թթ. Վարդուտի և Գանձայի, 2003–2013 թթ. Կերենի դամբարանադաշտերում՝ Ա. Գնունի, Գ. Խաչատրյան, 2017–2019 թթ. Միրիկի ամրոցում՝ Գ. Սարգսյան, Ա. Գնունի, Հ. Խուդանյան), այնպես էլ հետախուզական աշխատանքներ: 2013–2020 թթ. հետախուզական աշխատանքներ կատարվել են նաև ՀՀ գիտության պետական կոմիտեի «Պատմական Սյունիքը բրոնզի և երկաթի դարերում (ըստ նորագույն հնագիտական տվյալների)», «Հնագույն Սյունիքի մեգալիթյան մշակույթը. ժամանակագրության, տարածույթի, գործառույթի և ինքնության խնդիրներ», «Հիշողության լանդշաֆտը որպես հնագիտական հետազոտության առարկա (ըստ Հայկական լեռնաշխարհի հյուսիս-արևելյան շրջանների նյութերի, Ք.ա. III-I հազ.)» թեմաների շրջանակում (Հ. Ավետիսյան, Ա. Բոբոխյան, Ա. Գնունի): Հետախուզական աշխատանքները պարբերական բնույթ են կրում 2008 թվականից, երբ Գ. Սարգսյանի անմիջական մասնակցությամբ սկսվեց Արցախի Հանրապետության տարածքի պատմության և մշակույթի անշարժ հուշարձանների հետախուզումը, հաշվառումը, անձնագրավորումն ու գոտիավորումը: 2016–2020 թթ. տարածաշրջանի ամրոցներն ուսումնասիրվել են Արցախի ամրոցների ուսումնասիրությանը նվիրված վերոհիշյալ ծրագրի շրջանակներում (Գ. Սարգսյան, Բ. Կարապետյան, Ա. Դավթյան, Լ. Մկրտչյան, Հ. Դանիելյան):

ՄԱՍ Ա

ԸՆԴՀԱՆՈՒՐ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

ԳԼՈՒԽ I

Քաշաթաղի ուսումնասիրության պատմությունից

Մեծ Հայքի պատմական Սյունիք և Արցախ աշխարհների սահմանին գտնվող Քաշաթաղի շրջանը հարուստ է բազմադարյա մշակութային հուշարձաններով: Այսպես բնորոշելով Սյունյաց աշխարհը դեռևս 1860-ականներին տակավին երիտասարդ Գարեգին Սրվանձտյանցը՝ նշում է, որ այստեղ ավելի շատ են ամրոցները, քան քաղաքները (Սրուանձտեանց, 1862–1863, 190): Սակայն այս տարածաշրջանը հաճախ վրիպում էր հետազոտողների ուշադրությունից: Այնուամենայնիվ, Քաշաթաղի պատմության և մշակույթի հուշարձանների մասին տեղեկությունները հայտնի են դեռևս XIX դարից:

Ընդհանուր առմամբ՝ հաղորդվող տեղեկությունները կարելի է բաժանել մի քանի խմբի:

Ա. Բանավոր ավանդազրույցներ: Գրի առնված բանավոր ավանդազրույցների մեծ մասը կապված է Ծիծեռնավանքի, դրա հարևանությամբ գտնվող Ագռավաքարի հետ (Լալայեան, 1898, 48, Ղանալանյան 1969, 231, N 619, Կայծ Սիւնի, 1890): Գրի է առնված նաև հակ գյուղի թյուրքական՝ Միևքենտ (=1000 գյուղ) անվանման հետ կապված ավանդազրույցը (Ղանալանյան, 1969, 172 N 447, Карапетян1990, 33):

Բ. Գրավոր սկզբնաղբյուրներ: Քաշաթաղի շրջանի բնակավայրերի առավել հին հիշատակումները հայ մատենագրության մեջ պատկանում են Դասխուրանցուն: Վերջինիս պատմելով՝ 846 թ. արաբ զորավարի արշավանքի մասին հիշատակում է Աղահեճ գավառի Արքուգետ ավանը և նրա կողմից այրված Ս. Գրիգոր եկեղեցին (Մովսէս Կաղանկատուացի 1912, 378, Մովսես Կաղանկատվացի, 1969, 259-260): Հիմնական պատմական աղբյուրը Ստեփանոս Օրբելյանի «Սյունիքի պատմությունն» է: Օրբելյանի արժեքավոր աշխատությունում Քաշաթաղի շրջանի տարածքում գտնվող բնակավայրերը հիշատակվում են բազմաթիվ պատմական անցքերի հետ կապված (Ստեփանոս Օրբելյան 1986):

Քաշաթաղի շրջանի տարածքը (Բարկուշատը) հիշատակում է նաև XIII դարի տարեգիր Ստեփանոս եպիսկոպոսը՝ կապված Զաքարե Զաքարյանի արշավանքների հետ (Հակոբյան 1951, 38): Քաշաթաղի բնակավայրերի մասին ավելի շատ տեղեկություններ պարունակվում են ուշ միջնադարյան հեղինակների աշխատություններում՝ կապված ուշ միջնադարի բուռն իրադարձությունների հետ (Զաքարեայ սարկաւագ, 1870, հ. Բ, 9, Ղուկաս Սեբաստացի, 1992), ինչպես նաև հիշատակվում են հռչակավոր հոգևոր կենտրոնները (Առաքել Դավրիժեցի, 1988, 208, Թովմա Վանանդեցի, 1860):

Գրավոր սկզբնաղբյուրների երկրորդ խումբը ներկայացված է ձեռագրերի հիշատակարաններով, ինչն ինքնին վկայում է, որ Քաշաթաղի շրջանը գրչության կենտրոններից էր: Վաղագույններից է 1361 թ. հիշատակարանը, որտեղ նշվում է Անապատիկ գյուղը (Խաչիկյան 1950, 450): XVII դարի ձեռագրերում հիշատակվում են Րախիշ (Հակոբյան, 1984, 601), Արտաշիբի (Հակոբյան, Հովհաննիսյան, 1974, 561, Հակոբյան, 1978, 699), Հարար (Եգանյան և այլք, 1965, N 3437, Հայկունի, 1885, 1-5, Ներսիսյան, 1986, 323) գյուղերը: Հիշատակվում է նաև Քաշաթաղի գավառը (Խաչիկյան, 1967, 116, Հակոբյան, 1984, 256, 506):

Աղբյուրների հաջորդ խմբում ներկայացված են վիճակագրական տեղեկությունները և տնտեսական բնույթի փաստաթղթերը: Այս տիպի փաստաթղթերից առաջին հերթին պետք է հիշատակել Ստեփանոս Օրբելյանի կազմած Սյունիքի տասներկու գավառների հարկացուցակը (Ստեփանոս Օրբելյան, 1986, 304-344): Նոր շրջանի վավերագրերից պետք է նշել 1730 թ. Տաթևի վանքի պտղացուցակը (Ստեփանոս Օրբելեան 1942, 41-43), ինչպես նաև 1691 թ. կազմված Քաշաթաղի մի շարք գյուղերի տանուտերերի դիմումը պարսից շահին (Կոստիքյան, 2001):

Որպես կարևոր սկզբնաղբյուր՝ պետք է դիտարկվեն նորագույն շրջանի մի շարք սկզբնաղբյուրներ: Դրանք կարելի է բաժանել երկու խմբի:

Առաջինում միավորվում են պետական վիճակագրական տվյալները (Евецкий 1835, Кавказский календарь... 1916, Кондратенко 1902, Карта вероиспоеданий Елизаветпольской губернии 1: 20 верст 1888):

Երկրորդ խմբում կարելի է միավորել եկեղեցական և ազգային կազմակերպությունների կազմած քարտեզները և վավերագրերը (Карта Кавказского края..., 1908, Հայկական Առաքելական (Լուսավորչական) եկեղեցին Ռուսիայի մեջ, 1879):

Աղբյուրներում մանրամասն նշվում են նաև ուսումնասիրվող տարածաշրջանի պատմական սահմանները և ներքին բաժանումները: Այս առումով առաջին հերթին պետք է հիշատակել Աշխարհացույցը (Երեմյան 1963, Յակոբեան 2011): Սյունյաց աշխարհի արևելյան գավառների սահմանները նշում է նաև Ստեփանոս Օրբելյանը (Ստեփանոս Օրբելյան 1986, 70-71):

Գ. Տեղանվանագիտական բնույթի աշխատություններից նախ և առաջ պետք է հիշատակել Հ. Հյուբշմանի աշխատությունը, որտեղ փորձ է կատարվում ստուգաբանել ներկայիս Քաշաթաղի մի շարք տեղանուններ (Հիւբշման, 1907): Տարածքի տեղանունների, մասնավորապես՝ գավառանունների ստուգաբանությանը, անդրադարձել են նաև մի շարք այլ հետազոտողներ:

Ողջ բազմազանությամբ՝ այս տեսակետները կարելի է բաժանել մի քանի խմբի.

1. ավանդական տեսակետը, որը կապում է Սյունիքի և նրա գավառների տեղանունների առաջացումը առաջնորդների անձնանունների հետ (Ստեփանոս Օրբելյան, 1986, 69-73, Ալիշան, 1893, 273, Ինճիճեան, 1822, 282-283, էփրիկեան, 1903, 385, Шопен, 1852, 67),

2. տեսակետներ, որոնք կապում են տեղանունները էթնոնիմների հետ (Ստեփանոս Օրբելեան, 1859, 21-24, Ադոնց, 1987, 401, Капанцян, 1947, 128-130, Карагезян, 2002, 25-31),

3. տեղանունների լեզվական ստուգաբանությունը (Карагезян, 2002, 16-17):

Առանձնահատուկ նշանակություն ունի Հ. Կարագյոզյանի սեպագիր աղբյուրներում տեղանուններին նվիրված աշխատությունը, որտեղ հեղինակը մասնավորապես քննում է Հայելակ, Աղահեճ, Բերձոր, Հարճլանք, Պիանք տեղանունները (Կարագեոզեան, 1998, 142, 189-191, 197, 203):

Դ. Պատմաաշխարհագրական բնույթի ուսումնասիրություններ: Հաջորդ խմբում ներկայացված են պատմաաշխարհագրական բնույթի աշխատությունները: Դեռևս XIX դարում այս խնդրին անդրադառնում են Ղ. Ինճիճյանը, Ղ. Ալիշանը, Ի. Շոպենը, Հ. Հյուբշմանը, Ս. Զալալյանցը (Ինճիճեան, 1822, Զալալեանց, 1842, Զալալեանց, 1858, Ալիշան, 1893, Шопен, 1852):

Փաստորեն միջնադարյան իրողությունները ներկայացված են նաև Օ. Եվեցկու վիճակագրական բնույթի աշխատությունում (Евецкий, 1835):

Հատուկ պատմական աշխարհագրության հարցերին նվիրված աշխատություններից առաջին հերթին պետք է ընդգծել «Աշխարհացոյց»-ի քննությանը նվիրված աշխատությունները (Երեմյան, 1963, Հարությունյան, 2003, Յակոբեան, 2007, 2009, 2011, 2020):

Պատմաաշխարհագրական վերակազմություններին են նվիրված նաև Ա. Ղարագյոզյանի (Ղարագյոզյան, 1987, Карагезян, 2002), Մ. Հասրաթյանի (Հասրաթյան, 1985, 117-166), Թ. Հակոբյանի (Հակոբյան, 1960) աշխատությունները, էփրիկյանի պատկերազարդ (էփրիկյան, 1903) և՛ Հայաստանի, և՛ հարակից շրջանների տեղանունների բառարանները (Հակոբյան և այլք, 1986–1992):

Պատմաաշխարհագրական բնույթի հարցեր քննության են առնվում նաև այլ աշխատություններում (օր.՝ Ադոնց, 1987, Կարապետյան, 1999, Հակոբյան, 1966), ինչպես նաև Ստեփանոս Օրբելյանի կոթողային «Սյունիքի պատմության» Ա. Աբրահամյանի արժեքավոր ծանոթագրություններում (Ստեփանոս Օրբելյան, 1986, 405-549):

Հիմնականում անտիկ և միջնադարյան ժամանակաշրջանների պատմական աշխարհագրությանը նվիրված նշված աշխատություններում քնարկվող հարցերի շրջանակը ներկայացված է պատմական աղբյուրներում հիշատակվող բնակավայրերի տեղայնացմամբ, ինչպես նաև Սյունիք և Արցախ աշխարհների, դրանց առանձին գավառների սահմանների ճշտմամբ:

Պատմաաշխարհագրական դիտարկումների շարքում պետք է նշել Կ. Շահնազարյանի ակնարկները: Դիտարկելով Սյունյաց բնաշխարհը՝ նա փորձ է կատարում դիտարկել հին և միջնադարյան միգրացիաների ճանապարհները և դրանց պատճառները՝ նշելով, որ դրանք ընթանում են հարթավայրից լեռները՝ կապելով դրանք օդի թարմության հետ (Ստեփանոս Օրբելեան, 1859, 9):

Օրբելյանի տեղեկությունների համաձայն՝ Կ. Շահնազարյանը ներկայացնում է Սյունիքի բնաշխարհը և հանքային հարստությունները (Ստեփանոս Օրբելեան, 1859, 10, 11-13, հմմտ.՝ Կաղանկատվացի, 1969, 8):

Կարևորագույն նշանակություն ունի Գտչավանքի շինարարական արձանագրության վերակազմությունը, որը թույլ է տալիս ճշտել Արցախ աշխարհի արևմտյան սահմանները (Յակոբեան, 1999, Յակոբեան, 2009, 73-128, հմմտ.՝ Զալալեանց, 1842, 209-210, Զալալեանց, 1858, 257-258):

Միևնույն ժամանակ բրոնզի և երկաթի դարաշրջանների պատմական աշխարհագրության հար-

ցերը քննելիս հեղինակները դիտարկում են տնտեսական, ծիսական, պաշտպանական լանդշաֆտի, միասնական բնական-մարդածին լանդշաֆտային բջիջների և բնակավայրային ագլոմերացիաների ձևավորման հարցերը (Սարգսյան և այլք, 2014, Ավետիսյան և այլք, 2015, Ավետիսյան և այլք, 2019, Ավետիսյան և այլք, 2019b):

Ե. Ճանապարհորդական գրառումներ: Քաշաթաղի շրջանի հուշարձանների ամենավաղ հիշատակումները Ֆ. Դյուբուա դե Մոնպրեի աշխատությունում են: Հեղինակի ճանապարհը Մեղրիից Շուշի անցնում էր Քաշաթաղի շրջանով: Մասնավորապես՝ հիշատակվում են Քարոտանի ամրոցը, Խոջախանի և Բերդաձորի հայկական գերեզմանոցները (Dubois de Montpereux, 1836, 60-61, 70-71): Ճանապարհորդական գրառումներից պետք է նշել Մակար եպիսկոպոս Բարխուդարյանի արժեքավոր հետազոտությունը, որտեղ հեղինակը անդրադառնում է Քաշաթաղի շրջանի հուշարձաններին, գյուղերի ժողովրդագրությանը (Բարխուդարյան, 1995):

Հուշարձանների մասին տեղեկություններ է հաղորդում նաև Ե. Լալայանը (Լալայեան, 1898):

XX դարում տարածքի հուշարձանների, գյուղերի տնտեսական դրության, ժողովրդագրական վիճակի, վարչական սահմանների մասին տեղեկություններ կան հայկական բնակչության խտության նշմամբ Կովկասի երկրամասի քարտեզում (Карта Кавказского края..., 1908), Ս. Տեր-Ավետիսյանի (Տեր-Ավետիսյան, 1924a, 1924b), Ա. Ալեքպերովի (Алекперов, 1936, 1960, 134-169) գրառումներում:

Զ. Հուշարձանների հետազոտություններ:

1. Ուղեգծային արշավներ: Մինչև ազատագրումը ուսումնասիրվող տարածքում ընդամենը մեկ մասնագիտացված հնագիտական ուղեգծային արշավ է եղել, որն ընդգրկել է Քաշաթաղի շրջանի հյուսիսային հատվածը (նախկին Լաչինի շրջանը): Վ. Ալիևը իր համառոտ ակնարկում անդրադառնում է ինչպես բրոնզեդարյան դամբարաններին (Եզնագոմեր, Գանձա) և բնակավայրերին (Ֆունդուխլի), այնպես էլ միջնադարյան հուշարձաններին (Արվականի խոյատապանները, Նորաբերդը, Կատոսավանքը) (Алиев, 1981, 455):

Դեռևս 1970–1980 թթ. տարածաշրջանում ուղեգծային արշավներ և հետազոտություններ են կատարել Մ. Հասրաթյանը, Ս. Կարապետյանը (Կարապետյան, 1999), Ա. Ղարագյոզյանը (Карагезян, 2002), Ա. Հակոբյանը:

Շրջանի ազատագրումից հետո այստեղ ուղեգծային հետազոտություններ են կատարել մի շարք արշավախմբեր: Շարունակվել են Ս. Կարապետյանի հետազոտությունները: 1995–2001 թթ. տարածքում հետազոտություններ է կատարել ՀՀ Մշակույթի նախարարության Պատմամշակութային ժառանգության գիտահետազոտական կենտրոնի արշավախումբը (Հ. Սիմոնյան, Հ. Սանամյան, Վ. Գայսերյան, Գ. Խաչատրյան, Գ. Վարդանյան, Ա. Գնունի): Մասնավորապես՝ հետազոտվել է Աղավնո գետի հովիտը, հավաստվել բնակատեղիներ Տիգրանավանում և Մարաթուկում (Գնունի, Խաչատրյան 2010, Գնունի և այլք, 2011):

2008 թվականից սկսած՝ ԱՀ կառավարությանն առընթեր գբոսաշրջության և պատմական միջավայրի պահպանության վարչության ծրագրով իրականացվող ԱՀ տարածքի պատմամշակութային հուշարձանների վկայագրման ու գոտիավորման աշխատանքների շրջանակում հետազոտվել են Քաշաթաղի շրջանի Աղավնո գետի ավազանի հուշարձանները: Դաշտային հետախուզական արշավախբի կազմում էին հնագետ Գ. Մ. Սարգսյանը, ազգագրագետ Լ. Հովհաննիսյանը, բանասեր Զ. Ըռքոյանը, պատմաբան Ս. Սարգսյանը: Աշխատանքներին մասնակցել է նաև ԵՊՀ-ի հնագիտության լաբորատորիայի գիտաշխատող Ա. Գնունին: Արշավախումբը նպատակ ուներ, սիստեմատիկ հնագիտական հետախուզական աշխատանքներ իրականացնելով, հնարավորինս մանրամասն հետազոտելու տարածքը՝ հայտնաբերելով, անձնագրավորելով մինչ օրս չբացահայտված ու չհաշվառված հուշարձաններ, ստեղծելով շրջանի պատմամշակութային ժառանգության ամփոփ պատկեր և կազմելով ԱՀ տարածքի պատմամշակութային հուշարձանների ցուցակները (Սարգսյան, 2014b, Սարգսյան և այլք, 2014):

2. Բրոնզ-երկաթեդարյան և անտիկ ժամանակաշրջանի հուշարձանների հետազոտությունները: Քաշաթաղում բրոնզ-երկաթեդարյան հուշարձանների առաջին պեղումները իրականացրել է Է. Ռոսլերը 1898 թ.՝ պեղելով Գորիսի տարածաշրջանի Տեղ և Քաշաթաղի շրջանի Աղավնո գյուղերի միջև գտնվող դամբարանները (Росслер, 1901):

1896 թ. Բերձորից 4 կմ հյուսիս-արևմուտք՝ Սերտ լեռան լանջին, գտնվել է հունական տիպի բրոնզե լամպ՝ թատերական դիմակի քանդակով (Сысоев, 1925, 22): 1890-ականների սկզբին Ա. Իվանովսկին պեղում է դամբարաններ Վանք-Չորման ճանապարհին (Ивановский, 1911, 147): Հետագա տարիներին հետազոտությունները կրում էին զուտ դիպվածային բնույթ: Մասնավորապես՝ դեռևս

1920-ականներին Հագարի գյուղի տարածքում Ա. Ալեքպերովը պեղել է մի շարք կարասային թաղումներ (Алекперов, 1960 26):

Քաշաթաղի շրջանում առանձին կարասային թաղումների մասին հիշատակում է նաև Ռ. Գեուշևը (Геюшев, 1984, 60):

Ազատագրումից հետո տարածքում հետազոտվել են բրոնզ-երկաթեդարյան ժամանակաշրջանի մի շարք հուշարձաններ: Մասնավորապես՝ 1996 թ. Աղավնոյի վերնահոսանքում գտնվող ընդարձակ դամբարանադաշտում հետազոտվել են մի շարք հուշարձաններ (Գնունի, Խաչատրյան, 2010, 55-59):

1996–1997 թթ. նույն տարածաշրջանում պեղվել է Ավազահանքի բազմաշերտ բնակատեղին, որտեղից հայտնաբերված նյութերը բնորոշ են էնեոլիտից-միջնադար ընկած ժամանակաշրջանին (Գնունի, Խաչատրյան, 2010, 59-61):

1999 և 2001 թթ. դամբարաններ պեղվեցին Վարդուտ և Գանձա գյուղերում (Գնունի, 2002, 40-42, Գնունի, Խաչատրեան, 2003, 350-361):

2003–2014 թթ. պեղումներ իրականացվեցին Կերենի դամբարանադաշտում: Ընդհանուր առմամբ՝ արշավախումբը հետազոտել է մի քանի տասնյակ դամբարան, որոնք վերաբերում են երեք ժամանակագրական փուլերին՝ մ.թ.ա. XIV-XIII դդ., մ.թ.ա. XII-IX դդ., մ.թ.ա. VII-V դդ. (Գնունի, Խաչատրյան, 2008, Գնունի, Խաչատրյան, 2008 բ, Գնունի, 2014):

Կարևորագույն նշանակություն ունեցան Միրիկի ամրոցի և դամբարանների պեղումները (ցավոք անավարտ) 2017–2019 թթ., որոնք բացահայտեցին մ.թ.ա. VII-VI դդ. պալատական-պաշտամունքային համակառույց աստիճանածև աշտարակով (զիկուրատ) և պալատական համալիրով, ինչպես նաև դամբարանային կառույցներ (Կարապետյան և այլք, 2018, Ավետիսյան և այլք, 2019):

Կարևոր են Քաշաթաղի շրջանում մեգալիթյան հուշարձանների և ժայռապատկերների հետազոտությունները: Քաշաթաղում ժայռապատկերների մասին առաջին տեղեկությունները հաղորդում է Գ. Իսմայիլովը՝ հետազոտելով Քաշաթաղի շրջանի և ՀՀ Սյունիքի մարզի Գորիսի տարածաշրջանի սահմանագլխում գտնվող Սև լճի ավազանը (Фараджева, 2009, 194):

Հետագա տարիներին ժայռապատկերներ հայտնաբերվել են Սառնակունք-Հակ ճանապարհին, Միրիկ-4-ում (Ավետիսյան և այլք, 2019, 7): Սև լճի ավազանում հայտնաբերվել են նաև քարակույտ-հարթակներ (Ավետիսյան և այլք, 2021, 114):

Քաշաթաղի շրջանում հավաստված են մի շարք դոլմենային կառույցներ:Դրանցից կարևորագույնը Կոռնիձոր-Ներքին Ձիջիմլի ճանապարհին գտնվող «Կռապաշտի տներ» («Գյավուր դամեր») դոլմենային համալիրն է: Նմանատիպ կառույցներ հայտնաբերված են նաև Որոտան ավանից ոչ հեռու:

Մեգալիթյան հուշարձանների թվին պետք է դասել նաև Խոզնավարի լճից ոչ հեռու հայտնաբերված վիշապ քարակոթողը (Ավետիսյան և այլք, 2021, 116) և Ծիծեռնավանքից հայտնաբերված ձկնակերպ մենհիրը (Սիմոնյան, 2019, 554):

Էական է, որ 1992 թվականից ի վեր Քաշաթաղի մի շարք հուշարձաններում հավաստված է վաղ բրոնզին բնորոշ խեցեղեն, քանի որ խորհրդային տարիներին ողջ Լեռնային Ղարաբաղի տարածքում շենգավթյան մշակույթի հուշարձաններ հավաստված էին միայն Ստեփանակերտի դամբարանադաշտում (Кушнарева, 1954, 165), Հադրութի (Амирджанов, 1987, 71-75) և Քարվաճառի (Ибрагимов, 1986, 25-27) բնակատեղիներում, ինչպես նաև Վարանդայի և Իշխանագետի ավազաններում, Արաքսի հովտում (Սիմոնյան, Գնունի, 1996, 70-71, Исмаилов, 1970, Исмаилов, 1986, 16-46):

1996–2019 թթ. վաղ բրոնզին բնորոշ խեցեղեն հայտնաբերվել է մի շարք բնակավայրերում (Ավազահանքի բնակավայր, Դաշտաքար (Սարգսյան և այլք, 2014, 153), Միրիկ-2 (Ավետիսյան և այլք, 2019, 6-7), Անդոկաբերդ[1] Արծվաշեն[2]):

3. *Քարանձավային համալիրների հետազոտությունները* սկիզբ են առել դեռևս XX դարի սկզբից: Մասնավորապես՝ Ի. Ջաֆարզադեի կողմից բնական և արհեստական քարանձավներ են հիշատակվում Բարկուշատ գետի հովտում և Անդոկաբերդ գյուղի տարածքում (Джафарзаде, 1944, 68-71):

Ա. Ալեքպերովը ոչ միայն նկարագրում է Աղավնոյի հովտի քարանձավային համալիրները (Հակ, Մշենի, Հոչանց), այլև տիպաբանում է դրանք՝ ներկայացնելով ազգագրական որոշ զուգահեռներ (Алекперов, 1936, 47-50):

Տանձուտ գյուղի մոտ գտնվող քարանձավային համալիրները հիշատակում է Ս. Տեր-Ավետիսյանը (Տեր-Ավետիսյան, 1924a):

[1] Հետազոտությունները՝ Գ. Սարգսյանի, Ա. Գնունու:

[2] Հետազոտությունները՝ Տ. Ալեքսանյանի:

Արհեստական քարանձավներ հիշատակվում են նաև Կովսականի (նախկին Զանգելանի) ենթաշրջանում (Бретаницкий, Вейнмарн, 1966b, 18):

Ազատագրումից հետո շրջանի տարածքում բացահայտվեցին մի շարք նոր քարանձավային հուշարձաններ՝ Քրոնքի (Շահինյան, 2002, 374-379) և Կռապաշտի տների մոտի վիմափոր եկեղեցին[3], Տիգիկի (Գնունի և այլք, 2011, 44), Նաբի ուշաղիի (ԼՂՀ հուշարձանների պետական ցուցակ, Քաշաթաղի շրջան 22), Սթունիսի (ԼՂՀ հուշարձանների պետական ցուցակ, Քաշաթաղի շրջան N 82) բնակելի քարայրները, Միրիկի քարանձավային սրբատեղին (Ավետիսյան և այլք, 2019, 8): Բացի այդ, մասնագիտորեն ուսումնասիրվեցին արդեն հայտնիները (Հոչանց, Մշենի, Տանձուտ (Շահինյան, 2002, 379-391, Գնունի և այլք, 2011, 43), Աղավնոյի հովտի քարայրները (ԼՂՀ հուշարձանների պետական ցուցակ, Քաշաթաղի շրջան N13, 15)):

4. *Միջնադարյան հուշարձաններ:* Միջնադարյան հուշարձանների ճարտարապետական նկարագրությունը մինչ 1992 թ. հիմնականում սահմանափակվում էր մահմեդական դամբարանների նկարագրությամբ: Մասնավորապես՝ նկարագրվում են Վանոցայի (Ձիջիմլի) Մելիք Ղաջարի (Бретаницкий, 1966, 128-130, Бретаницкий, Вейнмарн, 1978, 82, Саламзаде, 1952, 238, Усеинов и др., 1963, 101-102), Դեմիրչիլերի (Бретаницкий, 1966, 198-199, Саламзаде, 1952, 251, Усеинов и др., 1963, 158-159), Մեմեդբեյլիի Յահյա Մուհամեդ ալ Հաջիի (Мемедзаде и др., 1978, 68-78, Саламзаде, 1952, 261, Усеинов и др., 1963, 158-159, Щеблыкин, 1947b 160), Գյուրջիլերի (Саламзаде, 1964, 52-53, Усеинов и др., 1963, 277-278), Մազմազակի, Շարիֆանի (Щеблыкин, 1947b 157, 160-161) դամբարանները, ձիատապաններ և խոյատապաններ Արահուծում և Ծաղկաբերդում (Нейматова, 1981, 33-42), քանդակազարդ տապանաքարերը Շալվայում (Геюшев, 1984, 107):

Քրիստոնեական հուշարձանները, բնականաբար, գրեթե ուշադրության չէին արժանանում Ադրբեջանում, մանավանդ՝ 1920–1930 թթ. հետո (հմմտ.՝ Алекперов 1936, 35-38, նկարագրված են Սոնասարի եկեղեցին, Հոչանցի անապատը): Առավել շատ հիշատակվում է Ծիծեռնավանքը (Усеинов и др., 1963, 43-44, Щеблыкин, 1947, 38): Ծիծեռնավանքը բազմիցս նկարագրվում է նաև հայկական հեղինակների աշխատություններում: Վանքի առաջին նկարագրություններից մեկը պատկանում է Ե. Լալայանին, ով նաև ներկայացնում է վանքի հետ կապված ժողովրդական բանահյուսության նմուշներ (Լալայեան, 1898, 46-49): Հետագա տարիներին Ծիծեռնավանքի ճարտարապետությանն անդրադարձել են Մ. Հասրաթյանը, Վ. Հարությունյանը (Հասրաթյան, 1985, 219-246, Հասրաթյան 1980, Հարությունյան, 1992, 114-115):

Ի. Շչեբլիկինը հիշատակում է նաև շրջանի մի շարք այլ հայկական եկեղեցիներ (Սադունլար): Այս համատեքստում պետք է նշել, իհարկե, Վ. Ալիևի կողմից Կատոսավանքի հիշատակումը (Алиев, 1981, 415): Նենգափոխելով իրականությունը՝ Վ. Ալիևը Կատոսավանքը անվանում է «албанский ванк», (հմմտ.՝ Григорян, 1990, 35):

Առանձին աշխատություններ նվիրված են տարածքի վիմագրությանը:

Դեռևս Ֆ. Դյուբուա դե Մոնպրեն հիշատակում է 1158 թ. հայերեն տապանագիրը Բերդաձորի գերեզմանոցում (Dubois de Montpereux, 1836, 70-71): Ծիծեռնավանքի վիմագիր արձանագրությունները մեջբերում է Ե. Լալայանը (Լալայեան, 1898, 48):

Քաշաթաղի ուսումնասիրության համար կարևոր նշանակություն ունեցավ Ս. Բարխուդարյանի Հայ վիմագրության Դիվանի «Արցախ» հատորը, որտեղ ներկայացված են Քաշաթաղի շրջանի հուշարձաններում (Ծիծեռնավանք, Հոչանց, Հակ, Շալվա, Հերիկ, Միրիկ, Գողթանիկ) հայտնաբերված վիմագիր արձանագրությունները (Բարխուդարյան, 1982, 192-196):

Բնական է, որ առավել ամբողջական հետազոտություններ հնարավոր եղան միայն 1992 թվականից հետո: Այս համատեքստում պետք է նշել Ս. Կարապետյանի, Ա. Հակոբյանի աշխատությունները (Կարապետյան, 1999, Յակոբեան, 1998, Յակոբեան, 2009):

Ադրբեջանում հրատարակված ուսումնասիրություններում հայկական վիմագիր արձանագրությունները գրեթե չեն հիշատակվում: Օրինակ՝ Վ. Ալիևը, հիշատակելով Կատոսավանքի արձանագրությունը, ակնհայտ կեղծելով իրականությունը, համարում է այն ալբաներեն (Алиев, 1981, 415, հմմտ.՝ Сваэян, 1987, 41-44, Акопян, 1987, 138-139):

Խիստ սակավ են ներկայացված նաև արաբատառ արձանագրությունները (Մեմեդբեյլի գ. Յահյա Մուհամեդ ալ Հաջիի 1305 թ. արձանագրությունը) (Нейматова, 1975, 473-474):

Կանոնավոր պեղումներ միջնադարյան հուշարձաններում գրեթե չեն իրականացվել՝ բացառութ-

[3] Հետազոտությունները՝ Գ. Սարգսյանի, Հ. Ավետիսյանի:

յամբ Շարիֆան քաղաքի առանձին հատվածների պեղումների (Геюшев и др., 1975, 466, Ахмедов, 1984, 56-65):

Շրջանի ազատագրումից հետո կանոնավոր պեղումներ իրականացվեցին Ծիծեռնավանքի վանական համալիրում: Պեղումների ընթացքում բացվեցին տաճարի հիմքերը, պեղվեցին վանապատկան շինությունների հիմքերը, միջնադարյան գերեզմանոցը և առանձին թաղումներ (Սիմոնյան 2005, Սիմոնյան և այլք, 2007, 15-18, Սիմոնյան, 2019, 552): Միջնադարյան հուշարձանները մանրամասն ներկայացված են Ս. Կարապետյանի (Կարապետյան, 1999) և Գ. Սարգսյանի (Սարգսյան, 2014b) աշխատություններում:

ԳԼՈՒԽ II

Քաշաթաղի շրջանի բնաաշխարհագրական պայմանները

Քաշաթաղի շրջանի բնական պայմանները խիստ բազմազան են:

Մակերևույթի կազմությունը խիստ խայտաբղետ է: Ինչպես և Արցախում ընդհանրապես, այստեղ ևս տարբեր կետերում դիտարկվում են բարձրությունների մեծ տատանումներ, լեռնաբազուկներն ու առանձին խմբված գագաթները զուգորդվում են գեղատեսիլ կիրճերով, ձորերով և հովիտներով (Ամիրջանյան, Արզումանյան, 1994, 7):

Քաշաթաղի հյուսիսային հատվածում ձգվում են Մխաթիքի լեռները, որոնք արևելք-արևմուտք ուղղությամբ ձգվում են մինչև Չլդրան: Այս լեռնաբազուկից ճյուղավորվում են Ագռավաքարի, Զոլասարի և Շալվայի լեռները: Հիմնական լեռնաբազուկի վրա գտնվում են Մխաթիք (3411 մ), Նարդվան (2623 մ), Զոլասար (2436 մ) գագաթները (Վարդանյան, 2009, 15):

Շրջանի հյուսիս-արևմտյան հատվածը կազմում են Սյունիքի սարահարթի բարձր լեռները: Այստեղ հավաստված են խոշոր վահանաձև լեռնագանգվածներ՝ Ծղուկի և Իշխանասարի շրջակայքում՝ Սև լճի մոտ: Այս տարածքը շրջապատված է մերձգագաթային բարձր լեռնային սարավանդներով՝ ծածկված լավային հզոր զրահով (Азизбеков, 1972, 22): Այստեղ ներկայացված է մարգագետնային բուսականությունը: Տեղումների տարեկան մակարդակը 800-900 մմ է (Азизбеков, 1972, 26): Բարձր լեռնային շրջաններում հիմնականում ներկայացված են լեռնամարգագետնային ճմատորֆային խճային հողերը (Վարդանյան, 2009, 26):

Շրջանը տեկտոնիկայի առումով խիստ ակտիվ է: Այստեղ դիտարկվում են բազմատեսակ խախտումներ, որոնց հետևանքով տարբեր ժամանակաշրջանի և տարբեր բնույթի ապարները հաճախ հերթափոխվում են: Օրինակ՝ Լեռնահովիտ գյուղի շրջակայքում դամբարանադաշտն ամփոփված է գրանոդիորիտային ինտրուզիվ զանգվածների վրա նստած չորրորդական շրջանի նստվածքների մեջ, որոնք վերածվում են երրորդական ժամանակաշրջանի էֆուզիվ ապարների: Նմանատիպ խախտման օրինակ են Բերդիկի հանքային ջրերի ելքերը, որոնք խորքային բաթոլիտների առկայության արդյունք են: Վերոհիշյալ բոլոր ժամանակաշրջանների ապարները բազմաթիվ տեղերում կտրատված են դայկային մարմիններով, որոնց հզորությունը 0,5-5,5 մ է: Օրինակ՝ Ծիծեռնավանք գյուղից արևելք՝ Աղավնոյի աջ ափին, յուրայի ժամանակաշրջանի կրաքարային հսկայական հաստվածքը կտրված է դացիտային կազմի խոշոր (2,5-3 մ) դայկայով, որը և, հավանաբար, առաջացրել է Ագռավաքարի ժայռը: Ընդհանուր առմամբ՝ պետք է նշել, որ դայկային առաջացումները ներթափանցում են բոլոր ապարների մեջ՝ բացի երրորդական ժամանակաշրջանի լավային հոսքերի (օրինակ՝ Լեռնահովտի տարածք):

Ինտրուզիաներին վերաբերող տարբեր մերկացումներում (Արտաշավի, Վաղազին) նկատելի են հանքայնացման երևույթներ: Հավանաբար, նույն ինտրուզիվ մարմինը տարածվում է մինչ Տրտուի ձախ վտակ Լևոնագետի հովիտը, որտեղ էլ գտնվում են ոսկու հանքերը: Բացառված չէ, որ նույն հանքայնացման գոտուն է վերաբերում նաև Դադիվանքի սնդիկը (Գնունի, Խաչատրյան, 2010, 53-54):

Շրջանի բարդ երկրաբանական իրավիճակը լավագույնս ներկայացված է Եզնագոմերի հնավայրից ոչ հեռու գտնվող Ավազահանքի բնակավայրի օրինակի վրա: Կտրվածքի հետազոտությունը թույլ տվեց կազմել բլրի երկրաբանական նկարագիրը: Ստորին շերտը՝ 0,8-1 մ հզորությամբ, հրաբխային խարամ է՝ 4-5 սմ չափի պեռլիտային չհղկված բեկորներով: Երկրորդ շերտը՝ 1 մ հզորությամբ, առաջացել է հրաբխային գործունեության դադարից հետո: Շերտի մուգ գունավորումը պայմա-

նավորված է ջրային ավազանի ֆլորայի և ֆաունայի առանձնահատկություններով: Երրորդ շերտի հզորությունը նույնպես 1 մ է: Այն բաղկացած է պեռլիտի մինչև 1,5 սմ բեկորներից և ավազի մանրահատիկներից: Չորրորդ շերտը բաղկացած է պեռլիտի մանր բեկորներից՝ կավային և ավազային նյութի խառնուրդով, ինչը հուշում է սեյսմիկ անկայուն իրավիճակի և պարբերաբար տեղի ունեցող տատանումների մասին: Շերտի վերին մասում տեղ-տեղ հանդիպում են հրաբխային մուգ գույնի (բազալտային) և կարմրավուն շլակի բեկորներ: 8-10 սմ հզորությամբ հինգերորդ շերտը՝ սև կամ մուգ կարմիր գունավորմամբ, հրաբխային մոխիր է: Այն փաստը, որ մոխիրը ցեմենտացված է, հուշում է, որ հրաբխային գործունեությունը տեղի է ունեցել ջրային ավազանում: Վեցերորդ շերտի հզորությունը մոտ 2,5 մ է: Այն խիստ շերտավորված է. բաց գույնի հորիզոններում գերակշռում են պեռլիտի հղկված բեկորները, իսկ մուգ գույնի հորիզոններում մերձափնյա ավազներ և հրաբխային նյութի բեկորներ: Յոթերորդ շերտը մշակութային շերտն է՝ հագեցած հնագիտական մնացորդներով և ոսկորներով (Գնունի, Խաչատրյան, 2010, 59-61):

Ղարաբաղյան լեռները, փաստորեն, ջրբաժան են հանդիսանում մի կողմից Կուրի աջ վտակների, մյուս կողմից՝ Արաքսի ձախ վտակ Հագարիի և նրա օժանդակ Շալուայի միջև (Ոսկանյան, 1976, 15):

Դեպի հարավ տարածքը ցածրանում է: Շրջանի կենտրոնական հատվածը կիսվում է հյուսիս-արևմուտք հարավ-արևելք ուղղվածությամբ Հոչանցի և Աղավնոյի հովիտներով ձգվող համեմատաբար ցածր բարձրություն (մինչև 1500 մ) Հոչանցի լեռնաշղթայով:

Դեպի արևմուտք Գորիսի թեք սարահարթի արևելյան լանջերն են, որոնք կազմված են պիրոկլաստներից: Սարահարթը խիստ կտրտված է Գորիս, Խնածախ, Բայանդուր և այլ գետերի հովիտներով, որոնց միջև տեղադրված են սարահարթի մնացուկները: Դեպի արևելք Գորիսի թեք սարահարթը զգալիորեն լայնանում է և անցնում Հագարիի թեք հարթավայրին՝ կազմված հրաբխաշին-պրոլյուվիալ նստվածքներով (Бальян, 1969, 276-277):

Գորիս-Բերձոր ճանապարհը և Հագարիի հովիտը կազմված են ապշերոնյան տարիքի պալեոորոտանյան հզոր գլաքարային նստվածքներից, որոնք, մանավանդ, դիտարկվում են Լիսագորի լեռնանցքի շրջանում: Հագարիի հովտում գլաքարային հաստվածքի հզորությունը կազմում է 180-200 մ (Бальян, 1969, 283):

Աղավնո գետի հովիտը կազմված է բազմաթիվ և բազմատեսակ ինտրուզիվ և հրաբխային ապարներով, որոնք տարածվում են վերին յուրայի դարաշրջանի կրաքարային խոշոր հաստվածքների մեջ: Արվական գյուղից հյուսիս՝ գետի վերին հոսանքում, գերիշխող են թուրինյան ժամանակաշրջանի ինտրուզիվ ապարները, որոնք ներկայացված են դիաբիտային պորֆիրիտներով (Եզնագոմեր գյուղի տարածք) (Գնունի, Խաչատրյան, 2010, 53-54):

Ստորին յուրայի կրաքարային հաստվածքների մեջ որոշ վայրերում (Մշենի, Հոչանց) առաջացել են երկրորդական կարստային քարայրեր, որոնք հետագայում օգտագործվել են որպես բնակատեղիներ: Աղավնո գետի ձախ ափին Հերիկ և Տանձուտ գյուղերից հյուսիս գտնվող քարայրերն առաջացել են երրորդական շրջանի դիաբազային հոսքի և կրաքարի միացումից:

Շրջանի երկրաբանական հուշարձաններից է Ծիծեռնավանք գյուղից հյուսիս-արևմուտք ոչ մեծ գետակի ձախ ափին նկատվող դիորիտային հսկա զանգվածը, որը խարսխված է մոտ 1,5 մ տրամագիծ ունեցող կրաքարային սյան վրա (Գնունի, Խաչատրյան, 2010, 53-54):

Միևնույն ժամանակ, ուսումնասիրվող տարածաշրջանում չորրորդական շրջանում հրաբխային գործունեությունը զգալիորեն նվազել է Հայաստանի կենտրոնական և արևմտյան շրջանների համեմատությամբ (Азизбеков, 1972, 412):

Այս տարածքի տեղանքը լեռնային անտառային է: Անտառները ձգվում են Հոչանց գետի երկայնքով՝ Շալվայի և նրա վտակների վերնահովիտներում (Վարդանյան, 2009, 29): Տեղումների քանակը տատանվում է 600-1450 մմ, իսկ միջին ջերմաստիճանը 6-10 աստիճան (Азизбеков, 1972, 26): Դեպի արևմուտք և հյուսիս լանդշաֆտը ներկայացնում են մարգագետին-տափաստանները (Վարդանյան, 2009, 29): Տարածքի մեծ մասը ներկայացված է լեռնամարգագետնային ճմային խորքային հագեցած հողերով և միայն կենտրոնում՝ Հոչանցի հովտում, առկա են սևահողեր, իսկ Շալվայի և Աղավնոյի հովիտներում՝ անտառային դարչնագույն կրազերծված կավայնացած հողեր (Վարդանյան, 2009, 26):

Տարածքը շարունակում է ցածրանալ դեպի Արաքսի հովիտը (մինչև 400-200 մ ծովի մակերևույթից): Արևելքից շրջանի տարածք են մտնում Կուսանաց լեռներից ճյուղավորվող մի քանի լեռնաբազուկներ, մասնավորապես՝ Քիրս գագաթից աղեղնաձև ճյուղավորվող Բերդաձորի, Քարինգի, Խծաբերդի լեռները: Ցածրադիր հարավային գոտում Սյունիքից շրջանի տարածք են մտնում Հրաշասարի և Բարձրաքաշի լեռները, որոնք ձգվում են Ողջիի երկայնքով (Վարդանյան, 2009, 15):

Որոտանի հովտը ներկայացված է տուֆո-ավազաքարերով և տուֆո-բրեկչաներով (Азизбеков, 1972, 102):

Մորֆոլոգիական տեսակետից՝ այս հատվածում տեղանքը ասիմետրիկ կիրճի տեսք ունի, և գտնվում է Ողջի գետի միջին հոսանքում: Համեմատաբար մեղմ անկումներով՝ գետի աջ ափը դարավանդների տեսք ունի և անտառածածկ է: Տեղ-տեղ առկա են հեղեղատներ, գետակներ, աղբյուրներ՝ իրենց բնորոշ ժամանակակից առաջացումներով:

Տարածքի կենտրոնական մասը զբաղեցնում է Կերեն գյուղը: Ջախափնյա տեղանքն ավելի կտրուկ անկումներ ունի: Այստեղ ջրբաժանում մերկանում է Սուսանդաղ լեռնաշղթայի ուղղահայաց կտրվածքը՝ մոտ 100 մ բարձրությամբ, որը ներկայացված է ստորին կավճի ժամանակաշրջանի բաց գույնի կրաքարերով: Այնուհետև, մոտ 40 աստիճան թեքությամբ լանջը իջնում է դեպի գետը: Լանջը հիմնականում անտառածածկ է՝ բացառությամբ գյուղից հյուսիս ընկած 2-3 հա տարածքով գետի մակարդակից մոտ 200 մ բարձր գտնվող հատվածի, որն ունի իզոմետրիկ չափսեր, և այն նկատելի է նույնիսկ հեռվից՝ բուսականության իսպառ բացակայության և մուգ գույնի շնորհիվ: Ենթադրաբար այդ մերկացումը ներկայացված է վերին յուրայի փոփոխված, սևացած, կրաքարային ապարներով: Այս ապարների ծայրամասային հատվածներում նկատվում են բաց գույնի պեգմատիտային առաջացումներ՝ խոշոր բյուրեղային ներդրումներով: Կոնտակտային հատվածում կրաքարերը ենթարկվել են ջերմային մետամորֆիզմի, որի արդյունքում նկատվում է նաև դրանց միներալոգիական կազմի փոփոխություն: Մասնավորապես՝ գտնվել է բերիլի բյուրեղ: Բացի այդ, ճեղքերի մեջ առատորեն հանդիպում են սերդոլիկ, խալցեդոն, ագաթ և այլ առաջացումներ (Վարդանյան, 2011):

Տարածքի հիմնական մասը բնորոշվում է հետանտառային լանդշաֆտով: Անտառները ներկայացված են Ողջիի հովտում, Կոռնիձորի շրջանում և Փոքր Հագարիի վերնահոսանքում (Վարդանյան, 2009, 29):

Տարածքի հուշարձաններից հայտնաբերված հնեաձաղկափոշու հետազոտությունը ցույց է տալիս, որ արդեն մ.թ.ա. VI դարում տարածքը կազմում էին անտառները և անտառատափաստանները: Մասնավորապես՝ վկայված են սոճին, պոպոքենին, գիհին, տկողին, ողողվող մարգագետինների ծարխոտը, էֆեդրան (Квавадзе, 2012):

Տարածքում հիմնականում ներկայացված են անտառային դարչնագույն կարբոնատային խճաքարային հողերը՝ բացառությամբ Կոռնիձորի շրջանի և Ողջիի հովտի, որտեղ գերակշռում են անտառային դարչնագույն կրազերծված կավահողերը (Վարդանյան, 2009, 26):

Արաքսի հովիտը Կովսական և Միջնավան քաղաքների տարածքում ներկայացված է ալյուվիալ նստվածքներով: Տարածքին բնորոշ է չորային տափաստանային բուսականություն, տեղումների տարեկան քանակը տատանվում է 300-400 մմ, իսկ միջին ջերմաստիճանը՝ 10-14 աստիճան (Азизбеков, 1972, 26): Շրջանի Արաքսամերձ տարածքը կիսատափաստանային գոտիներ են: Օդի միջին տարեկան ջերմաստիճանը կազմում է 10-14 աստիճան, իսկ տեղումների քանակը տարեկան տատանվում է 350-380 մմ: Արաքսամերձ տարածքում ներկայացված են շագանակագույն մնացորդային կարբոնատային հողերը (Վարդանյան, 2009, 26):

Շրջանի ջրագրական ցանցը բավականաչափ խիտ է: Հիմնական գետը Հագարին է, որն առաջանում է Աղավնոյի և Շալվայի (ձախակողմյան Հոչանց) միախառնումից: Ստորին հոսանքում Հագարին ընդունում է Որոտանի, ինչպես նաև աջակողմյան վտակ Փոքր Հագարիի ջրերը (Վարդանյան, 2009, 23): Այս գետերը խիստ բուռն են և ջրառատ: Նույնիսկ XIX դարում դրանց վարարումները մեծ վնասներ էին հասցնում բնակչությանը (Ширакуни, 1904, 185):

Քամիների հիմնական ուղղությունները հարավ-արևմտյան և արևելյան են: Առաջինը հիմնականում փչում է երեկոյան ժամերին և իր հետ բերում հով և անձրև, իսկ երկրորդը հիմնականում փչում է ամռանը՝ իր հետ բերելով սաստիկ տապ և փոշի (Ширакуни, 1904, 185):

Շրջանի բարդ ռելիեֆը, ինչպես նաև ռազմավարական դրությունը, հյուսիս-հարավ և արևելք-արևմուտք ճանապարհների խաչմերուկին կանխորոշում են շրջանով անցնող ճանապարհների ուղղվածությունը: Կարևորագույն ռազմավարական ճանապարհներից էր Արաքսի հովտով անցնող ճանապարհը, որը սկիզբ էր առնում Կաղզվանից, այնուհետև Արաքսի հովտով անցնում էր դեպի Նախճավան, որտեղ օգտագործվում էր Ձուղայի գետանցումը, այնտեղից՝ Կարճվանով Մեղրիի տարածք (Шопен, 1852, 720) և Արցախ, դեպի Խուդաֆերինի գետանցում, որտեղով անցնում էր Իրանից եկող ճանապարհը, Հորադիզի գետանցում, որտեղ հետագայում հիմնվել էր Ասլանդուզե ամրացված կետը (Лотто, 1888, 253), մինչև Կուրի և Արաքսի միախառնման կետ (հմմտ.՝ Անանիա Շիրակացի, 1979, 313, Աբրահամյան, 1944, 356, Թաղիադյան, 1975, 149):

Ընդ որում, օգտագործվում էին ճանապարհները ինչպես գետի ձախ, այնպես էլ աջ ափերով (հմմտ.՝ Աբրահամ Կրետացի, 1973, 77):

Բացառված չէ, որ Վարանդայից Որոտան էր անցնում նաև Դվին-Պարտավ ճանապարհի ճյուղավորումներից մեկը (Гулиев, 1972, 34):

Տարածաշրջանի կարևոր ուղիներից է Տանձավերից դեպի արևելք տանող ճանապարհը: Այն Տանձավերից Որոտանի ափով գնում է դեպի Քաշունիքի Ակն (նախկ. Ային) գյուղը (Ղարագյոզյան, 1980, 265), որտեղից ճյուղավորվում է դեպի Դավիթ Բեկ՝ միանալով Շուշիից դեպի Մալխալաֆ և Հարար գյուղերով դեպի Դավիթ Բեկ գյուղ եկող ճանապարհի հետ (հմմտ.՝ Տէր-Գասպարեանց, 1885, 3): Այստեղ ճանապարհը ավարտվում է «Կարանի եկեղեցի» կառույցի մոտ, որը, ըստ Ա. Ղարագյոզյանի, ամրացված հենակետ է (Ղարագյոզյան 1980, 265, հմմտ.՝ ՀՀ հուշարձանների պետական ցուցակ 8., Սյունիքի մարզ, 30 գ. Դավիթ Բեկ, 5. Կորանի եկեղեցի): Ային գյուղից ճանապարհը տանում է դեպի նախկին Խոջամուսախլի գյուղից 2 կմ արևելք գտնվող ամրոցը: Այնուհետև, ճանապարհը տանում է դեպի Պահու բերդ (Ղարագյոզյան, 1980, 266, Карагезян, 2002, 89-90):

Այս հատվածում գործում էին նաև այլ (հավանաբար երկրորդական) ճանապարհներ: Այսպես՝ աղբյուրներում հիշատակվում է Բարկուշատ-Խոտանան ճանապարհը (Ղուկաս Սեբաստացի, 1990, 49):

Արևելք-արևմուտք հաջորդ ճանապարհը անցնում էր Կոռնիձորից Լալազարի կամրջով՝ գնալով դեպի Շուշի (Շ. 1902, 2): Գործում էր նաև Գորիս-Բերձոր-Շուշի հիմնական ճանապարհը (հմմտ.՝ Потто, 1888, 73, Сысоев, 1925, 25, Տեր-Ավետիսյան, 1924c, 3, Թաղիադյան, 1975, 149):

Բացի արևելք արևմուտք ուղղվածությամբ ճանապարհներից՝ գործում էր նաև Արաքսի հովտից Մեղրի-Բարկուշատ-Հարար-Բերդաձոր-Շուշի ճանապարհը (Dubois de Montpereux, 1836, 60-61, 71):

Գրավոր աղբյուրներում հիշատակվող նշված ճանապարհներից բացի հուշարձանների կենտրոնացումը թույլ է տալիս զատել ևս մի քանի ճանապարհ. Խնածախ-Նաբիուշաղի, Խնածախ-Ծիծեռնավանք, Խոզնավար-Միրիկ, Սառնակունք-Հակ-Եզնագոմեր-Սպիտակաջուր-Կատոս:

ԳԼՈՒԽ III

Ուսումնասիրության մեթոդները

Հետազոտական խումբը՝ բացի հնագիտության, աղբյուրագիտության, պատմության և պատմական աշխարհագրության ընձեռած հնարավորություններից, օգտագործել է նաև միջմասնագիտական մեթոդաբանություն՝ կիրառելով ժամանակակից տեխնոլոգիաներ (օդալուսանկարում ԱԹՍ-ով, GIS - Geographic Information System և համակարգչային այլ ծրագրեր):

Թվայնացման այս աշխատանքների արդյունքում կառուցվել են ոչ միայն ամրոցների և ամրոցանիստ բլուրների, այլև այդ տարածքների մշակութային լանդշաֆտի եռաչափ մոդելները և քարտեզները:

Այս աշխատանքները կարելի է պայմանականորեն բաժանել երեք մասի:

Արբանյակային որոնում: Ենթադրյալ ամրոցների տարածքների մասին արդեն հավաքված տեղեկություններով կատարվում էր արբանյակային պատկերների զննում՝ Google Earth համակարգի տիեզերական լուսանկարներով, որով խնդրո առարկա տարածքի բոլոր բլուրները, բլրաշղթաները մանրամասն զննվում էին՝ նպատակ ունենալով գտնել ձեռակերտ կառուցվածքներ՝ ենթադրյալ պարսպագծեր, կամ դրանց հետագծերը: Արբանյակային լուսանկարներով զննվել է նաև Քաշաթաղի շրջանի ամբողջ տարածքը: Այս մեթոդով բացահայտված հնարավոր ձեռակերտ կառուցվածքների կետերի կոորդինատները հավաքագրվում էին: Հաջորդ քայլը նշված կոորդինատներով կետերը տեղում՝ դաշտում, այցելելն ու հետազոտելն էր:

Բացառությամբ մի քանի դեպքերի՝ այս մեթոդը հաջողված էր և սրանով տեղայնացվեցին, նույնականացվեցին և փաստագրվեցին աղբյուրներում հիշատակված և նոր հայտնաբերված ամրոցներից շատերը:

Օդալուսանկարում: Վերցնելով թիրախավորված կետերի կոորդինատները՝ դրանք հետազոտվում էին տեղում, և ամրոցի առկայության պարագայում՝ հուշարձանը օդալուսանկարահանվում էր: Ամրոցները և ամրոցանիստ բլուրները նկարահանվում էին նախապես գծված բազմանկյուններով՝ եռաչափ կարգավորումներով: Փոքր տարածք զբաղեցնող ամրոցները նկարվում էին 30 մ բարձրությունից, խոշորները՝ 50-70 մ: Յուրաքանչյուր ամրոցի համար միջինը 120-250 ելակետային լուսանկար էր ստացվում:

Համակարգչային մշակում: Հաջորդ փուլում օդալուսանկարների ելակետային նյութերից, համակարգչային ծրագրերի միջոցով, պատրաստվում էին ամրոցների օրթոգոնալ ֆոտոպլանները և մակերեսների թվային մոդելները (DSM ֆորմատ):

Բոլոր այն ամրոցները, որոնք օդալուսանկարահանվել են, ունեն առանձին օրթոֆոտոպլաններ (թվով 25)՝ իրենց կոորդինատային համակարգով (GEOTIF ֆորմատ), ինչը հեշտացնում է այդ օրթոֆոտոպլանների զետեղումը ցանկացած GIS ծրագրում: Նույն ելակետային լուսանկարներից՝ օրթոֆոտոպլանին զուգահեռ, նաև կազմվում էին ամրոցների և ամրոցանիստ բլուրների մակերեսների թվային մոդելները՝ բազմաթիվ կոորդինատային կետերով և բարձրություններով, որոնք իրենց ծածկույթի տակ ներառում էին մակերեսի վրա առկա ամեն բան՝ սկսած բուսականությունից, վերջացրած շինություններով (հետքեր, ավերակներ):

Սրանց հիման վրա հետագայում արդեն կազմվում էին ամրոցների տեղահանույթները և հատակագծերը:

Ստացված մակերեսների թվային մոդելների հիման վրա կազմվել է ուրվագծվող տեղահանույթը՝ 1 մ հորիզոնական բարձրություններով, որի վրա արդեն տեղադրվել է ամրոցի հատակագիծը՝ համապատասխան տեղով և մասշտաբներով:

Այն հուշարձանները, որոնք մեր հետազոտական խմբի կողմից օդալուսանկարահանման համար փաստացի անհասանելի էին (գտնվում էին անտառներում կամ այլ պատճառներով օդալուսանկարահանման համար անհասանելի էին), հանույթների կազման համար օգտագործվել են խնդրո առարկա տարածքների 12 և 30 մ թույլատրությամբ բարձրությունների թվային մոդելները (DEM ֆորմատ), որոնք, ի տարբերություն մակերեսների թվային մոդելների (DSM ֆորմատ), պարունակում են մակերեսի ռելիեֆային տեղեկություններ՝ առանց վերգետնյա շինությունների: Այս եղանակով կատարվել է 12 հուշարձանների՝ Աղջկաբերդ, Անդոկաբերդ 2, Գրիամ, Կառնակաշ, Հակ 1, Հակ 2, Հերիկ, Մազրա, Միջանցք, Սեթանց, Սպիտակաջուր և Տանձուտ 1 տեղահանույթի համակարգչային վերակազմություն՝ 1 մ հորիզոնականների բարձրությամբ: Տեղահանույթի սխեմատիկ այս վերակազմությունները, փաստորեն, հուշարձանների ուսումնասիրության ոլորտում կիրառվում են առաջին անգամ և, ճշգրտությանը բավական մոտ լինելով, կարող են կիրառվել նաև այլ անհասանելի հուշարձանների ուսումնասիրության համար:



ՄԱՍ Բ

ՀՈՒՇԱՐՁԱՆՆԵՐԻ ԿԱՏԱԼՈԳ

Քաշաթաղի շրջանի ամրոցները խմբավորվել են ըստ հիմնական գետահովիտներով ձգվող հնագույն ճանապարհների՝ սկսած ամենաբարձր կետից.

Ա. Աղավնո և Հոչանց գետերի ավազաններ,

Բ. Որոտանի (Բարկուշատ), Հագարիի գետերի և Արաքսի ավազաններ:

Ա. ԱՂԱՎՆՈ ԵՎ ՀՈՉԱՆՑ ԳԵՏԵՐԻ ԱՎԱԶԱՆՆԵՐԻ ԱՄՐՈՑՆԵՐԸ

№ 1. Ամրոց Սպիտակաջուր

Ամրոց, բնակատեղի, դամբարանադաշտ
Ք.ա. 2-1-ին հազ. - միջնադար
39°47'00.07"N 46°15'36.03"E, բարձրությունը՝ 1848 մ
ԱՀ Պատմության և մշակույթի հուշարձանների Պետական Ցուցակի գրանցահամարը
Քաշաթաղի շրջան N167

Հուշարձանի անվանումը
Ամրոց Սպիտակաջուր

Անվանման աղբյուրը
Մոտակա բնակավայրը

Տեղադրությունը
Գտնվում է Սպիտակաջուր գյուղի հյուսիսային եզրին՝ Հոչանց գետի անդնդախոր կիրճի աջափնյա եզրին կախվող արևելք-արևմուտք ձգվածությամբ երկարավուն բլրի վրա: Հնավայրից հարավ տարածվում է մեծ մենհիրներով Եզնագոմերի դամբարանադաշտը և Ավազահանքի բաց բնակատեղին:

Ադմինիստրատիվ պատկանելությունը
ԱՀ Քաշաթաղի շրջանի Եզնագոմեր համայնքի Սպիտակաջուր գյուղ
(ԼՂՀ Օրենք ԼՂՀ վարչատարածքային բաժանման մասին)

Նախկին ադմինիստրատիվ պատկանելությունը
Ադրբ. ԽՍՀ Լաչինի շրջանի Լենին քենդի գյուղխորհրդի Աղբուլաղ գյուղ
(Мельников, Ибрагимов, 1979, 70)

Ելիզավետպոլի գուբերնիայի Զանգեզուրի ուեզդի Ակ-բուլաղ գյուղ
(Пагирев, 2007, 38)

Պատմական տեղեկություններ
Գյուղը հիշատակվում է 1730 թ. պտղացուցակում (Օրբելեան, 1942, 42): Ստեփանոս Օրբելյանն այս գյուղը հիշատակում է Ականք անվամբ (Օրբելյան, 1986, 399, Յակոբեան, 2009, 351-352):

Զրագրություն
Հոչանց գետի աջափնյա կիրճի եզրին գյուղի հարավային հատվածով հոսում է վտակ: Գյուղի տարածքում բխում է հորդ աղբյուր:

Հուշարձանի հիշատակումները և հետագա ուսումնասիրությունները
Գյուղի միջնադարյան հուշարձաններն ուսումնասիրել են Ս. Կարապետյանը, Ա. Հակոբյանը, Հ. Սիմոնյանը (Յակոբեան, 2009, 36): Ամրոցը, դամբարանադաշտը և ամրոցանիստ բլրին գտնվող մատուռը դիտարկել է գյուղի բնակիչ-վերականգնող Ա. Կնյազյանը: Ամրոցը 2013 թ. ուսումնասիրել է ԱՀ արշավախումբը (Սարգսյան և այլք, 2014, 155, 159, Կարապետյան, Սարգսյան, 2018b):

Հուշարձանի նկարագրությունը

Բլուրը երեք կողմերից՝ բացի անմատչելի հյուսիսայինից, ամրացված է կիկլոպյան շարվածքով դրված պարիսպներով: Բնակատեղին տարածվել է նաև բուն ամրոցից դուրս ընկած արևմտյան փոքր բլրի վրա, ուր պահպանվել են նաև հնագույն դամբարաններ: Ինչպես բուն ամրոցում, այնպես էլ միջնաբերդի ներսում ուրվագծվում են խոշոր քարերով դրված պատերի ու շինությունների հետքեր՝ պատաշարերով փակվող ընդարձակ տարածություններ:

Ամրոցը շատ վատ է պահպանվել: Ավերածությունները հատկապես նկատելի են ամրոցի հարավային հատվածում, որը մեծապես տուժել է գյուղի ժամանակակից կառուցապատման հետևանքով: Ավելի մեծ ավերվածություններ են հասցրել հուշարձանին խորհրդային շրջանում ամրոցի ներսում հողօգտագործման նպատակով կատարված հարթեցումները: Հնարավոր է դիտարկել միայն պարիսպների ոչ շատ մեծ հատվածներ: Դեպի հյուսիս ավերածությունները պակասում են, ուստի հնարավոր է դիտարկել երկշար պարսպի հետքեր:

Միջնադարում ամրոցի տարածքում գոյացել է գյուղատեղի: Միջնադարյան բոլոր շինությունները կառուցվել են կրաշաղախով՝ կոտրատելով, փոքրացնելով հին՝ բրոնզ-երկաթեդարյան ամրոցի պարիսպների քարերը, ինչի հետևանքով հին ամրոցի պարիսպները երևում են հատվածաբար, լավագույն դեպքում՝ մեկ-երկու քարի բարձրությամբ: Միջնադարյան բնակատեղիում շատ դեպքերում վերաշարվելով՝ օգտագործվել են հին պատերն ու պարիսպները՝ կցվելով դրանց ավելի փոքր քարերից դրված պատեր ու սենյակներ:

Միջնաբերդը կառուցված է բլրի արևելյան՝ համեմատաբար բարձրադիր եզրին, և առանձին պարսպագծով անջատվում է հիմնական ամրոցից: Միջնաբերդում այսօր էլ երևում են երկու՝ մոտ 2 մ խորությամբ ու 1,5 մ տրամագծով, ներսից քարերով շարված միջնադարյան տնտեսական հորեր:

Ամրոցանիստ բլրի հարավային պարսպագծի մոտ նկատվում է դարպասի նման ձեռակերտ բացվածք, որի ներսում փոքր քարերով շարված է մի մեծ շինություն, հնարավոր է՝ եկեղեցի (Սարգսյան, 2014b, 303): Պահպանվել են կրաշաղախով շարված եկեղեցու հյուսիսային և հարավային պատերը: Դարպասի դիմաց՝ դրսում, հենապատերով ամրացված արհեստական հրապարակն է (Գնունի, Խաչատրյան, 2010, 55, Սարգսյան և այլք, 154):

Բացառված չէ, որ բրոնզ-երկաթեդարյան հուշարձանները տարածվում էին նաև այսօրվա բնակավայրի տարածքում, ինչի մասին են վկայում բրոնզ-երկաթեդարյան խեցեղենի բազմաթիվ նմուշները՝ հայտնաբերված գյուղի տարածքում (Գնունի, Խաչատրյան, 2010, 55):

Տարածքի այլ հուշարձաններ

Դամբարանադաշտ

Դամբարաններ հավաստված են հին բնակատեղիի սահմաններում, որոնք, սակայն, ավերված են և թալանված: Դամբարաններն ունեցել են քարահողային լիցքեր, որոնց տակ ամփոփված են քարաշեն խցերը (Գնունի, Խաչատրյան, 2010, 55): Այդպիսի ավերված խցերից հայտնաբերվել և Քաշաթաղի երկրագիտական թանգարանին են հանձնվել մ.թ.ա. VIII-VI դդ. բնորոշ նյութեր, այդ թվում՝ ծիսական տարրեր՝ օղեր, երասանակներ (ՔԵԹ 103-108/4), որոնք ունեն իրենց զուգահեռները ուրարտական և սկյութական մետաղագործությունում (Գնունի, 2014, 160):

Միջնադարյան հուշարձաններ

Տապանաքարեր և խաչքարեր են հայտնաբերված են գյուղի ողջ տարածքից, մանավանդ՝ խորհրդային տարիներին հիմնահատակ ավերված եկեղեցու վայրում կառուցված գոմի շրջակայքում: Տապանաքարերը թվագրվում են XIV-XVIII դդ. (Գնունի, Խաչատրյան, 2010, 55, Յակոբեան, 2009, 352): Գյուղի տարածքում հոսող վտակների վրա պահպանվել են ջրաղացի ավերակներ (Կարապետյան, 1999, 156):

Քարտեզ, հուշարձանի տեղադրությունը



Տեղահանույթի և հատակագծի սխեմատիկ վերակազմություն





Ամրոցի ընդհանուր տեսքը հարավ-արևմուտքից



Արտաքին պարսպի ուղղանկյուն աշտարակի հիմնաքարերը



Եկեղեցու դիմացի դարպասանման բացվածքը



Պատաշարի երևացող հատվածը



Պարսպագծի պահպանված հատվածը



Հոչանցի ձորաեզրի կլորացող շինությունը

№ 2. Ամրոց Եզնագոմեր

Ամրոց, բնակատեղի
Ք.ա. 2-1-ին հազ.
39°44'30.01"N 46°14'41.00"E, բարձրությունը՝ 2000 մ
ԱՀ Պատմության և մշակույթի հուշարձանների Պետական Ցուցակի գրանցահամարը
Քաշաթաղի շրջան N56

Հուշարձանի անվանումը
Ամրոց Եզնագոմեր

Անվանման աղբյուր
Մոտակա բնակավայրը

Բնակավայրի այլ անվանումներ
Լենինքենդ, Ղարաքեշիշ, Եզնագոմեր

Տեղադրությունը
Գտնվում է Լեռնահովիտ (Եզնագոմեր) գյուղից 2,5 կմ հվ-ամ.՝ Հակ գյուղից 4 կմ հյուսիս, ընդարձակ սարահարթի հյուսիսային եզրագծին բարձրացող ու շրջապատի ալպյան մարգագետինների վրա գերիշխող հարթ մակերեսով բլրի վրա:

Ադմինիստրատիվ պատկանելությունը
ԱՀ Քաշաթաղի շրջանի Լեռնահովիտ գյուղ (Եզնագոմեր)
(ԼՂՀ Օրենք ԼՂՀ վարչատարածքային բաժանման մասին)

Նախկին ադմինիստրատիվ պատկանելությունը
Ադրբ. ԽՍՀ Լաչինի շրջանի Լենինքենդի գյուղխորհրդի Լենինքենդ գյուղ
(Мельников, Ибрагимов, 1979, 69)
Ելիզավետպոլի գուբերնիայի Զանգեզուրի ուեզդի II տեղամասի (կենտրոն՝ Տեղ գյուղ) Մինքենդի գյուղական հասարակություն, Կարաքիշիշ գյուղ
(Пагриев, 2007, 150, Кондратенко, 1902, 293, Кавказский календарь, 1916, 54):

Պատմական տեղեկություններ
Լեռնահովիտ-Եզնագոմեր գյուղը նույնացվում է XVIII դարի պտղացուցակում հիշատակված Եզնագոմեր գյուղի հետ (Օրբելեան, 1942, 42, Հիւբշման, 1907, 338): Այս գյուղը հիշատակվում է նաև XVII դ. վերջին կրկնօրինակված Մաշտոցի հիշատակարանում: Ա. Հակոբյանի կարծիքով՝ այս գյուղը համապատասխանում է Ստեփանոս Օրբելյանի հիշատակած Մեղի գյուղին (Յակոբեան, 2010, 368-373, Կարապետյան, 1999, 127):

Ջրագրություն
Բաց, ներկայումս անջրդի դաշտում

Տեսողական կապը այլ հուշարձանների հետ
Ամրոցներ՝ «Միջանցք», Հակ 1, Հերիկ

Հուշարձանի հիշատակումները և հետագա ուսումնասիրությունները
2013 թ. հուշարձանը ուսումնասիրել է ԱՀ արշավախումբը (Սարգսյան և այլք, 2014, 163, Կարապետյան, Սարգսյան, 2018b): Տարածքում գտնվող հուշարձաններից Ավազահանքի բնակատեղիում 1996–1997 թթ. պեղումներ են անցկացրել Ա. Գնունին, Գ. Խաչատրյանը և Գ. Վարդանյանը: Նյութերը պահպանվում են Քաշաթաղի երկրագիտական թանգարանում: Եզնագոմերի դամբարանադաշտը 1970-ականներին հավաստել է Վ. Ալիևը (Алиев, 1981, 414), պեղումները՝ 1996 թ. Վ. Գայսերյանի, Գ. Խաչատրյանի, Ա. Գնունու: Միջնադարյան հուշարձանները ուսումնասիրել է Ս. Կարապետյանը:

Հուշարձանի նկարագրությունը

Միջնաբերդ
Հայաստանի ամենամեծ կիկլոպյան ամրոցներից է, որի պարսպապատով ներփակվող տարածքը 3 հեկտարից ավելին է (երկարությունը՝ 280 մ, լայնությունը՝ 110 մ): Այն ամբողջ պարագծով ամրացված է մեծածավալ ճեղքած ժայռաբեկորներից, չոր շարվածքով լայնությամբ երկշերտ դրված և տեղ-տեղ մինչև 2-4 մ բարձրությամբ պահպանված պարսպապատերով: Պարիսպը կառուցված է բլրի մա-

կերեսի ժայռոտ եզրագծի ուղղությամբ, հաճախ՝ նրա վրայով, այնպես, որ տեղ-տեղ ժայռագծի ուղղահայաց կտրված ճակատը օգտագործված է որպես պարսպի ճակատ:

Հիմնական պարսպի հյուսիս-արևմտյան ճակատի կենտրոնական մասում հստակ ուրվագծվում է ամրոցի 3,0 մ լայնությամբ գլխավոր մուտքի բացվածքը: Ամրոցանիստ բլրի հյուսիսային ստորոտից դեպի գլխավոր մուտքն է բարձրանում, երկու կողմերից պատաշարերով ներփակված՝ մոտ 50-60 մ երկարությամբ, դեպի վեր նեղացող միջանցքը: Ամրոցի ներսում երևում են երկշերտ ու միաշերտ միջնապատերով առանձնացված ընդարձակ հատվածներ, ամենայն հավանականությամբ՝ անասնափարախներ, որոնք ուրվագծվող փողոց-անցումներով կապվում են գլխավոր մուտքի հետ: Բոլոր առանձնացված անասնափարախների անկյուններում՝ պարսպապատի տակ, նկատվում են ոչ մեծ, ուղղանկյուն ու կլորացող, մեկ-երկու սենյականոց շինությունների հետքեր, ըստ ամենայնի, տվյալ փարախի անասնահոտի հովիվների կացարանները:

Բնակատեղի

Հիմնական պարսպագծից դուրս երևում են բազմաթիվ մեծ ու փոքր սենյակներ և պատաշարերով եզերված մեծ հատվածներ: Խիտ կառուցապատված են եղել առանձնապես ամրոցի հարավային ու հարավ-արևելյան ստորոտները: Այստեղ հենապատ-պարսպապատերով կազմակերպված արհեստական դարավանդներին պահպանվել են բազմաթիվ շինությունների հետքեր: Ամրոցը շրջապատող փոքր բլուրներով ու սելավատարերով կտրատված ընդարձակ տարածքում երևում են երկարաձիգ քարե ցանկապատ-սահմանագծեր, բազմաթիվ փարախներ և առանձին պատերի հատվածներ:

Հուշարձանի տարածքում վերգետնյա խեցեղեն չի հայտնաբերվել, բայց, դատելով շարվածքից, ամրոցը կարելի է թվագրել բրոնզ-երկաթեդարյան ժամանակաշրջանով՝ Ք.ա. 2-1 հազարամյակներով (Սարգսյան և այլք, 2014, 156):

Տարածքի այլ հուշարձաններ

Ավազահանքի բնակատեղի

Հնավայրը սփռված է մի քանի ոչ մեծ բլուրների վրա՝ զբաղեցնելով, ընդհանուր առմամբ, մոտ 7 հա տարածք: Հետազոտվել է ճանապարհի ձախ կողմում տեղադրված բլուրներից մեկը, որը խորհրդային տարիներին օգտագործվելով որպես ավազահանք՝ կտրվել էր հյուսիս-հարավ առանցքով, որի բարձրությունը 8 մ է, իսկ երկարությունը՝ 30: Կտրվածքի հետազոտությունը թույլ տվեց կազմել բլրի երկրաբանական նկարագիրը (Գ. Վարդանյան): Զատվել է 7 շերտ, որոնցից մշակութային մնացորդներ հայտնի են միայն վերին VII շերտից: Այն հագեցած է հնագիտական մնացորդներով և ոսկորներով: Հուշարձանի պեղումների ընթացքում պեղվեցին 3 հորեր, որտեղ հայտնաբերված խեցեղենը հիմնականում բնորոշ է զարգացած միջնադարին, սակայն հատակին հայտնաբերվել է Ք.ա. III հազ. և VII-V դդ. բնորոշ խեցեղեն: Ընդհանուր առմամբ՝ հայտնաբերված հնագիտական նյութը կարելի է բաժանել մի քանի խմբի.

ա) էնեոլիթին բնորոշ անոթների բեկորներ (ՔԵԹ խ/հ 24, 26, 30, 32, 32, 152, 154/2),

բ) վաղ բրոնզին բնորոշ սև փայլեցված խեցեղենի բեկորներ (ՔԵԹ խ/հ 22, 39, 92, 155/2),

գ) ուշ բրոնզի և վաղ երկաթի դարաշրջաններին բնորոշ նյութ (ՔԵԹ խ/հ 25, 31, 34, 35/2),

դ) Ք.ա. VII-V դդ. բնորոշ խեցեղեն (ՔԵԹ խ/հ33, 157/2),

ե) ուշ անտիկ շրջանի խեցեղեն (ՔԵԹ խ/հ 37/2): Այս շրջանում բլրի բնակեցման մասին վկայում են արևելյան հատվածում պահպանված հյուսիս-հարավ ուղղվածությամբ քարարկղերը,

զ) միջնադարին բնորոշ հնագիտական նյութ: Այն կազմում է գտածոների առավել մեծ խումբը. շինարարական խեցեղենի բազմաթիվ բեկորներ (ՔԵԹ խ/հ 52/2), ձիթաճրագներ (ՔԵԹ խ/հ 23/2), սափորներ, թաղարներ (ՔԵԹ խ/հ 27, 36, 42, 46-59/2): Հատկանշական են ջնարակած խեցեղենի առանձին բեկորները (ՔԵԹ խ/հ 64, 65/2), քառակող նետասլաքը (ՔԵԹ խ/հ 66/2), ինչպես նաև ապակյա մատանու բեկորները (ՔԵԹ խ/հ 69/2) (Գևունի, Խաչատրյան, 2010, 59-61):

Հետազոտվող տարածքում հայտնաբերվել է մի քանի դամբարանադաշտ: Գյուղի տարածքում Վ. Գայսերյանը հավաստել է դամբարանադաշտ՝ մեծ տրամագծով դամբաններով, որոնց վրա կանգնեցված էին 2-3 մ բարձրությամբ մենհիրներ: Եվս մեկ ընդարձակ դամբարանադաշտ գտնվում է 1,5 կմ արևելք՝ Կայծքարի սար լեռան արևելյան ստորոտում, Արվական-Եզնագոմեր և Արվական-Կատոս ճանապարհների խաչմերուկում: Դամբարանադաշտում պեղվել է մեկ դամբարան: Դամբարանն ունի քարահողային լիցք՝ 13 մ տրամագծով և 2,5 մ բարձրությամբ: Վերին իջեցուկ խուցը ընդարձակ քարարկղ էր: Պեղումների ընթացքում հայտնաբերվել է մեծաքանակ մետաղական նյութ

(գավազանի գլխամաս (ՔԵԹ ի/h 20/1), ապարանջաններ (ՔԵԹ ի/h 15, 17-19/1), մատանիներ (ՔԵԹ ի/h 14, 16/1), ուլունքներ (ՔԵԹ ի/h 146/1) և խեցեղեն (ՔԵԹ ի/h 1-13/1)): Պատի մեջ ներդրված էին քարե կուռքեր (ՔԵԹ ի/h 134-135/1): Վերին խցի նյութը բնորոշ է Ք.ա. X-IX դդ.: Ստորին խուցը հիմնահողային է՝ ուղղված հյուսիս-հարավ առանցքով (ՔԵԹ ի/h 147-148/1): Մուտքից դեպի ստորին խուց տանում էր թեք դրոմոս:

Քարտեզ, հուշարձանի տեղադրությունը



Օրթոֆոտոպլան



Տեղահանույթ և հատակագիծ





Ամրոցանիստ լեռը հարավից



Հյուսիս-արևմտյան պարիսպը և գլխավոր մուտքի ուղին



Հարավային լանջի պարսպագծերը



Ամրոցի հյուսիսային եզրամասը ներսից



Պարսպագծի հատված



Հարավային լանջի կառուցապատումը

№ 3. Ամրացված փարախներ «Միջանցք»

Ք.ա. 2-1-ին հազ.
39°45'51.07"N 46°13'56.06"E, բարձրությունը՝ 2163 մ
ԱՀ Պատմության և մշակույթի հուշարձանների Պետական Ցուցակի գրանցահամարը
Քաշաթաղի շրջան N63

Հուշարձանի անվանումը
Ամրացված փարախներ «Միջանցք»

Անվանման աղբյուրը
Հատակագծային տեսքը

Տեղադրությունը
«Միջանցք» պայմանական անվանումը տրված է մարդու կողմից ամրացված այն ժայռային կազմավորումներին, որոնք գտնվում են Լեռնահովիտ գյուղից 3,6 կմ արևմուտք՝ Եզնագոմեր ամրոցից 2,7 կմ հյուսիս-արևմուտք՝ սելավատարերով կտրատված ալպյան մարգագետիններում:

Ադմինիստրատիվ պատկանելությունը
ԱՀ Քաշաթաղի շրջանի Լեռնահովիտ գյուղ (Եզնագոմեր)
(ԼՂՀ Օրենք ԼՂՀ վարչատարածքային բաժանման մասին)

Նախկին ադմինիստրատիվ պատկանելությունը
Ադրբ. ԽՍՀ Լաչինի շրջանի Լենինքենդի գյուղխորհրդի Լենինքենդ գյուղ
(Мельников, Ибрагимов, 1979, 69)
Ելիզավետպոլի գուբերնիայի Զանգեզուրի ուեզդի II տեղամասի (կենտրոն՝ Տեղ գյուղ) Մինքենդի գյուղական հասարակություն, Կարաքիշիշ գյուղ
(Пагирев, 2007, 150, Кондратенко, 1902, 293, Кавказский календарь, 1916, 54)

Ձրագրություն
Բաց, անջրդի դաշտում

Տեսողական կապը այլ հուշարձանների հետ
Ամրոց՝ Եզնագոմեր

Հուշարձանի հիշատակումները և հետագա ուսումնասիրությունները
2013 թ. հուշարձանը հայտնաբերել ու ուսումնասիրել է ԱՀ արշավախումբը (Սարգսյան և այլք, 2014, 163):

Հուշարձանի նկարագրությունը
«Միջանցքը» հրաբխային լավայի հոսքից առաջացած, ստորոտից 5-10 մ ոլորներով բարձրացող ժայռագիծ է, որի գագաթի մակերեսը բնականից երկփեղկված է: Այդ երկփեղկված մակերեսի եզրագծերով, միմյանց զուգահեռ ձգվում են երկու՝ միևչև 3-4 մ բարձրությամբ պահպանված բազալտե ժայռագծեր, որոնք, քայքայվելով, վերածվել են միմյանցից 15-20 մ հեռավորությամբ զուգահեռ պատերով ներփակված, երկարաձիգ ժապավենաձև միջանցքի: Այս ժայռային կազմավորումը ոլորներով ձգվում է արևելք-արևմուտք ուղղությամբ՝ մոտ 700-800 մ: Միջանցքի ներսի ողջ մակերեսը մաքրված է թափված քարերից, իսկ երկայնական ժայռային եզրագծերը լրացուցիչ ամրացված են ակնհայտորեն ձեռակերտ կիկլոպյան շարվածքներով՝ կազմելով պարսպագծերով պաշտպանված ամրակառույցներ: «Միջանցքը»՝ ներսից ընդլայնական գնացող միջնապատերով, բաժանված է 8-10 ներփակ՝ մեծ առանձնացված հատվածների, ամենայն հավանականությամբ՝ անասնափարախների, որոնցից յուրաքանչյուրի անկյունում կարելի է նկատել փոքր ուղղանկյուն կամ կլորացող կացարանի ավերակներ: Որոշ միջնապատերի մեջ նկատվում են մուտքերի անցումների բացվածքներ: Առանձնացված անասնափարախների զգալի մասն ունեցել է միջանցքից դուրս գալու ինքնուրույն մուտքեր՝ բացված հյուսիսային կամ հարավային երկայնական պարսպագծերի մեջ: Այս մուտքերը, որպես կանոն, ուղեկցվում են երկու կողմերից պատաշարերով ուղղորդվող ստորոտից դեպի պարիսպը բարձրացող թեքադիր ճանապարհներով: Այսպիսով, աշխատանքի նվազագույն ծախսմամբ, բնական ժայռային ելուստը ներսից մաքրվելով ու մասամբ վերակառուցվելով, վերածվել է ամրակառույցի, ուր կարող էին պատսպարվել մարդիկ՝ իրենց մեծաքանակ անասնահոտերով:

Ամրակառույցի բոլոր պատերը շարված են անմշակ, բնակտոր ճեղքած քարերից՝ չոր, կիկլոպյան շարվածքով, ինչը հիմք է տալիս վերագրելու հուշարձանը բրոնզ-երկաթեդարյան ժամանակաշրջանին:

Տարածքի այլ հուշարձաններ

Դամբարանադաշտ

«Միջանցքի» շրջակա տարածքների բլուրների վրա գտնվում են բազմաթիվ բրոնզ-երկաթեդարյան դամբարաններ: Այստեղ կարելի է առանձնացնել ենթադրյալ տոհմական դամբարանների խմբեր, երբ մեկ մեծ դամբարանաբլուրի ներքո՝ ամփոփված քարարկղային թաղումի շուրջը, խմբավորված են ավելի փոքր դամբարանաբլուրներ ու կրոմլեխով ներփակված հիմնահողային թաղումներ: Դամբարանների զգալի մասը կողոպտված է:

Քարտեզ, հուշարձանի տեղադրությունը



Տեղահանույթի և հատակագծի սխեմատիկ վերակազմություն





Ընդհանուր տեսքը հարավից



Ներսի միջնապատերից մեկը



Միջնամասը հարավից



Ներսի կառուցվածքը



Հարավային կողմի կողոպտված մեծ դամբարանը

№ 4. Ամրոց Հակ 1

Ամրոց, ամրացված անասնապարախ
Ք.ա. 2-1-ին հազ.
39°43'25.04"N 46°14'49.08"E, բարձրությունը՝ 1919 մ
ԱՀ Պատմության և մշակույթի հուշարձանների Պետական Ցուցակի գրանցահամարը
Քաշաթաղի շրջան N106

Հուշարձանի անվանումը
Ամրոց Հակ 1

Անվանման աղբյուրը
Մոտակա բնակավայրը

Տեղադրությունը
Գտնվում է գյուղից 1,6 կմ հյուսիս՝ բլրակներով կտրատված, ալպյան մարգագետինների ընդարձակ դաշտում առանձնացող ոչ բարձր հրաբխային բլրի վրա:

Ադմինիստրատիվ պատկանելությունը
ԱՀ Քաշաթաղի շրջանի Հակ գյուղ
(ԼՂՀ Օրենք ԼՂՀ վարչատարածքային բաժանման մասին)

Նախկին ադմինիստրատիվ պատկանելությունը
Ադրբ. ԽՍՀ Լաչինի շրջանի Մինքենդի գյուղխորհրդի Մինքենդ գյուղ
(Мельников, Ибрагимов, 1979, 69)
Ելիզավետպոլի գուբերնիայի Զանգեզուրի ուեզդի II տեղամասի (կենտրոն՝ Տեղ գյուղ) Մինքենտի գյուղական հասարակություն Մին-քենդ գյուղ
(Пагирев, 2007, 206, Кавказский календарь, 1916, 54)

Պատմական տեղեկություններ
Հակ գյուղը նույնացվում է պատմական Հակի հետ, որը հիշատակում է Ստեփանոս Օրբելյանը (Ստեփանոս Օրբելյան, 1986, 399): Այն հիշատակված է նաև XVIII դարի պտղացուցակում (Օրբելեան, 1942, 42): XVII դարի վերջում գյուղն արդեն հայտնի էր Մինքենդ անունով (Կոստիքյան, 2001, 170): Միևնույն ժամանակ ներկայիս գյուղի տարածքը հաճախ նույնացվում էր հնչողությամբ մոտիկ Մննի գյուղի հետ (Ալիշան, 1893, 267, Հասրաթյան, 1985, 155, Карапезян, 1987, 43): Այս առումով, Ա. Հակոբյանի մեջբերած ՇԻՆԵՑԱԻ ՍԼՈՒՐՉԲ ԵԿԵՂԵՑԻՍ ՆՈՐԱ//ԿՆՈՒՆՔ ՀԱԿԱՅ ՂՈՎՈՒՐԴՍ; // ԹՎՈՃԻԴ (1675) արձանագրությունում Ս. Բարխուդարյանի թերի ՀԱՅԿԱՅ ԺՈՂՈՎՈՒՐԴՍ ընթերցման սրբագրումը ապացուցում է, որ Մինքենդը նույն Հակն է (Յակոբեան, 2009, 34-35, հմմտ.՝ Բարխուդարյան, 1982, 194): XIX դարի վերջում Մինքենդը, եկեղեցական առումով, ենթարկվում էր Տաթևի առաջնորդությանը (Հայկական Առաքելական (Լուսավորչական) եկեղեցին..., 1879, էջ 398-399): Տարածքում հայ բնակչությունը՝ չնայած բազմաթիվ բռնաճնշումների և կոտորածների, պահպանվել էր մինչև XX դարի սկիզբը (Քաղուածներ Սիսօդի օրագրերից, 1916, 636)՝ կազմելով բնակչության մինչև 48 %-ը: Այստեղ ապաստանել էին Զանգեզուրի ուեզդի տարբեր գյուղերից գաղթած հայերը (Տեր-Ավետիսյան, 1924b, 3):

Զրագրություն
Տարածքը ներկայումս անջրդի է, բայց բազմաթիվ սելավատարերի առկայությունը վկայում է, որ ժամանակին այստեղ եղել են գետակներ ու աղբյուրներ:

Տեսողական կապը այլ հուշարձանների հետ
Ամրոցներ՝ Հակ 2, Եզնագոմեր, Հերիկ

Հուշարձանի հիշատակումները և հետագա ուսումնասիրությունները
2013 թ. հուշարձանը ուսումնասիրել է ԱՀ արշավախումբը (Սարգսյան և այլք, 2014, 158-160, Կարապետյան, Սարգսյան, 2018b): Միջնադարյան հուշարձանների ուսումնասիրությունը՝ Ս. Կարապետյանի, վիմագիր արձանագրությունների ուսումնասիրությունները՝ Ս. Բարխուդարյանի, Ս. Կարապետյանի, Ա. Հակոբյանի:

Հուշարձանի նկարագրություն

Ամրոցը, որ զբաղեցնում է բլրի գագաթը և, մասամբ, հարավային լանջը՝ հատակագծում կլորավուն է, ընդգրկված է մեկ ընդհանուր պարսպագծի մեջ: Պարիսպը կառուցված է մեծ անմշակ ճեղքած քարերից, չոր՝ կիկլոպյան շարվածքով, որը տեղ-տեղ պահպանվել է մինչև 2 մ բարձրությամբ: Ամրոցը բաղկացած է երկու մասերից՝ բնակելի հատվածից ու ամրացված անասնափարախից:

Բնակելի հատվածը զբաղեցնում է ամրոցի հարավային կեսը, որտեղ ուրվագծվում են միմյանց խիտ դրված, ոչ մեծ սենյակներ հիշեցնող ուղղանկյուն կառույցներ և նրանց մեջ նկատվող ավելի մեծ, տձև հատվածներ, հավանաբար, բաց բակեր ու փողոց-անցումներ: Նման կառույցներ նկատվում են նաև շրջապարսպից դուրս՝ հարավային լանջին: Այս շինությունները շարված են միջին չափի ճեղքած քարերից և կանգուն են 1-2 քարի բարձրությամբ:

Անասնափարախը նեղ երկար, միջանցքատիպ հատված է (մոտ 20x120 մ), որը կորագծով փակում է ամրոցի հյուսիսային կողմը: Այն տեղադրված է բլրագագաթի ժայռագծի բնական երկփեղկված թամբաձև բացվածքի մեջ և ժայռոտ եզրագծերում՝ ամրացված լրացուցիչ ձեռակերտ շարվածքներով: Անասնափարախը՝ 3-4 ընդլայնական դրված, միաշար միջնապատերով բաժանվում է մի քանի ավելի փոքր միմյանց հետ հաղորդակցվող հատվածների (միջնապատերի մեջ նկատվում են մուտքերի բացվածքներ): Ուշագրավ է, որ անասնափարախի միջնապատերով բաժանված յուրաքանչյուր հատվածի անկյունում կա մեկական փոքր, ուղղանկյուն բնակելի սենյակ: Ամրացված անասնափարախի մուտքը արևելյան եզրին է: Այն երկատված ժայռագծի երկար միջանցքի ձևով իջնում է բլրի բարձունքից և բացվում ամրոցի արևելյան ստորոտում ու շրջակա լանջերին տարածվող՝ մոտ 200x120 մ չափերով, տձև հատակագծով, ընդարձակ հրապարակում: Այս բաց փարախը՝ իր ամբողջ երկայնքով, եզրագծված է մեկ քարի բարձրությամբ դրված քարե ցանկապատով:

Ամրոցում վերգետնյա հնագիտական նյութ չի հայտնաբերվել, բայց, դատելով շինությունների կառուցման տեխնիկայից, այն կարելի է վերագրել բրոնզ-երկաթեդարյան ժամանակաշրջանին:

Տարածքի այլ հուշարձաններ

Գյուղատեղիներ

Մեկ գյուղատեղի հիշատակում է Ա. Ղարագյոզյանը (Карагезян, 1987, 43):

Եկեղեցի և մատուռ

Եկեղեցին (ս. Մինաս) գտնվում է գյուղի հին (հայկական) թաղի կենտրոնական հատվածում: Եռանավ բազիլիկ կառույց է՝ 22,58x12,8 մ չափերով՝ կրաշաղախով կառուցված գորշ-դեղնավուն քարից: Հարավային մուտքի բարավորին պահպանվել է 1675 թ. շինարարական արձանագրությունը (Կարապետյան, 1999, 131, Բարխուդարյան, 1982, 194, Սարգսյան, 2014b, նկ. 159, Гусейнова, 2009, 91): Մատուռը (ս. Աստվածածին) կառուցված է գյուղից 1.4 կմ հարավ-արևելք (Բարխուդարյան, 1982, 194, Սարգսյան, 2014b, նկ. 160, Гусейнова, 2009, 91) :

Գերեզմաններ

Տապանաքարեր են հավաստված ինչպես եկեղեցու, այնպես էլ մատուռի հարևանությամբ (Բարխուդարյան, 1982, 194, Пчелина, 1940, 245-246):

Բերձոր-Հակ-Արվական ճանապարհի ձախ կողմում՝ Հակ-Արվական կես ճանապարհին, հավաստված է փոքր քարերից շարված պարսպաշարի հատված (Գնունի, Խաչատրյան 2010, 55)

Կամուրջ

Երկթռիչք թաղակապ քարաշեն կամուրջ՝ կառուցված XIX դ.: Թաղակիր կամարները սրբատաշ են, իսկ մնացած շարվածքը՝ կոպտատաշ: Կամրջի երկարությունը 16 մ է, իսկ լայնությունը՝ 2,85 սմ (Կարապետյան, 1999, 132):

Քարտեզ, հուշարձանի տեղադրությունը



Տեղահանույթի և հատակագծի սխեմատիկ վերակազմություն





Ամրոցի ընդհանուր տեսքը հարավից



Անասնափարախի միջնապատը



Հարավային բնակելի հատվածը



Վերնամասի պարսպազծի հատված

№ 5. Ամրոց Հակ 2

Ամրացված անասնափարախ, դամբարանադաշտ
Ք.ա. 2-1-ին հազ.
39°43'41.01"N 46°15'07.02"E, բարձրությունը՝ 1893 մ
ԱՀ Պատմության և մշակույթի հուշարձանների Պետական Ցուցակի գրանցահամարը
Քաշաթաղի շրջան N116-117

Հուշարձանի անվանումը
Ամրացված անասնափարախ Հակ 2

Անվանման աղբյուրը
Մոտակա բնակավայրը

Տեղադրությունը
Գտնվում է գյուղից հյուսիս տարածվող ալպյան մարգագետինների տարածքում՝ «Հակ 1» ամրոցից 0,7 կմ հյուսիս-արևելք:

Ադմինիստրատիվ պատկանելությունը
ԱՀ Քաշաթաղի շրջանի Հակ գյուղ
(ԼՂՀ Օրենք ԼՂՀ վարչատարածքային բաժանման մասին)

Նախկին ադմինիստրատիվ պատկանելությունը
Ադրբ. ԽՍՀ Լաչինի շրջանի Մինքենդի գյուղխորհրդի Մինքենդ գյուղ
(Мельников, Ибрагимов, 1979, 69)
Ելիզավետպոլի գուբերնիայի Զանգեզուրի ուեզդի II տեղամասի (կենտրոն՝ Տեղ գյուղ) Մինքենդի գյուղական հասարակություն Մին-քենդ գյուղ
(Пагирев, 2007, 206, Кавказский календарь, 1916, 54)

Պատմական տեղեկություններ
Հակ գյուղը նույնացվում է պատմական Հակի հետ:

Զրագրություն
Տարածքը ներկայումս անջրդի է:

Տեսողական կապը այլ հուշարձանների հետ
Ամրոցներ՝ Հակ 1, Հերիկ

Հուշարձանի հիշատակումները և հետագա ուսումնասիրությունները
2013 թ. հուշարձանը ուսումնասիրել է ԱՀ արշավախումբը (Սարգսյան և այլք, 2014, 158-160, Կարապետյան, Սարգսյան, 2018b):

Հուշարձանի նկարագրությունը
Տեղադրված է երկարավուն, բնականից երկփեղկված մակերեսով, ոչ շատ բարձր ժայռային բլրին: Բլրի արևելք-արևմուտք առանցքով երկարությունը 160 մ է, առավել լայնությունը՝ 60 մ: Բարձրությունը հարավային կողմում մոտ 18-20 մ, հյուսիսայինում՝ 6-7 մ: Բլրի եզրագծերի երկայնական կողմերով գնում են երկու միմյանց զուգահեռ մոտ 4-5 մ բարձրությամբ բնական ժայռագծեր, որոնց միջև առաջացած երկարավուն, ներճկված, թամբաձև իջվածքը քամիներից պաշտպանված իդեալական վայր է անասնափարախի համար: Այս ժայռագծերի վերին՝ ցից քարերով ավարտվող եզրագծերի բաց մնացած հատվածները, լրացուցիչ ամրացված են նույն անմշակ ճեղքած ժայռաբեկորներից՝ չոր շարվածքով պատերով: Սրանց միջև ընկած թամբաձև իջվածքի հյուսիսային ու հարավային վերջակետերը փակված են կիկլոպյան շարվածքով, ընդլայնական, ամբողջովին ձեռակերտ, ուղղաձիգ պարիսպներով: Վերջինները երևում են 1-2 քարի բարձրությամբ, որոնց մեջ նկատվում են լայն մուտքերի բացվածքներ: Պարիսպներով ներփակված տարածքը՝ միաշերտ միջնապատերով, բաժանված է առնվազն չորս առանձնացված հատվածների: Հատվածների ընդարձակ տարածքների անկյուններում նկատվում են փոքր ուղղանկյուն ու կլորացող բնակելի սենյակներ հիշեցնող շինությունների ավերակներ: Այսպիսով, աշխատանքի նվազագույն ծախսումով՝ անմիջապես արոտավայրում, ստացվում են լավ ամրացված, քամիներից ու վայրի կենդանիներից պաշտպանված մեծաքանակ անասնահոտը և ուղեկցող մարդկանց պատսպարելու փարախ-ամրոցներ: Ամրոցի հյուսիսային

մուտքի դիմաց բացվող լայն տարածքը եզերված է հատվածաբար պահպանված քարե միաշերտ ցանկապատով, որը, ակնհայտորեն, այս փարախ-ամրոցի համաժամանակյա կառույցն է, նրա բացօթյա շարունակությունն ու բաղադրամասը: Հուշարձանի շրջակայքի տարածքների բարձրադիր կետերում պահպանվել են նաև բազմաթիվ մեծ ու փոքր դամբարանաբլուրներ ու կրոմլեխներով ներփակված թաղումներ: Դամբարանները դասավորված են անկանոն՝ միմյանցից զգալի հեռավորության վրա, և սփռված են ամբողջ դաշտով մեկ:

Քարտեզ, հուշարձանի տեղադրությունը



Տեղահանույթի և հատակագծի սխեմատիկ վերակազմություն





Ընդհանուր տեսքը արևմուտքից



Արևմտյան մուտքը փակող պատաշարը



Ամրոց-փարախի ներսի տարածքը



Միջնապատի հատվածը

№ 6. Ամրոց Տաքջուր

V-VII դդ.
39°41'35.04"N 46°16'45.01"E, բարձրությունը՝ 1520 մ

Հուշարձանի անվանումը
Ամրոց Տաքջուր

Անվանման աղբյուրը
Մոտակա հանգստավայրը

Տեղադրությունը
Գտնվում է Բերդիկ գյուղից 1,4 կմ հարավ-արևմուտք՝ Բերդիկից Տաքջուր հանգստավայր տանող ավտոճանապարհի միջնամասում՝ ճանապարհից անմիջապես ներքև ընկած ձեռակերտ տափարակին:

Ադմինիստրատիվ պատկանելությունը
ԱՀ Քաշաթաղի շրջանի Մոշաթաղ համայնքի Բերդիկ գյուղ
(ԼՂՀ Օրենք ԼՂՀ վարչատարածքային բաժանման մասին)

Նախկին ադմինիստրատիվ պատկանելությունը
Ադրբ. ԽՍՀ Լաչինի շրջանի Միրիկի գյուղխորհրդի Ղալաչա գյուղ
(Мельников, Ибрагимов, 1979, 69)

Ելիզավետպոլի գուբերնիայի Զանգեզուրի ուեզդի Բուլիջա գ. (Կարապետյան, 1999, 134): Դ. Պագիրևը Զանգեզուրի ուեզդում հիշատակում է Բուլիջա բլրակը (курган) (Пагирев, 2007, 79), հմմտ.՝ II ոստիկանական տեղամասի (կենտրոն՝ Տեղ գյուղ) Մինքենդի գյուղական հասարակության Կալաչա գյուղ
(Кавказский календарь, 1916, 54)

Ջրագրություն
Աղավնո գետի ձախ ափ

Հուշարձանի հիշատակումները և հետագա ուսումնասիրությունները
Հուշարձանը 2019 թ. հայտնաբերել է Զ. Ըռքոյանը:

Հուշարձանի նկարագրությունը
Ամրոցանիստ տափարակը կազմավորվել է Աղավնո գետի ձախափնյա ձորեզրի վրա կախվող ժայռային ելուստի ճակատային գիծը պարիսպ-հենապատով ամրացնելու միջոցով: Պարիսպը ամբողջովին երևում է Աղավնոյի ափով վերջերս անցկացված ավտոճանապարհից: Պարիսպ-հենապատը շարված է ճեղքած, անմշակ տեղական բազալտից՝ առանց կրաշաղախի: Այն ուղղահայաց գծից մի փոքր թեքվածություն ունի դեպի ներս, ձգվում է բնական ժայռի խիստ անհարթ ճակատային գծով և պահպանվել է տեղ-տեղ մինչև 6,0 մ բարձրությամբ: Փոքր ամրոց է՝ հատակագծում անկանոն կիսաշրջանի տեսքով, ուր պարիսպը՝ բացի հրվանդանի հարավային, գետահայաց ճակատից, ներառում է նաև արևելյան ու արևմտյան եզրերի մի մասը: Երևացող պարսպագիծը՝ իր ամբողջ երկարությամբ, գրեթե չի բարձրանում այսօրվա գետնի մակարդակից: Ամրոցը վատ է պահպանվել: Տաք ջուր տանող ավտոճանապարհը լայնացնելիս քարերն ու հողերը լցրել են հուշարձանի վրա՝ ծածկելով նրա հյուսիսային մասը: Այսօր երևում է ամրոցի միայն մեկ հատվածը՝ մոտ 50x80 մ չափերով: Հուշարձանի մակերեսին որևէ շինության հետք չի երևում: Վերգետնյա խեցեղենը սակավ է: Դատելով պարսպի շարվածքից՝ կարելի է ենթադրել, որ ամրոցը կառուցվել է վաղ միջնադարում:

Քարտեզ, հուշարձանի տեղադրությունը



Օրթոֆոտոպլան



Տեղահանույթ և հատակագիծ





Ամրոցի ընդհանուր տեսքը հյուսիս-արևմուտքից



Ամրոցի արևմտյան պարսպագիծը



Ամրոցի հարավային պարիսպ-հենապատը արևելքից



Հարավային պարիսպը վերևից

№ 7. Ամրոց Աղբատխերտ

Ամրոց, Ք.ա. 2-1-ին հազ.
39°41'53.03"N 46°16'00.05"E, բարձրությունը՝ 1563 մ
ԱՀ Պատմության և մշակույթի հուշարձանների Պետական Ցուցակի գրանցահամարը Քաշաթաղի շրջան N105

Հուշարձանի անվանումը
Ամրոց Աղբատխերտ

Անվանման աղբյուրը
Մոտակա պատմական գյուղատեղին

Այլ անվանում
Աղվեսահաքի (Կարապետյան, 1999, 132), Ալպատխիր (Յակոբեան, 1998, 270): Տեղանունների բառարանի հեղինակները նույնացնում են Ալպատխիրը Ալչալի տեղանվան հետ (հմմտ.՝ Հակոբյան և այլք, 1986, 101):

Տեղադրությունը
Հակ գյուղից 1,8 կմ հարավ-արևելք, ազիմուտ՝ 136: Գտնվում է «Տաքջուր» հանգստավայրից մոտ 0,7 կմ հյուսիս-արևմուտք՝ Աղավնո գետի աջ ափին, Աղբատխերտ կոչվող տեղամասում:

Ադմինիստրատիվ պատկանելությունը
ԱՀ Քաշաթաղի շրջանի Հակ գյուղ
ԼՂՀ Օրենք ԼՂՀ վարչատարածքային բաժանման մասին

Նախկին ադմինիստրատիվ պատկանելությունը
Ադրբ. ԽՍՀ Լաչինի շրջանի Մինքենդ գյուղ
(Мельников, Ибрагимов, 1979, 69)
Ելիզավետպոլի գուբերնիայի Զանգեզուրի ուեզդի Ալպախիր գյուղ
(Յակոբեան, 1998, 271 հմմտ.՝ Ալիշան, 1893, 267)

Պատմական տեղեկություններ
Աղբատխերտը Աֆթխար անվամբ հիշատակվում է 1691 թ. պարսկերեն վավերագրում (Կոստիքյան, 2001, 170, 174): Ս. Կարապետյանը նույնացնում է այս բնակավայրը XVIII դարի պտղացուցակում հիշատակվող Աղվեսահաքիի հետ:
(Կարապետյան, 1999, 132, հմմտ.՝ Օրբելեան, 1942, 42)

Զրագրություն
Աղավնո գետի աջ ափ

Տեսողական կապը այլ հուշարձանների հետ
Ամրոց՝ Հերիկ

Հուշարձանի հիշատակումները և հետագա ուսումնասիրությունները
Հին գյուղատեղիի և գերեզմանոցի հետքեր 1999 թ. հայտնաբերել է Ա. Հակոբյանը: Ամրոցը հայտնաբերել է Գ. Սարգսյանը 2013 թ.:
(Ավետիսյան և այլք, 2015, 10,20, 95-96., Սարգսյան և այլք, 2014, 160, Կարապետյան, Սարգսյան, 2018b):

Տարածքի այլ հուշարձաններ
Տապանաքարերը և խաչքարերը կուտակված են հին գյուղատեղիում: Տապանաքարերից երկուսը ուղղանկյուն են, մեկը՝ օրորոցաձև: Տապանաքարերից մեկը թվագիր է՝ ՊԿԲ=1413 թ. և պարունակում է տեղանվան հիշատակումը՝ Աղբթխէրտ ձևով (Յակոբեան 1998, 271-272): Միջնադարյան բնակատեղիում հավաստված է նաև XIII-XV դդ. եկեղեցի (Սարգսյան, 2014b, նկ. 161):

Հուշարձանի նկարագրությունը
Միջնաբերդ
Ամրոցի միջնաբերդը տեղադրված է մոտ 120 մ տրամագծով կլորավուն թերակղզու վրա: Ուղղա-

հայաց ժայռածերպերով եզերվող թերակղզին՝ իր ամբողջ ծավալով, հարավից մխրճվում է Աղավնոյի գետագծի մեջ՝ ստիպելով գետին, երեք կողմերից շրջանցելով, ողողել ամրոցանիստ բլուրը: Ստացվում է այնպես, որ Աղավնո գետը ակամայից կազմում է ամրոցի պաշտպանական համակարգի ջրի խանդակը: Թերակղզի հնարավոր է ներխուժել միայն հարավից՝ անցնելով մոտ 100 մ լայնությամբ թամբածև իջվածքը և բարձրանալով ամրոցանիստ բլուրը: Միջնաբերդը գբաղեցնում է թերակղզու գագաթի մոտ 60 մ տրամագծով հարթ մակերեսը: Այն իր ամբողջ պարագծով ամրացված է կիկլոպյան շարվածքով պարսպով: Հարավային կողմում երևում է ամրոցի գլխավոր մուտքը, որը ուղեկցվում է մոտ 3 մ լայնությամբ՝ երկու կողմերից պարսպապատերով եզերված, 20-25 մ երկարությամբ միջանցքով: Այն թամբածև իջվածքի ստորոտից բարձրանում է դեպի բլրաեզրի հիմնական պարսպաշարը և մտնում միջնաբերդ՝ երկու կողմերից մեծ կանգնած քարերով եզերվող մուտքի բացվածքով: Հարավային կողմի բլրալանջի միջնամասով՝ հիմնական պարսպագծից ներքև, նրան զուգահեռ գնում է ամրոցի երկրորդ պարիսպը, որը ևս ընդհատվում է գլխավոր մուտքի միջանցքով: Այս երկրորդ պարիսպը դրված է միայն ամրոցի մատչելի՝ հարավային կողմում, քանզի մյուս երեք կողմերից միջնաբերդը պաշտպանված է բնական ժայռածերպերով ու գետի ջրերով: Միջնաբերդի հյուսիս-արևմտյան մասի բարձրադիր հատվածում նկատվում են մի մեծ, առանձնացված կառույցի, հնարավոր է՝ դղյակի, փլատակներ: Այս բազամասենյականոց շինությունը կառուցված է նույն կիկլոպյան շարվածքով և փարթամ խոտածածկույթի մեջ երևում է հատվածաբար: Առանձին շինությունների պատեր նկատվում են միջնաբերդի ներսում՝ գերազանցապես շրջապարսպին կից: Միջնաբերդի մակերեսի հարթությունը, ամենայն հավանականությամբ, ձեռակերտ է, քանի որ կենտրոնում կանգնած է մնացել ձեռք չտված մի մեծ, ցից բնական ժայռազանգված: Այն, հնարավոր է, թողնվել է ինչ որ ծիսական արարողությունների համար՝ որպես պատվանդան:

Բնակատեղի

Միջնաբերդի հարավային կողմի թամբածև իջվածքում և շրջակայքում է տարածվել ամրոցի բնակավայրը: Վերջերս այստեղով անցկացվել է Աղավնոյի փոքր ՀԷԿ-երի համակարգի հերթական էլեկտրակայանը սնուցող խողովակաշարը: Խողովակաշարը անցնում է անմիջապես բնակավայրի կենտրոնով՝ մեծապես վնասելով հուշարձանը:

Ուղեգծի եզրերին կուտակված մշակութային շերտի թափոններից հավաքվել է խեցեղենի հարուստ հավաքածու, որը բնորոշ է միջին բրոնզից մինչև զարգացած երկաթ ընկած ժամանակաշրջանին՝ (Ք.ա. 2-րդ հազ. առաջին կես – Ք.ա. 1-ին հազ. առաջին կես):

Քարտեզ, հուշարծանի տեղադրությունը



Օրթոֆոտոպլան



Տեղահանույթ և հատակագիծ





Ամրոցանիստ բլուրը հյուսիսից



Ամրոցանիստ բլուրը հարավից



Հատված հարավային պարսպի ճակատից



Միջնաբերդի կենտրոնում կանգնած ժայռաբեկորը



Պատաշարի պատառիկ խոտածածկույթի մեջ



Արտաքին պարսպի պահպանված հատված

№ 8. Ամրոց Բերդիկ 1

Ամրությունների մնացորդներ, տնատեղեր
Ք.ա. 2-1-ին հազ.
39°41'45.7"N 46°17'29.0"E, բարձրությունը՝ 1421 մ

Հուշարձանի անվանումը
Ամրոց Բերդիկ 1

Անվանման աղբյուրը
Մոտակա բնակավայրը

Այլ անվանում
Բուլիջա, Ղալաչա

Տեղադրությունը
Գտնվում է Բերդիկ գյուղի արևմտյան եզրին հանգչող երկարավուն լեռնաբազկի արևելյան վերջավորության վրա:

Ադմինիստրատիվ պատկանելությունը
ԱՀ Քաշաթաղի շրջանի Մոշաթաղ համայնքի Բերդիկ գյուղ
(ԼՂՀ Օրենք ԼՂՀ վարչատարածքային բաժանման մասին)

Նախկին ադմինիստրատիվ պատկանելությունը
Ադրբ. ԽՍՀ Լաչինի շրջանի Միրիկի գյուղխորհրդի Ղալաչա գյուղ
(Мельников, Ибрагимов, 1979, 69)

Ելիզավետպոլի գուբերնիայի Զանգեզուրի ուեզդի Բուլիջա գյուղ (Կարապետյան, 1999, 134): Դ. Պագիրևը Զանգեզուրի ուեզդում հիշատակում է Բուլիջա բլրակը (курган) (Пагирев, 2007, 79), հմմտ. II ոստիկանական տեղամասի (կենտրոն՝ Տեղ գյուղ) Մինքենդի գյուղական հասարակության Կալաչա գյուղ
(Кавказский календарь, 1916, 54):

Պատմական տեղեկություններ
Բուլիջա գյուղը XX դարասկզբին բնակեցված էր թրքացած քրդերով: Խորհրդային տարիներին վերանվանվել էր Ղալաչա (Կարապետյան, 1999, 134): Հիշատակելով Հարիկ գյուղը՝ Ղ. Ալիշանը նշում է նաև գյուղի վերնամասում գտնվող Պինո թաղը (Ալիշան, 1893, 267-268), Ա. Հակոբյանը նույնացնում է Պինա (Bina = գոմեր (ադրբ.) տեղանունը Բուլիջա տեղանվան հետ, որտեղ և մատնանշում է վանքը (Յակոբեան, 2009, 358):

Զրագրություն
Աղավնո գետի ձախ ափ

Տեսողական կապը այլ հուշարձանների հետ
Ամրոց՝ Տաքջուր

Հուշարձանի հիշատակումները և հետագա ուսումնասիրությունները
Հուշարձանը 2019 թ. հայտնաբերվել է ՀՀ ԳԱԱ ամրոցները ուսումնասիրող արշավախումբը:

Տարածքի այլ հուշարձաններ

Զրաղացների համալիր

Զրաղացների մնացորդներ են հայտնաբերվել են գյուղից 800 մ հյուսիս-արևելք՝ Աղավնոյի աջ ափին (Կարապետյան, 1999, 139):

Հուշարձանի նկարագրությունը
Ամրոցանիստ լեռնաբազուկը կազմավորված է Աղավնո գետի և նրա հյուսիսային վտակի միջնամասում: Ամրոցանիստ հատվածը բարձր է շրջակա գյուղի նիշից 15-20 մետրով: Խորհրդային տարիներին ամրոցի հիմնական հատվածը կառուցապատված ու բնակեցված էր, ուստիև հնագույն ամրոցի կառուցապատման տարրերը խիստ խաթարված են ու շատ դեպքերում՝ ավերված ու ծածկված հետագա շինություններով: Շատ թե քիչ անխաթար է մնացել բարձրադիր մասում տեղա-

կայված ամրոցի միջնաբերդը, որը դուրս է մնացել ներկայիս գյուղի հիմնական հատվածից: Այստեղ հնարավոր եղավ փաստագրել հնագույն պարիսպների ու շինությունների հատվածներ: Միջնաբերդի բարձունքը եզերող պարիսպը պահպանվել է հրվանդանի հյուսիսային ու հարավային եզրագծերում, կառուցված է մեծ անմշակ քարերից՝ չոր, կիկլոպյան շարվածքով: Նրա արևմտյան կողմը մասամբ ավերված է, իսկ արևելյան՝ բնակավայրին հարող պարսպագիծը, նկատվում է հետագայում կառուցված բնակելի տների ու տնամերձների քարե ցանկապատերի մեջ: Արևելյան ստորոտում ընկած ամրոցի հիմնական հատվածը ավերված է: Դատելով շինտեխնիկայից և սակավաթիվ խեցեղենից՝ ամրոցը բրոնզ-երկաթեդարյան ժամանակաշրջանի հուշարձան է:

Քարտեզ, հուշարձանի տեղադրությունը



Օրթոֆոտոպլան



Տեղահանույթ և հատակագիծ





Ընդհանուր տեսքը հյուսիս-արևմուտքից



Հյուսիսային պարսպի հատված



Արևմտյան պարսպագիծը



Հնագույն պարսպագծի հիմնաշարը



Ամրոցի միջնաբերդի կառույցը

№ 9. Ամրոց Հերիկ

Ամրոց, դամբարանադաշտ
Ք.ա. 2-1-ին հազ.
39°41'9.4"N 46°16'43.3"E, բարձրությունը՝ 1809 մ
ԱՀ Պատմության և մշակույթի հուշարձանների Պետական Ցուցակի գրանցահամարը
Քաշաթաղի շրջան N95

Հուշարձանի անվանումը
Ամրոց Հերիկ

Անվանման աղբյուրը
Մոտակա բնակավայրը

Տեղադրությունը
Գտնվում է Հերիկ գյուղի արևմտյան ծայրամասի բարձր բլրի գագաթին:

Ադմինիստրատիվ պատկանելությունը
ԱՀ Քաշաթաղի շրջանի Մոշաթաղ համայնքի գ. Հերիկ
(ԼՂՀ Օրենք ԼՂՀ վարչատարածքային բաժանման մասին)

Նախկին ադմինիստրատիվ պատկանելությունը
Ադրբ. ԽՍՀ Լաչինի շրջանի Ահմեդլիի գյուղխորհրդի Ահմեդլի գյուղ
(Мельников, Ибрагимов, 1979, 69)
Ելիզավետպոլի գուբերնիայի Զանգեզուրի ուեզդի II տեղամասի (կենտրոն՝ Տեղ գյուղ) Վարազգուն-Գերիկ գ.
(Пагирев, 2007, 82)

Պատմական տեղեկություններ
Հերիկ գյուղը հիշատակում է Ստեփանոս Օրբելյանը: Այն հիշատակված է նաև XVIII դ. պտղացուցակում (Орбелеан, 1942, 42): Բացառված չէ, որ 1691 թ. վավերագրում նշված Հարարը հենց Հերիկն է (Կոստիկյան 2001, 176, Յակոբեան, 2009, 350): Գյուղի նշանակության մասին է վկայում այստեղ հայտնաբերված մետաղական գանձը, որը բաղկացած է Սեֆկյան Սուլեյման I և Հուսեյն I շահերի 208 արծաթյա և արծաթջրած դրամներից (Сейфеддини, 1985, 321-322)

Զրագրություն
Աղավնո գետի աջ ափ

Տեսողական կապը այլ հուշարձանների հետ
Ամրոցներ՝ Միրիկ 2, Սոնասար

Հուշարձանի հիշատակումները և հետագա ուսումնասիրությունները
2013 թ. հուշարձանը ուսումնասիրել է ԱՀ արշավախումբը (Սարգսյան և այլք, 2014, 163, Կարապետյան, Սարգսյան, 2018b): Բացառված չէ, որ ամրոցի կամ մերձակա դամբարանադաշտի տարածքից են գտնվել Ք.ա. VIII-VI դդ. բնորոշ սապատավոր բռնակով սև փայլեցված սափորը (ՔԵԹ 112/7), քարե «մրգամանը» (ՔԵԹ 123/7), պարսատիկի քարերը (ՔԵԹ 122/7) և դռան կրնկակալ քարը (ՔԵԹ 124/7):

Հուշարձանի նկարագրությունը
Բլրի հարթ, մի փոքր գոգավոր, ծառերից ու թփուտներից զուրկ, քամիների առաջ անպաշտպան, բաց խոտածածկ գագաթը խիստ հողմահարված է, և ամրոցի պարիսպներն ու շինությունները դժվարությամբ են ուրվագծվում: Բլրի վերնամասը ներփակված է հատակագծում ձվածիրին մոտեցող շրջապարսպով՝ շարված մեծածավալ քարերից՝ չոր, կիկլոպյան շարվածքով: Ամրոցի մոտավոր չափերն են՝ 150x120 մ: Պարիսպը կարելի է դիտարկել գետնի մակերեսին երևացող մեծ քարերի գագաթների հետագծով: Պարսպաշարի արևելյան կողմում հստակ նկատվում է ամրոցի գլխավոր մուտքը: Այն պարսպագծի մոտ երկու մետրանոց բացվածք է՝ երկու կողմերից եզերված միակտոր մեծ քարերով: Պարսպագծի ներսում նկատվում են երբեմնի կառուցապատումից մնացած առանձին պատերի հետքեր: Ամրոցի գոգավոր մակերեսի ամենաբարձր կետում նշմարվում են մեծ, բազմասեկցիոն շինության, հավանաբար, միջնաբերդի հետքերը: Բոլոր պատերն ու պարիսպները երևում

են հատվածաբար և պահպանվել են, լավագույն դեպքում, մեկ քարի բարձրությամբ: Ամրոցի տարածքից վերգետնյա խեցեղեն չի հայտնաբերվել, բայց, դատելով պատաշարերի կառուցման տեխնիկայից, հուշարձանը կարելի է թվագրել Ք.ա. 2-1-ին հազարամյակներով:

Ամրոցանիստ բլրի հարավային ընդարձակ բաց դաշտում տարածվել է դամբարանադաշտը: Դամբարանադաշտը մելիորացված ու հերկված է, և միայն ամրոցի հարավային լանջին են պահպանվել երկու մեծ գետնափոր, կեղծ թաղով մասամբ ծածկված, հնում կողոպտված քարարկղեր: Քարարկղերի ներսի չափերն են՝ մոտ 3x6 մ, և որոնց շուրջ նկատվում են երբեմնի դամբարանաբլրի տակ եղած կրոմլեխի կլորացող շարքի քարերը:

Տարածքի այլ հուշարձաններ

Եկեղեցի, տապանաքարեր և խաչքարեր

Հերիկի եկեղեցու մասին առաջին անգամ հիշատակում է Ե. Լալայանը (Լալայեան, 1898, 50): Ս. Գևորգ եկեղեցին գտնվում է գյուղի կենտրոնական մասում: Եկեղեցին միանավ թաղածածկ բազիլիկ է: Մուտքը հարավային կողմից է: Կառույցի ներքին չափերը՝ 16,3x9,7 մ.: Հյուսիսային պատի մոտ կառուցված է մկրտարան (Կարապետյան, 1999, 132-133): Պատերի մեջ ագուցված են արձանագիր (1517 և 1524 թթ.) խաչքարեր և տապանաքարեր (Բարխուդարյան, 1982, 195): Գյուղում հաշվառված է նաև մահմեդական դամբարան և կամուրջ (Гусейнова, 2009, 92):

Քարտեզ, հուշարձանի տեղադրությունը



Տեղահանույթի և հատակագծի սխեմատիկ վերակազմություն





Ընդհանուր տեսքը արևելքից



Հյուսիսային պարսպագծի ընթացքը



Մուտքի բացվածքը



Պարսպագծի պահպանված հատվածը



Փոսորակներով ուրվագծվող կացարանները



Կեղծ թաղով կողոպտված դամբանախուցը

№ 10. Ամրոց-քաղաքատեղի Աղահեճ (Միրիկ 1)

Միջնաբերդ, բնակատեղի, դամբարանադաշտ
Ք.ա. VIII-VI դդ.
39°41'23.02"N 46°19'39.01"E, բարձրությունը՝ 1600 մ
ԱՀ Պատմության և մշակույթի հուշարձանների Պետական Ցուցակի գրանցահամարը Քաշաթաղի շրջան N132

Հուշարձանի անվանումը
Ամրոց Աղահեճ (Միրիկ 1)

Այլ անվանում
Միրիկ 1, Բերդ, Ղալանիևբաշի

Անվանման աղբյուրը
Վերականգնված է հավանական պատմական անվանումը

Տեղադրությունը
Տեղադրված է Միրիկ գյուղի արևմտյան եզրին բարձրացող՝ արևմուտք-արևելք առանցքով ձգվող՝ բազալտի լավային հոսքով կազմավորված, լեռնաբազկի արևելյան վերջավորության գագաթին:

Ադմինիստրատիվ պատկանելությունը
ԱՀ Քաշաթաղի շրջանի Միրիկ գյուղ
(ԼՂՀ Օրենք ԼՂՀ վարչատարածքային բաժանման մասին)

Նախկին ադմինիստրատիվ պատկանելությունը
Ադրբ. ԽՍՀ Լաչինի շրջանի Միրիկի գյուղխորհրդի Միրիկ գյուղ
(Мельников, Ибрагимов, 1979, 69)
Ելիզավետպոլի գուբերնիայի Զանգեզուրի ուեզդի II տեղամասի (կենտրոն՝ Տեղ գյուղ), Մինքենդի գյուղական հասարակություն Միրիկ գյուղ
(Пагриев, 2007, 207, Кавказский календарь, 1916, 54)

Պատմական տեղեկություններ
Միրիկ 1 ամրոցը, ամենայն հավանականությամբ, Աղահեճ ամրոցն է, քանի որ Աղավնոյի հովտում գտնվող այս գավառում համանուն բնակավայր միջնադարյան աղբյուրներում չի հիշատակվում (Կարապետյան և այլք, 2018, 158-159): Միրիկ տեղանունն առաջին անգամ հիշատակվում է Միրիկի եկեղեցու արձանագրության մեջ. ՄԵՆՔ Մ(Ի)ՐԻԿԻ Ժ(Ո)Ղ(Ո)Վ(ՈՒ)ՐԴՍ Տ(ՈՒ)ԻՆՔ Ս(ՈՒՐԲ) ԵԿ(Ե)Ղ(Ե)ՑՈՅՍ (Կարապետյան, 1999, 134, Յակոբեան, 1998, 281-282): 1691–1692 թթ. պարսկական փաստաթղթերում գյուղը հիշատակվում է որպես Քաշթասիֆ (Քաշաթաղ) գավառի գյուղերից մեկը (Կոստիքյան, 2001, 170): XVIII դարի պտղացուցակում գյուղը ևս հիշատակվում է Տաթև վանքի հարկատու գյուղերի ցանկում (Օրբելեան, 1942, 42): Սակայն արդեն XIX դարի վերջում Ղ. Ալիշանը հիշատակում է Միրիկը՝ որպես այլազգիներով բնակեցված գյուղ (Ալիշան, 1893, 99):

Ջրագրություն
Աղավնո գետի աջ և նրա Միրիկ օժանդակի ձախ ափ

Տեսողական կապը այլ հուշարձանների հետ
Ամրոցներ՝ Միրիկ 2, Խոժոռաբերդ, Սոնասար

Հուշարձանի հիշատակումները և հետագա ուսումնասիրությունները
Հայր Ղևոնդ Ալիշանը, ամենայն հավանականությամբ, նկատի ունի հենց Միրիկի ամրոցը՝ հիշատակելով Հերիկից մեկ մղոն հարավ-արևելք գտնվող ամրոցը (Ալիշան, 1893, 266): Ադրբեջանի հուշարձանների պաշտոնական ցանկում հիշատակվում է որպես XV դ. «աշտարակ» (Гусейнова, 2009, 90):

Միրիկի տարածքի միջնադարյան հուշարձաններն ուսումնասիրել են Ս. Բարխուդարյանը, Ս. Կարապետյանը, Ա. Հակոբյանը (Բարխուդարյան, 1982, 194-195, Կարապետյան, 1999, 134, Յակոբեան, 1998, 280-282):

Միրիկի տարածքի հուշարձանները համալիր ուսումնասիրվել են Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարությանն առընթեր զբոսաշրջության և պատմական միջավայրի պահպանութ-

յան վարչության ծրագրով իրականացվող ԼՂՀ տարածքի պատմամշակութային հուշարձանների վկայագրման ու գոտիավորման աշխատանքների շրջանակներում: 2017–2019 թթ. հուշարձանում հնագիտական պեղումներ են կատարել Գ. Սարգսյանը, Ա. Գնունին և Հ. Խուդանյանը (Կարապետյան, Սարգսյան, 2018b): Պեղումները ֆինանսավորում էին բարեգործ Ստեփան Սարգսյանը և մասամբ՝ ԱՀ ՄԵՀՋ նախարարությունը:

Հուշարձանի նկարագրությունը

Ամրոցը գտնվում է Միրիկ գյուղի արևմտյան եզրին բարձրացող երկար լեռնաբազկի ծայր արևմտյան եզրին: Բլրի գագաթին տեղադրված է միջնաբերդը, իսկ բուն բնակատեղին տարածվում է բարձունքի հարավային և հյուսիսային լանջերին՝ հասնելով մինչև Միրիկ գյուղի եզրը:

Ամրոցը բաղկացած է լեռնաբազկի գագաթնագծին տեղադրված միջնաբերդից, նրա լանջերին տեղադրված բնակատեղիից, ինչպես նաև՝ բլրի ստորոտում և մասամբ՝ արևմտյան կողմում սփռվող դամբարանադաշտից: Ամրոցի հիմնական՝ «իշխանական», դամբարանադաշտը գտնվում է միջնաբերդից 1 կմ արևմուտք՝ ամրոցին նայող սարահարթին: Ամրոցի բնակատեղին գտնվում է ամրոցակալ բլրի հյուսիսային ու հարավային լանջերին՝ պարիսպ-հենապատերով կազմակերպված արհեստական դարավանդներին: Հյուսիսային լանջի դարավանդի պարիսպ-հենապատը ձգվում է միջնաբերդի ամբողջ երկարությամբ, և պահպանվել է տեղ-տեղ մինչև 7 մ բարձրությամբ:

Ամրոցանիստ բլրի հարավային զառիթափ լանջը կտրատված է արհեստական դարավանդներով, որոնք ամրացված են պարիսպ-հենապատերով: Դարավանդներին առկա են կառուցապատման հետքեր:

Ամրոցանիստ բլրի հարավային զառիթափ լանջը պատված է պարիսպ-հենապատերով կազմակերպված 2-3 արհեստական դարավանդներով, որոնց վրա պահպանված են կառուցապատման հետքերը: Հենապատերը շարված են նույն՝ կիկլոպյան տեխնիկայով, և պահպանվել են մինչև 5 մ բարձրությամբ: Հարավային լանջի արհեստական դարավանդներից մեկում՝ միջնաբերդի դղյակից մոտ 60 մ ներքև, բացվում է երեք միակտոր քարերից շարված 1x1 մ չափերով միջնաբերդի ստորգետնյա անցուղու մուտքը, որը քողարկված է եղել դիմացը ընկած մեծ տափակ սալով:

Միջնաբերդի ընդհանուր երկարությունը 350 մ է, լայնությունը՝ 20-50 մ: Այն զբաղեցնում է բլրի արհեստականորեն հարթեցված գագաթնագիծը և հանդիսանում է երկու ծավալատարածային և գործառութային համալիրների միասնություն՝ **ա.** պալատական՝ «վարչա-կառավարչական» համալիր, «Դղյակ», **բ.** հոգևոր՝ «կրոնա-պաշտամունքային» համալիր:

Միջնաբերդի արևմտյան նախամուտքային հատվածը *ամենամատչելին է, ուստի այստեղ* միջնաբերդը պաշտպանված է մոտ 50 մ երկարությամբ ու 2,0 մ լայնությամբ հզոր պարսպով, որի հյուսիսային եզրին նկատվում է միջնաբերդի գլխավոր մուտքը:

Ա. Պալատական՝ «վարչա-կառավարչական» համալիր կամ «Դղյակ»

Տեղակայված է միջնաբերդի ծայր արևելյան եզրին և բաղկացած է, այսպես կոչված, «պալատից», դիմացի բաց հրապարակից և դեպի արևելք աստիճանաձև իջնող երկու պարսպապատ փոքր հարթակներից: Դղյակի մուտքը հարավային կողմից է, ուր միջնաբերդի եզրագծից մեկ դարավանդ ներքև հորիզոնով ձգվում է հիմնական ճանապարհը: Հատակագծում եռանկյունաձև 110x40 մ չափերով դղյակը պարսպապատ է և առանձնանում է միջնաբերդի արևմտյան հատվածից 3 մ լայնությամբ, 30 մ երկարությամբ ու մինչև 4 մ բարձրությամբ պահպանված հզոր կիկլոպյան պարսպով: Պալատի համակառույցը զատվում է դիմացի բաց հրապարակից կողքի վրա ցից կանգնած քարերով շարված օրթոստատ պատով: Այն բազմասենյականոց համալիր է, որի բնակելի շինությունները խմբավորված են դղյակի հարավային պատի երկայնքով: Վերջինս ոչ թե քարաշեն է, այլ ներսից կտրված, հղկված ժայռագիծ է, որին կցված են 8-9 սենյակներ: Այս հատվածը պատված է փլատակներով, բայց նկատվում է, որ սենյակները ժամանակին հաղորդակցվում էին: Պալատի հյուսիսային հատվածը զբաղեցնում է պալատի ներքին բակը:

Օրթոստատ պատերով շինությունը (39°41'21.04"N 46°19'32.08"E բարձրությունը ծ.մ. 1619 մ) կենտրոնական տեղ է զբաղեցնում պալատում: Այն պահպանվել է մեկ քարի բարձրությամբ և, ըստ ամենայնի, դիպվածաբար օգտագործվել է նաև մայր ամրոցի կործանումից հետո: Այն պեղվել է 2017 թ. և փաստել է բավականին խայտաբղետ հնագիտական նյութ, որտեղ երկաթեդարյան *խեցեղենը* փաստվել է միայն հատակին, իսկ վերևի շերտերի գերակշռող նյութը՝ միջնադարյան է:

Դղյակի բաց բակի պարսպագծի արևելյան անկյունում՝ ցից կանգնած *ժայռակտորներից* մեկի ճակատին, փորված է ներճկված թոսորակ՝ փայտյա լծակ տեղադրելու համար: Հնարավոր է, որ

այստեղ եղել է դեպի դղյակի արևելյան եզրի երկու մակարդակներին կառուցված փոքր պարսպապատ հարթակներ բացվող փայտյա դուռ:

Բ. Հոգևոր՝ «կրոնա-պաշտամունքային» համալիր

Տեղադրված է միջնաբերդի կենտրոնական մասում և բաղկացած է միջնաբերդի ամենաբարձր կետում՝ բլրակին կանգնած բազմաստիճան բուրգ-աշտարակից (39°41'21.04"N 46°19' 32.08"E բարձրությունը ծ.մ. 1619 մ), նրան արևմուտքից հարող ժայռափոր ներքին բակից, ամրոցանիստ լեռնաբազկի հյուսիսային լանջից դեպի բուրգ-աշտարակ բարձրացող թեքադիր, երկարաձիգ աստիճանավանդակից ու ժապավենաձև հարթակներից, կուռքերի հրապարակից ու ժայռակերտ դարպասներից: Համալիրը արևմուտքից սահմանազատվում է բուրգ-աշտարակի գետնափոր ներքին բակով, արևելքից՝ պալատական համալիրի կիսաշրջան հզոր պարսպով: Ամբողջ համալիրը կառուցված է անմշակ ճեղքած բազալտից՝ չոր, կիկլոպյան շարվածքով:

1. Մինչև 4 մ բարձրություն ունեցող բուրգ-աշտարակը պսակվում է 9,60x14,50 մ չափերով հարթ հարթակ-հրապարակով: Աշտարակին հարավից կից են մեկ, իսկ արևմուտքից՝ երկու ավելի փոքր, աստիճանաձև հենապատ-հարթակներ: Աշտարակի հարթակի կենտրոնում թեթև ուրվագծվում են փոքր ուղղանկյուն ծավալի հիմնաքարերի հետքեր: Չի բացառվում, որ այստեղ մենք գործ ունենք հարթակի կենտրոնում ժամանակին կանգնած ծիսական սեղան-ատրուշանի հետ:

   Աշտարակը տեղակայված է միջնաբերդի գագաթի ամենանեղ ու բարձր կետում և իր ծավալի երկարությամբ ամբողջովին փակում է անցումը միջնաբերդի արևմտյան մուտքից դեպի ժայռակերտ դարպասներ ու պալատական համալիր: Անցումը հնարավոր է իրականացնել՝ շրջանցելով աշտարակը հարավից՝ մեկ դարավանդ ներքև ձգվող միջնաբերդի գլխավոր ճանապարհով:

   Արևմուտքից աշտարակը սահմանազատվում է միջնաբերդի մակերեսից 2,5-3 մ խորությամբ փորված մոտ 12x6 մ չափերով մի տձև ծավալով (հնարավոր է՝ սենյակ կամ գետնափոր ներքին բակ), որի հարավային ճակատը կազմող ժայռային պատի մեջ բացված է 1,5 մ լայնությամբ մուտք՝ դեպի միջնաբերդի գլխավոր ճանապարհը: Հավանաբար, հենց սա է եղել միջնաբերդից աշտարակ տանող անցումը:

2. Առանձնակի ուշադրության է արժանի թեքադիր աստիճանավանդակը: Այն սկիզբ է առնում ամրոցանիստ լեռնաբազկի հյուսիսային լանջի ստորոտի արևելյան կողմից դեպի տաճար տանող հնագույն ճանապարհից: Ճանապարհի մոտ 200 մ պահպանված հատվածն ունի 2-2,5 մ լայնություն և մասամբ՝ սալապատ է: Ներսից ամրացված է լանջի թեքությունը պահող քարաշեն ցածր հենապատով, իսկ արտաքին եզրագիծը տեղ-տեղ ընդգծված է քարաշարով ու ցածր հենապատով:

   Թեքադիր աստիճանավանդակի հատումը տաճար տանող ճանապարհի հետ հստակ չի երևում, բայց ճանապարհի վերջնակետից մոտ 6 մ վերև պահպանվել է բուրգի թեքադիր աստիճանավանդակի կանոնավոր կառուցված գլխավոր մուտքը՝ շքամուտքը: Այն երկու կողմերից զանգվածեղ ժայռաբեկորներով ուղղորդվող, մոտ 4 մ երկարությամբ ու 2 մ լայնությամբ դեպի վեր բարձրացող անցում է: Շքամուտքի հատակին պահպանվել են մեծ, ուղղանկյուն քարերից դրված 5 շարք աստիճաններ: Շքամուտքից վերև աստիճանավանդակը լայնանում է միմչև 8 մ, և այս լայնությամբ, ամբողջովին քարաշեն, այն ուղիղ բարձրանում է մինչև աստիճանաձև բուրգ-աշտարակը (զիկուրատ):

   Թեքադիր աստիճանավանդակի ընդհանուր երկարությանը 70 մ է, թեքությունը՝ 38°, ներքին ու վերին կետերի բարձրության նիշերի տարբերությունը՝ 46 մ, ամենամեծ լայնությունը՝ 8 մ:

   Աստիճանավանդակը կազմված է երկու հատվածներից՝ քարաշեն եզրապատերով հարթակների ժապավենաձև ծավալից և նրան ներքևից հարող ու աջ կողմից շրջանցող հիմնական աստիճանավանդակից:

   Ժապավենաձև հարթակը 35 մ երկարությամբ, 6 մ լայնությամբ, եզրարգծերում՝ մինչև 3 մ բարձրությամբ կանոնավոր պատերով ներփակված, շրջապատից բարձր կանգնած, թեքադիր, ամբողջովին քարաշեն ծավալ է: Այն սկիզբ է առնում աշտարակից և, իջնելով մինչև աստիճանավանդակի կեսը, փակվում է 3 մ բարձրությամբ կանգնած ճակատ-հենապատով: Ժապավենաձև հարթակի մակերեսի բարձրության տարբեր նիշերում պահպանվել են 4-5 մինչև 1-1,6 մ բարձրությամբ, հենապատերով փակվող, փոքր, առանձնացված հարթակ-հրապարակների մնացորդներ, որոնք միմյանց հետ հաղորդակցվել են արևելյան եզրում ուրվագծվող նեղ աստիճաններով: Այն տպավորությունն է ստեղծվում, որ ժապավենաձև հարթակը ժամանակին

կազմված է եղել իրար աստիճանաձև հաջորդող մի քանի փոքր, հորիզոնական մակերեսով հարթակներից:

Հիմնական աստիճանավանդակը սկիզբ է առնում ներքևի շքամուտքից և 8 մ լայնությամբ բարձրանում մինչև ժապավենաձև հարթակի 3 մետրանոց ճակատը: Այստեղ այն շրջանցում է ժապավենաձև հարթակը աջից և արդեն 2.5 մ լայնությամբ՝ բարձրանում մինչև աշտարակի ստորոտը: Հիմնական աստիճանավանդակի եզրագծերում պատաշար չի նկատվում և, նրա թեքադիր մակերեսի անբողջ լայնությամբ գնում են միջին չափի, ճեղքած, անմշակ քարերից, չոր շարվածքով դրված առնվազն 25-30 աստիճաններ: Սրանց պահպանվածությունը տարբեր է, բայց կարելի է ընդունել, որ աստիճանի միջինացված բարձրությունը 0,6-0,9 մ է, լայնությունը՝ 0,8-1,5 մ:

3. Կուռքերի հարթակը տեղակայված է միջնաբերդում՝ տաճարի բուրգ-աշտարակից և դեպի պալատական համալիր տանող ժայռակերտ դարպասների միջև ընկած բաց հատվածի կենտրոնում՝ մի փոքր բլրակի վրա: Այստեղ պահպանվել են քարաշեն պատի մեջ վերցված 8-10 կողք-կողքի շարքով կանգնեցված 0,5-0,7 մ բարձրությամբ ցից քարեր: Քարերի ծայրերը շատ դեպքում կոտրված են, բայց մեկի վրա հստակ երևում է նախաքրիստոնեական պաշտամունքային կուռք-արձանիկին բնորոշ գլուխը ընդգծող ակոսավոր փորվածք: Կուռքի կողքի ցից ժայռակտորի մեջ սանդաձև փորվածք է:
4. Ժայռակերտ դարպասը և նրա թիկունքի երկհարկանի սենյակը գտնվում են տաճարի բուրգ-աշտարակի ու պալատական համալիրի միջնամասում, առաջինից 80 մ արևելք՝ պալատական համալիրի կլորացող պարսպագծից ճիշտ նույնքան արևմուտք: Ժայռակերտ դարպասը իրենից ներկայացնում է երկու՝ դեմ դիմաց կանգնած բնական ժայռային կազմավորումներ, որոնք մարդու կողմից միջնաբերդի տարածքը հարթեցնելու ընթացքում չեն հանվել, այլ թողնվել են տեղում՝ միջանցիկ մուտք-դարպասի տեսքով: Վերջինը թիկունքում է, 10,4x3,5 մ չափերով, 175-190 սմ խորությամբ՝ բնական ժայռի մեջ մարդու կողմից փորված, բացված ուղղանկյուն սենյակը: Ժայռափոր սենյակն ունեցել է երկրորդ հարկ, ինչի փլատակները փաստվեցին նրա լիցքի մեջ: Ժայռափոր սենյակի հարավ-արևմտյան անկյունի վերևում՝ հատակի մակարդակից մոտ 2 մ բարձրության նիշին, բացվեց մի տծև սենյակ: Այն վերգետնյա է և համապատասխանում է ժայռափոր սենյակի երկրորդ հարկի մակարդակին: Պատերի ստորին մասը կտրված է բնական ժայռերի մեջ, հատակը՝ հարթեցված ժայռն է: Մոտ 5x3 մ չափերով վերգետնյա սենյակի պատերը դրված են եղել մեծ, ճեղքած, անմշակ ժայռաբեկորներից, որոնցից տեղում պահպանվել են 6-ը: Ուշագրավ է, որ սենյակի արևմտյան պատը կազմող մեծ ժայռաբեկորի տակ պահպանվել է հատուկ դրված ու տակից քարերով ամրացված կախովի սեղանի պես դեպի սենյակ դուրս ցցված մի տափակ, երկար ժայռաբեկոր: Սեղանի քարի հարթ ու հորիզոնական մակերեսը բարձր է հատակից 0,65 մ, դուրս է ցցվում պատից 0,85 մ, լայնությունը 0,8 մ է:

Ժայռափոր սենյակը պեղվել է 2017 և 2019 թթ., և նրա լիցքի զննությունը թույլ է տալիս եզրակացնել, որ սենյակը հողով ու քարերով լցվել է ոչ միանվագ՝ երկրաշարժի կամ մարդկանց կողմից ավերելու, կործանելու արդյունքում: Այն լցվել է ամրոցը բնակիչների լքելուց հետո՝ պարբերաբար, վերևի շինությունների ու պատերի բնական փլուզումից և հողաշերտի լվացման հետևանքով: Պեղված հնագիտական արտեֆակտների ճնշող մեծամասնությունը վերաբերում է Ք.ա. 8-6 րդ դարերին՝ չնայած որ կան նաև ավելի ուշ ժամանակաշրջանների դիպվածային նյութեր:

Այսպիսով, կատարված հետազոտությունները թույլ են տալիս եզրակացնել, որ Միրիկի ամրոցը բացառիկ տեղ է զբաղեցնում մ.թ.ա. VII-V դդ. հուշարձանների համակարգում՝ հանդիսանալով տարածաշրջանի խոշորագույն պաշտամունքային և վարչական կենտրոն (Կարապետյան և այլք, 2018a, 150-161, Ավետիսյան և այլք, 2019, 4-20):

Տարածքի այլ հուշարձաններ

Հարավային լանջի N 1 դամբարանը

Դամբարանը գտնվում է Միրիկի ամրոցանիստ բլրի հարավային զառիթափ լանջին: Այն կիսով չափ քանդվել է խորհրդային տարիներին անցկացված ճանապարհի շինարարության ընթացքում: Ճանապարհի ուղղահայաց կտրվածքում երևում էին թաղումնային խցի երկու երկայնական պատերի կտրվածքները: Դամբարանը 2017 և 2019 թթ. պեղել են Հ. Ավետիսյանն ու Ա. Գնունին: Արդյունքում պարզվել է, որ այն, մինչև քանդվելը, առնվազն երեք անգամ թալանվել է և վերածվել կացարանի:

Դատելով խեցեղեն նյութից՝ կարելի է ենթադրել, որ դամբարանը կառուցվել է Ք.ա. VIII-VII դդ. և առաջին անգամ կողոպտվել է առնվազն 100-150 տարի հետո՝ Ք.ա. VI-V դդ.: Հետագայում այն ևս երկու անգամ՝ անտիկ ժամանակաշրջանում՝ մ.թ. I-II դդ., և միջնադարում՝ IX-XIII դդ., թալանվել ու վերածվել է կացարանի:

Բուն դամբարանը ուշագրավ է իր եզակի կառուցվածքով: Սկզբնական տեսքով այն եղել է կեղծ թաղով ծածկված մեծ քարարկղային խցով դամբարան: Թաղումնային խուցը կողմնորոշված է եղել հյուսիս-հարավ առանցքով և ունեցել է ստորգետնյա միջանցքատիպ մուտք՝ դրոմոս, խցի հյուսիսային կողմից: Բայց տվյալ պարագայում, երբ դամբարանը տեղակայվել է ամրոցանիստ լեռան հարավային լանջին (դեպի հյուսիս ռելիեֆը կտրուկ բարձրանում է), դամբարանի շինարարները խցի հյուսիսային ճակատից դուրս եկող դրոմոսը կտրուկ թեքել են դեպի արևմուտք և, փորելով 5 մ միջանցք, տափակ քարերով ու հարդախառն կավով խցանել են դրոմոսի հորանաձև մուտքը:

Այս դամբարանը հետաքրքիր է այն առումով, որ առաջին անգամ է հանդիպում, երբ դրոմոսը գնում է ոչ թե ուղղաձիգ, այլ, ելնելով տեղանքի առանձնահատկությունից, թեքվում է ձախ՝ ստանալով կորագիծ հատակագիծ: Այն նաև ընդգծում է, թե որքան կարևոր էին երկաթեդարյան հասարակությունում տվյալ թաղումնային ծեսի պարտադիր հրամայականները:

Դամբարանադաշտ Միրիկ-3

Հուշարձանը (39°41'09.02"N 46°19'00.08"EN.E. բարձրությունը ծ.մ. 1704 մ) գտնվում է Միրիկ 1 ամրոցից 1,3 կմ հարավ-արևելք: Թաղումները ամփոփված են դամբարանաբլուրների ներքո: Առանձնապես հետաքրքիր է դրանցից մեկը, որի արտաքին կրոմլեխը կազմված է երկու շարք քարերից: Առանձին դամբարանների գագաթին տեղադրված են ցից քարեր: Հնավայրի կենտրոնական հատվածում առկա են բազմաթիվ կիկլոպյան պատեր: Ամենայն հավանականությամբ, այստեղ առկա է երկու տարաժամանակյա հուշարձան (Ավետիսյան և այլք, 2019, 7): 2018 թ. պեղվեց դամբարաններից մեկը (Գ. Սարգսյան, Հ. Խուդանյան): Դամբարանը հնում կողոպտված էր: Արևելք-արևմուտք ձգվածությամբ թաղումնային խուցը՝ 0,8x2,7 մ չափերով, վերգետնյա քարարկղ է՝ 1,2 մ խորությամբ՝ կառուցված կողքին կանգնեցված մեծ սալերից: Խցի ծածկասալերը բացակայում են: Թաղումնային խուցը արևելքից ունի նախամուտք՝ դրոմոս, որտեղ հայտնաբերվել են 8 ամբողջական կավանոթներ (3 քրեղան և 5 կճուճ), ինչպես նաև մանր եղջերավոր կաթնասունների ոսկորներ:

Դամբարանախցում ամբողջական իր չկար, փաստագրվեց միայն թաղումնային և ծիսական նշանակության խեցեղենի բեկորներ՝ բնորոշ մ.թ.ա. 8-7-րդ դդ.: Գտնված խեցեղենի բեկորները պատկանում են շուրջ 50 տարբեր կավանոթների:

Պարիսպ-ցանկապատ

Աղահեճ երկաթեդարյան հնավայրի հուշարձանախմբի մեջ է մտնում պարիսպ-ցանկապատը: Այն գտնվում է Միրիկ 1 ամրոցի դիմաց՝ հարավային կողմում՝ Միրիկ գետակի և ներկայիս գյուղի հարավային լանջերին: Պարիսպ-ցանկապատը հատակագծում պայտաձև է, որի այսօրվա պահպանված հատվածի ամբողջ երկարությունն է 1730 մ: Այն սկիզբ է առնում ամրոցի դիմացի լանջի միջնամասի փոքր հարթակից և ջրբաժան գծերից մեկի գագաթնագծով՝ բարձրանում մոտ 600 մ դեպի ընդարձակ վարելահողերի հարթ դաշտավայրը: Այստեղ, անցնելով դաշտավայրի հարավային եզրագծով և ներառելով գյուղ իջնող սելավատար ձորակի վերին կետը, թեքվում է հյուսիս ու ձգվում դաշտի ձորահայաց եզրագծով ավելի քան 350 մ: Այնուհետև, այն թեքվում է հյուսիս-արևմուտք և, իջնելով ներքև բլրաշղթայի ջրբաժան գծով ավելի քան 800 մ, ընդհատվում է գյուղի մշակվող հողամասերում: Ակնհայտ է, որ ժամանակին ցանկապատը ներքևում փակվել է Միրիկ գետակի ափեզրով: Պարսպի լայնությունը մոտ 1 մ է՝ շարված հիմնականում կողքի վրա ցից կանգնած (օրթոստատ) մեծ քարերից՝ առանց շաղախի, կիկլոպյան տեխնիկայով, երկշերտ, մեջը լցոնված մանր քարերով: Այն հստակ ուրվագծվում է գետնի մակերեսին իր ընթացքի գրեթե ամբողջ երկարությամբ: Պահպանված բարձրությունը չի գերազանցում 0.4 մետրը: Ուշագրավ է, որ պարսպի շուրջ չկան պատի քարերի փլվածքներ: Այսինքն, պարսպի քարաշեն հատվածը պահպանվել է իր սկզբնական բարձրությամբ: Հավանաբար, այստեղ մենք գործ ունենք քարակերտ հիմքով փայտաշեն (գերանաշեն) ցցապատի հետ:

Այսպիսով՝ պարիսպ-ցանկապատը ներփակում է մոտ 500x800 մ չափերով երկու սելավատար ձորակներ ընդգրկող ընդարձակ, խիստ թեքադիր, շրջանաձև տարածք: Պարսպի սկզբնական գործառույթը հստակ չէ, բայց կարելի է ենթադրել, որ այն, ժամանակակից լինելով ամրոցին, կառուցվել ու օգտագործվել է որպես հնագույն քաղաքի հասարակական հոտերի ձմեռային անասնափարախ: (Ավետիսյան և այլք, 2019, 8):

Քարանձավային սրբատեղի

Միրիկյան ագլոմերացիայի պաշտամունքային լանդշաֆտում իր ուրույն տեղն ունի սրբագործված քարանձավային համալիրը: Այն գտնվում է Միրիկ գյուղի Աղահեճ ամրոցից 1,8 կմ արևմուտք, Հերիկ գյուղից 1.7 կմ հյուսիս-արևելք, ժայռածերպերով կազմավորված լայն ու խորը ձորի ջրհավաք գծի վրա (կոորդինատներն են՝ 39 41 23,6 N. 46 18 14,0 E. բարձրությունը ծ.մ. 1658 մ): Մեծ և բարձր առաստաղով հարավահայաց քարանձավ է՝ ամրողջովին նստած բազալտե լավաների կոնտակտի շերտում: Մուտքի բացվածքը մոտ 30,0 մ է, թաղանման ծածկի բարձրությունը՝ մոտ 25,0 մ, խորությունը՝ 30 մ: Պատերը սյունաձև դոլերիտային բազալտից են, առաստաղը՝ հաջորդ բազալտե լավայի կրնկի շերտն է՝ 10-15 մ հաստությամբ, հատակը պատված է նույնանման բազալտի թափված բեկորների հաստ շերտով: Անձավի առաստաղի մեջ սելավատարի ջրերը բացել են երկու մեծ անցքեր, որտեղից դիտարկվում է հատակը: Անձավի բացվածքի արևելյան կողմի բազալտե ուղղահայաց պատի մոտ՝ 100 մ երկարությամբ տարածքում, բխում են բազմաթիվ քաղցրահամ աղբյուրներ: Անձավի դիմաց՝ ձորակի արևմտյան ափի մի ընդարձակ տափարակին, ընկած է միայնակ մեծ ժայռաբեկոր, որը, ամենայն հավանականությամբ, հնագույն զոհասեղան է: Նրա բավական հողմնահարված, մոտ 3x2 մ չափերով վերին հարթ մակերեսին նկատվում է թեթև բարձրացող սեղանատիպ հարթակ, որից սկիզբ առնող ձեռակերտ փորված առվակները, ընթացքում անցնելով կոնաձև թասիկավոր փոսորակների վրայով, իջնում են դեպի ժայռաբեկորի արևելյան եզրը: Այս ժայռաբեկորի շրջակա քարերին ևս փորված են ձեռակերտ կլոր թասիկավոր փոսորակներ՝ ընդգծելով ժայռաբեկորի առանձնահատուկ նշանակությունը (Ավետիսյան և այլք, 2019, 8):

Միջնադարյան հուշարձաններ

Միջնադարյան հուշարձաններից հարկ է նշել ս. Աստվածածին բազիլիկ եռանավ եկեղեցին (Սարգսյան, 2014b, 215): Այն գտնվում է գյուղի հյուսիսային եզրին՝ ամրոցանիստ բլրի ստորոտում: Եկեղեցին կառուցված է կոփածո քարերից՝ ամրացված կրաշաղախով: Սյուները և պատերի անկյունային հատվածները սրբատաշ են: Կառույցի արտաքին չափերը 20.6x12 մ է: Միակ մուտքը հարավից է (Կարապետյան, 1999, 134): Մուտքի բարավորին 1682 թ. տանուտիրոջ արձանագրությունն է (Բարխուդարյան, 1982, 195, Կարապետյան, 1999, 134, Յակոբեան, 1998, 281-282): Եկեղեցու բակում և պատերի մեջ ագուցված պահպանվել են XII-XVII դդ. տապանաքարեր (Կարապետյան, 1999, 134): Ե. Լալայանը, հիշատակելով այս եկեղեցու մասին, նշում է, որ այն գյուղի թուրք բնակչությունն այն օգտագործում է որպես տնտեսական կառույց (Լալայեան, 1898, 50): Եկեղեցին, մահմեդական տապանաքարերը հիշատակվում են նաև Ադրբեջանի հուշարձանների պաշտոնական ցուցակում (Гусейнова, 2009, 92):

Քարտեզ, հուշարձանի տեղադրությունը



Օրթոֆոտոպլան



Տեղահանույթ և հատակագիծ





Ամրոցի ընդհանուր տեսքը արևելքից



Պալատական համալիրը արևմուտքից փակող պարիսպը



Տաճարական համալիրի (զիկուրատ) հյուսիսային շքամուտքը



Տաճարական համալիրը (գիկուրատ). աստիճանածև բուրգ-աշտարակը
և դեպի այն տանող աստիճանավանդակը հյուսիսից



Դեպի բրգածև աշտարակը տանող աստիճանավանդակը
բլրի հյուսիսային ստորոտից



Թեքադիր հարթակների զանգվածի արևմտյան եզրապատը



Ամրոցի գագաթնագիծը արևմուտքից: Առաջին պլանում զիկուրատն է, երկրորդում՝ պալատական համալիրը



Ժայռակերտ դարպասը արևմուտքից:
Հետին պլանում պալատական համալիրի պարիսպն է



Ժայռափոր սենյակը արևելքից
(պեղումներից հետո)



Պարիսպ-ցցապատի հատվածը



Սրբացված քարանձավը հարավից



Զոհասեղանի ժայռաբեկորը



Ամրոցի արևմտյան կողմի միայնակ դամբարանի
դրոմոսի հնագիտական նյութը

№ 11. Ամրացված բնակատեղի Միրիկ 2

Բնակատեղի, դամբարաններ
Ք.ա. 4-1-ին հազ.
39°40'54.06"N 46°18'30.07"E, բարձրությունը՝ 1853 մ
ԱՀ Պատմության և մշակույթի հուշարձանների Պետական Ցուցակի գրանցահամարը
Քաշաթաղի շրջան N131

Հուշարձանի անվանումը
Ամրացված բնակատեղի Միրիկ 2

Անվանման աղբյուրը
Մոտակա բնակավայրը

Տեղադրությունը
Բնակատեղին գտնվում է Միրիկ և Հերիկ գյուղերի միջև սփռվող ընդարձակ սարահարթի արևելյան եզրին՝ Միրիկ 1 ամրոցից 1,8 կմ հարավ-արևմուտք: Այն տեղակայված է վարելահողերի վերածված երբեմնի արոտավայրերի բաց դաշտի չնչին գոգավորությամբ բարձունքին:

Ադմինիստրատիվ պատկանելությունը
ԱՀ Քաշաթաղի շրջանի Մոշաթաղ համայնքի Բերդիկ գյուղ
(ԼՂՀ Օրենք ԼՂՀ վարչատարածքային բաժանման մասին)

Նախկին ադմինիստրատիվ պատկանելությունը
Ադրբ. ԽՍՀ Լաչինի շրջանի Միրիկի գյուղխորհրդի Միրիկ գյուղ
(Мельников, Ибрагимов, 1979, 69)
Ելիգավետպոլի գուբերնիայի Զանգեզուրի ուեզդի II տեղամասի (կենտրոն՝ Տեղ գյուղ) Միևքենդի գյուղական հասարակություն Միրիկ գյուղ
(Пагриев, 2007, 207, Кавказский календарь, 1916, 54)

Պատմական տեղեկություններ
Տես № 10. Ամրոց-քաղաքատեղի Աղահեճ (Միրիկ 1)

Զրագրություն
Գտնվում է անջրդի վայրում

Տեսողական կապը այլ հուշարձանների հետ
Ամրոցներ՝ Միրիկ 1, Հերիկ, Սոնասար

Հուշարձանի հիշատակումները և հետագա ուսումնասիրությունները
Հուշարձանը 2013 թ. հայտնաբերել է ԱՀ արշավախումբը (Գ. Սարգսյան)

Հուշարձանի նկարագրությունը
Բնակավայրի տարածքը համեմատաբար բարձրադիր է, բայց բնականից անպաշտպան է ու անջրդի: Բնակատեղին պաշտպանված է հատակագծում էլիպսաձև և միմյանց մեջ ներգծված երկու պարսպապատերով: Արտաքին պարսպի երկայնական տրամագիծը մոտենում է 200 մ, իսկ ընդլայնականը՝ 120 մ: Ամրակառույցները շարված են միջին ու մեծ անմշակ քարերից՝ երկերես, չոր շարվածքով:

Բնակավայրի ներսի տարածքը խիտ կառուցապատված է ընդարձակ ուղղանկյուն ու կլորացող շինություններով, որոնց մեջ նկատվում են նաև փողոցներ ու բնակելի կացարաններ հիշեցնող փոքր սենյակներ: Շինությունների պատերը շարված են միջին չափի քարերից և պահպանվել են մեկ շարի բարձրությամբ: Ամրացված բնակատեղիի ներսում առանձնանում են 3-4 խոշոր քարերով շարված սենյակներ, որոնց հատակագծում ուղղանկյուն՝ մոտ 2,5x5 մ չափերով, ժամանակի կեղծ թաղով ծածկված, կիսագետնափոր կառույցներ են: Ակնհայտ է, որ սրանք հնում կողոպտված ու բնակելի կացարանի վերածված մեծ դամբարանների թաղումնային խցեր են: Բնակատեղիի հյուսիսային մասում երևում է նաև կատակոմբային թաղում հիշեցնող գետնափոր կիսաբաց խուց:

Ամրացված հյուսիսային կողմում պահպանվել են միաշար պատերով ներփակվող ընդարձակ

տարածքներ, հավանաբար՝ անասնապահարանների: Հուշարձանի նախնական թվագրությունը՝ Ք.ա. 4-1 հազ., հիմնված է տարածքից հավաքված (բնակատեղիից և, հավանաբար, կողոպտված դամբարաններից) վերգետնյա խեցեղենի վերլուծության վրա: Բնականից անպաշտպան, հարթ դաշտի կենտրոնում, պաշտպանական համակարգի համեմատաբար թուլությունը, աննպաստ ջրագրությունը, ենթադրել է տալիս, որ հուշարձանը եղել է ոչ թե մշտական բնակության վայր, այլ կազմակերպվել ու օգտագործվել է որպես պարբերաբար այցելվող անասնապահական ամառանոց:

Քարտեզ, հուշարձանի տեղադրությունը



Օրթոֆոտոպլան



Տեղահանույթ և հատակագիծ





Կենտրոնական թաղամասը հյուսիս-արևմուտքից



Արևմտյան պարսպի հատվածը



Կենտրոնական պարսպագծի կառուցվածքը



Շրջանաձև մեծ կառույցը՝ պահապան կուռքով

№ 12. Ամրացված փարախներ Միրիկ 4

Ք.ա. 2-1-ին հազ.
39°39'43.02"N 46°17'45.05"E, բարձրությունը՝ 1946 մ

Հուշարձանի անվանումը
Միրիկ 4

Անվանման աղբյուրը
Մոտակա բնակավայրը

Տեղադրությունը
Համալիրը տեղադրված է Միրիկի ամրոցից 4,1 կմ հարավ-արևմուտք:

Ադմինիստրատիվ պատկանելությունը
ԱՀ Քաշաթաղի շրջանի Միրիկ գյուղ
(ԼՂՀ Օրենք ԼՂՀ վարչատարածքային բաժանման մասին)

Նախկին ադմինիստրատիվ պատկանելությունը
Ադրբ. ԽՍՀ Լաչինի շրջանի Միրիկի գյուղխորհրդի Միրիկ գյուղ
(Мельников, Ибрагимов, 1979, 69)
Ելիզավետպոլի գուբերնիայի Զանգեզուրի ուեզդի II տեղամասի (կենտրոն՝ Տեղ գյուղ), Մինքենդի գյուղական հասարակություն Միրիկ գյուղ
(Пагриев, 2007, 207, Кавказский календарь, 1916, 54)

Պատմական տեղեկություններ
Տես № 10. Ամրոց-քաղաքատեղի Աղահեճ (Միրիկ 1)

Ձրագրություն
Գտնվում է անջրդի վայրում

Հուշարձանի հիշատակումները և հետագա ուսումնասիրությունները
Հուշարձանը 2017 թ. հայտնաբերել է ԱՀ արշավախումբը (Գ. Սարգսյան)

Հուշարձանի նկարագրությունը
Տեղադրված է Աղահեճ ամրոցից 4,1 կմ հարավ-արևմտյան ալպյան արոտավայրերի սարահարթի սկզբնամասում՝ փորագիր ժայռապատկեր-քարտեզի մոտ: Միրիկ 1 ամրոցին ժամանակակից ամրացված փարախ-ամառանոց է: Այն կառուցված է զանգվածեղ, անմշակ քարերից՝ կիկլոպյան շարվածքով: Կառույցները ներկայացված են ներփակ՝ միմյանց հաջորդող բաց բակերով և կացարանների նմանվող փոքր սենյակներով: Եզրապատերը շարված են զգալիորեն ավելի խոշոր քարերից, քան ներսի պատերն ու միջնորմները: Ուշագրավ է, որ կառույցների պատերի քարերը դրված են միմյանցից փոքր հեռավորության վրա, ինչը որոշ հատվածներում քարե ցանկապատի տպավորություն է թողնում: Հարկ է նշել, որ հիմնական եզրապատերի շուրջ ընկած շարի քարեր գրեթե չկան, ինչը թույլ է տալիս մտածելու, որ այս քարե պատաշարերը ընդամենը երբեմնի փայտյա ցցապատի քարե հիմնաշարերն են: Հուշարձանը վատ է պահպանվել: Նրա հիմնական մասը մելիորացված է, և մնացել են միայն դաշտամիջյան ճանապահի երկու կողմերի հատվածները: Այս համալիրի մոտ է գտնվում տեղանքի ժայռապատկեր քարտեզը (39°39'53.07 "N 46°17'49.09"E բարձրությունը ծ.մ. 1918 մ):

Քարտեզ, հուշարձանի տեղադրությունը



Տեղահանույթի և հատակագծի սխեմատիկ վերակազմություն





Արտաքին պատաշարը



Միջնորմի շարվածքը



Ներսի պատաշարերը



Պատաշարի հատված



Քարտեզ-ժայռապատկերի հիմնական մասը



Արոտավայրերի մուտքի մոտ գտնվող փորագիր
քարտեզ-ժայռապատկերը հյուսիսից

№ 13. Ամրոց Խոզնավարի լիճ

Ամրոց, դամբարանադաշտ
Ք.ա. 2-1-ին հազ.
39°37'54.05"N 46°19'13.08"E, բարձրությունը՝ 2052 մ

Հուշարձանի անվանումը
Ամրոց Խոզնավարի լիճ

Անվանման աղբյուրը
Տեղանքի միկրոտեղանունը

Այլ անվանում
Ղանլիգյոլ, Ղազիգյոլ

Տեղադրությունը
Գտնվում է Միրիկ համայնքի արոտավայրերում՝ ալպյան մարգագետինների գոտում՝ Խոզնավարի լիճ կոչվող բնական լճակի հարավային ափի բլրին: Հուշարձանը տեղակայված է ՀՀ և ԱՀ սահմանագլխին՝ ՀՀ Սյունիքի մարզի Գորիսի տարածաշրջանի Խոզնավար գյուղից 2,5 կմ արևմուտք:

Ադմինիստրատիվ պատկանելությունը
ԱՀ Քաշաթաղի շրջանի Միրիկ գյուղ
(ԼՂՀ Օրենք ԼՂՀ վարչատարածքային բաժանման մասին)

Նախկին ադմինիստրատիվ պատկանելությունը
Ադրբ. ԽՍՀ Լաչինի շրջանի Միրիկի գյուղխորհրդի Միրիկ գյուղ
(Мельников, Ибрагимов, 1979, 69)
Ելիզավետպոլի գուբերնիայի Զանգեզուրի ուեզդի II ոստիկանական տեղամասի Մինքենդի գյուղական հասարակության Միրիկ գյուղ
(Пагирев, 2007, 207, Кавказский календарь, 1916, 54)

Զրագրություն
Խոզնավարի լճի հարավային ափին

Տեսողական կապը այլ հուշարձանների հետ
Ամրոցներ՝ Հերիկ, Սոնասար

Հուշարձանի հիշատակումները և հետագա ուսումնասիրությունները
2018 թ. հուշարձանը հայտնաբերել է Գ. Սարգսյանը

Հուշարձանի նկարագրությունը
Ամրոցը զբաղեցնում է երկարավուն, կոնաձև բլրի հարթեցված գագաթը և մասամբ՝ լանջերը:
Ամրոցը շատ վատ է պահպանվել: Այսօր հատվածաբար երևում է վերին պարսպագիծը, իսկ ստորինը ուրվագծվում է որպես ռելիեֆ: Տեղակայված լինելով բնական լճակի ափին՝ ամրոցի տարածքը մշտապես օգտագործվել է որպես անասնապահական ամառանոց: Լճակի ափերին և մասնավորապես՝ ամրոցի վրա տարբեր ժամանակներում կառուցվել ու վերակառուցվել են անասնափարախներ: Վերջինների շինաքարերը վերցվել են ամրոցի պարիսպներից՝ նախապես ճեղքելով ու փոքրացնելով: Հուշարձանի տարածքում դրված փարախները հիմնականում կցվել են ամրոցի վերին պարսպին դրսից և երևում է, որ նրանց մեկ պատը ամրոցի հնագույն շերտի կիկլոպյան շարվածքով պարիսպն է: Վերին պարսպագիծը ուրվագծվում է հատվածաբար՝ տեղ-տեղ երևացող պարսպագծի քարերով: Երկրորդ՝ ստորին պարսպաշարը, որ եզերում էր բնակատեղիի դարավանդը՝ ծածկված է խոտածածկույթով և հստակ չի ուրվագծվում: Բոլոր անասնափարախները և հնագույն կիկլոպյան պարիսպները շարված են անմշակ քարերից՝ չոր շարվածքով, բայց տարբերվում են քարերի մեծությամբ ու շարվածքի հարաբերական կանոնավորությամբ:
Միջնաբերդի ներսի տարածքը համեմատաբար հարթ է, բայց կառուցապատման ցայտուն հետքեր չեն երևում: Հուշարձանում վերգետնյա խեցեղենը սակավ է: Բացված խուզահորանից հայտնաբերված խեցեղենը տարաժամանակյա է, բայց վաղագույնը վերաբերում է բրոնզ-երկաթեդարյան ժամանակաշրջանին (Ք. ա. 2-1 հազ.), որով և պետք է թվագրել ամրոցը:

Ամրոցի հյուսիս-արևելյան թամբաձև իջվածքի հարթակում պահպանվել են կրոմլեխներով եզերված սալարկղային թաղումներ, որոնք բոլորն էլ կրում են կողոպտվածության նշաններ: Լճակը ներփակող բլրաշղթայի ջրբաժան գծին նկատվում են շարքով գնացող խոշոր դամբարանաբլուրներ:

Տարածքի այլ հուշարձաններ

Վիշապ-քարակոթողը

Ամրոցի ստորոտում՝ դեպի Խոզնավար գյուղ իջնող ճանապարհի հարող հարթակում, 2018 թ. Ձ. Ըռքոյանը հայտնաբերել է ձկնակերպ վիշապաքարը: Այն 2,45 մ երկարությամբ և մոտ 0,5 մ տրամագծով բազալտե կոթող է, որի վերին հատվածը լավ մշակված և կլորացված է, իսկ գագաթին նկատվում է փորագրված ձկան գլուխ և աչքեր: Կոթողի ստորին մասը մշակված չէ և, ըստ ամենայնի, այն կանգնած է եղել: Վիշապաքարը տեղահանված է՝ ընկած մելիորացված քարակույտերի մեջ: Տվյալ կոթողը պետք է դիտարկել ամրոցի և լճակի համատեքստում. չի բացառվում, որ ի սկզբանե այն կանգնած է եղել հենց այնտեղ:

Քարտեզ, հուշարձանի տեղադրությունը



Օրթոֆոտոպլան



Տեղահանույթ և հատակագիծ





Ամրոցը և լիճը հյուսիսից



Ամրոցանիստ բլուրը հարավից



Հնագույն պարսպի շարվածքը



Միջնաբերդի պատաշարերը



Պահապան կուռքը հնագույն կառույցում



Վերին պարսպի արևելյան հատվածը

№ 14. Ամրոց Տանձուտ 1

Ամրոց, դամբարանադաշտ
Ք.ա. 1-ին հազ. - միջնադար
39°40'26.0"N 46°22'35.03"E, բարձրությունը՝ 1514 մ
ԱՀ Պատմության և մշակույթի հուշարձանների Պետական Ցուցակի գրանցահամարը
Քաշաթաղի շրջան N190

Հուշարձանի անվանումը
Ամրոց Տանձուտ 1

Անվանման աղբյուրը
Մոտակա բնակավայրը

Այլ անվանում
Չինարղալա

Տեղադրությունը
Աղավնո ու Հոչանց գետերի հովիտների ջրբաժանում գտնվող Սոևասարի ամրոցի բարձունքից դեպի Աղավնո գետն է իջնում մի հզոր լեռնաբազուկ, որը ընթացքի կեսերին բաժանվում է երեք ավելի փոքր լեռնաբազուկների: Վերջինները հանգչում են Աղավնոյի ձախ ափին՝ պսակվելով միմյանցից մոտ 0,5-1 կմ հեռավորության վրա գտնվող երեք ամրոցներով՝ «Տանձուտ 1», «Տանձուտ 2» և «Խոժոռաբերդ»: Տանձուտ 1 ամրոցը գտնվում է Տանձուտ գյուղի հյուսիս-արևմտյան եզրին՝ Աղավնո գետի ձախ ափին վեր խոյացող երկգագաթ մեծ ու փոքր կոնաձև բլուրների վրա:

Ադմինիստրատիվ պատկանելությունը
ԱՀ Քաշաթաղի շրջանի Ծիծեռնավանք համայնք, Տանձուտ գյուղ
(ԼՂՀ Օրենք ԼՂՀ վարչատարածքային բաժանման մասին)

Նախկին ադմինիստրատիվ պատկանելությունը
Ադրբ. ԽՍՀ Լաչինի շրջանի Ղարաղշլաղի գյուղխորհրդի Ղարաղշլաղ գյուղ
(Мельников, Ибрагимов, 1979, 70)
1920 թթ. այս տարածքը մտնում էր Լեռնային Ղարաբաղի կազմի մեջ:
(Տեր-Ավետիսյան, 1924b, 3)
Ելիզավետպոլի գուբերնիայի Զանգեզուրի ուեզդի II տեղամասի (կենտրոն՝ Տեղ գյուղ) Մինքենդի գյուղական հասարակություն, Ղարաղշլաղ գյուղ
(Кондратенко, 1902, 293, Кавказский календарь, 1916, 54)

Պատմական տեղեկություններ
Ա. Ղարագյոզյանը Տանձուտ (նախկ. Ղարաղշլաղ) գյուղը նույնացնում է Քաշաթաղի հետ՝ Ղարաղըշլաղ - Гар-гышаг - Քաշաթաղ տեղանունների համադրությամբ (Карагезян, 1987, 40-41): 1898 թ. Ե. Լալայանը նշում է գյուղը որպես հայաբնակ (Лалаянеан, 1898, 49), սակայն 1914 թ. այն արդեն լիովին մահմեդականացված էր (Кавказский календарь, 1914, 135):

Զրագրություն
Աղավնո գետի և Սթունիս վտակի խառնարան: Ամրոցանիստ բլուրները տեղադրված են ուղիղ Աղավնո գետին աջից միացող Սթունիս գետակի առանցքի վրա, և այստեղից ազատ դիտարկվում է ոչ միայն Սթունիսի և Աղավնոյի խառնարանի ընդարձակ հովիտը, այլև՝ հանդիպակած ափին գտնվող Սթունիս, Աղավնաբերդ և Մանուկ բերդ-ամրոցները:

Տեսողական կապը այլ հուշարձանների հետ
Ամրոցներ՝ Տանձուտ 2, Խոժոռաբերդ, Մանուկբերդ, Աղավնաբերդ, Սթունիս

Հուշարձանի հիշատակումները և հետագա ուսումնասիրությունները
Միջնադարյան հուշարձաններն ուսումնասիրել են Ե. Լալայանը, Ս. Կարապետյանը (Лалаянеан 1898, 48-49, Կարապետյան, 1999, 140-142): Ամրոցը 2014 թ. ուսումնասիրել է ԱՀ արշավախումբը (Կարապետյան, Սարգսյան, 2018b):

Հուշարձանի նկարագրությունը
Ամրոցի հիմնական՝ վերին հատվածը, ըստ ամենայնի, ժամանակին ամբողջովին շրջագծված է

եղել հատակագծում կլոր՝ մոտ 50 մ տրամագծով ամրապարիսպով, որից այսօր երևում է միայն բլրի հյուսիսահայաց, համեմատաբար մեղմ զառիթափով լանջի միջնամասով գնացող մոտ 60 մետրանոց հատվածը: Այն կառուցված է կիկլոպյան շարվածքով՝ խոշոր, ճեղքած քարերից՝ կիկլոպյան շարվածքով: Բլրի գագաթին նկատվում են առանձին պատերի հետքեր, որոնք, սակայն, կառուցապատման որոշակի պատկեր չեն տալիս:

Ամրոցի փոքր գագաթը, որ տեղակայված է բարձր գագաթից մոտ 100 մ հարավ-արևելք, վերջինին միանում է վերջինիս թամբաձև ջրբաժանով, և պարսպապատի հետքեր չի պահպանել: Նրա գագաթի հարթ մակերեսի տրամագիծը չի գերազանցում 5-6 մ, որտեղ և ուրվագծվում են մեծ քարերից կառուցված 3x4 մ չափերով մի ուղղանկյուն շինության հետքեր, որը, ամենայն հավանականությամբ, դիտակետ-աշտարակ է: Հուշարձանի տարածքում վերգետնյա խեցեղենը սակավ է: Ամրոցանիստ գագաթներից հյուսիս՝ Սոնասարի բարձունքից իջնող աջակողմյան լեռնաբազկին, տարածվում է մոտ 1 կմ ձգվող ընդարձակ դամբարանադաշտ: Լեռնաբազկի ջրբաժանով գնում է մեծ դամբարանների շարքը: Նկատվում են որպես քարարկղային խցերով թաղումներ, որոնք բոլորն էլ հնում արդեն կողոպտված են եղել:

Տարածքի այլ հուշարձաններ

Գյուղատեղի

Գյուղից 2,5 կմ հյուսիս-արևելք գտնվում է գյուղատեղի, որը կարող է նույնացվել Ա. Ղարգոզյանի հիշատակած Վերին Շեն գյուղատեղիի հետ (Карагезян, 1987, 41, Կարապետյան, 1999, 140):

Եկեղեցի

Գյուղի հյուսիսային եզրին գտնվում է փոքր, ժայռափոր եկեղեցի:

Ե. Լալայանը գյուղի արևելյան հատվածում՝ փոքրիկ բլրի վրա, հիշատակում է բժիշկ Պանտալեոնի մատուռ-գերեզմանը, որտեղ XIX դարում տեղադրված էր նորոգված շիրմաքար (Լալայեան, 1898, 49): Նույն վայրում Ս. Կարապետյանը հավաստում է մզկիթի գոյությունը՝ 1863 թ. շինարարական արձանագրությամբ (Կարապետյան, 1999, 141):

Քաղաքացիական շինություն

Գյուղի հյուսիս-արևմտյան հատվածում գտնվում է XVII-XVIII դդ. թաղակապ մի շինություն:

Մահմեդական հուշարձաններ

Բացի գյուղի տարածքում գտնվող մզկիթից՝ Տանձուտից, 2,5 կմ հարավ քրդական գերեզմանոց է: Գյումբազներից մեկի պատի մեջ ներդրված է խաչքար (Կարապետյան, 1999. 141)

Քարտեզ, հուշարձանի տեղադրությունը



Տեղահանույթի և հատակագծի սխեմատիկ վերակազմություն





Ամրոցանիստ բլուրը հյուսիս-արևմուտքից



Ամրոցակալ բլուրը արևմուտքից



Մեծ բլրի պարսպագիծը



Ստորին պարսպաշարի հատված



Դիտակետ-աշտարակի բլուրը մեծ գագաթից

№ 15. Ամրոց Տանձուտ 2

Ամրոց, կից կառույց
Ք.ա. 1-ին հազ. վերջ - վաղ միջնադար
39°40'38.01"N 46°21'54.04"E, բարձրությունը 1404 մ
ԱՀ Պատմության և մշակույթի հուշարձանների Պետական Ցուցակի գրանցահամարը
Քաշաթաղի շրջան N191

Հուշարձանի անվանումը
Ամրոց Տանձուտ 2

Անվանման աղբյուրը
Մոտակա բնակավայրը

Տեղադրությունը
Գտնվում է Տանձուտ գյուղից մոտ 1,8 կմ հյուսիս-արևմուտք (ազիմուտ 300)՝ զբաղեցնելով Աղավնո գետի թեթև ոլորարանի ձախափնյա ժայռագծի գետահովտի վրա կախված՝ հյուսիս-արևելք, հարավ-արևմուտք ձգվածությամբ լեզվակաձև հրվանդանի փոքր ինչ բարձրացող հարթ մակերեսով գագաթը և մասամբ՝ արևելյան լանջը:

Ադմինիստրատիվ պատկանելությունը
ԱՀ Քաշաթաղի շրջանի Ծիծեռնավանք համայնք, Տանձուտ գյուղ
(ԼՂՀ Օրենք ԼՂՀ վարչատարածքային բաժանման մասին)

Նախկին ադմինիստրատիվ պատկանելությունը
Ադրբ. ԽՍՀ Լաչինի շրջանի Ղարաղշլաղի գյուղխորհրդի Ղարաղշլաղ գյուղ
(Мельников, Ибрагимов, 1979, 70)
1920 թթ. այս տարածքը մտնում էր Լեռնային Ղարաբաղի կազմի մեջ:
(Տեր-Ավետիսյան, 1924b, 3)
Ելիզավետպոլի գուբերնիայի Զանգեզուրի ուեզդի II տեղամասի (կենտրոն՝ Տեղ գյուղ) Մինքենդի գյուղական հասարակություն, Ղարաղշլաղ գյուղ
(Кондратенко, 1902, 293, Кавказский календарь, 1916, 54)

Պատմական տեղեկություններ
Տես № 14. Ամրոց Սանձուտ 1

Զրագրություն
Աղավնո գետի ձախ ափ

Տեսողական կապը այլ հուշարձանների հետ
Ամրոցներ՝ Տանձուտ 1, Խոժոռաբերդ, Մանուկբերդ, Աղավնաբերդ, Սթունիս

Հուշարձանի հիշատակումները և հետագա ուսումնասիրությունները
Միջնադարյան հուշարձաններն ուսումնասիրել են Ե. Լալայանը, Ս. Կարապետյանը (Լալայեան, 1898, 48-49, Կարապետյան, 1999, 140-142): Ամրոցը 2014 թ. ուսումնասիրել է ԱՀ արշավախումբը (Կարապետյան, Սարգսյան, 2018b):

Հուշարձանի նկարագրությունը
Ամրոցը տեղակայված է Տանձուտ 1 և Խոժոռաբերդ ամրոցների միջնամասում՝ Տանձուտ 1-ից մոտ 1,0 կմ արևմուտք, Խոժոռաբերդից՝ 0,5 կմ հարավ: Ամրոցակալ հրվանդանի գետահայաց լանջը զառիթափ է ու ժայռոտ, հարավայինը՝ ավելի մեղմ ու հողածածկ: Ամրոցը մեծ չէ՝ մոտ 60x30 մ չափերով, և հատակագծում մոտենում է էլիպսին: Այն պաշտպանված է խոշոր քարերից շարված շրջապարիսպով: Հարավային կողմում հիմնական պարսպին կից դրված է իր պարիսպով ներփակվող, ոչ մեծ, առանձնացող մի շինություն: Պարսպագծին ամուր հիմք ապահովելու նպատակով՝ տեղ-տեղ կտրվել է ժայռագիծը ու հարթեցվել տեղանքը:

Ամրոցի ներսում նկատվող շինությունները խիտ կառուցապատման տպավորություն չեն թողնում: Դրանք շարված են զգալիորեն ավելի փոքր քարերից և պահպանվել են հատվածաբար: Ուշագրավ է, որ տեղի բնահողի բազալտե ապարը օգտագործվել է միայն պարսպաշարում, իսկ ներսի շինութ-

յուններում հիմնականում օգտագործված է գետափից բերված բազալտե գլաքար: Հուշարձանի տարածքի մակերեսը պատված է փարթամ խոտածածկույթով, շինությունների հետքերը նկատվում են դժվարությամբ: Ամրոցի հիմնական պարսպի հարավային կողմում հողի բնական էրոզիան բացել է պարսպի շարվածքի մի հատված՝ 4 քարի բարձրությամբ: Այստեղ հստակ նկատվում է, որ պարիսպը կառուցված է անմշակ ճեղքած քարերից ու խոշոր գլաքարերից և շարվածքում, որպես կապակցող, օգտագործվել է կավահողը:

Դատելով ամրոցի դիրքից, չափերից ու կառուցապատման առանձնահատկություններից՝ այն չի եղել մշտական բնակության վայր, այլ կառուցվել ու օգտագործվել է որպես միջանկյալ պահակային ամրոց-հենակետ՝ նրա դիմաց գտնվող նշանավոր Խոժոռաբերդ ամրոցի համար: Հնավայրում վերգետնյա նյութ չի հայտնաբերվել, և նախնական թվագրությունը հիմնված է ճարտարապետական առանձնահատկությունների վրա:

Քարտեզ, հուշարձանի տեղադրությունը



Օրթոֆոտոպլան



Տեղահանություն և հատակագիծ





Ամրոցանիստ բլուրը արևմուտքից՝ Աղավնոյի ափից



Արևելահայաց պարսպագծի հիմնաքարերը



Արևմտյան կողմի պարսպի երևացող մասը



Ամրոցի գագաթնագծի արևմտյան լանջը

№ 16. Ամրոց Խոժոռաբերդ

Ամրոց, ժայռափոր բնակատեղի
Վաղ և զարգացած միջնադար՝ V-XV դդ.
39°40'57.05"N 46°22'04.01"E, բարձրությունը՝ 1499 մ
ԱՀ Պատմության և մշակույթի հուշարձանների Պետական Ցուցակի գրանցահամարը
Քաշաթաղի շրջան N178

Հուշարձանի անվանումը
Ամրոց Խոժոռաբերդ

Անվանման աղբյուրը
Վերականգնված է պատմական անվանումը

Այլ անվանում
Ղիզիլ ղայա

Տեղադրությունը
Գտնվում է Տանձուտ գյուղից 1,2 կմ հյուսիս-արևմուտք՝ Աղավնո գետի ձախակողմյան փոքր վտակի աջ ափին՝ դեպի Սոնասար տանող դաշտամիջյան ճանապարհի սկզբնամասում գտնվող ժայռափոր բնակավայրի վերևի հարթ հրվանդանին:

Ադմինիստրատիվ պատկանելությունը
ԱՀ Քաշաթաղի շրջանի Ծիծեռնավանք համայնք, Տանձուտ գյուղ
(ԼՂՀ Օրենք ԼՂՀ վարչատարածքային բաժանման մասին)

Նախկին ադմինիստրատիվ պատկանելությունը
Ադրբ. ԽՍՀ Լաչինի շրջանի Ղարաղշլաղի գյուղխորհրդի Ղարաղշլաղ գյուղ
(Мельников, Ибрагимов, 1979, 70)
1920 թթ. այս տարածքը մտնում էր Լեռնային Ղարաբաղի կազմի մեջ:
(Տեր-Ավետիսյան, 1924b, 3)
Ելիզավետպոլի գուբերնիայի Զանգեզուրի ուեզդի II տեղամասի (կենտրոն՝ Տեղ գյուղ) Մինքենդի գյուղական հասարակություն, Ղարաղշլաղ գյուղ
(Пагирев, 2007, 150, Кондратенко, 1902, 293, Кавказский календарь, 1916, 54)

Պատմական տեղեկություններ
Խոժոռաբերդ ամրոցը բազմիցս հիշատակվում է աղբյուրներում (տես՝ Օրբելյան, 1986, 70, 71, նաև Ինճիճեան, 1822, 279, Հիւբշման 1907, 354 (Խոժոռաբերդ = դաժանբերդ), Шопен, 1852, 70, Լեո, 1917, 184), սակայն դրա տեղայնացումը վիճահարույց է: Ա. Ղարագյոզյանի կարծիքով՝ նկարագրվող ամրոցը ոչ թե Խոժոռաբերդն է, այլ Քաշաթաղը (Карагезян, 1987, 40-41): Բացի այդ, Քաշաթաղ գավառը և «անառիկ դղյակը» հիշատակվում են Խնածախի և Խոզնավարի համատեքստում (Խաչիկյան, 1967, 116, Հակոբյան, 1984, 256, 506, Յակոբեան, 2009, 383-386): Ա. Ղարագյոզյանը Խոժոռաբերդը նույնացնում է Նորաբերդի հետ (Карагезян, 1987, 43): Հայր Ղևոնդ Ալիշանը չի բացառում, որ Խոժոռաբերդը տեղադրված էր Ծիծեռնավանք գետի հովտում (Ալիշան, 1893, 266), իսկ Հայաստանի և հարակից շրջանների տեղանունների բառարանի հեղինակները՝ ԱՀ Հադրութի շրջանի Խծաբերդ գյուղի հետ (Հակոբյան և այլք, 1988, 763):

Ձրագրություն
Աղավնո գետի ձախ ափ

Տեսողական կապը այլ հուշարձանների հետ
Ամրոցներ՝ Տանձուտ 1, Տանձուտ 2, Մանուկբերդ, Աղավնաբերդ, Սթունիս

Հուշարձանի հիշատակումները և հետագա ուսումնասիրությունները
Ղարաղշլաղի ամրոցի նկարագրությունը առաջիններից ներկայացնում է Ա. Ղարագյոզյանը (Карагезян, 1987, 40-41): Ղարաղշլաղում միջնադարյան ամրոց հիշատակում է նաև Վ. Հուսեյնովան (Гусейнова, 2009, 91): 2016 թ. հուշարձանն ուսումնասիրել է ԱՀ արշավախումբը:

Հուշարձանի նկարագրությունը

Միջնաբերդ

Խոժոռաբերդ ամրոցը տեղադրված է Հոչանց-Աղավնո գետամիջյան ջրբաժանից իջնող լեռաբազկի ծայր հարավային վերջավորությանը բարձր, գետահովիտը վերահսկող բլրին: Համեմատաբար հարթ մակերեսով հրվանդանը երեք կողմերից բնականից պաշտպանված է անմատչելի ժայռածերպերով: Ժամանակին այն ամբողջ եզրագծով պատված է եղել շրջապարսպով, որից այսօր պահպանվել են միայն հյուսիսային ու մասամբ արևելյան կողմերի ձեռակերտ հատվածները: Ամրոցի հյուսիսային՝ ամենամատչելի ուղղության վրա կանգնեցված պարիսպը արևելյան անկյունում ավարտվում է հզոր ուղղանկյուն աշտարակով: Այն կառուցված է խոշոր խորանարդաձև քարերով և իր կանոնավորությամբ ու հզորությամբ տարբերվում է հիմնական պարսպագծի շարվածքից: Արևելյան մոտ 100 մ երկարությամբ ձգվող պարսպի միջնամասում բացվում է ամրոցի գլխավոր մուտքը, որը 3 մ բացվածքով դեպի ներս գնացող երկու զուգահեռ պատաշարերով մոտ 15 մետրանոց միջանցքի տեսք ունի: Արևելյան պարսպի հյուսիսային՝ մինչև մուտք եկող հատվածի առջևից անցնում է տեղ-տեղ քարաշեն հենապատով եզերված ամրոց մտնող հիմնական ճանապարհը: Այն գալով հյուսիսային կողմից՝ առաջինը անխուսափելիորեն հանդիպում ու շրջանցում է արևելյան անկյունի հզոր աշտարակը և հետո շարունակվում դեպի մուտքը:

Ամրոցի պարիսպները շարված են մեծ, ճեղքած, անմշակ, մոտավոր խորանարդի բերված քարերից՝ առանց կրաշաղախի: Որպես կապակցող նյութ պատաշարերում օգտագործված է կավահողը:

Ամրոցի ներսի հարթ՝ դեպի հարավ որոշ թեքություն ունեցող, բաց 140x60 մ մոտավոր չափերով տարածքը խիստ հողմնահարված է և ենթարկված է բնական էրոզիայի: Այստեղ տեղ-տեղ նկատվում են շրջապարսպից մնացած պատառիկներ և առանձին պատաշարերի հետքեր, որոնք կարող են վկայել երբեմնի կառուցապատման մասին:

Հուշարձանի տարածքում հայտնաբերված սակավաթիվ վերգետնյա խեցեղենը կարելի է վերագրել՝ սկսած Ք.ա. 1-ին հազ. երկրորդ կեսից մինչև միջնադար ընկած ժամանակահատվածին:

Ժայռափոր բնակատեղի

Ամրոցանիստ հրվանդանի ժայռածերպերի տակի ձորակում բխող բնական աղբյուրների շրջակայքում միջնադարյան ժայռափոր բնակատեղի է, հավանաբար՝ մենաստան: Այստեղ ուղղահայաց իջնող մակերեսների տարբեր մակարդակներին փորված են բնակելի կացարաններ, անցումներ, խորշեր (Տեր-Ավետիսյան, 1924b, 3): Ստորոտում երևում են XIV-XV դդ. ժայռափոր եկեղեցուց մնացած դեպի թաղածև առաստաղը գնացող հարթ տաշված պատը և ուղղանկյուն խորանի սկզբնամասը կազմող հատվածները (Սարգսյան, 2014b, 337, Բարսեղյան, 2011): Ժայռափոր եկեղեցու հիմնական ծավալը կազմող ահռելի ժայռազանգվածը պոկվել ընկել է դիմացը: Բնակատեղիի վիմափոր կացարաններ կան նաև ձորակի հանդիպակաց ճակատին, իսկ միջնամասում երևում են տնատեղերի հետքեր (Կարապետյան, 1999, 140):

Քարտեզ, հուշարձանի տեղադրությունը



Օրթոֆոտոպլան



Տեղահանույթ և հատակագիծ





Ամրոցակալ ժայռը արևմուտքից



Ամրոցակալ ժայռը արևելքից



Ամրոցի արևելյան պարսպագիծը



Ամրոցի արևելյան պարսպի հատվածը



Ամրոցի հյուսիսային եզրի աշտարակի պատաշարը



Ամրոցանիստ ժայռի կրնկի վիմափոր կացարանները



Գլխավոր մուտքի բացվածքը

№ 17. Ամրոց Մանուկ բերդ

Ք.ա. 2-1-ին հազ. - ուշ միջնադար
39°40'22.03"N 46°21'21.02"E, բարձրությունը՝ 1457 մ
ԱՀ Պատմության և մշակույթի հուշարձանների Պետական Ցուցակի գրանցահամարը
Քաշաթաղի շրջան N129

Հուշարձանի անվանումը
Ամրոց Մանուկ բերդ

Անվանման աղբյուրը
Ամրոցի ժողովրդական անվանումն է

Այլ անվանում
Ղուշչի-1, Օղլանկալա, Ուշաղղալասի

Տեղադրությունը
Գտնվում է Ղուշչի գյուղի արևելյան եզրին վեր խոյացող սլացիկ, ժայռածերպերով ավարտվող բլրի գագաթին:

Ադմինիստրատիվ պատկանելությունը
ԱՀ Քաշաթաղի շրջանի Միրիկ գյուղ, Ղուշչի տեղամաս
(ԼՂՀ Օրենք ԼՂՀ վարչատարածքային բաժանման մասին)

Նախկին ադմինիստրատիվ պատկանելությունը
Ադրբ. ԽՍՀ Լաչինի շրջանի Ղուշչի գյուղ
(Мельников, Ибрагимов, 1979, 65)
Ելիզավետպոլի գուբերնիայի Զանգեզուրի ուեզդի II ոստիկանական տեղամասի (կենտրոն՝ Տեղ գյուղ) Մինքենդի գյուղական հասարակություն, Ղուշչի գյուղ
(Пагирев, 2007, 185, Кавказский календарь, 1916, 54)

Պատմական տեղեկություններ
Գյուղը հիշատակվում է 1691 թ. պարսկերեն վավերագրում (Կոստիքյան, 2001, 170), ինչպես նաև XVIII դարի Տաթևի վանքի պտղացուցակում (Օրբելյան, 1942, 42, Карагезян, 1987, 44)
Հայր Ղ. Ալիշանը հիշատակում է Ղուշչին որպես թուրքաբնակ գյուղ (Ալիշան, 1893, 267)

Զրագրություն
Աղավնո գետի աջ ափին: Աղավնո գետի և Սթունիս վտակի խառնարան: Ամրոցանիստ բլուրը բարձրանում է Աղավնո գետի աջակողմյան ափին և հսկում գետահովտի մոտ 3 կմ հատվածը:

Տեսողական կապը այլ հուշարձանների հետ
Ամրոցներ՝ Աղավնաբերդ, Սթունիս, Տանձուտ 1, Տանձուտ 2, Խոժոռաբերդ, Սոնասար

Հուշարձանի հիշատակումները և հետագա ուսումնասիրությունները
Վ. Հուսեյնովան այս ամրոցը թվագրում է XV դարով (Гусейнова, 2009, 92)
2013 թ. հուշարձանը ուսումնասիրել է ԱՀ արշավախումբը (Սարգսյան և այլք, 2014, 163, Կարապետյան, Սարգսյան, 2018b):

Հուշարձանի նկարագրությունը
Վեր խոյացող ժայռագանգվածը երեք կողմերից եզերվում է ուղղահայաց կտրվող բազալտե անմատչելի ծերպերով և հասանելի է միայն գետահայաց կողմից՝ հյուսիս-արևելքից, մեծ թեքությամբ իջնող զառիթափ լանջով: Հուշարձանն ունի երկու շինարարական շերտ՝ բրոնզ-երկաթեդարյան և միջնադարյան: Հնագույն՝ բրոնզ-երկաթեդարյան ամրոցի միջնաբերդը «նստած» է ժայռի մոտ 20x50 մ չափերով հարթ գագաթին և արևելյան՝ գետահայաց եզրագծով փակված է անմշակ, մեծ, խորանարդաձև ժայռաբեկորներից շարված կիկլոպյան պարսպով: Ներսում նկատվում են նման շարվածքով ընդլայնական երկու պատեր, որոնք բաժանում են միջնաբերդի մակերեսը 3 անհավասար մասերի: Երկու մասերում պահպանվել են մոտ 2,5 մ տրամագծով, ակնհայտորեն ձեռակերտ խոր փոսեր, հավանաբար՝ ջրավազաններ: Միջնաբերդից մոտ 12-15 մ ներքևի հորիզոնով գնում է ամրոցի երկրորդ պաշտպանական գծի պարիսպը, որը, ինչպես և առաջինը, փակում է միայն հնարավոր մոտեցման ուղղությունը: Երկու պարիսպների միջնամասի թեքադիր տեղանքում նկատվում են կառուցա-

պատման հետքեր: Երկրորդ պարսպագծի հարավ-արևելյան անկյունից ներքև գտնվող մի փոքր, պարսպագծով ներփակվող արհեստական դարավանդին պահպանվել են մեկ ուղղանկյուն սենյակի հիմնապատեր:

Ամրոցանիստ լեռան գետահայաց լանջի վերնամասում՝ հին ամրոցի պարսպից ներքև, գնում է մանր ճեղքած բազալտի տափակ սալերից կրաշաղախով շարված մոտ 50-60 մ երկարությամբ միջնադարյան պարսպագիծ: Այն կազմում է ոչ մեծ արհեստական դարավանդ, ուր կան նաև այլ պատերի հետքեր:

Ամենայն հավանականությամբ, Մանուկ բերդը բրոնզ-երկաթեդարյան ժամանակաշրջանում հանդիսացել է մոտ 0,5 կմ հարավ գտնվող Աղավնաբերդ ամրոց-բնակատեղիի պահակային ամրոցը:

Այլ հուշարձաններ

Գյուղում հավաստված է միջնադարյան աղբյուր: Կան խաչքարեր և տապանաքարեր:

Քարտեզ, հուշարձանի տեղադրությունը



Օրթոֆոտոպլան



Տեղահանույթ և հատակագիծ





Ընդհանուր տեսքը հարավ-արևելքից, Աղավնաբերդից



Ընդհանուր տեսքը Աղավնոյի ափից



Հնագույն պարսպի շարվածքը



Կիկլոպյան կառույցի հատված



Միջնադարյան պարսպի շարվածքը

№ 18. Ամրոց Աղավնաբերդ

Միջնաբերդ, բնակատեղի, դամբարանադաշտ
Ք.ա. 3-1-ին հազ. - միջնադար
39°40'05.06"N 46°21'26.03"E, բարձրությունը՝ 1503 մ

Հուշարձանի անվանումը
Ամրոց Աղավնաբերդ

Անվանման աղբյուրը
Ժողովրդական անվանում

Այլ անվանում
Ղուշչի ղալա

Տեղադրությունը
Գտնվում է Միրիկ գյուղից 3,1 կմ հարավ-արևելք:

Ադմինիստրատիվ պատկանելությունը
ԱՀ Քաշաթաղի շրջանի Միրիկ գյուղ, Ղուշչի տեղամաս
(ԼՂՀ Օրենք ԼՂՀ վարչատարածքային բաժանման մասին)

Նախկին ադմինիստրատիվ պատկանելությունը
Ադրբ. ԽՍՀ Լաչինի շրջանի Ղուշչի գյուղ
(Мельников, Ибрагимов, 1979, 65)
Ելիզավետպոլի գուբերնիայի Զանգեզուրի ուեզդի II ոստիկանական տեղամասի (կենտրոն՝ Տեղ գյուղ) Մինքենդի գյուղական հասարակություն, Ղուշչի գյուղ
(Пагирев, 2007, 185, Кавказский календарь, 1916, 54)

Պատմական տեղեկություններ
Գյուղը հիշատակվում է 1691 թ. պարսկերեն վավերագրում (Կոստիքյան, 2001, 170), ինչպես նաև XVIII դարի Տաթևի վանքի պտղացուցակում (Օրբելյան, 1942, 42, Карагезян, 1987, 44)
Հայր Ղ. Ալիշանը հիշատակում է Ղուշչին որպես թուրքաբնակ գյուղ (Ալիշան, 1893, 267)

Զրագրություն
Աղավնո գետի և Սթունիս վտակի խառնարան

Տեսողական կապը այլ հուշարձանների հետ
Մանուկբերդ, Սթունիս, Տանձուտ 1, Տանձուտ 2, Խոժոռաբերդ, Սոնասար, Հոչանց ամրոցներ

Հուշարձանի հիշատակումները և հետագա ուսումնասիրությունները
Վ. Հուսեյնովան հիմնագուրկ այս ամրոցը թվագրում է XIX դարով (Гусейнова, 2009, 92)
2014 թ. Հուշարձանն ուսումնասիրել է ԱՀ արշավախումբը (Սարգսյան և այլք, 2014, 163, Կարապետյան, Սարգսյան, 2018b): Տարածքի միջնադարյան հուշարձաններն ուսումնասիրել է Ս. Կարապետյանը:

Հուշարձանի նկարագրությունը
Քաղաքատեղին Տանձուտ գյուղի շրջակայքի Աղավնո-Սթունիս խառնարանի վեց ամրոցներից ամենամեծն է և ամենաբարձրադիրը: Քաղաքատեղիի միջնաբերդը տեղակայված է լեռնաբազկի ծայր արևելյան, գետահայաց եզրին վեր խոյացող կոնաձև բլրին և գերիշխում է շրջապատի նկատմամբ: Միջնաբերդը՝ թամբաձև իջվածքով, հաղորդակցվում է իրենից 80-150 մ ավելի բարձր տեղակայված ընդարձակ բնակատեղիի հետ, որի ավերակները սկսվում են անմիջապես միջնաբերդի ստորին պարսպի արտաքին կողմից և ձգվում են արևելք՝ ավելի քան 800-900 մ՝ զբաղեցնելով լեռնաբազկի սարահարթի հարավահայաց լանջի 150-200 մ լայնությամբ թեքադիր դաշտը:
Միջնաբերդի կոնաձև բլուրը պաշտպանված է իրար հաջորդող երեք շարք պարիսպներով, որոնցից ստորինը պաշտպանում է թամբաձև իջվածքը: Այն նկատվում է հատվածաբար, պարսպագծի դերը տեղ-տեղ կատարում է բնական ժայռագիծը: Այս պարսպագծի հարավարևելյան հատվածը շարված է փոքր քարերից՝ թույլ կրաշաղախով, ինչը, ամենայն հավանականությամբ, միջնադարում կատարված վերականգնման արդյունքն է:
Երկրորդ պարսպաշարը կառուցված է մոտ 20-30 մ վերև: Մոտ 60 մ տրամագծով պարիսպը շար-

ված է խոշոր ճեղքած բազալտից՝ չոր, «կիկլոպյան» շարվածքով: Այս պարսպագծի արևելյան՝ դեպի բնակավայրը նայող մասում, նկատվում է երկու մեծ եզրաքարերով արտահայտված մոտ 3,0 մ լայնությամբ մուտքի բացվածք: Երրորդ պարսպաշարը՝ ըստ ամենայնի, միջնաբերդի կենտրոնը հանդիսացող ուղղանկյուն դղյակի պատը, դրված է անմիջապես կոնաձև բլրի հարթեցված գագաթին: Դղյակը մոտ 15x20 մ չափերով, մեծ քարերից կառուցված շինություն է՝ միջնապատերով բաժանված հատվածներով: Պարիսպների միջանկյալ, զգալի թեքադիր տարածքներում նկատվում են երբեմնի կառուցապատումից մնացած առանձին պատերի հետքեր:

Բնակատեղին ուրվագծվում է ընդարձակ, բաց դաշտում՝ բազմաթիվ քարաշեն պատերի հետքերով: Բոլոր շինությունները կառուցված են միջին ու խոշոր քարերից և սարահարթի փարթամ խոտածածկույթի մեջ նկատվում են մեկ քարի բարձրությամբ:

Ուշադիր դիտարկելու պարագայում, կարելի է տարազատել երկու կողմերից քարաշեն պատերով եզերված երկարաձիգ ու խաչվող փողոցներ, ճանապարհներ, որոնց երկայնքով մեծ ու փոքր ներփակ տարածքներ են, բաց բակեր, անասնաշարախներ: Բնակավայրի ստորին՝ դեպի Սթունիսի ձորը նայող հարավային եզրագծին, պահպանվել են կողքի վրա ցից կանգնած քարերով շարված պատեր ու շինություններ:

Բնակելի թաղամասի վերին՝ հյուսիսային եզրագիծը, գնում է սարահարթի գագաթի ջրբաժանով և սահմանազատվում է մոտ 700 մ երկարությամբ քարաշեն եզրապատով: Վերջինս շարված է միաշերտ, երևում է մեկ քարի բարձրությամբ և միաժամանակ հանդիսանում է արևելքից դեպի միջնաբերդ իջնող ճանապարհի եզրապատը: Բնակատեղիի, կամ, այսպես կոչված, «քաղաքային թաղամասի» (մոտավոր տարածքը 15-20 հա) արևմտյան սահմանագիծը հերկված է և չի ընդգծվում:

Հուշարձանի տարածքում վերգետնյա խեցեղեն չի հայտնաբերվել:

Բնակավայրից դեպի արևմուտք՝ մոտ 500 մ շարունակվող հերկած հատվածի վերին հարթակի եզրին, պահպանվել է երբեմնի ընդարձակ դամբարանադաշտից մնացած մեծ, հնում կողոպտված դամբարանաբլրի քարարկղային խուցը: Այն հյուսիս-հարավ առանցքով կողմնորոշված մոտ 5X2 մ չափերով մեծ քարերով շարված և մոտ 2 մ բարձրությամբ հարթ սալերով ծածկված ամբողջական խուց է, որը քոչվոր անասնապահները «թաքօղուզ» էին անվանում և օգտագործում՝ որպես դաշտային տնակ:

Այլ հուշարձաններ

Դամբարանադաշտ

Դամբարանադաշտի սահմանները *հնարավոր չէ որոշել, բայց տեղ-տեղ ռելիեֆի եզրագծերին* երևում են թաղումային *կառույցների* հետքեր: Դամբարանադաշտը մասամբ թափանցում է բնակատեղիի տարածք, *ինչն*, ամենայն հավանականությամբ, բնակատեղիի սահմանների փոփոխության հետևանք է (Ավետիսյան և այլք, 2015, 91):

Մկնատամի վանք

Մկնատամի վանքը տեղադրված է գյուղից 1 կմ հարավ-արևելք (Սարգսյան, 2014b, 338, Բարսեղյան, 2011, 74): Կառուցված է սրբատաշ բազալտից: Միանավ թաղակապ շինություն է՝ արևմտյան մուտքով: Ծածկված է կիսաբոլոր ծածկասալերով: Հարավից կցված է գրեթե քառակուսի հատակագծով մի շինություն, հավանաբար՝ հյուրատուն (Կարապետյան, 1999, 138-139, Հակոբյան, 1991, 14):

Ձրաղացների համալիր

Ձրաղացների մնացորդները հայտնաբերվել են գյուղից 800 մ հյուսիս-արևելք՝ Աղավնոյի աջ ափին (Կարապետյան, 1999, 139):

Քարտեզ, հուշարձանի տեղադրությունը



Օրթոֆոտոպլան



Տեղահանույթ և հատակագիծ





Ամրոցի ընդհանուր տեսքը արևմուտքից՝ Հեռվում Տանձուտ գյուղն է



Ամրոցի ընդհանուր տեսքը հարավ-արևելքից՝ Սթունիս ամրոցից



Առաջին պարսպագծի հետագիծը



Բնակատեղիի միջնամասի պարսպագիծը



Բնակատեղիի վերին եզրագիծը



Հնագույն պարսպի պահպանված շարվածքը



Միջնաբերդի պարսպագծի հատված

№ 19. Ամրոց Սթունիս

Ամրոց, դամբարանադաշտ
Ք.ա. 1-ին հազ. - միջնադար.
39°39'49.02"N 46°21'46.05"E, բարձրությունը՝ 1470 մ
ԱՀ Պատմության և մշակույթի հուշարձանների Պետական Ցուցակի գրանցահամարը
Քաշաթաղի շրջան N189

Հուշարձանի անվանումը
Ամրոց Սթունիս

Անվանման աղբյուրը
Մոտակա պատմական բնակավայրը

Այլ անվանում
Ղալաջիկ

Տեղադրությունը
Գտնվում է Տանձուտ գյուղ 1,8 կմ հարավ-արևմուտք և Հարճլանք գյուղից 2 կմ արևմուտք, Աղավնո գետի և նրա աջակողմյան Սթունիսի վտակի միախառնման կետից հարավ-արևմուտք ընկած Սթունիսի ձորակի աջակողմյան լեռնազանգվածի ամենաբարձր՝ «Ղալաջիկ» կոչված բլրի գագաթին:

Ադմինիստրատիվ պատկանելությունը
ԱՀ Քաշաթաղի շրջանի Ծիծեռնավանքի համայնքի Տանձուտ գյուղի Սթունիս տեղամաս
(ԼՂՀ Օրենք ԼՂՀ վարչատարածքային բաժանման մասին)

Նախկին ադմինիստրատիվ պատկանելությունը
Ադրբ. ԽՍՀ Լաչինի շրջանի Հաջիլարի գյուղխորհրդի Սադինլար գյուղ
(Мельников, Ибрагимов, 1979, 70)
Ելիզավետպոլի գուբերնիայի Զանգեզուրի ուեզդի II ոստիկանական տեղամասի (կենտրոն՝ Տեղ գյուղ) Մինքենդի գյուղական հասարակություն, Սադունլար գյուղ
(Пагирев, 2007, 245 Кавказский календарь, 1916, 54)

Պատմական տեղեկություններ
Ըստ Հ. Կարագյոզյանի՝ հարևան Հարճլանք գյուղը հիշատակվում է Ռուսա Ա-ի Ծովինարի արձանագրությունում՝ Երկիլա ձևով, սակայն Ս. Կարապետյանի առաջարկած Հաջիլար-Հարճլանք անցումը (Կարապետյան, 1999, 139) այդքան էլ հստակ չէ: Ս. Երեմյանը Հարճլանք գավառը տեղադրում է Վարանդա գետի հովտում (Երեմյան, 1963, 62, 105), իսկ Ա. Հակոբյանը՝ Տրտուի վտակ Թութխուի վերնահովտում՝ համադրելով այս տեղանունը Սիմեոն Երևանցու հիշատակած Խութավանքի վիճակին պատկանող Հալուճ գյուղի անվան հետ (Յակոբեան, 2007, 44-52, Սիմէոն Երևանցի, 1873, 283):

Ջրագրություն
Աղավնո գետի և Սթունիս վտակի խառնարան:

Տեսողական կապը այլ հուշարձանների հետ
Ամրոցներ՝ Տանձուտ 1, Տանձուտ 2, Խոժոռաբերդ, Մանուկ բերդ, Աղավնաբերդ, Սոնասար

Հուշարձանի հիշատակումները և հետագա ուսումնասիրությունները
Վ. Հուսեյնովան ամրոցը սխալմամբ թվագրում է XIX դարով և հիշատակում է Ղուշչիի հուշարձանների համատեքստում (Гусейнова, 2009, 92): Ամրոցը 2013 թ. ուսումնասիրել է ԱՀ արշավախումբը (Սարգսյան և այլք, 2014, 164-165, Կարապետյան, Սարգսյան, 2018b): 2014 թ. հուշարձանը ուսումնասիրել է ԱՀ արշավախումբը (Սարգսյան և այլք, 2014, 163, Կարապետյան, Սարգսյան, 2018b): Տարածքի միջնադարյան հուշարձաններն ուսումնասիրել է Ս. Կարապետյանը:

Հուշարձանի նկարագրությունը
Ամրոցը վերահսկում է Աղավնոյի հովտի և նրա աջակողմյան վտակի խառնարանը: Բլրի կոնաձև գագաթը ներփակված է տարբեր մակարդակներում գտնվող երկու պարիսպների գոտիներով: Բլրի ստորոտի պարագծով կառուցված է ամրոցի հիմնական շրջապարիսպը՝ մոտ 100-120 մ տրամագծով, իսկ նրա կենտրոնում՝ կոնի վերնամասում, միջնաբերդը պաշտպանող մոտ 25 մ տրամագծով ամրապարիսպը: Արտաքին շրջապարիսպը իր ընթացքի գգալի մասում խարսխված է կոնաձև ելուս-

տի բնական հիմքը կազմող ժայռի եզրագծին և տեղ-տեղ ունի մինչև 1,5-2 մ պահպանված բարձրություն: Այն երկշերտ է, կառուցված է լայնությամբ դրված ճեղքած անմշակ զանգվածեղ քարերից՝ կիկլոպյան շարվածքով: Նման տեխնիկայով կառուցված է նաև միջնաբերդի պարիսպը, բայց զգալիորեն ավելի փոքր քարերից: Միջնաբերդի և հիմնական պարսպի միջև առաջացած հատակագծում կլորացող, ժապավենածև տարածքը մասամբ արհեստականորեն մասամբ հարթեցված է: Այստեղ արտաքին շրջապարսպի ներքին պարագծով նկատվում են բավականին խիտ կառուցապատման հետքեր: Միջնաբերդի գագաթի համեմատաբար հարթ մակերեսը ակնհայտորեն ձեռակերտ է, և այստեղ ևս նկատվում են առանձին պատերի հետքեր:

Սթունիսի ձորից դեպի ամրոց է բարձրացել ցից քարերով եզերված թեքադիր ճանապարհը, որը լավ է պահպանվել ամրոցին հարող հարավային ստորոտում: Հուշարձանը պատված է փարթամ խոտածածկույթով: Վերգետնյա խեցեղեն չի հայտնաբերվել:

Խորհրդային տարիներին ամրոցանիստ բլրի ստորոտները և շրջակայքը մելիորացնելու հետևանքով՝ ամրոցի արտաքին բնակավայրը և ընդարձակ դամբարանադաշտի մեծագույն մասը ոչնչացվել են:

Տարածքի այլ հուշարձաններ

Ղալաջիկ 2 դամբարանադաշտ

Դամբարանադաշտը սփռված է ամրոցի միջնաբերդից հարավ և հարավ-արևելք ընկած բարձրադիր ջրբաժան լեզվակների գագաթնագծերին (39 39 42,2 N. 46 22 13,7 E. բարձրությունը՝ ծ.մ. 1509 մ): Այստեղ պահպանվել են ներկայում կողոպտված մեծ դամբարանաբլուրներ: Դամբարանների մասնակի երևացող քարարկղային թաղումնային խցերը կառուցված են զանգվածեղ քարերից և ծածկված են եղել կեղծ թաղի կառուցվածքով դրված սալերով: Դամբարանները, սովորաբար, օղակված էին կրոմլեխներով: Արժանահիշատակ է դամբարանադաշտում կանգնեցված 110 սմ բարձրությամբ քարե մարդակերպ կուռքը: Այն տեղադրված է դամբարանին կից ուղղանկյուն կառույցի կենտրոնական հատվածում: Կուռքի գլուխը նշված է ռելիեֆի մի փոքր թեք շրջանակով, աչքերը և բերանը փորագիր են: Իրանը իջնում է ոչ թե ուղիղ, այլ թեք, ինչը ենթադրել է տալիս, որ արձանը նստած դիրքով է: Արձանի ստորին հատվածում փոսիկ է, ինչը պետք է նշանակի սեռական (իգական) հատկանիշը (Սարգսյան և այլք, 2014, 163): Ավերված այս դամբարանից հայտնաբերված խեցեղեն նյութը բնորոշ է մ.թ.ա. VIII-VI դդ.:

Միջնադարյան կառույցներ

Պատմական Սթունիս գյուղի եկեղեցիներից մեկը տեղադրված է ներկայիս անբնակ Սթունիս (նախկ.՝ Սադինլար) գյուղի տարածքում: Դա եռանավ բազիլիկ շինություն է: Ուշագրավ է, որ սյուներից մեկի և խոյակի վրա կա արձանագրություն՝ Մելիք Հայկազ Բ-ի եղբոր և նրա կնոջ անունների հիշատակությամբ (Սարգսյան և այլք, 2014, 165, Սարգսյան, 2014b, 339-340): Մեկ այլ եկեղեցի հավաստված է գյուղից 800 մ հյուսիս՝ Սթունիսի և նրա վտակի միախառնման վայրում: Այն թաղածածկ միանավ կառույց է, ամենայն հավանականությամբ, IX-X դդ.: Եկեղեցու արտաքին չափերը՝ 8,4x6,1 մ:

Քարտեզ, հուշարձանի տեղադրությունը



Օրթոֆոտոպլան



Տեղահանույթ և հատակագիծ





Ամրոցի ընդհանուր տեսքը հյուսիս-արևմուտքից՝ Աղավնաբերդից



Ամրոցանիստ լեռը արևմուտքից



Ամրոցի միջնամասը գագաթի բլրով



Արևելյան պարսպագծի ներկայիս տեսքը



Ստորին պարսպաշարի հարավային գիծը



Մարդակերպ արձան Ղալաջիկ 2 դամբարանադաշտում

№ 20. Ամրոց Սոնասար

Ամրոց, բնակատեղի, դամբարանադաշտ
Ք.ա. 3-1-ին հազ.
39°41'47.08"N 46°23'05.07"E, բարձրությունը՝ 1820 մ
ԱՀ Պատմության և մշակույթի հուշարձանների Պետական Ցուցակի գրանցահամարը
Քաշաթաղի շրջան N164

Հուշարձանի անվանումը
Ամրոց Սոնասար

Անվանման աղբյուրը
Մոտակա բնակավայրը

Այլ անվանում
Սոյուղբուլաղ

Տեղադրությունը
Գտնվում է Սոնասար գյուղից մոտ 2,6 կմ հարավ-արևմուտք՝ Աղավնո ու Հոչանց գետահովիտների միջանկյալ լեռնազանգվածի ջրբաժանի գծի վրա բարձրացող «Սառնաղբյուր» (Սոյուղբուլաղ) կոչված լեռան գագաթին:

Ադմինիստրատիվ պատկանելությունը
ԱՀ Քաշաթաղի շրջանի Սոնասար գյուղ
(ԼՂՀ Օրենք ԼՂՀ վարչատարածքային բաժանման մասին)

Նախկին ադմինիստրատիվ պատկանելությունը
Ադրբ. ԽՍՀ Լաչինի շրջանի Հաջիլարի գյուղխորհրդի Սանասար գյուղ
(Мельников, Ибрагимов, 1979, 70)
Ելիզավետպոլի գուբերնիայի Զանգեզուրի ուեզդի Մեծ Սունասար գյուղ
(Пагирев, 2007, 268)

Պատմական տեղեկություններ
Ջիասար (Սոնասար) գյուղը հիշատակում է Ստեփանոս Օրբելյանը (*Օրբելյան 1986, 399*): Ա. Հակոբյանը Սոնասարի հետ է *նույնացնում* Օրբելյանի հիշատակած Ջյունասարի վանքը (Օրբելյան, 1986, 282):

Զրագրություն
Հոչանց ու Աղավնո գետերի ջրբաժանին

Տեսողական կապը այլ հուշարձանների հետ
Ամրոցներ՝ Քաշաթաղ, Հոչանց, Սթունիս, Արահուծ, Մանուկ բերդ, Աղավնաբերդ, Աղահեճ, Միրիկ 2, Հերիկ

Հուշարձանի հիշատակումները և հետագա ուսումնասիրությունները
Սոնասարի ամրոցը 2014 թ. հայտնաբերել է ԱՀ արշավախումբը (Կարապետյան, Սարգսյան, 2018b): Միջնադարյան հուշարձանները հիշատակում են Ե. Լալայանը և Ա. Ալեքպերովը (Լալայեան, 1898, 50, Акекперов, 1935, 37, Атлас Азербайджанский ССР, 1963, 206-207): Ուսումնասիրել են նաև Ա. Հակոբյանը և Ս. Կարապետյանը (Յակոբեան, 1998, 306, Կարապետյան, 1999, 160-162): Սոնասարի հարուստ անտիկ դամբարանի նյութերը ուսումնասիրել է Ժ. Խաչատրյանը (Խաչատրյան, 2013a, 28-36, Խաչատրյան, 2013b 61-82):

Հուշարձանի նկարագրությունը
Ամրոցանիստ կոնաձև բարձր լեռը իշխում է երկու գետահովիտների ու շրջապատի վրա և միայն հյուսիս-արևմուտքից բարձրությամբ նրան գերազանցում է Մշենու լեռը: Ամրոցի միջնաբերդը զբաղեցնում է լեռան ժայռոտ գագաթը: Այստեղ դժվարությամբ ուրվագծվում են մեծ անմշակ ժայռաբեկորներից տեղ-տեղ հատվածաբար պահպանված երբեմնի պարսպագծի առանձին քարերը և պարսպագծի հետագիծը: Գագաթի եզրագիծը հյուսիսային կետում՝ դեմ դիմաց կանգնած երկու մեծ քարերի տեսքով, ուրվագծում է նաև ամրոցի գլխավոր մուտքի բացվածքը: Հյուսիսային լանջից դեպի գլխավոր մուտք է տանում ցից կանգնած մեծ քարերով ցանկապատված, ոլորանով բարձրա-

ցող ճանապարհը: Գագաթին երևում են պատերի պատառիկներ, իսկ կենտրոնի ամենաբարձր կետում հստակ նկատվում է մեծ, հատակագծում կլորավուն, հենապատերով ամրացված բաց հրապարակը: Բնակատեղին տարածվում է լեռան հարավային, հարավ-արևելյան լանջերին պարիսպ-հենապատերով կազմակերպված 2-3 արհեստական դարավանդներին ու ամրոցանիստ բլրի ու հյուսիս-արևելյան լեռնաբազկի միջև առաջացած թամբաձև գոգավորության, քամիներից պաշտպանված հարթակին: Այստեղ հստակ պահպանվել են խիտ կառուցապատման հետքերը՝ կլորացող, ուղղանկյուն բազմասեկցիոն շինությունների քարաշար պատերի հիմնամասերի տեսքով: Բնակատեղիի շինությունների պատերը շարված են մեծ ճեղքած քարերից՝ երկշերտ, չոր շարվածքով: Ամրոցի ու բնակատեղիի տարածքում հավաքված վերգետնյա խեցեղենը բնորոշ է վաղ և ուշ բրոնզի, ինչպես նաև երկաթի ու անտիկ դարաշրջաններին:

Տարածքի այլ հուշարձաններ

Սոնասար դամբարանադաշտ

Ամրոցանիստ լեռան հարավային ու արևելյան ստորոտների բաց դաշտերում տարածվել է ընդարձակ դամբարանադաշտ, որի զգալի մասն այսօր հերկվում է: Այս դամբարանադաշտում գանձախույզները կողոպտել են «կեղծ թաղի» ծածկով քարարկղում քարե սարկոֆագի մեջ ամփոփված հելենիստական ժամանակաշրջանի հարուստ դամբարանը: Ննջեցյալի աճյունը դրված էր փայտե պատգարակի վրա: Հայտնաբերվել են բազմաթիվ ոսկյա կախիկներ, կոճակներ, ոսկուց և արծաթից պատրաստված պերճանքի առարկաներ (Խաչատրյան, 2013, 28-36):

Միջնադարյան կառույցներ

Սոնասար գյուղի կետրոնի ավերված եկեղեցու շրջակայքում հայտնաբերվել են մեծաքանակ տապանաքարեր, տապանաքարերի բեկորներ, խաչքարեր (Կարապետյան, 1999, 161): Մեկ այլ եկեղեցու ավերակներ պահպանվել են Հոչանցի ձորի հարավային բարձրադիր լանջին (Յակոբեան, 1998, 306): ՔԵԹ-ում պահպանվում են Սոնասարից բերված մի քանի ճարտարապետական դետալներ՝ սյան խարիսխ՝ ոչ խորը բնով, ամենայն հավանականությամբ՝ փայտյա սյան համար նախատեսված (ՔԵԹ 138/17), քիվի բեկոր՝ վերին հատվածում բարձրաքանդակ բոլորաձև զարդանախշով, ստորին հատվածում՝ ատամնաշարով (ՔԵԹ 268/17), աստիճանակոնք՝ գլանաձև հիմքին երկկոն իրանով (ՔԵԹ 268/17):

Քարտեզ, հուշարձանի տեղադրությունը



Օրթոֆոտոպլան



Տեղահանույթ և հատակագիծ





Ընդհանուր տեսքը հարավից



Ամրոց տանող ճանապարհի ուրվագիծը



Հնագույն պատաշարի հատված



Ամրոցի գագաթի բաց հրապարակը



Կողոպտված դամբարանի քարե սարկոֆագը

№ 21. Ամրոց Քաշաթաղ (Նորաբերդ)

X-XIV դդ.

39°44'2.08"N 46°23'11.44"E բարձրությունը՝ 1421 մ

ԱՀ Պատմության և մշակույթի հուշարձանների Պետական Ցուցակի գրանցահամարը Քաշաթաղի շրջան N47

Հուշարձանի անվանումը

Ամրոց Քաշաթաղ (Նորաբերդ)

Անվանման աղբյուրը

Վերականգնված է պատմական անվանումը

Այլ անվանում

Նորաբերդ, Քարաբերդ

Տեղադրությունը

Ամրոցը գտնվում է Կարաջանլի գյուղից 0,5 կմ հարավ-արևմուտք՝ Հոչանց գետի անդնդախոր կիրճի ձախ, հարավահայաց ափի զառիթափին՝ կիրճի վերին եզրագծից մոտ 100 մ ներքև, գետի մակարդակից մոտ 150 մ վերև, վեր խոյացող բարձր, եռանկյունաձև հրվանդանին:

Ադմինիստրատիվ պատկանելությունը

ԱՀ Քաշաթաղի շրջանի Դրախտաձոր համայնքի Դրախտաձոր և Նորաբերդ գյուղերի միջև (ԼՂՀ Օրենք ԼՂՀ վարչատարածքային բաժանման մասին)

Նախկին ադմինիստրատիվ պատկանելությունը

Ադրբ. ԽՍՀ Լաչինի շրջանի Ղոշասուի գյուղխորհրդի Ղոշասու գյուղ, Փիրջահանի գյուղխորհրդի Կարաջանլի գյուղ

(Мельников, Ибрагимов, 1979, 69)

Դ. Պագիրևը հիշատակում է 2 Ղոչազ գյուղ, որոնցից մեկը հենց Ղոչասուն է (Пагирев, 2007, 100), Հաջի Սամլիի գյուղական հասարակության Կարաջանլի գյուղ (Кавказский календарь, 1917, 53, Пагирев, 2007, 149)

Պատմական տեղեկություններ

Քաշաթաղ ամրոցը աղբյուրներում հիշատակվող պատմական Քաշաթաղ գավառում աղբյուրներում հիշատակվող երկու նշանավոր ամրոցներից մեկն է, որի անվանումը տարածվել է գավառի վրա:

Ա. Ղարագյոզյանը նույնացնում է այս ամրոցը Խոժոռաբերդի հետ (А. Карагезян, 1987, 44): Ա. Հակոբյանը այս հուշարձանը չի համարում Քաշաթաղ ամրոց՝ գտնելով, որ Քաշաթաղ գավառի սահմանը անցնում էր Հոչանց գետով, և նրա ձախ ափը արդեն Քաշաթաղ գավառից դուրս էր: (Նշենք, որ ամրոցը տեղակայված է Հոչանց գետի ձախ ափին՝ ուղիղ գծով գետի հունից 150 մ հեռավորության վրա):

Տեսողական կապը այլ հուշարձանների հետ

Ամրոց Սոևասար

Հուշարձանի հիշատակումները և հետագա ուսումնասիրությունները

Հուշարձանն առաջին անգամ հիշատակում է Վ. Ալիևը՝ նկարագրելով այն Մշենիի հուշարձանների համատեքստում՝ որպես կիկլոպյան ամրոց (Алиев, 1981, 414-415): Վ. Հուսեյնովան դիտում է այս ամրոցը Փիրջահան գյուղի հուշարձանների համատեքստում (Гусейнова, 2009, 92): Հուշարձանը 2000 թ. ուսումնասիրել են Ա. Հակոբյանը և Ս. Շահինյանը, որոնք և ամրոցին տվել են Նորաբերդ անունը, 2003 թ.՝ Ա. Գնունին և Գ. Խաչատրյանը (Գնունի, Խաչատրեան, 2003, 262-264), 2013 թ.՝ Ս. Սարգսյանը, Լ. Հովհաննիսյանն ու Զ. Ըռքոյանը: 2017 թ. Գ. Սարգսյանի փաստել է ամրոցում ավելի վաղ ժամանակաշրջանների ամրությունների իսպառ բացակայությունը (Կարապետյան, Սարգսյան, 2018b): Այստեղ կիկլոպյան շարվածքի հետքեր չեն դիտվում: Ամենայն հավանականությամբ, Վ. Ալիևը ոչ թե այցելել է ամրոց, այլ հեռվից դիտել է այն:

Հուշարձանի նկարագրությունը

Ամրոցանիստ հրվանդանը կազմված է մետամորֆիզացված կրաքարերի շերտերից: Արևելյան ու արևմտյան կողմերից հրվանդանը եզերվում է ուղղահայաց գահավիժող ժայռաբերպերով և գործնա-

կանում անմատչելի է: Միայն հարավային՝ գետահայաց կողմից, ունի մոտեցում՝ խիստ թեքադիր լանջով: Ամրոցը հատակագծում եռանկյունի է, ուր հյուսիսային՝ ամենաբարձր գագաթին, տեղակայված է մոտ 8-10 մ տրամագծով կլորավուն աշտարակատիպ դղյակ:

Ամրոցը արևելյան ու արևմտյան կողմերից պարիսպներ չունի: Միայն հարավային կողմից է պաշտպանված երկու շարք հզոր պարսպապատերով: Արտաքին՝ հիմնական պարիսպը, 68 մ երկարությամբ գրեթե ուղղաձիգ հետագծով միացնում է հրվանդանի արևելյան և արևմտյան եզրագծերի ժայռածերպերը: Այն կառուցված է կրաշաղախով՝ ճեղքած, խորանարդաձև, մեծ քարերից, և պահպանվել է մինչև 6 մ բարձրությունը: Արտաքին պարիսպը ուժեղացված է 4 տարբեր չափերի ուղղանկյուն որմնահեծերով, որոնցից կենտրոնականի չափերն են 3x3,5 մ: Պարսպի ստորին հատվածում անցքեր են, հավանաբար, ջրահեռացման համար:

Հիմնական պարսպին զուգահեռ՝ 16-20 մ վերև, ձգվում է երկրորդ պարսպագիծը: Այն կառուցված է նույն շինտեխնիկայով, ուղղաձիգ է, որմնահեծեր չունի և բաժանում է ամրոցի ներսի տարածքը երկու տարբեր մակարդակների վրա եղող անհավասար դարավանդների, որոնց ներսի պարսպամերձ հատվածներում նկատվում են կառուցապատման հետքեր: Երկու պարիսպներից էլ երևում են միայն արտաքին ճակատները և ակնհայտ է, որ դրանք՝ բացի պաշտպանականից, ունեցել են նաև տարածքը լայնացնող ու հարթեցնող հենապատերի գործառույթ:

Ամրոցի գլխավոր մուտքի տեղն ու կառուցվածքը չի պահպանվել, բայց, դատելով տեղանքից, այն պետք է որ լիներ հիմնական պարսպի ծայր հարավ-արևելյան անկյունում: Արևելյան անկյունում էր նաև երկրորդ պարսպի մուտքը, ուր այսօր բացվում է ազատ անցում:

Ամրոցի զբաղեցրած տարածքը փոքր է՝ ընդամենը 0,16 հա, և ձորամիջում՝ պարսպապատերից դուրս, որևէ շինության հետքեր չեն նկատվում: Հուշարձանի տեղադրությունը ձորամիջի խիստ զառիթափ, դժվարամատչելի վայրում, նաև իր փոքր ծավալին անհամաչափ հզոր ֆորտիֆիկացիոն համակարգի առկայությունը, թույլ են տալիս ենթադրել, որ այն հանդիսացել է ինչ որ բնակավայրի ամրացված միջնաբերդը: Այդ բնակավայրը, ամենայն հավանականությամբ, տարածվել է ամրոցից վերև՝ ձորի եզրին: Այստեղ բավականին ընդարձակ, խորհրդային տարիներին հերկված հողատարածքներում հանդիպում է զարգացած միջնադարին բնորոշ շինությունների հետքեր և խեցեղեն: Վերգետնյա խեցեղենը ամրոցը թվագրում է 9-14-րդ դդ.:

Քարտեզ, հուշարծանի տեղադրությունը



Օրթոֆոտոպլան



Տեղահանույթ և հատակագիծ





Ընդհանուր տեսքը արևելքից



Ամրոցի համայնապատկերը Հոչանցի ձորում



Ամրոցանիստ հրվանդանը հյուսիս-արևմուտքից



Արտաքին պարիսպը արևմուտքից



Արտաքին պարսպի համայնապատկերը



Երկրորդ պարսպի ներկայիս տեսքը



Մուտքի արևելյան եզրապատը

№ 22. Ամրացված բնակատեղի Հոչանց

Ամրացված բնակատեղի, եզրապարիսպ, դամբարաններ
Ք.ա. 1-ին հազ.-միջնադար
39°40'07.00"N 46°26'13.01"E, բարձրությունը՝ 1732 մ

Հուշարձանի անվանումը
Ամրացված բնակատեղի Հոչանց

Անվանման աղբյուրը
Մոտակա բնակավայրը

Տեղադրությունը
Գտնվում է Հոչանց գյուղից 1,8 կմ հարավ արևմուտք՝ Աղավնո-Հոչանց գետահովիտների ջրբաժան գծին վեր խոյացող Հոչանց կոչվող լեռան հարավային ստորոտի հրվանդանի համեմատաբար հարթ տեղանքում:

Ադմինիստրատիվ պատկանելությունը
ԱՀ Քաշաթաղի շրջանի Հոչանց գյուղ
(ԼՂՀ Օրենք ԼՂՀ վարչատարածքային բաժանման մասին)

Նախկին ադմինիստրատիվ պատկանելությունը
Ադրբ. ԽՍՀ Լաչինի շրջանի Ղոչազի գյուղխորհրդի Ղոչազ գյուղ
(Мельников, Ибрагимов, 1979, 69)
Ելիզավետպոլի գուբերնիայի Զանգեզուրի ուեզդի II տեղամասի (կենտրոն՝ Տեղ գյուղ) Ղոչազ գյուղ
(Пагирев, 2007, 100)

Պատմական տեղեկություններ
Ըստ Հ. Կարագյոզյանի՝ Հոչանց տեղանունը ծագում է Ուխունե տեղանունից, որը հավասարապես վերաբերում է ինչպես Խոխանաբերդին, այնպես էլ Հոչանցին (Կարագեոզեան, 1998, 143-144): Գյուղը Հունչաք անվամբ հիշատակում է Ստեփանոս Օրբելյանը (Օրբելյան, 1986, 399): XVII դարում Հոչանցը հիշատակվում է նախ և առաջ այստեղ 1621 թ. անապատի հիմնադրման (Առաքել Դավրիժեցի, 1988, 206-207, Ամատունի, 1986, 36), ինչպես նաև 1658 թ. երկրաշարժի (Առաքել Դավրիժեցի, 1988, 207-211) առնչությամբ: 1635 թ. գյուղը հիշատակվում է կարբեցիների գաղթի և քուրդ քոչվորների հետ բախման առնչությամբ (Զաքարիա սարկավագ, 1870, 9): Հոչանցի Պետրոս քյոդխուդան հիշատակվում է նաև 1691 թ. պարսկերեն վավերագրում (Կոստիքյան, 2001, 170): Գյուղը հիշատակվում է նաև XVIII դարի պտղացուցակում (Օրբելեան, 1942, 42): Ե. Լալայանի հետազոտությունների պահին գյուղն արդեն լիովին հայաթափված էր (Լալայեան, 1898, 49):

Ջրագրություն
Հոչանց և Աղավնո գետերի ջրբաժանին

Տեսողական կապը այլ հուշարձանների հետ
Ամրոցներ՝ Սթունիս, Սոնասար, Արահուծ, Ծիծեռնավանք

Հուշարձանի հիշատակումները և հետագա ուսումնասիրությունները
2017 թ. հուշարձանը ուսումնասիրել է ԱՀ արշավախումբը (Կարապետյան, Սարգսյան, 2018b):
Գյուղի միջնադարյան հուշարձաններն ուսումնասիրել է Ս. Կարապետյանը (Կարապետյան, 1999, 162-164), վիմագրական հուշարձանները հրատարակել է Ս. Բարխուդարյանը (Բարխուդարյան, 1982, 194): Հավաստվել և ուսումնասիրվել են նաև քարանձավային համալիրները (Շահինյան, 2005, 36):

Հուշարձանի նկարագրությունը
Ամենայն հավանականությամբ, հնում բնակատեղին ընդգրկում էր մի քանի բլուր, սակայն այս բլուրները, հիմնականում, հողմնահարված և ավերված են: Հուշարձանի հիմնական՝ պարսպապատ մասը, տեղակայված է հրվանդանի արևելյան եզրի ցածր՝ քամիներից պաշտպանված բլրակին: Այն բլրակի պարագծով գնացող մոտ 200x120 մ չափերով, տձև հատակագծով պարսպապատ տարածք է, որի ներսում նկատվում են բազմաթիվ շինությունների հետքեր: Հուշարձանը մեզ է հասել խիստ քայքայված, հողմնահարված վիճակում: Այս մասի բոլոր շինությունների հիմնապատերը պահպան-

վել են հատվածաբար՝ մեկ քարի բարձրությամբ, ինչը հնարավորություն չի տալիս վեր հանել կառուցապատման շատ թե քիչ հասկանալի պատկեր: Պարսպապատ մասի ներսում հնարավոր եղավ ուրվագծել 2-3 կորացող, տծև կառույցներ: Ընդհանուր կառուցապատումից իր շինտեխնիկայով առանձնանում է մի փոքր, բայց 1 մ լայնությամբ պատերով, կանոնավոր շարված կառույց: Այն 9x9,0 մ չափերով, հարավային մուտքով, քառակուսի շինություն է, որի արևելյան պատի կեսը, կիսաշրջան խորանի տեսքով, դուրս է գալիս ընդհանուր ծավալից: Չի բացառվում, որ այս ակնհայտորեն ավելի ուշ ավելացված կառույցը՝ մատուռ-աղոթարան եղած լինի: Հավանական է՝ բնակավայրի մուտքը հարավ արևելյան հատվածից է եղել, սակայն ևս մեկ արահետ նկատվում է բնակավայրի արևելյան հատվածում:

Հիմնական մասից 400 մ արևելք՝ հրվանդանի արևմտյան եզրագծով, գնում է 120 մ երկարությամբ՝ անմշակ մեծ քարերից կանոնավոր կիկլոպյան շարվածքով կառուցված, ուղղաձիգ օրթոստատ քարերով պատ: Ուղղաձիգ պատի և հիմնական մասի միջանկյալ տարածքում մերկանում է հրվանդանի ժայռային մակերեսը, ուր շինությունների հետքեր չեն պահպանվել:

Հուշարձանի շրջակա տարածքում պահպանվել են մեծամասամբ ավերված դամբարանաբլուրներ, դիտարկվում են կրոմլեխների հատվածներ: Որոշ ավերված դամբարաններում նկատվում են կեղծ թաղով խցերի հետքեր:

Ամրացված բնակավայրում վերգետնյա խեցեղեն չի հայտնաբերվել, բայց, դատելով հուշարձանի շինտեխնիկայից, կարելի է պնդել, որ այն բրոնզ-երկաթեդարյան ժամանակաշրջանի անասնապահական ամառանոցային կայան է, որն օգտագործվել է նաև միջնադարում: Բացառված չէ, որ այստեղ ապաստանել են երկրաշարժից փրկված անապատականները (հմմտ.՝ Առաքել Դավրիժեցի, 1988, 207-209):

Տարածքի այլ հուշարձաններ

Եկեղեցի

Գյուղում պահպանված XVII դարի ս. Ստեփանոս եկեղեցին միանավ թաղածածկ կառույց է (Սարգսյան, 2014b, 179): Մուտքը հարավից է: Հյուսիսային պատի մեջ կառուցված է մկրտարանը: Արտաքին չափերն են՝ 13,4x8,15 մ (Կարապետյան, 1999, 164): Արևմտյան պատի մեջ ագուցված է արձանագիր խաչքար (Բարխուդարյան, 1982 194):

Գերեզմանոց, տապանաքարեր և խաչքարեր

Ամենայն հավանականությամբ, գերեզմանոցը տեղադրված է եղել եկեղեցուց ոչ հեռու: Սակայն գերեզմանոցն ավերված է և քարերն օգտագործված են շենքերի կառույցներում: Բացառված չէ, որ օգտագործվել են նաև 1658 թ. ավերված գերեզմանոցի քարերը (հմմտ.՝ Առաքել Դավրիժեցի 1988, 208, Կարապետյան, 1999, 164):

Անապատ

Առաքել Դավրիժեցու վկայությամբ՝ անապատում կար մատուռ, հյուրատուն, ախոռներ: Մեծ եկեղեցին սյունազարդ էր: Անապատը շրջափակված էր պարսպով (Առաքել Դավրիժեցի, 1988, 208): Մեծ եկեղեցու ճարտարապետական առանձնահատկությունները կրկնում էին վերգետնյա կառույցների ճարտարապետությունը: Եկեղեցու մեծ դահլիճից մուտք էր բացվում դեպի փոքր աղոթարաններ (Алекперов, 1935, 47-48, Շահինյան, 2005, 36, 46, 54, Սարգսյան, 2014b, 180):

Գյուղատեղիներ

Գյուղատեղի Արափլու: Տարածվում է գյուղից 2,7 կմ հյուսիս՝ գետի ձախակողմյան հարավահայաց սարալանջին: Գյուղատեղի Ղզլյաբը տեղադրված է գյուղից 2 կմ հյուսիս-արևելք՝ գետի ձախ ափին:

Դամբարան

Դամբարանը գտնվում է գյուղի կենտրոնական հատվածում (Гусейнова, 2009, 92): Այն 1996 թ. հավաստել են Վ. Գայսերյանը, Ա. Գնունին, Գ. Խաչատրյանը:

Քարտեզ, հուշարձանի տեղադրությունը



Օրթոֆոտոպլան



Տեղահանույթ և հատակագիծ





Ընդհանուր տեսքը արևմուտքից



Արևելյան երկարածիգ պարսպագիծը



Հատված բնակատեղիի կառուցապատումից



Բնակավայրի ներսի պատաշարերը



Ուղղանկյուն կառույցի հատված

№ 23. Ամրոց Ծիծեռնավանք

Ամրոց, դամբարանադաշտ, պաշտամունքային հարթակ
Ք.ա. 2-1-ին հազ.
39°37'54.05"N 46°23'21.03"E, բարձրություն՝ 1479 մ.
ԱՀ Պատմության և մշակույթի հուշարձանների Պետական Ցուցակի գրանցահամարը
Քաշաթաղի շրջան N68

Հուշարձանի անվանումը
Ամրոց Ծիծեռնավանք

Անվանման աղբյուրը
Մոտակա բնակավայրը

Տեղադրությունը
Գտնվում է Ծիծեռնավանք գյուղից 2,1 կմ հարավ-արևմուտք՝ դեպի Աղավնոյի հովիտը իջնող Խոզնավար և Բայանդուր գետակների միջանկյալ երկարավուն լեռնաբազկի ջրբաժանի բարձր բլրին: Ամրոցը զբաղեցնում է բլրի գագաթը և արևելահայաց, հարավային ընդարձակ լանջը:

Ադմինիստրատիվ պատկանելությունը
ԱՀ Քաշաթաղի շրջանի Ծիծեռնավանք գյուղ
(ԼՂՀ Օրենք ԼՂՀ վարչատարածքային բաժանման մասին)

Նախկին ադմինիստրատիվ պատկանելությունը
Ադրբ. ԽՍՀ Լաչինի շրջանի Մալիբեյի գյուղխորհրդի Գյուսուլու գյուղ
(Мельников, Ибрагимов, 1979, 69)
Ելիզավետպոլի գուբերնիայի Զանգեզուրի ուեզդի Զեյվա գյուղ (չշփոթել Շուշիի ուեզդի Գյուսուլու և Զանգեզուրի ուեզդի մեկ այլ Զեյվա գյուղերի հետ) (ներկայիս Դավիթ Բեկ)
(Пагирев, 2007, 104, 131, Կարապետյան, 1999, 141):

Պատմական տեղեկություններ
Ծիծեռնավանքի վանական համալիրը հիշատակվում է Ստեփանոս Օրբելյանի աշխատությունում՝ որպես Տաթևի վանքապատկան տարածք դեռևս IX դարում (Օրբելյան, 1986, 197): XII դարում Ծիծեռնավանքը հիշատակվում է Սյունիքի նշանավոր վանքերի թվում (Օրբելյան, 1986, 282, 387) և հանդիսանում է Աղահեճքի նշանավոր գյուղերից մեկը (Օրբելյան, 1986, 399, Հիւբշման, 1907, 358): Վանքը հիշատակվում է նաև Վարդան Արևելցու Աշխարհացույցում (Վարդան վարդապետ, 1960, 12) XVII դարում Ծիծեռնավանքը հիշատակում է նաև Թովմա Վանանդեցին հայոց սրբավայրերին նվիրված չափածո գործում (Թովմա Վանանդեցի, 1860, 136, Յակոբեան, 2009, 132): Ծիծեռնավանքը եղել է կարևորագույն քարավանատուն (Բահաթրյան, 1885, 3):

Ջրագրություն
Խոզնավար և Վաղատուր գետակների ջրբաժանին

Տեսողական կապը այլ հուշարձանների հետ
Ամրոցներ՝ Արահուճ, Հոչանց, Սոնասար

Հուշարձանի հիշատակումները և հետագա ուսումնասիրությունները
2013 թ. ամրոցը առաջին անգամ ուսումնասիրել են Գ. Սարգսյանը և Ս. Սարգսյանը (Կարապետյան, Սարգսյան, 2018b, Սարգսյան և այլք, 2014, 168): Ծիծեռնավանքի վաղ միջնադարյան տաճարը հիշատակվում է Ղ. Ինճիճյանի Սյունիքի և Արցախի վանքերի ուսումնասիրության համատեքստում (Ինճիճեան, 1822, 300): Ղ. Ալիշանը մանրամասն նկարագրում է Ծիծեռնավանքը (Ալիշան, 1893, 268): Վանքը բազմաթիվ հետազոտությունների առարկա է դարձել ինչպես հայ (Լալայեան, 1898, 46-49, Հասրաթյան, 1980, 39-57, 1985, 219-240, Հարությունյան, 1992, 114-115, Կարապետյան, 1999, 141-151), այնպես էլ օտար (Ахундов, 1986, 222-223, Усейнов и др., 1963, 43-44, Щеблыкин, 1947, 38) հեղինակների ուսումնասիրություններում: Վիմագրագիտական հետազոտություններ են կատարել են Ս. Բարխուդարյանը (Բարխուդարյան, 1982, 192-194), Ս. Կարապետյանը և Ա. Հակոբյանը (Յակոբեան, 2009, 35-46, 139-212): 2000-2001 թթ. հուշարձանը պեղել է Հ. Սիմոնյանը (Սիմոնյան, 2005, 58-63, Սիմոնյան և այլք, 2007, 14-16): Պեղումներից հայտնաբերված նյութերը պահվում են ՔԵԹ Ծիծեռնավանքի մասնաճյուղում և ՔԵԹ-ում (ՔԵԹ ի/հ 140, 141/ 18):

Հուշարձանի նկարագրությունը

Ամրոց

Ամրոցը զբաղեցնում է բլրի գագաթը և արևելահայաց, հարավային ընդարձակ լանջը: Լեռնաբազկի լանջերին և ամրոցանիստ բլրի արևմտյան բարձունքին տարածվում է դամբարանադաշտը: Բլրի գագաթին տեղակայված է եղել միջնաբերդը, որը զգալիորեն տուժել է խորհրդային շրջանում կատարված մելիորատիվ աշխատանքներից: Ամրոցի պաշտպանված բնակատեղին տարածվում է հարավային թեքադիր լանջին և ունի մոտ 150x150 մ չափերով ուղղանկյուն հատակագիծ: Այն բոլոր կողմերից եզերված է պարիսպներով, իսկ ներսում հորիզոնական գնացող երկու հենապատ-պարսպագծերով բաժանվում է երեք արհեստական բնակելի դարավանդների: Դարավանդներում երևում են խիտ կառուցապատումից մնացած պատերի հատվածներ և ուղղանկյուն կացարանների հետքեր: Պատերն ու պարիսպները շարված են անմշակ, ճեղքած քարերից՝ երկշերտ, չոր շարվածքով, և պահպանվել են տեղ-տեղ մինչև 1,5 մ բարձրությամբ:

Առանձին շինությունների հետքեր կան նաև ամրոցանիստ բլրի գագաթին ու ներքևի պարսպից դուրս՝ ստորոտում: Հուշարձանի տարածքում հավաքված վերգետնյա խեցեղենը սակավ է, բայց շինտեխնիկական բնորոշ է ուշ բրոնզի և վաղ երկաթի դարաշրջաններին:

Զոհասեղան

Ամրոցի արևմտյան պարսպի արտաքին եզրի մոտ՝ ամրոցանիստ բլրի վերնամասում, դեպի դամբարանադաշտ տանող ճանապարհի սկզբնավորման կետում՝ մեծ, բնական մերկացող ժայռաբեկորի հարթեցված մակերեսին, փորված են միմյանց հետ հաղորդակցվող տարբեր չափերի կլոր փոսորակներ ու առվակներ: Առվակները սկիզբ են առնում ժայռաբեկորի ամենաբարձր կետի հարթակից և, անցնելով բաժանաձև փորվածքների վրայով, իջնում են ներքև: Ակնհայտորեն ձեռակերտ այս կառուցվածքը հնագույն զոհասեղան է:

Դամբարանադաշտ

Լեռնաբազկի լանջերին և ամրոցանիստ բլրի արևմտյան բարձունքին տարածվում է դամբարանադաշտը: Բազմաթիվ դամբարաններ հավաստված են նաև Խնածախ-Ծիծեռնավանք ճանապարհին (1996 թ. հայտնաբերել է Գ. Խաչատրյանը, 2018 թ. *այն տեղայնացրել են* Ա. Բոբոխյանը, Գ. Սարգսյանը, Ա. Գնունին): Դամբարանները՝ մոտ 10 մ տրամագծով և 2 մ բարձրությամբ, քարահողային թմբեր են՝ օղակված օրթոստատ դրված ժայռաբեկորներով (մեգալիթյան կրոմլեխ):

Տարածքի այլ հուշարձաններ

Ծիծեռնավանք վանական համալիր

Ծիծեռնավանքի եկեղեցին պատկանում է եռանավ բազիլիկների արևմտյան տիպին, երբ կենտրոնական նավը արտահայտվում է նաև դրսից: Տաճարի արտաքին չափերն են 12,5x25,6 (Սարգսյան, 2014b): *Միջին նավն ավարտվում է շեշտված պայտաձև հատակագծով, հաղթակամարներով և պատուհաններից զուրկ խորանով, ինչը հատուկ է IV-V դդ. հուշարձաններին: Ծիծեռնավանքն ունի չորս մուտք.* երեքը՝ հարավից, մեկը՝ հյուսիսից (Հասրաթյան, 1985, 225-227): Շինությունը ապրել է մի քանի շինարարական շրջաններ (II-III դդ.՝ ըստ Հ. Սիմոնյանի, IV դ. սկիզբ, V դ. կես, V դ. վերջ-VI դ. սկիզբ, XI դ., XVII-XVIII դդ.) (Սիմոնյան և այլք, 2007, 13, Յակոբեան, 2009, 173-212): Արդեն 1900 թ. վանքը խիստ անմխիթար, կիսավեր վիճակում էր (Կայծ Սիւնի, 1890, 2-3):

Պեղումների ընթացքում հայտնաբերվել են քաղաքացիական շինությունների բազմաթիվ մնացորդներ: Կանգուն է XVIII դ. սեղանատունը (Սիմոնյան և այլք, 2007, 14-16):

Հյուսիսային և հարավային պատերի մոտ հայտնաբերվել են բազմաթիվ թաղումներ, այդ թվում՝ կղմինդրով ծածկված հատակով, ինչը բնորոշ է ուշ անտիկ և վաղ միջնադարյան շրջանին: Ուշագրավ են արհեստական ձևափոխված գանգերով, բռնության հետքերով կմախքների թաղումները, ինչպես նաև՝ «նահատակի թաղումը» (Սիմոնյան և այլք, 2007, 14-15, Յակոբեան, 2009, 147-173):

Գտածոների մեջ հարկ է նշել ձկնակերպ մենհիրանման կուռքը, որի ստորին հատվածում փորվածք է՝ հավանաբար դրոցին ամրացման համար (Սիմոնյան, 2019, 554):

Ծիծեռնավանքի դարպասը կառուցված է 1613 թ., ինչի մասին վկայում է շինարարական արձանագրությունը: Նույն թվականին է Հայկազ իշխանը կառուցել նաև պարիսպը (Հասրաթյան, 1985, 232):

Ժայռային ելուստ-զոհասեղան՝ Ձիգի քար

Ժայռային ելուստ-զոհասեղանը տեղադրված է Ծիծեռնավանքից արևելք (2018 թ. հայտնաբերել են Գ. Սարգսյանը, Հ. Դանիելյանը և Ա. Գնունին): Ժայռային ելուստի գագաթը հարթ է, իսկ ժայռի կողային հատվածում փորագիր աստիճաններ են:

Գյուղատեղիներ

Տարածքում հիշատակվում են մի շարք գյուղատեղիներ: Դրանցից մեկը հստակ տեղայնացված չէ (Карагезян, 1987, 43): Զեյվա գյուղատեղին հստակ տեղայնացվում է Ծիծեռնավանքից 2 կմ հյուսիս, իսկ Քոսալար գյուղատեղին՝ 2 կմ հարավ՝ Բայանդուր գետակի հովտում (Կարապետյան, 1999, 151, Կայծ Սիւնի, 1890, 2)

Քարտեզ, հուշարձանի տեղադրությունը



Օրթոֆոտոպլան



Տեղահանույթ և հատակագիծ





Ամրոցի ընդհանուր տեսքը հարավից



Երկրորդ պարսպագծի ընթացքը



Երկրորդ պարսպի շարվածքի հատված



Երկրորդ պարսպագիծ-հենապատի ուրվագիծը



Պարսպաշարի երևացող ճակատը



Ջոհասեղանը հարավից

№ 24. Ամրոց Արահուժ

Միջնաբերդ, բնակատեղի, դամբարանադաշտ, ժայռափոր ճանապարհ
Ք.ա. 1-ին հազ. կես - միջնադար
39°37'14.07"N 46°25'17.08"E, բարձրությունը՝ 1346 մ
ԱՀ Պատմության և մշակույթի հուշարձանների Պետական Ցուցակի գրանցահամարը
Քաշաթաղի շրջան N 19

Հուշարձանի անվանումը
Ամրոց-բնակատեղի Արահուժ

Անվանման աղբյուրը
Մոտակա բնակավայրի պատմական անվանումը

Այլ անվանում
Մալլար-դուզե

Տեղադրությունը
Տեղադրված է Արահուժ (Մալիբեյ) գյուղից 1,2 կմ հարավ-արևմուտք

Ադմինիստրատիվ պատկանելությունը
ԱՀ Քաշաթաղի շրջանի Ծիծեռնավանք գյուղ, Արահուժ տեղամաս
(ԼՂՀ Օրենք ԼՂՀ վարչատարածքային բաժանման մասին)

Նախկին ադմինիստրատիվ պատկանելությունը
Ադրբ. ԽՍՀ Լաչինի շրջանի Մալիբեյի գյուղխորհրդի Մալիբեյ գյուղ
(Мельников, Ибрагимов, 1979, 65)
Ելիզավետպոլի գուբերնիայի Զանգեզուրի ուեզդի II տեղամասի (կենտրոն՝ Տեղ գյուղ) Խանազակի գյուղական հասարակության Մալիբեկլի, Արավուս, Նաբիուշաղի գյուղեր
(Пагирев, 2007, 198, Кондратенко, 1902, 293, Кавказский календарь, 1916, 54)

Պատմական տեղեկություններ
Ա. Հակոբյանը նույնացնում է Մալիբեյը Քաշաթաղի Արահուժ գյուղի հետ (Յակոբեան, 2009, 28, 53, 350, Օրբելեան, 1942, 42): Ս. Կարապետյանի կարծիքով՝ սա պատմական Մախուլն գյուղն է (Կարապետյան, 1999, 153), իսկ Ա. Ղարագյոզյանը նույնացնում է Կատոհորինքի հետ (Карагезян, 1987, 41): XX դ. սկզբին Մալիբեյի շրջակայքի հայկական բնակչությունը կազմում էր 14 % (Карта Кавказского края, 1908):

Ջրագրություն
Աղավնո և Խնածախ գետերի խառնարան

Տեսողական կապը այլ հուշարձանների հետ
Ամրացված բնակատեղի Դաշտաքար, ամրոցներ՝ Ծիծեռնավանք, Հոչանց, Սոնասար

Հուշարձանի հիշատակումները և հետագա ուսումնասիրությունները
Գյուղի շրջակայքում ամրոցի ավերակներ հավաստված են 1908 թ. քարտեզում (Карта Кавказского края, 1908): 2013 թ. հուշարձանախումբը ուսումնասիրել է ԱՀ արշավախումբը (Սարգսյան և այլք, 2014, 163 Կարապետյան, Սարգսյան, 2018b): Միջնադարյան հուշարձաններ ուսումնասիրել է նաև Ս. Կարապետյանը:

Հուշարձանի նկարագրությունը
Գտնվում է Արահուժ գյուղից արևմուտք՝ Աղավնո գետի հետ նրա աջ՝ Խնածախ վտակի միախառնման կետից 1,2 կմ հարավ-արևմուտք, Գորիսի բարձունքից եկող և Աղավնո գետով եզերվող երկարաձիգ լեռնաբազկի ծայր արևելյան գագաթին: Ամրոցանիստ գագաթը լեռնաբազկի վերջնամասի ամենաբարձր կետն է, որ տեղակայված է Աղավնո գետից մոտ 200 մ բարձր նիշի վրա:
Ամրոցը զբաղեցնում է բլրագագաթի հարավահայաց փոքր թեքություն ունեցող լանջը: Ամրոցի կենտրոնական մասը՝ միջնաբերդը՝ անկանոն հատակագծով, ամբողջովին պարսպապատով եզերված, մոտ 100x60 մ կառույց է: Պարիսպները շարված են միջին չափի անմշակ, ճեղքած քարերից՝ լայնությամբ երկշերտ՝ մեջը քարահողային լցոնումով: Դրանք պահպանվել են ամբողջ պարագծով՝ տեղ-տեղ մինչև 1,5 մ բարձրությամբ: Հստակ պահպանվել է միջնաբերդի գլխավոր՝ արևելյան մուտքի

2 մ բացվածքը՝ եզերված երկու մեծ ցից քարերով: Միջնաբերդի ներսում ուրվագծվում են երբեմնի խիտ կառուցապատումից մնացած բազմաթիվ ուղղանկյուն ու կորանկյուններով շինությունների հետքեր:

Պարիսպը և մանավանդ՝ դամբարանադաշտը, զգալիորեն տուժել են խորհրդային շրջանում մեքենայացված աշխատանքների ժամանակ:

Կարելի է ենթադրել, որ ամրոցն ունեցել է ընդարձակ բնակատեղի, որից այսօր պատառիկներ են պահպանվել: Բնակատեղին հիմնականում տարածվել է միջնաբերդից փոքր գոգավորությամբ առանձնացող հարավ-արևմտյան կողմում:

Խնածախ գետակի աջափնյա լանջով՝ Նաբիշաղի գյուղատեղիի մոտից, դեպի ամրոց է բարձրանում հնագույն պատմական ճանապարհը: Մասամբ ժայռափոր ճանապարհը, անցնելով կտրատված տեղանքի երկու ջրբաժան գծերով, բարձրանում է դեպի միջնաբերդի գլխավոր մուտքը: Ճանապարհը (մոտ 800 մ) որոշ հատվածներում ամրացված է ցից քարերից դրված եզրապատերով ու հենապատերով:

Տարածքի այլ հուշարձաններ

Դամբարանադաշտ

Անմիջապես բլրի գագաթին մեծ, կոնաձև՝ մոտ 20 մ տրամագծով և 2 մ բարձրությամբ, դամբարանաբլուր է, որի գագաթին ուղղահայաց տեղադրված են երկու քարաբեկոր և որի շուրջ խմբավորված են ևս երեք՝ ավելի փոքր՝ 3-5 մ տրամագծով, դամբարանաբլուրներ: Դամբարանները հիմնականում կողոպտված են, ինչի հետևանքով բացվել են խոշոր սալերից պատրաստված և կեղծ թաղով ծածկված խցերը: Այս հատվածում հավաքված խեցեղենը հիմնականում բնորոշ է երկաթի դարաշրջանին:

Գյուղատեղիներ

Ս. Կարապետյանը նշում է Չայքենտ և Մորատ գյուղատեղիները, որոնք տեղադրված են Մալիբեյից 2,5 և 4 կմ հեռավորության վրա: Վերջինից 1 կմ հյուսիս Ջաղազոր փոքր գյուղատեղին է (Կարապետյան, 1999, 154):

Նաբիշաղի ձոր գյուղատեղին գտնվում է Արահուծ գուղից 1,6 կմ արևմուտք՝ Խնածախ գետակի վերին հոսանքում՝ ԱՀ և ՀՀ սահմանագիծին: Ընդարձակ գյուղատեղի է, որը տարածվում է գետի ափամերձ, լայն բացված կիրճի երկու ափերի ժայռոտ կազմավորումներում և գետափնյա մարգագետնում: Գետի ափին մանր գետաքարերից *կառուցված տնատեղեր են, ինչպես նաև՝ ժայռափոր* կացարաններ: Ժայռափոր տնատեղիները ձեռակերտ են՝ փորված ավազաքարի փուխր զանգվածում: Բնակելի քարանձավները դասավորված են գետակի երկու ափերին՝ մեկական գծերով, որոնց թիվը հասնում է 20-25 միավորի: Այստեղ կան և՛ մեկ սենյականոց, և՛ բազմասենյակցիոն անձավներ: Օրինակելի *ժայռափոր կացարանը բաղկացած էր 2 կամ 3 սենյակներից, որտեղ ձախ կողմում տե*ղադրված էին խոր խորշեր՝ *հավանաբար ջահերի կամ ձիթաճրագների համար:* Հետնասենյակն, ամենայն հավանականությամբ, ծառայում էր որպես ննջասենյակ: Այս համալիրներն ունեին նաև ոչ ժայռափոր հատվածներ, որոնք, ըստ ամենայնի, գերանածածկ էին. այս ժայռափոր հատվածների հիմքերը պահպանվել են: Աջափնյա հատվածում փորված խոր անձավների դիմաց կառուցված են հենապատերով կազմակերպված արհեստական բաց դարավանդ-հրապարակներ՝ անասնափարախներ, որոնցից մի քանիսի վրա կան վերգետնյա քարաշեն սենյակներ: Դատելով տեղում հայտնաբերված խեցեղենից և պահպանված շինություններից՝ գյուղատեղին բնակեցված է եղել XV դարից ընդհուպ մինչև 20-րդ դարասկիզբը, որից հետո այն օգտագործվել է անասնափարախների համար:

Ոռոգման համակարգ

Ուշ միջնադարյան ամենահետաքրքիր գտածոներից է ջրանցույցը: Գտնվում է Արահուծ գյուղի վերնամասում՝ Աղավնո գետի աջակողմյան վտակ՝ Խնածախ գետակի կիրճի ժայռոտ մասում (3937 31,3N 462510,6E, Բարձրություն ծ.մ.՝ 1177 մ): Ջրանցույցը ջուրը տեղափոխում էր Խնածախ գետակի աջ ափից դեպի ձախ ափի ընդարձակ մարգագետինը: Ուշագրավ հիժեներական շինություն է՝ կառուցված անմշակ քարերից՝ կրաշաղախով: Ջորի հակադիր ափերին պահպանվել են երկու խելերը: Աջակողմյան խելի բարձրությունը մոտ 8 մ է, իսկ երկարությունը՝ ավելի քան 10 մ: Ջորամիջյան թռիչքը գերազանցում է 6 մ: Դատելով խելերի ճակատների հարթ շարվածքից՝ ջրանցույցը կամարակապ թռիչք չի ունեցել, այլ հնարավոր է, որ կազմակերպված է եղել գերանածածկ անցումով: Ջորի աջ, բնակելի քարանձավներով պատված ժայռոտ ափին հստակ երևում է դեպի ջրանցույց եկող ժայռափոր, տեղ-տեղ քարաշեն առուն, որի շարունակության հատվածը նկատվում է նաև ձախ

ափի եզրամասում: Հուշարձանը, ըստ ամենայնի, մելիքական շրջանի շինություն է: Միևնույն ժամանակ այս հատվածից գտնվել է XI-XIII դդ. բնորոշ խեցեղեն:

Զրաղացների համալիր

Զրաղացների մնացորդներ են հայտնաբերվել գյուղի հանդիպակաց հատվածում՝ Աղավնոյի աջ ափին (Կարապետյան, 1999, 154)

Թաղումնային հուշարձաններ

Գյուղի տարածքում հավաստված են նաև մի շարք ձիատապաններ (Нейматова, 1981, 33, 39, 41-42, Гусейнова, 2009, 92), ինչպես նաև՝ XIII դարի գերեզմանոց (Гусейнова, 2009, 92):

Քարտեզ, հուշարձանի տեղադրությունը



Օրթոֆոտոպլան



Տեղահանույթ և հատակագիծ





Կենտրոնական թաղամասը հարավ-արևմուտքից



Հարավային պատաշարը



Ամրոց եկող ճանապարհի եզրապատը



Բլրագագաթի կողոպտված դամբանախուցը



Արևմտյան պարսպագծի հատված

№ 25. Ամրացված բնակատեղի Դաշտաքար

Միջնաբերդ, բնակատեղի,
Ք.ա. 4/3 հազ, 2-1 հազ. - միջնադար
39°37'13.08"N 46°27'10.07"E, բարձրությունը՝ 1034 մ
ԱՀ Պատմության և մշակույթի հուշարձանների Պետական Ցուցակի գրանցահամարը
Քաշաթաղի շրջան N 20

Հուշարձանի անվանումը
Ամրացված բնակատեղի Դաշտաքար

Անվանման աղբյուրը
Ժողովրդական անվանումը

Այլ անվանում
Դուզդագ

Տեղադրությունը
Գտնվում է Ծիծեռնավանք համայնքի Արահուժ (նախկին Մալիբեյ) գյուղից մոտ 1 կմ արևելք՝ Աղավնո գետի աջ ափին՝ փոքր սելավատարի միախառնման կետում:

Ադմինիստրատիվ պատկանելությունը
ԱՀ Քաշաթաղի շրջանի Ծիծեռնավանք համայնքի Արահուժ տեղամաս, Աղավնո գյուղ
(ԼՂՀ Օրենք ԼՂՀ վարչատարածքային բաժանման մասին)

Նախկին ադմինիստրատիվ պատկանելությունը
Ադրբ. ԽՍՀ Լաչինի շրջանի Մալիբեյի գյուղխորհրդի Մալիբեյ գյուղ, Զաբուխի գյուղխորհրդի Զաբուխ գյուղ (Мельников, Ибрагимов, 1979, 65):
Ելիզավետպոլի գուբերնիայի Զանգեզուրի ուեզդի II տեղամասի (կենտրոն՝ Տեղ գյուղ) Խանազակի գյուղական հասարակության Մալիբեյլի, Արավուս, Զաբուգ գյուղեր (Пагирев, 2007, 198, Кондратенко, 1902, 293, Кавказский календарь, 1916, 54):

Պատմական տեղեկություններ
Պատմական տեղեկությունները վերաբերում են միայն Դաշտաքարից ոչ հեռու գտնվող Շապոկի բնակատեղիին, որը հիշատակում է Ս. Օրբելյանը Աղահեճքի գավառի գյուղերի թվում (Օրբելյան, 1986, 399, Ալիշան, 1893, 266, հմմտ.՝ Հասրաթյան, 1995, 156, Карагезян, 1987, 43, Կարապետյան, 1999, 155-156):

Ձրագրություն
Աղավնո գետի աջ ափ

Տեսողական կապը այլ հուշարձանների հետ
Ամրոցներ՝ Արահուժ, Հոչանց

Հուշարձանի հիշատակումները և հետագա ուսումնասիրությունները
2013 թ. հուշարձանը ուսումնասիրել է ԱՀ արշավախումբը (Սարգսյան և այլք, 2014, 163 Կարապետյան, Սարգսյան, 2018b): Շապոկի բնակավայրը հայտնաբերել են 1996 թ. Վ. Գայսերյանը, Գ. Խաչատրյանը և Ա. Գնունին: 1897–1898 թթ. այս տարածքում դամբարաններ պեղել է Է. Ռոսլերը: Դամբարաններ հավաստել են նաև Գ. Սարգսյանը, Ա. Գնունին, Ա. Բոբոխյանը:

Հուշարձանի նկարագրությունը
Գետեզրի ընդարձակ հարթ մարգագետնի արևելյան վերջավորությունում բարձրանում է միայնակ կանգնած ժայռոտ բլուր, որի հարավային ու արևելյան ստորոտներում տարածվում է բնակատեղին: Բավական մեծ բնակատեղի է, որն արտաքինից նկատվում է սելավատարի երկայնքով, երկու-երեք զուգահեռ շարքերով գնացող պաշտպանական գծերով, որոնք 1-1,5 մ լայնությամբ երկշերտ դրված, երկարաձիգ պատաշար-ցանկապատներ են՝ շարված հիմնականում կողքի վրա ցից կանգնած (օրթոստատ) քարերով: Պատաշարերի ճակատների ներսը լցված է մանր քարահողային լիցքով, իսկ շուրջը պատի փլատակներ չկան: Կարելի է ընդունել, որ այստեղ մենք գործ ունենք ոչ թե կանոնավոր քարե պատաշարերի, այլ քարե հիմնամասով փայտյա (գերանաշեն) ցցապատերի հետ: Պաշտպանական գծերը գնում են միմյանցից 20-30 մ հեռավորության վրա և նրանց միջանկյալ հատ-

վածներում կարելի է տարազատել երբեմնի շինությունների հետքեր: Բոլոր պատաշարերը երևում են հատվածներով՝ մեկ քարի բարձրությամբ:

Սելավատարի երկայնքով գնացող ստորին պատաշարի երկարությունը մոտ 300 մ է: Հատակագծում բնակատեղին կազմում է երկարավուն եռանկյունի, որի հիմքն է 25-30 մ բարձրությամբ և մոտ 200 մ տրամագծով ժայռոտ բլուրը: Բլուրն ունի սրածայր մերկացող ժայռերով գագաթ: Հավանաբար, այն օգտագործվել է միայն որպես դիտակետ: Պատաշարերի հետքեր նկատվում են նաև բլրի հյուսիսային՝ Աղավնո գետին հարող ափին: Հնավայրի տարածքում, ինչպես նաև բլրի գագաթի մոտ, հայտնաբերվել է վաղ բրոնզեդարյան, երկաթեդարյան ու միջնադարյան խեցեղեն, որի հիման վրա և թվագրվում է հուշարձանը:

Խորհրդային տարիներին հուշարձանի տեղում եղել է անասնաֆերմա, և տարածքը մասամբ հերկվել է: Բնակավայրի արևմտյան մասը լիովին ավերված է, իսկ պարիսպների միջնամասում շինությունների հետքերը գրեթե վերացվել են:

Տարածքի այլ հուշարձաններ

Շապոկի բնակատեղի

Բնակատեղին ձգվում է Աղավնո գետի ձախ ափի երկայնքով՝ Տեղ-Բերձոր և Աղավնո-Ծիծեռնավանք ճանապարհների խաչմերուկից մոտ 1 կմ գետի հոսանքն ի վեր: Գետի աջ ափի երկայնքով ձգվող լեռների ստորոտի կտրվածքում նկատվում են տնատեղերի մնացորդներ, ինչպես նաև Ք.ա. VII-V դդ. բնորոշ խեցեղեն նյութ (ՔԵԹ ի/հ 125/15): Խեցեղեն հավաստվում է ընդհուպ մինչև գետը (դիտարկումը՝ 2005 թ. Ի. Դարիբյանի, Ա. Գնունու): Բնակատեղին միջնադարյան Շապոկիի հետ նույնացրել է Ա. Հակոբյանը (Սարգսյան և այլք, 2014, 163)

Դամբարանադաշտեր

Այս տարածքում հավաստված են մի շարք դամբարանադաշտեր.

ա) Շապոկի բնակավայրի տարածքում հավաստված են մի շարք ավերված քարարկղային դամբարաններ, որոնց խեցեղեն նյութը բնորոշ է Ք.ա. VII-V դդ.,

բ) քարարկղեր հավաստված են նաև Աղավնո գետի աջ ափին: Տեղ-Զաբուխ կայարան փոստային ճանապարհի երկայնքով տեղադրված են մի շարք դամբարաններ (Տեր Ավետիսյան, 2010, 183): Կութ թափա տեղամասում է. Ռոսլերը պեղել է 9 դամբանաբլուր: Դամբաններն ունեն քարահողային լիցք: Մեկ դեպքում (N 2 դամբարան) դամբարանը գերանածածկ էր: NN1-4 դամբարաններում խցերը հիմնահողային էին, NN 5-7 և 9 դամբարաններում՝ քարարկղային, իսկ N 8 դամբարանում թաղումն իրականացված է խցի մեջ: N 3 դամբարանում կրկնակի թաղում է: Դատելով նկարագրված նյութից՝ դամբարանները պատկանում են վաղ երկաթի դարաշրջանին (Реслер, 1901, 166-168, Լալայեան, 1898, 40):

Կամուրջներ

Հիշատակվում է XIX դարի երկու կամուրջ (Гусейнова, 2009, 91):

Թանգարանային նյութ

Քաշաթաղի երկրագիտական թանգարանում պահվում է Աղավնո գյուղից հայտնաբերված դարչնագույն կարաս՝ նեղ հատակով, ուռուցիկ իրանով, հատույթում ուղղանկյուն շուրթով (ՔԵԹ ի/հ 136/15): Կարասի իրանի վերին հատվածում՝ համակենտրոն շրջաններից 4 զարդանախշ՝ կիսագնդաձև բռնակով, շուրթի տակ՝ երեք փորագիր ակոս:

Քարտեզ, հուշարձանի տեղադրությունը



Օրթոֆոտոպլան



Տեղահանույթ և հատակագիծ





Բլրի հարավ-արևելյան ստորոտի պատաշարը



Հատված հարավային պարսպագծից: Աջ կողմում Դաշտաքար բլուրն է



Հատված հարավային պարսպագծից



Պատաշարի լայնության երևացող հատված



Հարավային պարիսպ-ցանկապատը

№ 26. Ամրոց Մազրա

Ք.ա. 2-1-ին հազ. - ուշ միջնադար
39°25'14.07"N 46°25'02.04"E, բարձրությունը՝ 1122 մ
ԱՀ Պատմության և մշակույթի հուշարձանների Պետական Ցուցակի գրանցահամարը
Քաշաթաղի շրջան N180

Հուշարձանի անվանումը
Ամրոց Մազրա

Անվանման աղբյուրը
Մոտակա բնակավայրը

Տեղադրությունը
Գտնվում է Վանանդ գյուղից 1,3 կմ հյուսիս-արևելք՝ բարձր, սրածայր, ժայռոտ բլրի գագաթին:

Ադմինիստրատիվ պատկանելությունը
ԱՀ Քաշաթաղի շրջանի Հայկազյան համայնքի Վանանդ գյուղ
(ԼՂՀ Օրենք ԼՂՀ վարչատարածքային բաժանման մասին)

Նախկին ադմինիստրատիվ պատկանելությունը
Ադրբ. ԽՍՀ Կուբաթլիի շրջանի Նովլուի գյուղխորհրդի Մազրա գյուղ
(Мельников, Ибрагимов, 1979, 59)
Ելիզավետպոլի գուբերնիայի Զանգեզուրի ուեզդի III ոստիկանական տեղամասի (կենտրոն՝ Դոնդարլու գյուղ) Դարգիլիի գյուղական հասարակություն Մազրա գյուղ
(Пагирев, 2007, 197, Кавказский календарь, 1916, 55)

Պատմական տեղեկություններ
Գյուղը Մազրեն անունով հիշատակվում է 1730 թ. Տաթևի վանքի պտղացուցակում՝ Մաղանջուղի գավառակի գյուղերի թվում (Օրբելեան, 1942, 42):

Զրագրություն
Որոտան գետի աջ ափ, գետից 1.2 կմ հարավ, աջակողմյան՝ Մազրա վտակի ձախ ափին

Տեսողական կապը այլ հուշարձանների հետ
Ամրոց՝ Բարկուշատի բերդ

Հուշարձանի հիշատակումները և հետագա ուսումնասիրությունները
Հուշարձանը հայտնաբերել են Գ. Սարգսյանն ու Զ. Ըռքոյանը 2013 թ.:

Հուշարձանի նկարագրությունը
Բազմաշերտ հուշարձան է, որը, դատելով պահպանված պարիսպների շինտեխնիկայից, ունեցել է երկու շինարարական շրջան՝ բրոնզ-երկաթեդարյան և վաղ միջնադարյան: Չի բացառվում, որ այս երկու պատմական ժամանակաշրջանների միջև ընկած ավելի քան մեկ հազարամյակում կյանքը ամրոցում չի ընդհատվել: Ամրոցանիստ ժայռազանգվածի ամբողջ մակերեսը (1,5 հա) պատված է անտառով ու խիտ մացառուտներով, ինչը դժվարացնում է ակնադիտական հետազոտությունը:
Բլրի գագաթը երեք կողմերից սահմանվում է դժվարամատչելի, խիստ զառիթափ քերծերով և միայն հարավային՝ Մազրայի կողմից իջնելով և անցնելով ոչ մեծ թամբաձև իջվածքը, կարելի է մտնել հուշարձան: Հենց այս՝ ամենամատչելի ուղղության վրա են կառուցված ամրոցի պաշտպանական համակարգի երկու՝ միմյանց զուգահեռ պարիսպները: Վերևի պարսպագիծը, որ ներփակում է բլրի գագաթնամասի համեմատաբար հարթ մակերեսը, կառուցված է մեծածավալ, ճեղքած, անմշակ քարերից՝ կիկլոպյան չոր շարվածքով, և, ըստ ամենայնի, վաղագույն՝ բրոնզ-երկաթեդարյան ժամանակաշրջանի շինություն է: Այն կանգուն է հատվածներով 2-3 քար՝ 1,0-1,5 մ բարձրությանբ: Դատելով բլրի գագաթնամասի եզրագծերին երևացող նմանատիպ շարվածքի վնասված պատառիկներից՝ կարելի է մտածել, որ այս պարիսպը ժամանակին փակել է ամրոցի գագաթի միջնաբերդն ամբողջությամբ:

Վերևի պարսպագծից՝ մոտ 15-20 մ ներքև, անցնում է երկրորդ պարիսպը, որն արդեն ձգվում է միայն հարավային կողմի թեքադիր լանջով՝ առաջինին զուգահեռ: Այն միացնում է արևելյան ժայռերը արևմտյան ծերպերին: Երկրորդ պարսպի շինտեխնիկան տարբերվում է առաջինից, քանի որ շարված է զգալիորեն ավելի փոքր, մոտավոր խորանարդի բերված ճեղքած քարերից՝ առանց կրաշաղախի: Նման շարվածքը ավելի բնորոշ է ուշ անտիկ-վաղ միջնադարին, որով և թվագրվում է ամրոցի գոյատևման վերջին երկրորդ շրջանը:

Ամրոցի գագաթին ու երկու պարիսպների միջանկյալ հատվածի քարքարոտ մակերեսին՝ բնահողի մերկացող ժայռերի միջև, նկատվում են միջին չափի քարերից շարված առանձին պատերի հետքեր, որոնք չեն ամբողջանում, և այստեղ կառուցապատման որևէ հստակ պատկեր ստանալ հնարավոր չէ:

Հուշարձանի տարածքում վերգետնյա խեցեղեն չի հայտնաբերվել, ինչը մեր թվագրումը դարձնում է մոտավոր:

Տարածքի այլ հուշարձաններ

Գյուղում հավաստված է միանավ թաղակապ եկեղեցի, որը կառուցված է միջին չափերի գորշ և մանուշակագույն բազալտ քարերից: Բարավորին պահպանվել է 1694 թ. արձանագրություն: Հարավային պատի մեջ ագուցված է խաչքար (Կարապետյան, 1999, 186, Սարգսյան, 2014b, 191): Վ. Հուսեյնովան այս ուշ միջնադարյան կառույցը սխալմամբ թվագրում է XI դարով (Гусейнова, 2009, 155): Գյուղից 1,5 կմ արևելք կան քարանձավային բնակատեղիի հետքեր (Կարապետյան, 1999, 186):

Քարտեզ, հուշարձանի տեղադրությունը



Տեղահանույթի և հատակագծի սխեմատիկ վերակազմություն





Ընդհանուր տեսքը հարավ-արևմուտքից



Ստորին պարսպագծի հատված



Վերին պարսպագծի շարվածքը



Վերին պարսպի արևելյան կողմը

№ 27. Դղյակ Սեթանց

Ամրոց, դղյակ, գերեզմանոց
XIV-XVII դդ.
39°22'58.0"N 46°25'13.01"E, բարձրություն՝ 1296 մ
ԱՀ Պատմության և մշակույթի հուշարձանների Պետական Ցուցակի գրանցահամարը Քաշաթաղի շրջան N160

Հուշարձանի անվանումը
Ամրոց Սեթանց

Անվանման աղբյուրը
Մոտակա բնակավայրը

Տեղադրությունը
Գտնվում է Սեթանց գյուղի հարավային եզրին՝ համանուն գետակի և նրա աջակողմյան վտակի միախառնման կետում վեր խոյացող լեզվակաձև հրվանդանին:

Ադմինիստրատիվ պատկանելությունը
ԱՀ Քաշաթաղի շրջանի Սեթանց գյուղ
(ԼՂՀ Օրենք ԼՂՀ վարչատարածքային բաժանման մասին)

Նախկին ադմինիստրատիվ պատկանելությունը
Ադրբ. ԽՍՀ Կուբաթլիի շրջանի Գյոյարջիկիի գյուղխորհրդի Սեյթազ գյուղ
(Мельников, Ибрагимов, 1979, 60)
Ելիզավետպոլի գուբերնիայի Զանգեզուրի ուեզդի III ոստիկանական տեղամասի (կենտրոն՝ Դոնդարլու գյուղ) Սեյթազ գյուղ
(Пагирев, 2007, 113)

Պատմական տեղեկություններ
Սեթանց գյուղը հիշատակվում է 1730 թ. պտղացուցակում՝ Մաղանջուղի գավառակում (Օրբելեան, 1942, 42): XIX դ. երկրորդ կեսին այս և Թեմուր-Մուսախլիի գյուղական հասարակության մի քանի գյուղերը՝ Հալավա, Մեմեդլի (հմմտ.՝ Кавказский календарь..., 1916, 56) բնակեցվել են քրդերով (Կարապետյան, 1999, 189-190)

Զրագրություն
Որոտանի վտակ Սեթանց գետակի ձախ ափին՝ գետակի և նրա աջակողմյան վտակի միախառնման կետում:

Հուշարձանի հիշատակումները և հետագա ուսումնասիրությունները
Ուսումնասիրել են Ս. Կարապետյանը (Կարապետյան, 1999, 189-190) և Գ. Սարգսյանը (Կարապետյան, Սարգսյան, 2018b):

Հուշարձանի նկարագրությունը
Փոքր, ամրացված դղյակ է՝ ամբողջովին պատված խիտ անտառով և բացառապես ուշ միջնադարյան արտեֆակտերով: Ուղղահայաց ժայռածերպերով եզերվող եռանկյունի հրվանդանն ամբողջ ծավալով հյուսիսից մխրճվում է Սեթանց գետակի ուղղածիգ գծի մեջ՝ ստիպելով նրան, ոլորան տալով, շրջանցել և երեք կողմից ողողել դղյականիստը: Այսպիսով՝ գետը ակամայից դառնում է ամրացված դղյակի պաշտպանական համակարգի մասը կազմող ջրի խանդակը: Միայն հյուսիսային՝ գյուղահայաց կողմից, հրվանդանը փոքր թամբաձև իջվածքով միանում է գետակի ձախափնյա թեքադիր հարթությանը: Այս կողմից ամրոցը պաշտպանված է եղել հյուսիսային պարսպապատով, որի ամուր կրաշաղախով շարված պարսպի հետքերը մնացել են հրվանդանի արևմտյան ու արևելյան եզրագծերին: Պարսպի հիմնական՝ կենտրոնական մասը, հիմնահատակ քանդվել է խորհրդային տարիներին շրջակա տարածքների վարելահողերի մելիորացիայի ընթացքում:

Ամրոցի կենտրոնի բարձրադիր կետում պահպանվել են բուն դղյակի ավերակները: Դղյակը բազմասենյականոց համալիր է՝ կառուցված միջին չափի ճեղքած քարերից՝ ամուր կրաշաղախով: Կառույցի պատերի հաստությունը մոտ 1,0 մ է և տեղ-տեղ պահպանվել է մինչև 2-2,5 մ բարձրությունը: Համալիրը ներսից սվաղված է եղել կրածեփով: Կառույցի պատերի մոտ կուտակված փլատակների

անսովոր մեծ քանակը թույլ է տալիս ենթադրել, որ այն եղել է երկհարկանի: Դղյակի ավերվածության աստիճանը և տարածքում աճած խիտ անտառը թույլ չեն տալիս ուրվագծել կենտրոնական համալիրի հատակագիծը և նշել չափերը: Շրջակայքում հատվածաբար նկատվում են պատերի հետքեր ու շինություններից մնացած փոսորակներ: Կենտրոնական դղյակի մոտ է ընկած մի ինչ-որ մոնումենտալ կառույցից մնացած քարե կլոր սյան բեկոր:

Ամրոցի գլխավոր մուտքը եղել է արևելյան կողմից: Այստեղ՝ հրվանդանի եզրագծին, դրված է ուղղահայաց բարձր հենապատերով կազմակերպված ոչ մեծ հարթակ-հրապարակ, որին գետի հակառակ ափից մոտենում է նմանատիպ մի բարձր պատաշարի վրայով եկող հանդիպակաց ճանապարհ: Երկու ճանապարհները ուղղահայաց կտրվում են անմիջապես գետագծի վրա բարձրության նույն նիշին, և նրանց միջև բաց մնացած 5-6 մ թռիչքը հանգիստ կարող է կապվել ժամանակին այստեղ եղած բացվող փայտյա կամրջակով:

Ամրոցից դուրս՝ գետափի հյուսիսային լանջին՝ ծառերի մեջ, պահպանվել է հին գերեզմանոցի մի փոքր հատված, ուր կան XVI-XVIII դարերին բնորոշ տապանաքարեր, խաչքարերի ու հայերեն արձանագրությունների բեկորներ:

Տարածքի այլ հուշարձաններ

Տարածքում հավաստված են մի շարք գյուղատեղիներ՝ Ղեարաս, Մամեդլի, Ղարաղշլաղ, որոնք քրդաբնակ են դարձել միայն XIXդ. երկրորդ կեսին (Կարապետյան, 1999, 189, Բահաթրյան, 1885, 3):

Քարտեզ, հուշարծանի տեղադրությունը



Տեղահանության և հատակագծի սխեմատիկ վերակազմություն





Դղյակի անտառապատ բլուրը հյուսիսից



Դղյակի կանգուն մնացած պատի հատված



Կենտրոնական դղյակի մնացորդները



Հայերեն արձանագրությամբ քար



Քարե սյան բեկոր

№ 28. Ամրոց Բարկուշատի բերդ

Ամրոց, բնակատեղի, ջրամբար
IV-XIV-րդ դդ.
39°26'15.4"N 46°26'50.1"E, բարձրությունը՝ 790 մ
ԱՀ Պատմության և մշակույթի հուշարձանների Պետական Ցուցակի գրանցահամարը
Քաշաթաղի շրջան N52

Հուշարձանի անվանումը
Ամրոց Բարկուշատի բերդ

Անվանման աղբյուրը
Վերականգնված է պատմական անվանումը

Այլ անվանում
Դալա, Բերդ, Քուրդիկ

Տեղադրությունը
Գտնվում է Որոտան (հնում՝ Բարկուշատ) գետի աջ ափի բարձր, սրածայր լեռան վրա՝ Դողար գյուղից 1,7 կմ հարավ-արևելք:

Ադմինիստրատիվ պատկանելությունը
ԱՀ Քաշաթաղի շրջանի Որոտան համայնքի Դողար գյուղ
(ԼՂՀ Օրենք ԼՂՀ վարչատարածքային բաժանման մասին)

Նախկին ադմինիստրատիվ պատկանելությունը
Ադրբ. ԽՍՀ Կուբաթլիի շրջանի Նովլուի գյուղխորհրդի Դավուդլու գյուղ
(Мельников, Ибрагимов, 1979, 65)
Ելիզավետպոլի գուբերնիայի Զանգեզուրի ուեզդի III տեղամասի (կենտրոն՝ Դոնդարլու գյուղ) Թեմուր-Մուսկանլիի գյուղական հասարակության գյուղ Դավուդլու
(Пагирев, 2007, 121, Кавказский календарь, 1916, 55):

Պատմական տեղեկություններ
Գ. Սարգսյանը նույնացնում է այս ամրոցը պատմական Բարկուշատի բերդի հետ: Հարկ է նշել, որ Ա. Աբրահամյանը Բարկուշատը նույնացնում է Բերգուշետ գյուղի հետ (Օրբելյան, 1942, 487): Մ. Սեն-Մարտինը Բարկուշատը տեղադրում է Չավնդուրից արևելք՝ Արաքսի ափին՝ Աղվանքում (Saint-Martin, 1818, 155, Saint-Martin, 1819, 101, 103, 111): Պատմական Բարկուշատի մասին տեղեկությունները խիստ բազմազան են: Առավել վաղ տեղեկությունները գավառի և այնտեղ գտնվող ամրոցի մասին վերաբերում են V դարին (Օրբելյան, 1986, 114): Միևնույն ժամանակ Ա. Հակոբյանը գտնում է, որ Օրբելյանի հիշատակումը՝ Բարկուշատը որպես Վաչագան թագավորի մահվան վայր, IX-X դդ. որոշ իրողությունների արձագանք է (Յակոբեան, 2020, 105): Ամրոցը և գավառը հիշատակում են Իվանեն և Զաքարեն՝ ամրոցը սելջուկներից ազատագրելու կապակցությամբ (Օրբելյան, 1986, 316, Григорян, 1990, 66): Ամրոցը՝ որպես ժառանգական տիրույթ, պատկանում էր Լիպարիտ Օրբելյանին (Օրբելյան, 1986, 316, Григорян, 1990, 69): Նկարագրելով իրենց տիրույթները՝ Օրբելյանները միշտ նշում են Բարկուշատի ամրոցը, փաստորեն, արժևորելով այն (Օրբելյան, 1986, 332, Григорян, 1990, 106, Բարխուդարյան, 1960, 114, Բարխուդարյան, 1967, 149-150, Շահխաթունյանց, 2014, 445, 454): XVII դ. Բարկուշատը հիշատակվում է Երևանի բեգլերբեյության գյուղերի, քաղաքների և ամրոցների կազմում (Adam Olarius, 1727, 522), ինչպես նաև 1730 թ. պտղացուցակում (Օրբելեան, 1986, 41-43, Յակոբեան, 2009, 278): XVIII դ. առաջին քառորդում Բարկուշատ բնակավայրը, հավանաբար, մահմեդականներով էր բնակեցված, քանի որ Բարկուշատի խաները ակտիվ մասնակցում էին Դավիթ Բեկի դեմ պայքարին, որը, սակայն, ազատագրում է Դավիթ Բեկը (Րաֆֆի, 1959, 197, Ղուկաս Սեբաստացի, 1992, 26, 49, Լեո, 1946, 321):

Այնուամենայնիվ, գավառակում հայկական բնակչություն կար: Բարկուշատ է հեռանում Փիլիպոս կաթողիկոսը (Լեո, 1946, 321, 680): Հետագայում գավառակի հայկական բնակչությունը գաղթում է Հադրութ (Բարխուդարյան, 1995, 45): Բարկուշատը դառնում է Փանահ խանի և վրաց Թեյմուրազ թագավորի պատերազմների թատերաբեմ (Լեո, 1946, 762):

Մյուս կողմից, նկարագրելով այս ամրոցը, Ա. Ղարագյոզյանը նույնացնում է այն Բորոտան ամրոցի

հետ (Карагезян, 2002, 39, հմմտ.՝ Ալիշան, 1893, 262): Ամրոցից 8 կմ հեռավորության վրա Ա. Ղարագյոզյանը հիշատակում է Բահտիարլու գյուղի մոտ գտնվող ևս մեկ ամրոց, որը հեղինակը նույնացնում է Բղեն ամրոցի հետ (Карагезян, 2002, 39-40): Ըստ Մ. Հովհաննիսյանի՝ Բղենը գտնվում էր Ծղուկ գավառում (Հովհաննիսյան, 1970, 414), իսկ ըստ Գ. Սարգսյանի՝ Բղենո Նորավանքից ոչ հեռու՝ Որոտանի ափին (Սարգսյան, 1952, 40-42):

Ձրագրություն

Բարկուշատ (Որոտան) գետի աջ ափ

Տեսողական կապը այլ հուշարձանների հետ

Ամրոցներ՝ Անդոկաբերդ, Մազրա

Հուշարձանի հիշատակումները և հետագա ուսումնասիրությունները

2013 թ. հուշարձանախումբը հայտնաբերել և ուսումնասիրել են Գ. Սարգսյանը և Ձ. Ըռքոյանը՝ ԱՀ արշավախումբի ծրագրով (Կարապետյան, Սարգսյան, 2018b): Դավուդլու գյուղի միջնադարյան հուշարձաններն ուսումնասիրել է նաև Ս. Կարապետյանը:

Հուշարձանի նկարագրությունը

Միջնաբերդ

Մեծ ու հզոր ամրոց է՝ ստորոտում ընդարձակ բնակատեղիով ու ձեռակերտ ջրամբարով: Մոտ 400 մ երկարությամբ և 100 մ լայնությամբ վեր խոյացող լեռնազանգվածի միջնամասի թամբաձև տափարակում եղել է ամրոցի միջնաբերդը, իսկ կտրուկ բարձրացող հարավային ցից գագաթին տեղակայված է դիտակետ: Գագաթի դիտակետը բարձր է միջնաբերդից 180 մ, իսկ ժայռի ստորոտից՝ մոտ 300 մ: Դիտակետի հետքերը գրեթե չեն երևում, բայց կան թափված շինաքարեր և պահպանվել են միջնադարյան կղմինդրի բեկորներ: Այստեղ են նաև երկու փոքր, կլոր, կրաշաղախով սվաղված քարաշեն ջրավազանները: Ամրոցանիստ լեռը արևմուտքից ու հյուսիսից եզերվում է ուղղահայաց գահավիժող անմատչելի ժայռածերպերով, իսկ արևելքից փակված է կրաշաղախով շարված, 100-120 մ երկարությամբ, տեղ-տեղ կրկնաշարերով զուգորդվող պարսպով: Արևելյան արտաքին պարիսպը կրաշաղախով շարված է միջին չափի անմշակ քարերից կրաշաղախով, և կրում է վերանորոգման ու վերաշարերի հետքեր: Նկատվում է, որ վերանորոգված հատվածների շարվածքը տարբերվում է շինտեխնիկայով՝ հավանաբար, նաև կառուցման ժամանակով: Այդպիսի հորիզոնական շարքերը պահպանող մոտավոր խորանարդի բերված քարերով են շարված նաև արևելյան կողմի հնարավոր մոտեցման ուղիները փակող որոշ պատաշարեր: Տարբեր կետերում երևում են հիմնական պարսպագծին ներսից կցված շինությունների պատերի հետքեր: Ուշագրավ է, որ ժայռի արևմտյան՝ (գործնականում ներքևից անմատչելի) եզրագծով ձգվում է ևս մի պարսպագիծ: Չի բացառվում, որ այս պարսպագիծը նրա ներսում նկատվող բազմաթիվ շինությունների համար հենապատ ու բազրիք է ծառայել:

Հիմնական պարսպի հյուսիսային՝ ամենացածր եզրին, պահպանվել է ամրոցի գլխավոր մուտքը: Այն տեղակայված է բարձր ժայռագծի վրա և, ամենայն հավանականությամբ, ժամանակին ունեցել է դեպի մուտք բարձրացող աստիճանավանդակ: Մուտքի բացվածքը 2,8 մ է, և նրա երկու կողմերի եզրապատերը պահպանվել են մոտ 2,0 մ բարձրությամբ: Մուտքից դեպի ներս բարձրացող անցումը գնում է երկու կողմերից պատերով ուղղորդվող միջանցքով և տանում է դեպի միջնաբերդի տափարակը: Այստեղ՝ ամենաբարձր կետում, գտնվում է այժմ ներկայումս ավերված եկեղեցին: Կառույցը փոքր է՝ պատված իր իսկ պատերի անկանոն փլատակներով: Եկեղեցուց կանգուն է մնացել միայն արևմտյան պատի մոտ 2,5 մ բարձրությամբ մի պատառիկ: Հուշարձանի հատակագիծը չի ուրվագծվում: Եկեղեցու շրջակայքը և միջնաբերդի տափարակը խիտ կառուցապատված է եղել, ուր նկատվում են տարբեր շինությունների հետքեր: Տափարակի միջնամասում ուրվագծվում է մի մեծ ներճկված ուղղանկյուն տարածք, հնարավոր է՝ ջրամբար: Միջնաբերդի տափարակի արևելյան եզրագծին պահպանվել են հուշարձանի ամենավաղ՝ ուշ անտիկ-վաղ միջնադարին բնորոշ, մեծ տափակ քարերից, առանց կրաշաղախի շարված պարսպի մոտ 15 մետրանոց հատվածի հիմնամասերը:

Ամրոցանիստ լեռան արևելյան ճակատի վերևից մինչև ստորոտը իջնում է խոր բնական ճեղքվածք, որի միջով անցկացվել է ամրոցի գաղտնուղին: Ճեղքվածքի կրնկին պահպանվել է պատաշարով փակված ու լավ քողարկված գաղտնուղու նեղ մուտքը: Մուտքից ներս, պատաշարի ու լեռան ճակատի միջև՝ մոտ 1-1,5 մ լայնությամբ, թեքադիր անցումի հատակին շարված քարե աստիճանավանդակը կտրուկ բարձրանում է դեպի վեր: Ստորոտում՝ մուտքի դիմաց, գտնվում է բնակատեղիի արհեստական ջրամբարը:

Ամրոցի արևելյան ստորոտում տարածվել է ընդարձակ բնակատեղին: Այստեղ ամենուր երևում են պատերի, շինությունների և նույնիսկ փողոցների հետքեր: Բնակատեղիի կենտրոնում ոչ մեծ արհեստական ջրամբարն է, որը սնվում է հարավի բարձունքից եկող առվակով: Բնակատեղիի տարածքը օգտագործվել է մինչև մեր օրերը, որից մնացել են քարաշեն անասնափարախներ:

Ամրոցում և բնակատեղիում հայտնաբերված վերգետնյա խեցեղենը ներկայանում է վաղ զարգացած և ուշ միջնադարյան օրինակներով:

Տարածքի այլ հուշարձաններ

Դողար գյուղում կա 1609 թ. հայկական տապանաքար (Կարապետյան, 1999, 196): Գյուղից 2 կմ արևմուտք՝ Ուխտամեջք կոչված դաշտի ավերված գերեզմանոցում, գտնվել են 6 հատ 12-13-րդ դդ. խաչքարեր: Ամրոցի տարածքում գտնվում է IX-XIII դդ. հիմնավեր եկեղեցի (Սարգսյան, 2014b, նկ. 62):

Քարտեզ, հուշարծանի տեղադրությունը



Օրթոֆոտոպլան



(բաց բնակատեղիի և դամբարանադաշտի հատված)

Տեղահանություն և հատակագիծ





Ամրոցանիստ լեռը արևմուտքից



Ամրոցանիստ լեռը հյուսիս-արևելքից



Ամրոցի բնակատեղիի արհեստական ջրամբարը



Արևելյան պարսպագիծը



Գաղտնուղու ներսի աստիճանավանդակը



Գաղտնուղու պատաշարը և փլուզված մուտքը



Գլխավոր մուտքը դրսից



Միջնաբերդի եկեղեցու փլատակները



Պարսպաշարի հատված



Վաղագույն պարսպից մնացած հատված

№ 29. Ամրոց Անդոկաբերդ

Միջնաբերդ, բնակատեղի
Ք.ա. 4-րդ հազ. - վաղ միջնադար
39°26'14.06"N 46°28'43.07"E, բարձրությունը՝ 655 մ
ԱՀ Պատմության և մշակույթի հուշարձանների Պետական Ցուցակի գրանցահամարը
Քաշաթաղի շրջան N26

Հուշարձանի անվանումը
Ամրոց Անդոկաբերդ

Անվանման աղբյուրը
Վերականգնված է պատմական անվանումը

Այլ անվանում
Քեյղալա

Տեղադրությունը
Գտնվում է Անդոկաբերդ գյուղից 1 կմ հարավ՝ բլրին և նրա ստորոտում:

Ադմինիստրատիվ պատկանելությունը
ԱՀ Քաշաթաղի շրջանի Անդոկաբերդ գյուղ

Նախկին ադմինիստրատիվ պատկանելությունը
Ադրբ. ԽՍՀ Կուբաթլիի շրջանի Թեյմուր-Մուսկալիևի գյուղխորհրդի Ալիկուլիուշաղի գյուղ
(Мельников, Ибрагимов, 1979, 69)
Ելիզավետպոլի գուբերնիայի Զանգեզուրի ուեզդի III ոստիկանական տեղամասի (կենտրոն՝ Դոնդարլու գյուղ) Թեմուր Մուսկալիևի գյուղական հասարակության Ալիկուլիուշաղի
(Пагирев, 2007, 46, Кавказский календарь, 1916, 55):

Պատմական տեղեկություններ
Անդոկաբերդը հիշատակում է Օրբելյանը՝ որպես Մյուս Բաղքի կամ Քաշունիքի անառիկ ամրոցներից մեկը (Օրբելյան, 1986, 70, 401, Ինճիճեան, 1822, 299, Հիւբշման, 1907, 203, Հակոբյան, 1960, 202, Հարությունյան, 2003, 132): Ղ. Ալիշանի հիշատակած Ալի կուլի շեն գյուղն իրականում հենց Ալի կուլի ուշաղիից հյուսիս գտնվող գյուղն է, քանի որ այն հիշատակվում է Դավիթ Բեկի ապստամբության համատեքստում՝ Խնձորեսկից ոչ հեռու (Ալիշան, 1893, 397): Գյուղի շրջակայքը հիշատակվում է XIX դ. վերջում և XX դ. սկզբին՝ կապված Լալազարի կամրջի կառուցման հետ (Կարապետյան, 1999, 197, Շ. 1902, 2): Մինչև 1905 թ. գյուղերի տարածքի բնակչության մինչև 38 % հայ էր: Ալի-ղուլի ուշաղիում գտնվում էր փոստային կայան (Карта Кавказского края..., 1908):

Զրագրություն
Ամրոցը տեղակայված է Խնձորեսկ վտակի Որոտան (Բարկուշատ) գետի հետ միախառնման կետի ձախ կողմում:

Տեսողական կապը այլ հուշարձանների հետ
Բարկուշատի բերդ, Մազրա, Անդոկաբերդի ամրացված բնակատեղի

Հուշարձանի հիշատակումները և հետագա ուսումնասիրությունները
Գյուղի քարանձավային կառույցները ինչպես բնական (Ակ կայա, Կարա կայա), այնպես էլ արհեստական (եկեղեցի, հնձաններ), հիշատակվում են դեռևս XIX-XX դդ. սահմանագլխին (Լալայեան 1898, 50, Джафарзаде, 1944, 68-69, 1956, 20): Գյուղի ամրոցները հայտնի են դեռևս XX դ. սկզբից և հավաստված են քարտեզներում (Карта Кавказского края, 1908), ինչպես նաև խորհրդային շրջանից (Атлас Азебайджанский ССР, 1963, 206-207, Կարապետյան, 1999, 150): Վ. Հուսեյնովան խիստ նեղացնում է այս բազմաշերտ բնակավայրի ժամանակագրական սահմանները՝ թվագրելով այն V դարով (Гусейнова, 2009, 154): Հուշարձանը 2014 թ. ուսումնասիրել են Գ. Սարգսյանը, Զ. Ըռքոյանը և Լ. Հովհաննիսյանը (Կարապետյան, Սարգսյան, 2018b):

Հուշարձանի նկարագրությունը
Բազմաշերտ ամրոց-բնակատեղի է, ուր կյանքը հարատևել է՝ սկսած վաղ բրոնզից մինչև վաղ միջնադար ընկած ժամանակաշրջանները: Ամրոցի միջնաբերդը տեղադրված է բլրի գագաթին և

լանջերին, իսկ հյուսիսային ու արևելյան ստորոտներում տարածվել է բնակատեղին: Հարավային՝ գետահայաց կողմում, բլուրը կտրվում է անմատչելի ուղղահայաց ժայռածերպերով, իսկ հյուսիսային կողմից այն սահուն միանում է ստորոտի հարթությանը: Միջնաբերդը ամրացված է 4-5 շարք՝ միմյանց զուգահեռ պարսպագծերով, որոնք փակում են մատչելի հյուսիսային լանջը: Պարիսպները կրում են վերակառուցման հետքեր, որոնք լավ չեն պահպանվել: Լանջի միջնամասում գտնվող հիմնական պարսպի ստորին շարքերը կիկլոպյան են, իսկ վերինները՝ շարված են մոտավոր խորանարդի բերված միջին չափի քարերից՝ առանց կրաշաղախի՝ անտիկ և վաղ միջնադարին բնորոշ շինարարական տեխնիկայով: Պարիսպները պահպանվել են մինչև 1,5 մ բարձրությամբ: Պարիսպների միջանկյալ տարածքները կրում են կառուցապատման հետքեր: Վերին պարսպագիծը, որ եզերում է բլրի գագաթի ձեռակերտ հարթեցված, շուրջ 60x70 մ մակերեսով տարածքը, ունի ատամնավոր հատակագիծ: Միջնաբերդում պահպանվել են տարաժամանակյա շինությունների հետքեր, բայց գագաթին տեղադրված սեյսմակների, բազմասեյսմականոց համալիրների, փողոցների հիմնապատերը, դատելով վերգետնյա խեցեղենից, բնորոշ են հուշարձանի վերջին՝ անտիկ-վաղ միջնադարի ժամանակաշրջանին: Այստեղ հայտնաբերված է տուֆակերտ մարդակերպ կուռքը: Շինությունները կառուցված են միջին չափի գլաքարերից ու ճեղքված բազալտից՝ չոր շարվածքով, և պահպանվել են երկու կամ երեք քարի բարձրությամբ:

Միջնաբերդի հարավ-արևելյան եզրագծին պարզ երևում է ժայռածերպերի մեջ բացված, դեպի գետը իջնող նեղ սողանցքը՝ ջրագողի ճանապարհը: Նկատվում է, որ այն փորված է մարդու ձեռքով և ժամանակին ծածկված է եղել սալերով:

Բնակատեղիի հատվածը հետագայում հերկվել է և հին կառուցապատումից հետքեր գրեթե չեն մնացել, բայց մակերեսին ի հայտ են գալիս խեցեղենի բազմաթիվ բեկորներ, այդ թվում՝ շինարարական խեցեղենի նմուշներ: Բնակատեղիի մշակութային շերտի հզորությունը 0,7-1,5 մ է, ինչը երևում է սելավատարերի կտրվածքներում: Այս կտրվածքի հյուսիսային եզրին երևում են հիմնահողային ու քարարկղային թաղումների հետքեր: Տարածքում դամբարանների արտաքին նշաններ չեն պահպանվել:

Հուշարձանում հայտնաբերված վերգետնյա խեցեղենի հիման վրա հուշարձանը թվագրվում է վաղ բրոնզից-վաղ միջնադար ընկած ժամանակաշրջաններով՝ Ք.ա. IV-III հազ. – Ք.հ. III-V դդ.:

Տարածքի այլ հուշարձաններ

Լալազարի կամուրջը

Գտնվում է Դավթաշեն գյուղից 2,5 կմ հարավ-արևելք: Կամուրջը քարաշեն է, երկթռիչք: Ձախակողմյան թռիչքը 12,37 մ է, իսկ աջակողմյանը՝ մի փոքր ավելի երկար: Եզրապատնեշներ ունեցող անցուղու լայնությունը՝ 4,05 մ է: Կամրջի ձախակողմյան խելի արևելահայաց պատին ամրացված է կլոր քար՝ ներկայում եղծված շինարարական արձանագրությամբ (Կարապետյան, 1999, 196):

Միջնադարյան հուշարձաններ

Տարածքում հայտնաբերված են նաև մի շարք միջնադարյան հուշարձաններ. ջրաղաց, ժայռափոր եկեղեցական համալիր (Կարապետյան, 1999, 198, Լալայեան, 1898, 50, Սարգսյան, 2014b, նկ. 15): Ի. Ջաֆարզադեն, ելնելով այն հանգամանքից, որ տարածքում կան բնական և արհեստական քարանձավներ՝ ենթադրում է, որ քարանձավները կարող էին բնակեցված լինել դեռևս վաղագույն ժամանակաշրջանից (Джафарзаде, 1956, 20):

Քարտեզ, հուշարձանի տեղադրությունը



Օրթոֆոտոպլան



Տեղահանույթ և հատակագիծ





Ամրոցակալ լեռը հարավ-արևմուտքից: Ստորոտում Որոտան գետն է



Ամրոցանիստ բլուրը արևմուտքից



Երկրորդ պարսպագծի ճակատի հատված



Ընդհանուր տեսքը հյուսիսից



Միջնաբերդի ստորոտի կառույցների հատված



Միջնաբերդրի կառուցապատման հատված



Ստորին պարսպաշարի հատված



Փողոցի ուրվագիծը միջնաբերդում



Քարե կուռք միջնաբերդից

№ 30. Ամրացված բնակատեղի Անդոկաբերդ 2

Ամրացված բնակատեղի, դամբարանադաշտ
Ուշ երկաթ - վաղ միջնադար
39°25'40.0"N 46°29'35.9"E, բարձրությունը՝ 692 մ
ԱՀ Պատմության և մշակույթի հուշարձանների Պետական Ցուցակի գրանցահամարը
Քաշաթաղի շրջան N27

Հուշարձանի անվանումը
Ամրացված բնակատեղի Անդոկաբերդ 2

Անվանման աղբյուրը
Մոտակա բնակավայրը

Տեղադրությունը
Գտնվում է Անդոկաբերդ գյուղից 3,1 կմ հարավ-արևելք՝ նախկին Թեյմուր-Մուսկանլի գյուղից մոտ 800 մ արևմուտք՝ Որոտան-Անդոկաբերդ ճանապարհի աջ կողմում: Բնակավայրը տեղակայված է Որոտան գետի կիրճով և ոչ խոր սելավատարով կազմված արևելք-արևմուտք ձգվածությամբ եռանկյունաձև, հարթ հրվանդանին: Այն հանդիսանում է ընդարձակ հերկվող դաշտի հյուսիսային եզրամասը և առանձնապես աչքի չի ընկնում ընդգծված ռելիեֆով:

Ադմինիստրատիվ պատկանելությունը
ԱՀ Քաշաթաղի շրջանի Անդոկաբերդ գյուղ

Նախկին ադմինիստրատիվ պատկանելությունը
Ադրբ. ԽՍՀ Կուբաթլիի շրջանի Թեյմուր-Մուսկանլի գյուղխորհրդի Ալիկուլիուշաղի գյուղ
(Мельников, Ибрагимов, 1979, 69)
Ելիզավետպոլի գուբերնիայի Զանգեզուրի ուեզդի III ոստիկանական տեղամասի (կենտրոն՝ Դոնդարլու գյուղ) Թեմուր Մուսկանլիի գյուղական հասարակության Ալիկուլիուշաղի գյուղ
(Пагирев, 2007, 46, Кавказский календарь, 1916, 55)

Պատմական տեղեկություններ
Անդոկաբերդ 2 ամրացված բնակատեղիի վերաբերյալ պատմական տեղեկություններ չկան

Ձրագրություն
Որոտան գետի աջ ափին

Տեսողական կապը այլ հուշարձանների հետ
Ամրոց՝ Անդոկաբերդ

Հուշարձանի հիշատակումները և հետագա ուսումնասիրությունները
Ամենայն հավանականությամբ՝ համապատասխանում է Վ. Հուսեյնովայի Ալի-ղուլի-ուշաղիում նշած ամրոցներից մեկին (Гусейнова, 2005, 154): Հուշարձանը 2013 և 2018 թթ. ուսումնասիրել են Գ. Սարգսյանը, Ա. Գնունին, Զ. Ըռքոյանը և Լ. Մկրտչյանը (Կարապետյան, Սարգսյան 2018b):

Հուշարձանի նկարագրությունը
Հրվանդանի բավական հարթ մակերեսի երկու (հյուսիս ու հարավ) մեղմ իջնող լանջերի վերին եզրագծերով է ձգվում պաշտպանված բնակավայրի պարսպագիծը: Պարիսպը հատակագծում մոտենում է երկարավուն եռանկյունու, որի երկու կողմերը հյուսիսային և հարավային եզրապատերն են, իսկ հիմքը՝ հրվանդանը շրջակա դաշտից անջատող՝ թեթև գոգավորության երկայնքով կառուցված երկու զուգահեռ կրկնապարիսպները: Բնակատեղիի պարիսպները կառուցված են միջին չափի՝ գետից բերված խոշոր գլաքարերից, հիմնականում՝ ցից, կողքի վրա կանգնած, ճեղքած քարերից (օրթոստատ տեխնիկա), լայնությամբ՝ երկշերտ, շարվածքով՝ չոր: Պարսպագծերի ամբողջ երկայնքով պարսպի շուրջ պատաշարի փլատակներ գրեթե չկան, ինչը մտորել է տալիս, որ պարիսպը քարաշեն չի եղել: Բացառված չէ, որ այն կառուցված է եղել միմյանց ամուր կապված ցից կանգնած գերաններից, որոնք հիմնամասում ամրացվել են կողքի վրա ցից կանգնած օրթոստատ քարերի կրկնաշարերով: Այսինքն՝ տվյալ պարագայում մենք կունենանք փայտաշեն ցցապատի տարբերակ:

Բնակավայրի փոքր գոգավորությամբ մակերեսն աննշան բարձր է հարող դաշտի մակարդակից և այդ տարբերագծով գնում է բնակավայրի հիմնական՝ արևմտյան պաշտպանական գիծը: Այն

կազմված է նույն՝ ցցապատի շինտեխնիկայով կառուցված միմյանցից 4-5 մ հեռավորությամբ զուգահեռ տեղադրված երկու պարիսպներից: Պաշտպանական գծի միջնամասում նկատվում է բնակավայրի գլխավոր մուտքի ուրվագիծը:

Բնակատեղիի մոտավոր չափերն են՝ 140x50 մ: Պարսպով ներփակված բնակատեղիի ներսում նկատվում են երբեմնի խիտ կառուցապատումից մնացած շինությունների հիմնապատերը: Հուշարձանը վատ է պահպանվել: Շատ հատվածներում ճարտարապետական մանրամասները պատված են հողով, իսկ պատերն ու պարիսպները պահպանվել են հատվածաբար՝ մեկ քարի բարձրությամբ, և դժվարությամբ են ուրվագծվում խոտածածկույթի մեջ:

Հնավայրում վերգետնյա խեցեղեն չի հայտնաբերվել, բայց գտնվել են քարե աղորիքի ու սանդի բեկորներ: Ելնելով շինտեխնիկայի առանձնահատկություններից՝ հուշարձանը կարելի է վերագրել ուշ երկաթեդարյանից մինչև ուշ անտիկ դարաշրջաններն ընկած ժամանակաշրջաններին:

Ամրացված բնակատեղիից դուրս՝ մինչև 300 մ արևմուտք ընկած հաջորդ ձորակը, տարածվում է հարթ, բաց դաշտ, որի հիմնական հատվածը մաքրված է քարերից և ժամանակին հերկվել է: Միայն նրա հյուսիսային, ձորաեզրի մոտ 20-30 մ լայնությամբ հատվածը չի հերկվել: Պահպանվել են տարատեսակ շինությունների հետքեր: Ծայր արևմտյան անկյունում երևում են երկու կլորացող հետագծով միաշերտ քարաշարեր՝ դամբարանների մոտ 10-12 մ տրամագծով կրոմլեխներ, որոնցից մեկի կենտրոնում պահպանվել են իջեցուկ թաղումնային խցի քարարկղի հնում կողոպտված մնացորդներ: Այս երկու դամբարաններից մինչև բնակատեղիի ճակատային պարսպագիծը ընկած հատվածում երևում են բազմաթիվ ուղղանկյուն, միաշերտ և երկշերտ պատերով, մեկ քարի բարձրությամբ պահպանված սենյակների ու մեծ կառույցների հիմնապատերի հետքեր: Այստեղ են նաև հատվածաբար երևացող կլորավուն քարաշարեր, որոնք ևս հնարավոր է ևս երբեմնի դամբարանների կրոմլեխների հետքեր լինեին: Պատաշարերի հետագծերը երբեմն խաչվում են ու անցնում միմյանց վրայով: Ակնհայտ է, որ այստեղ մենք գործ ունենք տարաժամանակյա կառույցների հետ: Ամենայն հավանականությամբ, այստեղ տարածվել է բնակատեղիի երկաթեդարյան ժամանակաշրջանի դամբարանադաշտը, որը հետագայում հիմնովին կաղոպտվել ու ավերվել է:

Պետք է նշել, որ նկարագրվող հուշարձանից մոտ 0,3-0,4 կմ հարավ վեր բարձրացող թեքադիր լանջին հատվածներով երևում են պարսպագծերի և մի քանի փոքր, մեկ-երկու սենյականոց կառույցների վատ պահպանված պատառիկներ: Դրանք՝ առանց համատեքստի, տեղադրված են միմյանցից հեռու, առանց համատեքստի և ամբողջական պատկեր չեն կազմում: Դատելով սակավաթիվ խեցեղեն բեկորներից՝ թեքադիր լանջի այս վատ պահպանված կառույցները և վերոհիշյալ դամբարանադաշտում մնացած ուղղանկյուն շինությունները միջնադարյան են:

Քարտեզ, հուշարձանի տեղադրությունը



Օրթոֆոտոպլան



Տեղահանույթի և հատակագծի սխեմատիկ վերակազմություն





Բնակատեղիի արևմտյան պարսպի հատված



Ընդհանուր տեսքը հարավից



Հատված բաց բնակատեղիի կառույցներից



Մեծ դամբարանի կրոմլեխի շարվածքը



Շինության պատի հատված



Ուղղանկյուն կառույցի հետքերը

№ 31. Ամրոց Որոտան 1

Ամրոց, բնակատեղի
Ք.ա. 2-1 հազ. - վաղ միջնադար
39°22'17.03"N 46°34'05.07"E, բարձրությունը՝ 622 մ
ԱՀ Պատմության և մշակույթի հուշարձանների Պետական Ցուցակի գրանցահամարը
Քաշաթաղի շրջան N159

Հուշարձանի անվանումը
Որոտան 1

Անվանման աղբյուրը
Մոտակա բնակավայրը

Տեղադրությունը
Գտնվում է Խնձորեսկից դեպի Որոտան ավան (Կուբաթլի) տանող ճանապարհի մոտ՝ չհասած նախկին Մահմուդլու կոչված գյուղի արևմտյան եզրը, Որոտան գետի ձախ ափի՝ թերակղզու նման բարձրացող, լեզվակաձև ժայռային հրվանդանին: Հրվանդանը ձախափնյա բարձունքներից դեպի Որոտան գետն իջնող լավային հոսքի ծայր հարավային կետերից մեկն է, որի եռանկյունաձև զանգվածը անջատված է ափեզրի հիմնական գծից՝ ոչ խոր թամբաձև իջվածքով: Հրվանդանի մոտ 100x70 մ չափերով համեմատաբար հարթ մակերեսը երկու կողմերից եզերվում է ուղղահայաց կտրվող դժվարամատչելի ժայռերով և հասանելի է միայն հյուսիս-արևմտյան՝ թամբաձև իջվածքի կողմից:

Ադմինիստրատիվ պատկանելությունը
ԱՀ Քաշաթաղի շրջանի Որոտան ավան
(ԼՂՀ Օրենք ԼՂՀ վարչատարածքային բաժանման մասին)

Նախկին ադմինիստրատիվ պատկանելությունը
Ադրբ. ԽՍՀ Կուբաթլիի շրջանի Կայալիի գյուղխորհրդի Մահմուդլու գյուղ
(Мельников, Ибрагимов, 1979, 60)
Ելիզավետպոլի գուբերնիայի Զանգեզուրի ուեզդի III ոստիկանական տեղամասի (կենտրոն՝ Դոնդարլու գյուղ) Թեմուր Մուսկանլիի գյուղական հասարակության Մահմուդլու գյուղ
(Пагирев, 2007, 202, Кавказский календарь, 1916, 55)

Պատմական տեղեկություններ
Ս. Կարապետյանը Մահմուդլուն նույնացնում է Մահմուդլուն Օրբելյանի հիշատակած Քաշունիք գավառի Տաճկաձոր գյուղի հետ (Ստեփանոս Օրբելյան, 1986, 401, Կարապետյան, 1999, 190), ընդ որում՝ այդ անունը պահպանվում է մինչև XIX դ. վերջ (Բահաթրեան, 1885, 3):

Ձրագրություն
Որոտանի գետի ձախ ափին

Հուշարձանի հիշատակումները և հետագա ուսումնասիրությունները
Հուշարձանը 2013 թ. հայտնաբերել է Գ. Սարգսյանը

Հուշարձանի նկարագրությունը
Բազմաշերտ ամրոց-բնակատեղի է, որը մեզ է հասել խիստ խաթարված, ավերված վիճակում: Հուշարձանը շատ վատ է պահպանվել, քանի որ խորհրդային տարիներին հրվանդանին տեղակայվել է գյուղի անասնապահական ֆերման և նրա հարթ մակերեսը վերածվել է դարավանդներով կազմակերպված անասնափարախների: Որպես դարավանդների հենապատեր՝ հիմնականում օգտագործել են հին պարիսպները, որոնց վրա կուտակել են տրակտորներով հավաքված մշակութային շերտերի քարերն ու հողերը, ինչի հետևանքով՝ դարավանդների եզրագծերին, տեղ-տեղ կարելի է տեսնել հին պատաշարերից երևացող պատառիկներ և առանձին շինությունների հատվածներ, ուր, ամենայն հավանականությամբ, շրջակայքից հավաքված ու լցված հողաշերտի տակ դեռ անխաթար պահպանվել է վաղագույն մշակութային շերտը: Իր ժամանակին ամրոցը ներառել է հրվանդանի ամբողջ գագաթը, հյուսիս-արևմտյան լանջը ու թամբաձև իջվածքը:

Դատելով երևացող պատառիկներից՝ պարիսպները շարված են եղել մեծ ու միջին չափերի

անմշակ քարերից՝ լայնությամբ երկշերտ, առանց կրաշաղախի: Կառուցապատման շատ թե քիչ հստակ պատկեր չի պահպանվել, քանի որ չխաթարված հատված գրեթե չի մնացել: Այն փոքրիկ կղզյակներում, ուր տեղ-տեղ մերկանում է ժայռային հիմնահողը, կարելի է ուրվագծել երբեմնի քարաշեն պատերի հատվածներ: Հրվանդանում ամրոցի երբեմնի գոյության վերաբերյալ միակ անվիճելի փաստը գետնի մակերեսին բավականին հաճախ հանդիպող վերգետնյա խեցեղենն է, որի սփռման տարածքով կարելի է մոտավոր ուրվագծել ավերված հուշարձանի սահմանները: Ըստ այդմ, հավանաբար, հրվանդանին եղել է ամրոցի միջնաբերդը, իսկ նրա հյուսիս-արևելյան թամբաձև իջվածքում տարածվել է բնակատեղին: Հավաքված խեցեղենի նախնական վերլուծության հիման վրա կարելի է պնդել, որ կյանքը ամրոց-բնակավայրում սկիզբ է առել ուշ բրոնզի դարաշրջանից և տևել է մինչև անտիկ և վաղ միջնադար:

Այլ հուշարձաններ

Մահմուդլու գյուղում 1930-ականներին պեղվել են մի շարք կարասային թաղումներ (Алекперов, 1960, 26)

Քարտեզ, հուշարձանի տեղադրությունը



Տեղահանույթի և հատակագծի սխեմատիկ վերակազմություն





Ամրոցակալ ժայռը հարավ-արևմուտքից



Արևելյան լանջին մնացած պատաշար



Ընդհանուր տեսքը արևելքից



Հնագույն պարսպաշարից մնացած պատառիկ

№ 32. Ամրոց Պահու բերդ

Ամրոցի պարիսպներ, դղյակ, աշտարակներ, ջրամբարներ
IX-XVII դդ.,
39°19'07.08"N 46°34'12.09"E, բարձրությունը՝ 710 մ

Հուշարձանի անվանումը
Ամրոց Պահու բերդ

Անվանման աղբյուրը
Պատմական վերակազմություն

Այլ անվանում
Բերդ, Ղալա

Տեղադրությունը
Գտնվում է Քաշունիի բերդից 1,1 կմ, իսկ Երկաթավորք գյուղից՝ 2,6 կմ արևմուտք, Որոտան ավանից 3 կմ հարավ, ազիմուտ 190, նախկին Ներքին Խոջա Միսակ (Ուշաղի Խոջամուսախանլի) գյուղի արևելյան կողմում բարձրացող լերկ բլրին:

Ադմինիստրատիվ պատկանելությունը
ԱՀ Քաշաթաղի շրջանի Որոտան համայնքի Երկաթավորք գյուղ
(ԼՂՀ Օրենք ԼՂՀ վարչատարածքային բաժանման մասին)

Նախկին ադմինիստրատիվ պատկանելությունը
Ադրբ. ԽՍՀ Կուբաթլիի շրջանի Դոնդարլիի գյուղխորհրդի Դեմիրչիլար գյուղ, Ֆերջանի գյուղխորհրդի Յուխարի Խոջամուսախլի գյուղ
(Мельников, Ибрагимов, 1979, 59)
Ելիզավետպոլի գուբերնիայի Զանգեզուրի ուեզդի III ոստիկանական տեղամասի (կենտրոն՝ Դոնդարլու գյուղ) Դոնդարլուի գյուղական հասարակության Դեմիրչիլար և Խոջամասախլի գյուղեր
(Пагирев, 2007, 113, Кавказский календарь, 1916, 55, Кондратенко, 1902, 293)

Պատմական տեղեկություններ
Հիշատակվում է Ստեփանոս Օրբելյանի Սյունիքի պատմությունում Քաշունիք կամ Մյուս Բաղք գավառի գյուղերի կազմում (Օրբելյան, 1986, 401, Հակոբյան, 1960, 202, Հարությունյան, 2003, 132): Հ. Հյուբշմանը բերդի անվանումը մեկնաբանում է որպես պահապան բերդ (Հիւբշման, 1907, 397):

Ձրագրություն
Քաշունի գետի ձախ ափ

Տեսողական կապը այլ հուշարձանների հետ
Ամրոց՝ Քաշունի բերդ

Հուշարձանի հիշատակումները և հետագա ուսումնասիրությունները
Այս ամրոցը, հիշատակում է դեռևս Ֆ. Դյուբուա դե Մոնպրեն՝ նկարագրելով Բարկուշատից եկող ճանապարհը, սակայն սխալմամբ անվանում է այն Կալադերեսի (Բերդաձոր) (Dubois de Montpereux, 1836, 71): Հուշարձանը հայտնի է 1990 թվականից: Այն նկարագրել է Ս. Կարապետյանը (Կարապետյան, 1999, 193, Гусейнова, 2009, 154): Տարածքի միջնադարյան (հիմնականում՝ մահմեդական) հուշարձանները բազմիցս հիշատակվում են գրականության մեջ (Կարապետյան, 1999, 194, Бретаницкий, 1966, 198-199, Саламзаде, 1952, 251, Усейнов и др., 1963, 158-159, Щеблыкин, 1947b 158-159):

Հուշարձանի նկարագրությունը
Քաշունի գետի ձախ ափին բարձրացող ժայռոտ բլուրը հատակագծում ձվածիր է՝ 130 մ երկարությամբ և 80 մ լայնությամբ: Այն շուրջ 80 մ բարձրությունից իշխում է շրջապատի վրա: Լեռը երեք կողմից եզերվում է ուղղահայաց, գրեթե անմատչելի ժայռածերպերով, իսկ հարավից՝ մատչելի է թեքությամբ բարձրացող հարթակով: Ամրոցի պաշտպանական հիմնական կառույցները կենտրոնացված են հարավային կողմում, ուր գտնվում են նաև երկու գլխավոր մուտքերը:

Ամրոցի պաշտպանական համակարգը կազմակերպված է բարձրության տարբեր նիշերով միմյանց զուգահեռ գնացող երկու պարսպապատերով: Ամրոցը ներառող առաջին պարսպագիծը գնում

է ամրոցանիստ բլրի ստորոտից մի փոքր վերև ընկած հորիզոնով և արևելյան, հյուսիսային ու արևմտյան ճակատներում, տեղ-տեղ ընդհատվելով, ուղղահայաց ապառաժերով փակում է դեպի վեր տանող մոտեցման բոլոր հնարավոր ուղիները: Երկրորդ պարսպապատը առաջինից 15-25 մ բարձր է և ամբողջովին ներփակում է միջնաբերդը կամ, այսպես կոչված, «դղյակը»:

Երկու պարսպապատերի գլխավոր մուտքերը տեղակայված են հարավային լանջի մի գծի վրա և անցնում են աջ ու ձախ կողմերում կանգնած կիսաբոլորակ, կոնաձև, սնամեջ հզոր աշտարակների միջով: Մուտքերը կազմակերված են այնպես, որ առաջինից մտնողը մինչև վերևի մուտքից անցնելը ազատ դիտարկվում ու հսկվում է երկու դարպասների բոլոր չորս աշտարակներից: Աշտարակները ունեցել են դարպասներին նայող փոքր, կամարակապ պատուհաններ, որոնցից երկուսը պահպանվել են: Ստորին պարսպաշարի երկու աշտարակները պահպանել են մինչև 8-10 մ բարձրությունը: Սրանք, ինչպես և ամրոցի բոլոր շինությունները, շարված են միջին չափի ճեղքած անմշակ քարերից՝ ամրացված կրաշաղախով, և դրսից սվաղված են եղել կրածեփով: Պարիսպների հաստությունը հասնում է 2,5-3 մ:

Միջնաբերդը, բացի մուտքի երկու կիսակլոր աշտարակներից, հյուսիսային եզրապարսպին ունեցել է նաև երկու քառանկյունի հզոր աշտարակ-դիտակետեր, որոնց առաջին հարկերում եղել են ջրամբարներ: Դատելով ավերակներից՝ կարելի է եզրակացնել, որ միջնաբերդը ժամանակին խիտ կառուցապատված է եղել: Շինությունների հետքեր են պահպանվել նաև հարավային լանջին՝ առաջին ու երկրորդ պարսպապատերի միջանկյալ տարածքներում: Ամրոցում հայտնաբերված վերգետնյա խեցեղենը սակավ է և բնորոշ է զարգացած և ուշ միջնադարին:

Տարածքի այլ հուշարձաններ

Դեմիրչիլարի տարածքում հավաստված են մի շարք միջնադարյան հուշարձաններ՝ XIV-XV դդ. երկու դամբարան (Бретаницкий, 1966, 198-199, Саламзаде, 1952, 251, Усейнов и др., 1963, 158-159, Щеблыкин, 1947b 158-159), XIX դ. աղբյուր (Гусейнова, 2009, 154), XIX դարի երկու մզկիթ (Гусейнова, 2009, 154) և XVII-XVIII դդ. միաթռիչք կամուրջ՝ 9,15 մ երկարությամբ և 3,1 մ լայնությամբ (Կարապետյան, 1999, 194):

Քարտեզ, հուշարձանի տեղադրությունը



Օրթոֆոտոպլան



Տեղահանույթ և հատակագիծ





Ամրոցանիստ լեռը արևմուտքից



Աջակողմյան աշտարակը



Արևելյան կողմի պարսպի հիմնաքարերը



Հյուսիսային լանջի պարսպի հատված



Հյուսիսային կողմի պարիսպ-հենապատը



Ստորին պարսպապատի գլխավոր մուտքը

№ 33. Ամրոց Քաշունիի բերդ

Պարիսպներ, մուտք, խանդակ
IX-XVII դդ.,
39°19'02.08"N 46°34'57.02"E, բարձրությունը՝ 649 մ
ԱՀ Պատմության և մշակույթի հուշարձանների Պետական Ցուցակի գրանցահամարը
Քաշաթաղի շրջան N48

Հուշարձանի անվանումը
Ամրոց Քաշունիի բերդ

Անվանման աղբյուրը
Մոտակա գետը

Այլ անվանում
Ղալա

Տեղադրությունը
Գտնվում է Որոտան բնակավայրից 3 կմ հարավ՝ նույն համայնքի Երկաթավորք գյուղից 1,6 կմ արևմուտք:

Ադմինիստրատիվ պատկանելությունը
ԱՀ Քաշաթաղի շրջանի Որոտան համայնքի Երկաթավորք գյուղ
(ԼՂՀ Օրենք ԼՂՀ վարչատարածքային բաժանման մասին)

Նախկին ադմինիստրատիվ պատկանելությունը
Ադրբ. ԽՍՀ Կուբաթլիի շրջանի Դոնդարլիի գյուղխորհրդի Դեմիչիլար գյուղ, Ֆերջանի գյուղխորհրդի Յուխարի Խոջամուսախլի գյուղ
(Мельников, Ибрагимов, 1979, 59)
Ելիզավետպոլի գուբերնիայի Զանգեզուրի ուեզդի III ոստիկանական տեղամասի (կենտրոն՝ Դոնդարլու գյուղ) Դոնդարլուի գյուղական հասարակության Դեմիրչիլար և Խոջամասախլի գյուղեր
(Пагирев, 2007, 113, Кавказский календарь, 1916, 55)

Զրագրություն
Որոտան գետի աջակողմյան՝ Քաշունի վտակի ձախ ափին

Տեսողական կապը այլ հուշարձանների հետ
Պահու բերդ

Հուշարձանի հիշատակումները և հետագա ուսումնասիրությունները
Հուշարձանը 2013 թ. հայտնաբերել է ԱՀ արշավախումբը (Զ. Ըռքոյան, Ս. Սարգսյան, Լ. Հովհաննիսյան, Գ. Սարգսյան):

Հուշարձանի նկարագրությունը
Ամրոցը տեղակայված է հյուսիս-արևմուտքից հարավ-արևելք դեպի Քաշունի գետը իջնող բարձր, սրածայր լեռնաբազկի վերին նեղ ու երկար գագաթնագծին: Այն հարավ-արևմուտքից եզերվում է ուղղահայաց կտրված անանցանելի բնական ժայռերով, իսկ հյուսիս-արևելյան կողմից ամրացված է 280 մ երկարությամբ պարսպաշարով: Պարիսպը ծառայել է նաև ներսի տարածքը լայնացնող ու հարթեցնող հողալիցքի հենապատ: Ամրոցը հատակագծում մոտենում է թեքադիր, երկարաձիգ ուղղանկյանը, ուր վերին՝ ամենալայն մասի լայնությունը 35 մ է, իսկ ստորին՝ ամենանեղ մասինը՝ 12 մ: Վերին ու ստորին կետերի բարձրության նիշերի տատանումը 35 մ է:

Լեռնաբազկի ամրոցակալ հատվածը անջատված է հյուսիսային շարունակությունից 20-25 մ երկարությամբ՝ ակնհայտորեն ձեռակերտ խանդակով: Խանդակի լայնությունը 10-15 մ է, խորությունը՝ 6 մ: Վերին եզրագծում ամրոցը ավարտվում է կլորավուն բլուրը ներփակող կիսաշրջան պարսպով, որի արևմտյան՝ ծորահայաց եզրով, եղել է ամրոցի երկրորդ՝ հյուսիսային մուտքը: Ամրոցն ընդգծված միջնաբերդ չունի, և այս բլրակի գագաթին նկատվող շրջանաձև կառույցը կարելի է վերագրել դղյակին: Դղյակի դիմաց՝ ներսում, տարածվում է բաց հրապարակ:

Արևելյան պարսպագիծը կանգուն է գրեթե ամբողջ երկարությամբ՝ տեղ-տեղ մինչև 4-5 մ բարձրությամբ: Այն հիմնականում հարթ է և միայն երկու կետերում ուժեղացված է ծավալից դուրս եկող

ուղղանկյուն ու կիսաբոլորակ որմնահեծերով: Արևելյան պարսպագծի միջնամասում բացվում է ամրոցի գլխավոր մուտքը: Այն կազմակերպված է որպես կրկնապարիսպների միջով անցնող 3-4 մ լայնությամբ միջանցք:

Պարսպապատին կից՝ ներսից՝ մուտքից ներքև, պահպանվել է իրար հաջորդող սենյակների շղթա, որը կայազորի կացարանների տպավորություն է թողնում: Ամրոցի արևմտյան՝ ուղղահայաց գահավիժող ժայռագծի տակ, բացվում է մի բնական միջանցիկ անձավ, որը, ամենայն հավանականությամբ, «ջրագողի ճանապարհի» քողարկված մուտքն է:

Ամրոցի բոլոր պարիսպները կառուցված են խորանարդի բերված միջին չափի, պոչուկավոր, կոպտատաշ քարերից՝ ամրացված կրաշաղախով: Հուշարձանում վերգետնյա խեցեղեն գրեթե չի հանդիպում, բայց, դատելով շինարարական տեխնիկայից, կարելի է ընդունել, որ ամրոցը կառուցվել ու գոյատևել է զարգացած միջնադարում՝ IX-XIV դդ.:

Տարածքի այլ հուշարծաններ

Հիշատակվում է Իբրև Հրման-Երի ուշ բրոնզ-վաղ երկաթեդարյան բնակատեղի (Гусейнова, 2009, 154)

Քարտեզ, հուշարձանի տեղադրությունը



Օրթոֆոտոպլան



Տեղահանություն և հատակագիծ





Ամրոցակալ լեռը հարավից



Արևելյան պարսպի կենտրոնական հատվածը



Արևելյան պարսպի կիսաշրջան աշտարակ-որմնահեծը



Արևելյան պարսպի շարվածքը



Արևելյան պարսպի ուղղանկյուն աշտարակ-որմնահեծը



Ընդհանուր տեսքը արևելքից



Մուտքի բացվածքը հյուսիսից



Պարսպի վերին մակերեսը



«Զրագողի ճանապարհ»-ի վերին մուտքը

№ 34. Ամրոց Քարոտան

Պարիսպ-աշտարակներ, մուտք
XV-XIX դդ.,
39°12'56.04"N 46°43'15.05"E, բարձրությունը՝ 836 մ

Հուշարձանի անվանումը
Ամրոց Քարոտան

Անվանման աղբյուրը
Մոտակա բնակավայրը

Տեղադրությունը
Գտնվում է Քարոտան գյուղից հարավ՝ Որոտան և Հակարի գետերի միջնամասում՝ նրանց միախառնման կետից 1,3 կմ հյուսիս՝ ոչ բարձր բլրաշղթայի ծայր հարավային առանձնացած բլրին:

Ադմինիստրատիվ պատկանելությունը
ԱՀ Քաշաթաղի շրջանի Քարոտան գյուղ
(ԼՂՀ Օրենք ԼՂՀ վարչատարածքային բաժանման մասին)

Նախկին ադմինիստրատիվ պատկանելությունը
Ադրբ. ԽՍՀ Կուբաթլիի շրջանի Կևդադիխի գյուղխորհրդի Կևդադիխ գյուղ
(Мельников, Ибрагимов, 1979, 59)
Ելիզավետպոլի գուբերնիայի Զանգեզուրի ուեզդի III ոստիկանական տեղամասի (կենտրոն՝ Դոնդարլու գյուղ) Խոջախանի գյուղական հասարակության Կևդալիխ I գյուղ
(Пагирев, 2007, 160, Кавказский календарь, 1916, 55)

Պատմական տեղեկություններ
Հնարավոր է, որ այս ամրոցն է հիշատակում Ֆ. Դյուբուա դե Մոնպրեն, որը սխալմամբ անվանում է այն Ձիջիմլի: Դե Մոնպրեն նկարագրում է այն որպես փոքրիկ ամրոց՝ տեղադրված Բարկուշատ և Աղավնո գետերի միախառնման վայրում՝ կառուցված փոքր քարերից և գետաքարերից՝ ամրացված կրաշաղախով (Dubois de Montpereux, 1836, 60-61)

Զրագրություն
Որոտան և Հակարի գետերի միջնամասում՝ նրանց միախառնման կետից 1,3 կմ հյուսիս

Հուշարձանի հիշատակումները և հետագա ուսումնասիրությունները
2018 թ. հայտնաբերել է ՀՀ ԳԱԱ արշավախումբը (ղեկ.՝ Գ. Սարգսյան):

Հուշարձանի նկարագրությունը
Ամրոցը զբաղեցնում է երկու գետերի մակարդակից մոտ 20 մ բարձրությամբ, հյուսիս-հարավ ձգվող բլրի էլիպսաձև, ձեռակերտ հարթեցված գագաթնամասը: Ամրոցը պաշտպանված է շրջապարսպով, որի ներփակ տարածքի առավելագույն երկարությունը 107 մ է, լայնությունը՝ 36 մ, (3680 քմ): Պարսպապատերի ընդհանուր երկարությունը 278 մ է:

Այսօր գետնի մակերեսին երևում է միայն 1,5-2,2 մ լայնությամբ պարսպապատի հիմնամասերի ուրվագիծը: Նկատվում է, որ շրջապարիսպը հզորացված է եղել ոչ համաչափ դասավորված փոքր, ուղղանկյուն որմնահեծերով: Ամրոցի ներսի տարածքը հիմնականում հարթ է ու դատարկ: Կառուցապատման հետքեր նկատվում են միայն հարավային կողմում, այն էլ՝ հատվածաբար ուրվագծվող հիմնապատերի տեսքով: Չի բացառվում, որ ամրոցի ներսի կառուցապատումը կա՛մ փայտաշեն է եղել, կա՛մ՝ հողաշեն՝ հում աղյուսից: Պարիսպների հիմնամասերը կառուցված են միջին չափերի ճեղքած մոխրագույն ավազաքարից ու գլաքարերից՝ կապակցված ամուր կրաշաղախով: Նկատվում է, որ պարսիպների հետագծի երկայնքով պահպանված քարե փլատակները խիստ սակավ են, ինչը վկայում է, որ պարիսպները ամբողջովին քարաշեն չէին, այլ կառուցված են եղել հում աղյուսից:

Ուշագրավ է ամրոցի գլխավոր մուտքի բավականին անսովոր Г-ա նման կառուցվածքը: Այն գտնվում է ծայր հարավային՝ գետերի խառնարանին նայող կետում, և կառուցված է այնպես, որ մտնողը պետք է անցներ միմյանց նկատմամբ 90 աստիճանի տակ բացվող երկու դարպասներով: Մտնողը արևելքից դիտարկվում էր հզոր աշտարակից, իսկ հարավից՝ նրա թիկունքին նայում էին ներփակ սենյակից: Գլխավոր մուտքն ամրացված է երկու նույնատիպ աշտարակներով: Երկուսն էլ մոտ 4x4,5 մ չափերով, արտաքինից հնգանիստ քարաշեն միաձույլ զանգված են: Ամենայն հավանականությամբ՝ նրանց վերևի հատվածը ունեցել է սնամեջ ծավալ:

Երկու աշտարակներից՝ իրենց տեղում երևացող հիմնապատերից, պահպանվել են նաև ճակտոնային մասի 1,5-2 մ բարձրությամբ զանգվածները: Ուշագրավ է, որ այս երկու հնգանիստ աշտարակների վերնամասերի միաձույլ զանվածները գլխիվայր շուռ եկած, ընկած են իրենց իսկ հիմնամասերի դիմաց: Պոկված, ընկած զանգվածների դիրքն ակնհայտորեն վկայում է, որ այս երկու աշտարակները պայթեցվել են:

Բլրի լանջերին կառուցապատման ցայտուն հետքեր չեն պահպանվել: Արևմտյան կողմում երևացող որոշ պատաշարերի հատվածներ կարելի է վերապահությամբ համարել երկրորդ՝ ստորին պարսպագծի մնացորդներ: Ամրոցի արևելյան՝ Հագարիին նայող լանջին՝ հիմնական պարսպագծի տակ, փորված է պաշտպանական խրամատը, ըստ ամենայնի, 1992–1994 թթ. ազատագրական պատերազմից մնացած կնճիռ է: Հուշարձանի տարածքը հարուստ է վերգետնյա խեցեղենով, ուր զգալի մաս են կազմում անսովոր տեսքի ուռուցիկ եզրապատով ուղղանկյուն կղմինդրերի բեկորները ու դուրգով պատրաստված շիկավուն կավանոթները: Ճարտարապետական մանրամասների և խեցեղենի վերլուծության հիման վրա՝ հուշարձանը թվագրվում է 15-19-րդ դարերով:

Ելնելով վերը նշվածից՝ կարելի է ենթադրել, որ այս ամրոցը կառուցել են պարսիկները իրենց տիրապետության օրոք՝ որպես կայազորի պահակային ամրոց: Այն 19-րդ սկզբին ավերել ու պայթեցրել են ռուսական զորքերը:

Տարածքի այլ հուշարձաններ

Ֆ. Դյուբուա դե Մոնպրեն նշում է, որ Խոջախան գյուղում կան հին բնակատեղիի ավերակներ և գերեզմանոց՝ հայկական արձանագիր տապանաքարերով (Dubois de Montpereux, 1836, 60):

Որոտանի և Հագարիի միախառնման վայրից դեպի հարավ՝ Հագարիի աջ և ձախ կողմերում, սփռված է ընդարձակ բնակատեղի: Տնատեղերի մնացորդները երևում են միայն գետի ափերի կտրվածքներում: Մասնավորապես՝ երևում են կարասների շարքեր: Դատելով խեցեղենից՝ բնակավայրը գոյատևել է Ք.ա. VIII-VI դդ. մինչև XIII-XIVդդ.: Հուշարձանը 2013 թ. հետազոտել են Գ. Սարգսյանը և Ա. Գնունին:

Տարածքի հաջորդ հուշարձանը Շարիֆան քաղաքատեղին է: Թեպետ հուշարձանի տարածքը հայտնի էր դեռևս 1950–1960 թթ. (Атлас Азербайджанской ССР, 1963, 206-207), սակայն հնագիտական հետազոտությունները անցկացվել են 1970–1981 թթ.: Հետախուզական պեղումների ընթացքում պարզ դարձավ, որ քաղաքատեղին զբաղեցնում է ավելի քան 9 հա տարածք: Մշակութային շերտի հզորությունը կազմում է 2-2,75 մ: Պեղումների ընթացքում հայտնաբերվեց մեծաքանակ խեցեղեն, ինչպես տեղական արտադրության, այնպես էլ ներմուծված (իրանական, չինական): Խեցեղենի քննությունը թույլ է տալիս ենթադրել, որ բնակավայրը գոյատևել է XIII-XVII դդ. (Ахмедов, 1981, 415, Геюшев и др., 1974, Ахмедов, Ахмедов, 1984, 56-57, Геюшев и др., 1975, 466): Քաղաքատեղիի հյուսիս-արևմտյան հատվածում՝ Որոտանի աջ ափին՝ Հագարի կայարանից 3 կմ հեռավորության վրա, մահմեդական դամբարան է (Ахмедов, 1981, 415, Шеблыкин, 1947b, 157), որի մուտքի ստալակտիտաձև ձևավորումը թույլ է տալիս թվագրել այն XIV դարով: Հուշարձանը վերահետազոտվել է 2008 (Ֆ. Մուրադյան, Գ. Խաչատրյան) և 2013 թթ. (Գ. Սարգսյան, Ա. Գնունի):

Քարտեզ, հուշարձանի տեղադրությունը



Օրթոֆոտոպլան



Տեղահանույթ և հատակագիծ





Ամրոցի տեսքը հարավից



Արևելյան աշտարակի պոկված բեկորները



Արևելյան պարսպի հետագիծը



Արևմտյան աշտարակի շուռ եկած զանգվածը



Ընդհանուր տեսքը արևմուտքից



Ընդհանուր տեսքը հյուսիսից: Աջ կողմում Որոտան գետն է

№ 35. Ամրոց Կառնակաշ

Պարսպապատ, անցուղի, ջրավազաններ
XI-XIV դդ.
39°28'26.1"N 46°40'0.0"E, բարձրությունը՝ 875 մ
ԱՀ Պատմության և մշակույթի հուշարձանների Պետական Ցուցակի գրանցահամարը
Քաշաթաղի շրջան N98

Հուշարձանի անվանումը
Ամրոց Կառնակաշ

Անվանման աղբյուրը
Սկզբնաղբյուրներում հիշատակվող անվանումը

Այլ անվանում
Քարալի, Ղալալու

Տեղադրությունը
Գտնվում է Հագարի գյուղից մոտ 4 կմ հյուսիս-արևելք՝ Հագարի գետի ձախակողմյան Զանգանակյան վտակի ձախ ափին, այն կետում, ուր գետակը երեք կողմից շրջանցելով անցնում է թերակղզու նման՝ գետագծի մեջ մխրճվող, հյուսիս-արևմուտք, հարավ-արևելք ձգվածությամբ՝ մոտ 200 մ բարձրությամբ ժայռոտ լեռնազանգվածը: Ամրոցը տեղակայված է այդ թերակղզու վրա, նրա գագաթին ու հարավային լանջերին:

Ամրոցը զբաղեցրել է ռազմավարական կարևոր դիրք: Գտնվելով պատմական Դիզակ գավառի հարավ-արևմտյան սահմանագծին՝ այն վերահսկում էր Հագարիի հովիտը և այնտեղից դեպի Խծաբերդ և Արփագյադուկ (Քարինգ) գնացող կիրճը, որտեղից կարճ ճանապարհով (Գյադուկ լեռնանցքով) անցուդին դուրս է գալիս Արցախի կենտրոնական շրջաններ:

Ադմինիստրատիվ պատկանելությունը
ԱՀ Քաշաթաղի շրջանի Հակարի գյուղ

Նախկին ադմինիստրատիվ պատկանելությունը
Ադրբ. ԽՍՀ Կուբաթլիի շրջանի Մուրադխանլիի գյուղխորհրդի Մուրադխանլի և Ակեռի գյուղեր
(Мельников, Ибрагимов, 1979, 54)

Ելիզավետպոլի գուբերնիայի Զանգեզուրի ուեզդի II ոստիկանական տեղամասի (կենտրոն՝ Տեղ գյուղ) Շահավենի գյուղական հասարակության Ակառլու և Մուրադխանլու (Մազմազակ) գյուղեր (Пагирев, 2007, 149, 319, Кавказский календарь, 1916, 55)

Պատմական տեղեկություններ
Հուշարձանը հիշատակում է Մովսես Դասխուրանցին՝ կապված 893 թ. արաբների մի շարք ամրոցների գրավման հետ (Մովսէս Կաղանկատուացի, 1912, 376, Ալիշան, 1993, 27): Ամենայն հավանականությամբ այս ամրոցը կարելի է համադրել ալ-Կավզինիի հիշատակած Հարար քաղաքի հետ (այն հիշատակվում է Զանգիյան քաղաքի հետ մեկտեղ) (Хамдаллах ал Казвини, 1983, 80): Մ. Բարխուդարյանը այս տարածքի գրավումը կապում է Ներսեհ-Դժնակի արշավանքի հետ (Բարխուդարեան, 1902, 154):

Զրագրություն
Հագարի գետի ձախակողմյան՝ Զանգանակյան վտակի ձախ ափին, այն վայրում, ուր գետակը երեք կողմից շրջանցում է հրվանդանաձև լեռնազանգվածը:

Հուշարձանի հիշատակումները և հետագա ուսումնասիրությունները
Հուշարձանը հիշատակում է Մ. եպս. Բարխուդարյանը: Նա Գառնակաշ ավանը հիշատակում է Բերձոր գավառի նախկինում հայկական, սակայն մահմեդականացված գյուղերի համատեքստում (Բարխուդարյան, 1995, 255-256): Ամրոցը հավաստված է նաև 1960-ականների պատմական քարտեզում (Атлас Азербайджанской ССР, 1963, 206-207): Ղալալու ամրոցը հիշատակում են նաև Շ. Մկրտչյանը (Մկրտչյան, 1980, 91, Мкртчян, 1988, 103), Ս. Կարապետյանը (Կարապետյան, 1999, 198) և Վ. Հուսեյնովան (Гусейнова, 2009, 154): Հուշարձանը հավաստել են 2007 թ. Ա. Հակոբյանը և Կիմ Բակշին (Акопян, 2007, 7): 2013-2018 թթ. ընթացքում այն ուսումնասիրել են Լ. Հովհաննիսյանը, Զ. Ըռքոյանը, Ս. Սարգսյանը և Գ. Սարգսյանը:

Հուշարձանի նկարագրությունը

Ամրոցը զբաղեցնում է թերակղզու լեռան գագաթն ու հարավային լանջերը: Պաշտպանական շինությունները տեղադրված են ամրոցանիստ ժայռի համեմատաբար մատչելի ուղղություններում, հիմնականում՝ հարավահայաց լանջին և գագաթի փոքր տափարակին: Պաշտպանական առաջին գծի պարսպաշարը անցնում է գետի մակարդակից մոտ 80 մ. բարձր նիշով՝ խիստ թեքադիր տեղանքով: Բացի պաշտպանականից՝ այն կատարել է նաև արհեստական դարավանդ-պատնեշի գործառույթ: Պահպանվել է պարսպագծի կենտրոնական մոտ 25-30 մ երկարությամբ հատվածը: Այն միջին չափի քարերից կրաշաղախով շարված պարիսպ է՝ տեղ-տեղ ամրացված որմնահեծերով: Որոշ կետերում արտաքին ճակատը կանգուն է մնացել մինչև 5 մ բարձրությամբ: Պարիսպ-հենապատի ներսի կողմից նկատվում են կից շինությունների հետքեր: Ստորին պարսպագծից վերև՝ դեպի գագաթի միջնաբերդ, հնարավոր է հասնել միայն ժայռազանգվածի հարավային ճակատի ձախակողմյան բնական ճեղքի միջով բացված նեղլիկ, խիստ թեքադիր անցումով: Մոտ 50-60 մ բարձրությամբ՝ ճեղքվածքն առաջացել է գագաթնագծից իջնող բնական սելավատարի հետագծով, և պատահական չէ, որ այստեղ բարձրության տարբեր նիշերին աստիճանաձև տեղադրվել են երկու ձեռակերտ ջրավազաններ՝ ստորինը 5X4 մ, վերինը 3,5X3,8 մ չափերով: Ջրավազանների մանր քարերից ամուր կրաշաղախով շարված, մինչև 2,0 մ բարձրությամբ պահպանված պատերը հպվում են ժայռի ճեղքվածքի ճակատին այնպես, որ նրանց արևմտյան պատը կազմում է ժայռի ուղղահայաց լերկ մակերեսը: Միջնաբերդ տանող ուղին գնում է ջրավազանների պատաշարի ու ճեղքվածքի արևելյան ճակատի միջով՝ նեղ, տեղ-տեղ 1,5 մ լայնությամբ մնացած ուղեգծով: Այն խիստ թեքադիր է, ու նեղլիկ անցուղու հատակին տեղ-տեղ երևում են քարե աստիճաններ:

Լեռնագագաթի, այն է՝ միջնաբերդի մակերեսը խորդուբորդ է, ժայռոտ և գործնականում անմատչելի, ուստի և պարսպապատված չէ: Նրա երկարությունը մոտ 100 մ է, առավելագույն լայնությունը՝ 20 մ: Միջնաբերդի հարավ-արևելյան եզրագծին պահպանվել է բարձր հետապատ-պարսպի մեջ վերցված մի ուղղանկյուն կառույց՝ մոտ 8X6 մ չափերով: Այն կառուցված է նույն շինտեխնիկայով և հարավահայաց երկու անկյուններին ունեցել է կլորացող աշտարակներ: Շինությունը շատ վատ է պահպանվել և նրա ներսի կառուցվածքը պարզ չէ:

Ամրոցի տեղն ու դիրքը նպաստավոր չէ երկարատև բնակության համար, ուստի, ամենայն հավանականությամբ, այն նախատեսված է եղել զուտ զինվորական կայազորի պատսպարվելու ու անցուդարձը հսկելու համար:

Հուշարձանում հայտնաբերված *վերգետնյա սակավաթիվ խեցեղենը* թվագրվում է զարգացած միջնադարով:

Տարածքի այլ հուշարձաններ

Վ. Հուսեյնովան հիշատակում է Մալ բլուրը, որտեղ հավաքված է ուշ բրոնզ-վաղ երկաթի դարաշրջաններին բնորոշ խեցեղեն (Гусейнова, 2009, 154): Գյուղում հիշատակվում են նաև XVI-XIX դդ. պալատը և բնակելի քարայրեր (Атлас Азербайджанской ССР, 1963, 206-207): Հարար գյուղում գտնվում է ս. Ստեփանոս եկեղեցին (Սարգսյան, 2014b, նկ. 168):

Քարտեզ, հուշարձանի տեղադրությունը



Տեղահանույթի և հատակագծի սխեմատիկ վերակազմություն





Ամրոցանիստ լեռան հարավային ճակատը



Գագաթնամասի ամրաշինության անկյունային աշտարակը



Երկրորդ ջրամբարի մոտով անցնող արահետը



Լեռան գագաթի կառույցը վերևից



Հարավային լանջի պարսպագիծը



Հարավային լանջի պարսպի շարվածքը



Հարավային պարսպի հյուսիսային հատվածը



Վերին ջրամբարի ներսի տեսքը

№ 36. Ամրոց Գրիամի բերդ

պարսպապատ, ժայռափոր դղյակ, աշտարակ
IX-XIII դդ.
39°08'42.00"N 46°32'44.08"E, բարձրությունը՝ 1255 մ

Հուշարձանի անվանումը
Ամրոց Գրիամի բերդ

Անվանման աղբյուրը
Պատմական անվանումը

Տեղադրությունը
Գտնվում է Կերեն գյուղից 2,3 կմ հյուսիս՝ Գրիամ գյուղից 2 կմ հյուսիս-արևելք՝ Ողջի գետի ձախ ափին նստվածքային ապարներից կազմված Սուսանսարի լեռնաշղթայի վերին գծի ամենաբարձր կետում: Ամրոցից ազատ դիտարկվում է Ողջի գետի հովիտը, գրեթե մինչև Կովսական: Սուսանսարը բարձր, սրածայր ժայռերով պսակվող, հյուսիս-արևմուտքից հարավ-արևելք՝ մոտ 2,5 կմ երկարությամբ, Ողջի գետի ձախ ափով ձգվող լեռնաշղթա է, որի հյուսիս-արևելյան լանջերը զառիթափ և անտառապատ, իսկ հարավ-արևմտյան կողմը՝ ուղղահայաց պատնեշի նման կտրվող լերկ, ժայռոտ ճակատ է: Ամրոցի նիշը մոտ 700 մետրով բաձր է ստորոտով հոսող Ողջի գետի մակարդակից:

Ադմինիստրատիվ պատկանելությունը
ԱՀ Քաշաթաղի շրջանի Կովսական համայնքի Կերեն գյուղ

Նախկին ադմինիստրատիվ պատկանելությունը
Ադրբ. ԽՍՀ Զանգելանի շրջանի Շայֆլիի գյուղխորհրդի Շայֆլի և Կարագյոլ գյուղեր
(Мельников, Ибрагимов, 1979, 44)
Ելիզավետպոլի գուբերնիայի Զանգեզուրի ուեզդի IV ոստիկանական տեղամասի (կենտրոն՝ Քեչիքլի գյուղ) Դարզիլիի գյուղական հասարակության Կարա-գյոլ և Շայֆլու գյուղեր
(Пагирев, 2007, 149, 319, Кавказский календарь, 1916, 56)

Պատմական տեղեկություններ
Սյունիքի անառիկ բերդերի թվում Գրիամ ամրոցը հիշատակում է Ստեփանոս Օրբելյանը (Օրբելյան, 1986, 71, Ալիշան, 1893, 287, Шопен, 1852, 70), որը տվել էր իր անունը ողջ Կովսական գավառին (Օրբելյան, 1986, 70): Ամրոցի մասին հաջորդ հիշատակումը վերաբերում է 1102-1105 թթ., և նշվում է այն ամրոցների թվում, որոնք մնացին Գրիգոր թագավորի և Սմբատի տիրապետության ներքո (Օրբելյան, 1986, 279, Հակոբյան, 1966, 110), սակայն արդեն 1168 թ. ամրոցը գրավում են սելջուկները (Վարդան վարդապետ, 1861, 168, Վարդան վարդապետ 1862, 128, Григорян, 1990, 162): Գրիամը (Գուրիամը) հիշատակվում է նաև Դավիթ Բեկի ապստամբության տարիներին՝ կապված թուրքերի հակահարձակման հետ, որոնք, շարժվելով այս տարածք և ասպատակության ենթարկելով հայկական գյուղերը, հասնում և պաշարում են Մեղրին (Ղուկաս Սեբաստացի, 1992, 41): Հետազոտողները Գրիամը տեղադրում են Ողջիի ձախ ափին, սակայն Ա. Աբրահամյանի կարծիքով՝ այն պետք է որոնել ՀՀ Սյունիքի մարզի Կապանի տարածաշրջանում (Օրբելյան, 1986, 414): Թ. Հակոբյանը նախընտրում է տեղայնացնել ամրոցը Քաշաթաղի շրջանում՝ մատնանշելով գետի ձախ ափին գտնվող Գրվին լեռը (Հակոբյան, 1960, 198, Հակոբյան, 1966, 110):
Չբացառելով Գրիամի այս տեղադրությունը՝ Ա. Ղարագյոզյանը ևս չի բացառում նաև Գրիամի նույնացումը ՀՀ Սյունիքի մարզի Ծավ գյուղից 2 կմ հարավ գտնվող Աղջկաբերդ (Գոհարի բերդ) ամրոցի հետ (Карагезян, 2002, 23, հմմտ.՝ ՀՀ պատմության և մշակույթի հուշարձանների պետական ցուցակ 8, Սյունիքի մարզ, 48. Ծավ գյուղ, 2 Աղջկաբերդ ամրոց):

Ջրագրություն
Ողջի գետի ձախ ափ

Հուշարձանի հիշատակումները և հետագա ուսումնասիրությունները
2014 թ. հուշարձանը հայտնաբերել են Գ. Սարգսյանը, Ս. Սարգսյանը, Լ. Հովհաննիսյանը և Զ. Ըռքոյանը (Սարգսյան, 2018b):

Հուշարձանի նկարագրությունը
Ամրոցը բաղկացած է ժայռի գագաթին տեղակայված միջնաբերդ-դղյակից, նրան հյուսիսային

կողմից ներփակող կիսաէլիպսաձև հատակագծով պարսպից և պարսպից դուրս՝ հյուսիսային լանջին տարածվող բնակատեղիից: Միջնաբերդը լեռնաշղթայի կատարին վեր խոյացող՝ մոտ 45-50 մ երկարությամբ, 20-25 մ լայնությամբ և մոտ 8-10 մ բարձրությամբ ուղղանկյուն խորանարդաձև ցից ժայռազանգվածի մեջ բացված, միջանցիկ քարանձավներից կազմակերպված վիմափոր կառույց է: Ցից ժայռազանգվածի երկու երկայնական ճակատները գրեթե ուղղահայաց են և նրանց մեջ խորանարդաձև զանգվածի կրնկին բացվում են 1,5-2,5 մ լայնությամբ և 18-20 մ երկարությամբ միմյանց զուգահեռ չորս միջանցիկ, վիմափոր անցումներ: Անցուղիների հյուսիս-արևելյան ճակատները բնական վիմափոր խորշերի տեսք ունեն, ինչը չի կարելի ասել հարավ-արևմտյան՝ գետահայաց ճակատի բացվածքների մասին: Վերջինները զգալիորեն ավելի ցածր են, նեղ և, ըստ ամենայնի, ձեռակերտ են: Վիմափոր միջանցքների հյուսիս-արևելյան սկզբնամասերը բնական խորշեր են հիշեցնում, բայց հետագա ընթացքը՝ դեպի գետահայաց ճակատ, ակնհայտորեն ձեռակերտ է: Բոլոր մուտքերը կրում են լայնեցման ու հարթեցման հետքեր: Վիմափոր ուղիների հատակները միևնույն հորիզոնի վրա են, իսկ առաստաղների բարձրությունները տարբեր են՝ 2-5 մ: Հարավային առաջին և երկրորդ միջանցքները սկիզբ են առնում հյուսիս-արևելյան մեծ, բնական անձավային խորշից, որի բացվածքը 4 մ է, խորությունը 3 մ, իսկ բարձրությունը հասնում է 5 մ: Հյուսիսային երկու ժայռափոր միջանցքները ընթացքի միջնամասում հաղորդակցվում են ձեռակերտ անցուղիով: Մոտ 4-5 մ երկարությամբ, ցածր առաստաղով այս անցուղու կենտրոնում՝ մի փոքր լայնացող ծավալի հատակին, փորված է մոտ 1,5-2 մ տրամագծով խոր փոս, որը, ամենայն հավանականությամբ, պահեստ-շտեմարան է եղել: Փոսը՝ մոտ 3 մ խորությամբ, բացել են գանձախույզները, որոնց հանած հողի թափոնների և փոսի խորքում հանդիպում են լավ թրծած կարմիր գույնի աղյուսներ: Ժայռափոր համալիրի երկու ճակատների բոլոր 8 մուտքերը փակված են եղել պատաշարերով, որոնց հիմնամասերը պահպանվել են: Վիմափոր համալիրի սեղանաձև ցցված ժայռի գագաթի ամենաբարձր կետում՝ մեծ դահլիճի գլխին, կանգնած է 3,5 մ տրամագծով կլոր, սնամեջ դիտակետ-աշտարակ: Նրա պահպանված բարձրությունը մինչև 2 մ է և շարված է միջին չափի ճեղքած քարերից՝ կրաշաղախով: Ուշագրավ է, որ մեծ դահլիճի բարձր առաստաղի ճեղքվածքով մի նեղ սողանցք գնում է դեպի վեր՝ աշտարակ:

Վիմափոր համալիրի գետահայաց կողմում առկա է 1,5-3 մ լայնությամբ նեղ երկար հրապարակ, որից հետո գահավիժում են ուղղահայաց ժայռերը: Համալիրի հյուսիս-արևելյան ճակատի դիմացի հրապարակը ավելի լայն է, թեքադիր և եզերվում է խոշոր, ճեղքած, անմշակ քարերից երկշերտ շարված պարսպագծով: Պարիսպը ներփակում է վիմափոր ժայռազանգվածը ամբողջությամբ, կանգուն է մինչև 2 մ բարձրությունը և միջնամասում ունի զանգվածեղ քարերով եզերված դարպասի բացվածք:

Պարսպից դուրս տարածվող թեքադիր, խիտ անտառապատ լանջին նկատվում են երբեմնի բնակատեղիից մնացած առանձին պատերի ու շինությունների հետքեր, որոնք մամռապատ են՝ ծածկված անտառային հումուսով, և դժվարությամբ են տարազատվում:

Դատելով շինտեխնիկայից և պահպանված աղյուսներից ու փոքրաթիվ խեցեղենից՝ ամրոցը կարելի է թվագրել 9-13-րդ դարերով:

Տարածքի այլ հուշարձաններ

Կերենի դամբարանադաշտը

Կերենի դամբարանադաշտը գտնվում է համանուն գյուղից 0,5 կմ հարավ: Տեղանքը՝ մորֆոլոգիական տեսակետից, ունի ասիմետրիկ կիրճի տեսք: Տեղ-տեղ առկա են հեղեղատներ՝ իրենց բնորոշ ժամանակակից անցումներով: Դամբարանադաշտը ջրբաժանի երկայնքով ձգվում է մոտ 800 մ՝ տարածվելով դաշտամիջյան ճանապարհի աջ և ձախ կողմերով՝ զբաղեցնելով նաև հարևան հյուսիսային բլրի գագաթը: Նշված ջրբաժանից 100-150 մ արևմուտք տարածվում է ևս մեկ զուգահեռ դարավանդ, որտեղ հայտնաբերվել են թաղումներ: Այստեղ առկա են նաև բնակատեղիի հետքեր (Գնունի և այլք, 2011, 49): Դատելով տարածքում պատահական հայտնաբերված նյութերից՝ բնակատեղին գոյատևել է Ք.ա. II դարից մինչև զարգացած միջնադար: Չի բացառվում, որ հենց այստեղ է եղել Ստեփանոս Օրբելյանի հիշատակած Կերեն գյուղը: Եվս մեկ դամբարանադաշտ գտնվում է գյուղից 1 կմ արևելք՝ Կերեն-Կովսական ճանապարհի աջ կողմում: Ընդհանուր առմամբ՝ Կերենի դամբարանները կարելի է բաժանել մի քանի ժամանակագրական խմբի: Վաղագույն ժամանակագրական խմբին է պատկանում N 103 հիմնահողային դամբարանը, որտեղ հայտնաբերվել է Ք.ա. XIV-XIII դդ. բնորոշ նյութ (Գնունի և այլք, 2015, 22): Երկրորդ խմբի դամբարանները (NN 3, 62, 105) թվագրվում են Ք.ա. II հազ. վերջին քառորդ – I հազ. սկզբով (Սիմոնյան և այլք, 2007, իր NN 1-6, 39-51): Խցերը քարարկղային են, գետնամուխ, իսկ N 3 դամբարանում թաղումը ամփոփված էր քարահողային

դամբանի ներքո: Դամբարանադաշտի տարածքից պատահականորեն հայտնաբերված են նշված ժամանակաշրջանին բնորոշ խեցեղեն (ՔԵԹ ի/h 160, 177, 185, 192-193) մետաղական իրեր՝ գոտի, ճակատակալ, դաշույն (Սիմոնյան և այլք, 2007, իր NN 97, 99-102, Գնունի և այլք, 2011, 50-51, Գնունի և այլք, 2015, 23): Դամբարանների հիմնական մասը թվագրվում է Ք.ա. VII-VI դդ.: Դամբարանները հիմնականում զուրկ են վերգետնյա կերտվածքներից: Միայն NN 1, 46, 90, 106 դամբարանները ծածկված են եղել դամբանով (Գնունի և այլք, 2008b, 181-186, Գնունի և այլք, 2011, 52): Կերենում առկա են նաև կարասային թաղումներ՝ դիակիզման ծեսով՝ NN 1, 46 (ՔԵԹ ի/h 211/ 21), 106 դամբարաններ, ընդ որում՝ N 106 դամբարանի պարագայում, դամբանի տակ ամփոփված էր 2 կարաս (Avetisyan et al., 2018, 194): Պեղումներից հայտնաբերված նյութերը պահպանվում են Քաշաթաղի (ՔԵԹ ի/h 160-211/21), Ստեփանակերտի թանգարաններում, Տիգրանակերտի արգելոց-թանգարանում, ԱՀ ԿԳՄՍՆ տուրիզմի վարչության պահոցներում:

Քարտեզ, հուշարձանի տեղադրությունը



Տեղահանության և հատակագծի սխեմատիկ վերակազմություն





Ամրոցանիստ ժայռը Ողջի գետի ափից



Ամրոցանիստ լեռան կատարը արևմուտքից



Անձավային դահլիճը



Երրորդ մուտքը ներսից



Հարավ-արևմտյան ճակատի 3-րդ և 4-րդ մուտքերը



Պարսպագծի ճակատի հատված

№ 37. Ամրոց Աղջկա բերդ կամ Կազաչի պոստ (Казачий пост)

Բնակատեղի, պահակատուն, դիտակետ աշտարակ
XIX դարի սկիզբ
38°55'52.07"N 46°34'47.02"E, բարձրությունը՝ 957 մ

Հուշարձանի անվանումը
Ամրոց Աղջկա բերդ, Կազաչի պոստ (Казачий пост)

Անվանման աղբյուրը
Ժողովրդական անվանումը

Այլ անվանում
Աղջկա բերդ, Ղզ ղալա (Կազաչի պոստ, Казачий пост)

Տեղադրությունը
Գտնվում է Միջնավանից 16 կմ հարավ-արևմուտք՝ Արաքս գետի ձախ ափին՝ նախկին էմիրխանլի գյուղի արևմտյան կողմում բարձրացող սրածայր, բարձր ժայռի վրա:

Ադմինիստրատիվ պատկանելությունը
ԱՀ Քաշաթաղի շրջանի Միջնավան ավան

Նախկին ադմինիստրատիվ պատկանելությունը
Ադրբ. ԽՍՀ Զանգելանի շրջանի Մինջևան քաղաք
(Мельников, Ибрагимов, 1979, 69)
Ելիզավետպոլի գուբերնիայի Զանգեզուրի ուեզդի IV ոստիկանական տեղամասի (կենտրոն՝ Քեչիքլի գյուղ) Զանգելանի գյուղական հասարակության Մինջևան գյուղ, Մինջևանի ամրացված ուղեկալ
(Пагирев, 2007, 206, Кавказский календарь, 1916, 56)

Ջրագրություն
Արաքս գետի ձախ ափ

Տեսողական կապը այլ հուշարձանների հետ
Շրջակայքում՝ Արաքսի ձախ ափին ամրոցներ չկան

Հուշարձանի հիշատակումները և հետագա ուսումնասիրությունները
Հուշարձանը հիշատակում են Ս. Կարապետյանի (Կարապետյան, 1999, 210) և Վ. Հուսեյնավայի կողմից (Гусейнова, 2009, 162), ինչպես նաև մի շարք քարտեզներում (Карта Кавказского края..., 1908): 2019 թ. այն ուսումնասիրել են Գ. Սարգսյանը և Զ. Ըռքոյանը:

Հուշարձանի նկարագրությունը
Գտնվում է նախկին էմիրխանլի գյուղի արևմտյան կողմում բարձրացող սրածայր բարձր ավարտով ժայռի վրա: Ամրոցը բաղկացած է երեք մասից՝ ապառաժի գագաթին կանգնած դիտակետ-աշտարակից, նրա հետնամասում տեղակայված պահակատնից և ժայռի հյուսիսային ստորոտում գտնվող բնակատեղիից: Դիտակետ-աշտարակը կանգնած է սրածայր ժայռի ամենաբարձր կետում՝ Արաքսից մոտ 1,0 կմ հեռավորության վրա, և ազատ դիտարկում է գետահովտի ավելի քան 20,0 կմ հատված: Աշտարակը ժայռի ստորոտից 400 մ, իսկ Արաքս գետից՝ 433 մ բարձր է: Ամրոցի աշտարակի ուրվագիծը երևում է նույնիսկ հանդիպակաց ափի բնակավայրերից: Աշտարակը հատակագծում կլոր է, սևամեջ՝ 1,0 մ հաստությամբ պատերով, 4,0 մ արտաքին տրամագծով: Կառուցված է մանր քարերից՝ ամուր, սպիտակ կրաշաղախով, և պահպանել է միայն գետահայաց կեսի կիսագլանը՝ 8,0 մ բարձրությամբ: Այն ներառնված է եղել մոտ 5,0x8,0 մ չափերով հարթակի պատաշարի մեջ, որից մնացել են միայն փլատակները: Աշտարակը կոնաձև է՝ դեպի վեր նեղացող պատերով, արտաքին ճակատը հարթ է՝ առանց պատուհանների, ներքուստ եղել է բազմահարկ, ինչի մասին են վկայում են ներսի պատերի մեջ փայտյա լծակները ամրացնելու խորշերը: Աշտարակի հետնամասից մասամբ ժայռափոր արահետը կտրուկ իջնում է մոտ 35 մ ցած գտնվող հարթակին տեղակայված պահակախմբի հերթափոխի կացարանը: Այն մոտ 10 մ երկարությամբ ժայռին հենված, միջնապատերով բաժանված նեղ շինություն էր, որից մնացել են մուտքի մոտի կորագիծ պատը և փլատակների կույտեր, ուր հանդիպում է նաև շինարարական աղյուս: Այստեղից արահետը մոտ 150 մ իջնում է դեպի ժայռի թիկունքի թեքադիր հարթակում գտնվող բնակատեղին՝ խուտորը, որը հիմնավեր է, և

կենտրոնական մասում պահպանել է թեքության հորիզոնով գնացող փողոցի հետագիծը: Փողոցի երկու կողմերում կարելի է տարազատել միմյանցից որոշակի հեռավորության վրա դրված երբեմնի տնատեղերի փլատակները: Այնպիսի տպավորությունն է ստեղծվում, որ տնատեղերը ունեցել են ընդարձակ ցանկապատված բակեր՝ կից շինություններով: Փողոցի վերնամասում երևում են մեծ, բազմասենյականոց կառույցի (հնարավոր է՝ հասարակական) կառույցի հետքեր:

Վերգետնյա խեցեղենի շարքում, բացի ուշ միջնադարյանից, հանդիպում են նաև զարգացած միջնադարին վերագրող օրինակներ: Չի բացառվում, որ խուտորը կառուցված լիներ ավելի վաղ բնակավայրի տեղում:

Հուշարձանի Կազաչի պոստ ավանդված անվանումը հուշում է, որ այդ տարածքը՝ ռուսական հպատակության տակ անցնելուց հետո, կազակների կառուցած հենակետ-պահակակետ է եղել:

Տարածքի այլ հուշարձաններ

Քաշաթաղի երկրագիտական թանգարանում պահպանվում են Միջնավանից հայտնաբերված մի շարք նյութեր՝ Ք.ա. VIII-VI դդ. բնորոշ եռափող սև փայլեցված անոթ և դարչնագույն երեսապատ կանթով սափոր (ՔԵԹ ի/h 109-110/5): Վ. Հուսեյնովան տարածաշրջանում հիշատակում է ևս մի քանի ամրոց. Կովսական քաղաքում՝ XVIII դ., Քեչիքլի գյուղում՝ VII դ. և Ողջիի գետաբերանում (Гусейнова, 2009, 163-164):

Նախկորզեան քաղաքի տեղադրման հարցը

Նախկորզեան քաղաքը մի քանի անգամ հիշատակում են պատմիչները՝ կապված Բաբիկ Սյունու հայրենական հողերի վերադարձի հետ, և ի նշան այդ գյուղի հիմնադրման (Մովսէս Կաղանկատուացի, 1912 124, Օրբելյան, 1986, 22):

Ս. Երեմյանը այս քաղաքը տեղադրում է Խուդափերինի կամրջի մոտ, որը նա նույնացնում է Քարավազի գետանցումի հետ (Երեմյան, 1963, 72): Բ. Հարությունյանը տեղայնացնում է քաղաքը Արաքսի հունով ավելի վեր՝ Հագարիի գետաբերանից հարավ-արևմուտք (Հարությունյան, 2013, 123)՝ իրավացիորեն նշելով, որ ըստ Ստեփանոս Օրբելյանի տվյալների՝ քաղաքը գտնվում էր ոչ թե Արցախ, այլ Սյունիք աշխարհում՝ Քաշունիք գավառում (Ստեփանոս Օրբելյան, 1986, 401), ինչը չի հակասում Աշխարհացույցի տվյալներին (Երեմյան, 1963, 72): Ընդհանուր առմամբ, կիսելով Հագարիի գետաբերանում քաղաքի գտնվելու փաստը, Ս. Կարապետյանը չի բացառում քաղաքի գտնվելու փաստը այժմյան Միջնավան քաղաքից ոչ հեռու (Կարապետյան, 1999, 202): Ա. Ղարագյոզյանը չի բացառում, որ Նախկորզեանի տարածքը կարող էր համընկնել զարգացած միջնադարի Շարիֆան քաղաքի հետ (Карагезян, 2002, 66-67):

Քարտեզ, հուշարձանի տեղադրությունը



Տեղահանույթի և հատակագծի սխեմատիկ վերակազմություն





Աշտարակը արևելքից



Աշտարակը արևմուտքից



Աշտարակը ներսից: Հեռվում Արաքս գետն է



Աշտարակի ուրվագիծը Արաքսին նայող լեռնագագաթին



Ժայռի հյուսիսային լանջի պահակատունը

ՎԵՐՋԱԲԱՆ

Արցախի Հանրապետության Քաշաթաղի շրջանի ամրոցներին նվիրված սույն գիրք-ալբոմում ներկայացվող 37 հուշարձաններից 34-ը հայտնաբերել, փաստագրել և ուսումնասիրել են խմբի անդամները: Խորհրդային տարիներին ադրբեջանական մասնագետների փաստագրած ամրոցների նկարագրությունները խիստ թերի են, ուղեկցվում են իրականությանը չհամապատասխանող թվագրություններով և մեկնաբանություններով:

Ներկայացվող ամրոցների պատմական անվանումները հնարավորինս ճշտվել են, սակայն ամենևին էլ չէն հավակնում վերջնականը լինել: Հուշարձանների տոպոնիմիկան և նրանց տեղայնացումը առանձին, բարդ, բավականին խնդրահարույց գիտություն է և, ըստ ամենայնի, մեր առաջարկած անվանումները դեռ շատ տարընթերցումներ կունենան:

Ամրոցների ճնշող մեծամասնությունը՝ ծավալա-տարածային կազմակերպմամբ, տիպաբանությամբ, ամրաշինական կառույցների տրամաբանությամբ ու հատակագծային լուծմամբ, շինարարական տեխնիկայով և հնագիտական նյութի նմանությամբ, աղերսվում են Հայաստանի, մասնավորապես՝ Սյունիքի և Արցախի համաժամանակյա հուշարձանների հետ, և հանդիսանում են հայկական պատմամշակութային ժառանգության անքակտելի մասը: Բացառություն են կազմում Կազաչի պոստ և Քարոտանի ամրոցները: Առաջինը, ակնհայտորեն, 19-րդ դարասկզբի ռուսական ռազմական ճարտարապետության նմուշ է: Քարոտանի ամրոցը կառուցված լինելով հայկական ամրոցաշինությանը խորթ՝ գլաքարերի հիմնախարսխով հում աղյուսե պարիսպներով և երկու աշտարակների միջով անցնող յուրօրինակ Г-ա նման մուտքով, թույլ է տալիս այն վերագրել ուշ միջնադարի պարսկական շինարվեստին:

Ժամանակագրական առումով՝ ուսումնասիրված հուշարձաններն ընդգրկում են վաղ բրոնզից մինչև ուշ միջնադար ընկած պատմական ժամանակաշրջանները:

Քաշաթաղի շրջանի ամրոցների ուսումնասիրությունը հիմք է տալիս անել որոշակի նախնական դիտարկումներ:

1. Հնագույն ճանապարհների ուրվագծերը

Ամրոցների կառուցումն ու տեղադրութունը թելադրված է եղել տվյալ ժամանակաշրջանի հասարակության սոցիալ-տնտեսական կեցության և ռազմա-պաշտպանական խնդիրների տրամաբանությամբ: Բացի ամրացված բնակավայր լինելուց, նրանք նաև հիմնական ճանապարհներն ու հաղորդակցման ուղիները պաշտպանելու ու հսկելու գործառույթ ունեին:

Վաղ բրոնզեդարյան շրջանում, երբ կենսակերպում գերակշռում էր հողագործությունը, հիմնական բնակավայրերը տեղակայված էին *դաշտավայրային և նախալեռնային գոտիներում, հետևաբար՝ լեռնային գոտում գտնվում էին դամբարանները և սեզոնային բնակավայրերը:*

Բրոնզ-երկաթեդարյան դարաշրջաններում՝ յայլաղական անասնապահության հետագա զարգացման պարագայում, ամրոցների տեղաբաշխումը սկսում է ձգտել դեպի նախալեռնային ու լեռնային գոտիներ: Արդեն խնդիր է ծագում պաշտպանել ոչ միայն հիմնական ճանապարհները, այլև ալպյան մարգագետինների արոտավայրերն ու նրանց մոտեցման ուղիները: Այդպես, դեպի տարածաշրջանի հիմնական յայլաղային արոտավայրեր՝ *Սյունյաց լեռնաշղթայի Իշխանասարի հարավային ալպյան մարգագետիններ* տանող ուղիների վրա են տեղակայված Աղավնոյի գետահովտի Արահուծի, Սթունիսի, Աղավնաբերդի, Միրիկ-Աղահեճի, Հերիկի, Աղբատխերտի, Սպիտակաջրի ամրոցները: Իսկ Միրիկ 2, Միրիկ 4, Հակ 1, Հակ 2, Եզնագոմերի և Միջանցք ամրոցները, տեղակայված լինելով անմիջապես ալպյան մարգագետիններում, հանդիսանում էին ոչ թե մշտական բնակավայրեր, այլ սեզոնային ամրացված ամառանոցներ:

Անտիկ, վաղ և զարգացած միջնադարում՝ կենտրոնացված պետության առկայության պարագայում, ամրոցների տեղակայման հիմնական շեշտը դրվում էր գլխավոր ճանապարհների պաշտպանության ու ամրացման վրա: Այս ժամանակաշրջանի ամրոցների տեղաբաշխման շղթան դիտարկելով՝ կարելի է վերհանել հիմնական հաղորդակցման ուղիների հետագիծը:

Սյունիքի կենտրոնական գավառներից դեպի Աղավնոյի հովիտը տանող գետահովիտները, որոնցով հիմնականում անցնում էին հին ճանապարհները, ամրացված են ամրոցներով: Այսպես, Խնածախի գետահովիտը հսկում է Արահուծ ամրոցը: Վաղատուր-Խոզնավար գետահովիտները հսկում են նրանց ջրբաժանին տեղադրված ամրոց՝ Ծիծեռնավանք ամրոցը: Սթունիսի գետահովիտը հսկում է արդեն երեք հանդիպակաց բարձունքներին տեղադրված Սթունիսը, Աղավնաբերդը և վերջինի պահակակետ Մանուկբերդը: Այստեղ՝ Աղավնոյի և Սթունիսի միախառնման կետում բացվող մոտ 15-20 հա. տարածքով ընդարձակ, անտառազուրկ բացատը, բացի վերոհիշյալ աջակողմյան երեք ամրոցներից, Աղավնոյի ձախ ափից հսկվում է նաև Տանձուտ 1, Տանձուտ 2 և նշանավոր Խոժոռաբերդ ամրոցներով: Այսպիսի յուրահատուկ պաշտպանված տարածք, որը շրջապատված է եղել և ազատ դիտարկվել է գետի երկու կողմերում տեղակայված վեց համաժամանակյա ամրոցներով, բացառիկ է, և պետք է որ առանձնահատուկ դեր ու նշանակություն ունենար անտիկ, վաղ ու զարգացած միջնադարում: Բացառված չէ, որ այս բացատը (պայ-

մանականորեն անվանենք Խոժոռաբերդի բացատ) կարող էր հավաքատեղիի, բաշխիչ կայանի գործառույթ ունենալ, ուր տեղադրված լինեին քարավանատուն, մաքսատուն, անասնահոտերի մեծ փարախներ: Պատահական չէ, որ այստեղ են կառուցվել 9-10-րդ դդ. երկու նշանավոր՝ Մկնատամի խաչ ուխտատեղի-եկեղեցին և 1,5 կմ հյուսիսում՝ տարածաշրջանի միակ գմբեթավոր՝ Վարաղգոմ գյուղատեղիի կոփածո քարերով եկեղեցին:

Այստեղից անասնահոտերը Սթունիս-Աղավնաբերդ, Միրիկ-Աղահեճ, Հերիկ, Աղբատխերտ, Բերդիկ, Տաքջուր ամրոցների վերահսկողությամբ գնում էին դեպի յայլաղային արոտավայրեր, ուր բաշխվում էին Միրիկ 2, Միրիկ 4, Հակ 1, Հակ 2, Եզնագոմեր, Միջանցք և նմանատիպ այլ ամրացված ամրոց-փարախների միջև:

Ինչ վերաբերում է տարանցիկ ճանապարհներին, ապա հնարավոր է՝ նրանք գնացել են երկու հակադիր ուղղություններով: Դեպի հարավ հիմնական ճանապարհը Աղավնոյի գետահովտով իջնում էր Հագարիի գետահովիտը և, անցնելով Կառնակաշ ամրոցի վերահսկողության տարածքով, ընթանում էր դեպի Արաքս գետը՝ Խուդաֆերինի կամուրջ[1]:

Հնարավոր երկրորդ ուղղությունը կարող էր գնալ դեպի հյուսիս: Այն Խոժոռաբերդի բացատից բարձրանում էր դեպի Սոնասար ամրոցը, որտեղից, անցնելով Հոչանց գետը, մտնում էր Քաշաթաղ ամրոցի վերահսկողության գոտի: Եվ արդեն այս «գավառակերտ» ամրոցի հովանու ներքո բարձրանում էր դեպի Քաշաթաղի ու պատմական Սոդք գավառների սահմանի Մխաթիք լեռնաշղթայի ջրբաժանին նստած Կոդոր ամրոցը, որտեղից և, անցնելով Ծառի կամ Քարվաճառի լեռնանցումներով, մտնում էր Սևանի ավազան: Այս ուղղին Սևանի ավազանը Խուդաֆերինի հետ կապող բավականին բարդ, բայց և ամենակարճ ճանապարհն է:

Սյունիքը Խուդաֆերինի հետ կապող մի այլ ուղղություն ուրվագծվում է Քաշաթաղի շրջանի հարավային հատվածում: Այն Որոտանի գետահովտով դեպի Հագարիի գետահովիտը (Կառնակաշ ամրոցի վերահսկողության տարածք) գալիս է դեպի Մազրա, Բարկուշատի բերդ, Անդոկաբերդ, Անդոկաբերդ 2, Որոտան 1 ամրոցների շղթան:

